

ԱՏ. ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-Ի



ԵՐԵՎԱՆ 1963









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ИНСТИТУТ ИСТОРИИ

С.Т. ЕРЕМЯН

АРМЕНИЯ

ПО «АШХАРАЦУЙЦ» - У

(АРМЯНСКОЙ ГЕОГРАФИИ VII ВЕКА)

(ОПЫТ РЕКОНСТРУКЦИИ АРМЯНСКОЙ КАРТЫ VII ВЕКА
НА СОВРЕМЕННОЙ КАРТОГРАФИЧЕСКОЙ ОСНОВЕ)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

912

Ե

Ա.Տ. ԵՐԵՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ


ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-Ի

(ՓՈՐՁ VII ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻ

ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՎՐԱ)

A III
1715



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1963

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ


ՆԱՅԱՍՏԱՆԸ

ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ» ԴԻ

(ՓՈՐՉ ՎՈՒ ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՏԵՉԻ

ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ՔԱՐՏԵՉԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՎՐԱ)



Խ Մ Ր Ա Գ Ր Ի Կ Ո Վ Մ Ի Յ

Պատմական Հայաստանի սույն Բարոեզր, ինչպես և նրան կից լույս տեսնող ներկա աշխատությունը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ս. Տ. Նրեմյանի խորագրին ու երկարամյա ուսումնասիրության արդյունք է, մի աշխատանք, որը բազմատեղյակ գիտնականի պատմական, աշխարհագրական և աղբյուրագիտական համակողմանի գիտելիքների հմտալից միաձուլման մի շգերազանցված օրինակ է, այն էլ գիտության այնպիսի դժվարին ու սակավ հետազոտված բնագավառում, ինչպիսին վաղ-ֆեոդալական Հայաստանի պատմական աշխարհագրությունն է:

«Աշխարհագրոյցը» ֆեոդալիզմի շրջանի առաջին գործն է, որը շարունակում է անտիկ աշխարհագրության տրադիցիաները և Պտղոմեոսի գործից հետո համաշխարհային Բարոեզագրական և աշխարհագրական գրականության մեջ գրավում է սուաջնակարգ տեղ: Հին հայ աշխարհագրագետի գրչին պատկանող սույն երկը, Պտղոմեոսի «Աշխարհագրության ձեռնարկի» նման, իրենից ներկայացնում է Բարոեզակազմության մի ձեռնարկ: Սակայն, ինչպես համոզիչ վերլուծության միջոցով սպացուցում է Ս. Նրեմյանը, հին հայ աշխարհագրագետն իր հայրենիքի՝ Մեծ Հայքի նկարագրման լեքացում հարելով հանդերձ Պտղոմեոսի Բարոեզագրական սկզբունքներին, չի բավարարվել նրա ավշալներով, նա հավանել ու արձանագրել է բոլորովին նոր, անհամեմատ ավելի հարուստ և ավելի ճշգրիտ տվյալներ ինչպես բուն Հայաստանի, այնպես և նրան սահմանակից Վրաստանի, Աղվանի, «Սարմատիայի», Իրանի և այլ երկրների նկարագրման համար:

VI—VII դդ. սահմանագլխին ստեղծված «Աշխարհագրոյցը» պատմական որոշակի պատճառներով արտացոլում է IV դ. Արշակունյաց Հայաստանի Բաղաճական ուսումնականը: Բանն այն է, որ VI դ. վերջերին Անդրկովկասի ժողովուրդների միացյալ պայմար Բյուզանդիայի և Իրանի դեմ Բարկաղբեց գավրիշներին փաստորեն նանաշել Հայաստանի, Վրաստանի և Աղվանի անկախությունը: «Աշխարհագրոյցի» հեղինակը մի կողմից արտահայտում էր հայ իշխող շրջանների Բաղաճական բաղձանքները, որոնք երազում էին հայկական ինքնուրույն պետականության վերականգնման մասին, իսկ մյուս կողմից, Ելենլով իր կրոնադավանաբանական սկզբունքներից, անդրկովկասյան երկրները դավանաբանական տեսակետից համարում էր մի միացյալ երկիր, որն այն ժամանակ ենթարկվում էր Գլխնում նստող հոգևոր պետին: Ինչպես հայտնի է, Անդրկովկասը նույն ձեռով էին ներկայացնում նաև վաղ ֆեոդալիզմի շրջանի այլագրի աշխարհագրագետները, ասորիները և մանավանդ արաբները, որոնք «Արմենիա» աշխարհագրական տերմինով միավորում էին ողջ Անդրկովկասի և Հայկական բարձրավանդակի հողերը:

Ս. Նրեմյանը, համեմատելով Պտղոմեոսի և «Աշխարհագրոյցի» բնագրերը և Բարոեզները, համոզիչ կերպով ցույց է տալիս, որ «Աշխարհագրոյցի» հեղինակի Բաղաճական ձգտումները և հայ եկեղեցու իշխանության մասին ունեցած նրա պատկերացումները համընկնում էին արդեն Պտղոմեոսի Բարոեզում մարմնավորված Բարոեզագրական սկզբունքների ու շրջանակի հետ և հենարան էին հանդիսանում հայ հեղինակի համար:

հոսքը վերաբերվում էր Ասիայի երրորդ պտղուն-
ոսյան ֆարտեզին, որտեղ մի շրջանակի մեջ, նույն
հաջորդականությամբ ներկայացված են Կողփսը,
Իբերիան, Աղվանքը և Մեծ Հայքը:

Միաժամանակ անհրաժեշտ է հշել, որ «Աշ-
խարհացոյցն» արտացոլում էր նաև մի այլ կա-
ւոր պատմական հանգամանք, այն է՝ Անդրկով-
կասի եղբայրակից ժողովուրդների սերտ կապն ու
միասնությունը, որոնք իրենց անկախության և ազ-
գային-ֆազաֆական ինֆեուրոյնության գրավա-
կանը տեսնում էին համակողմանի փոխօգնության
և արտախն րշնամու դեմ ընդհանուր նակատ
ստեղծելու մեջ: «Աշխարհացոյցը» պատմական
այդ իշդոության մի պերնախոս վկայական է:
Դրանով է բացատրվում այն փաստը, որ հայ հե-
ղինակը, Մեծ Հայքից բացի, նույն սիրով ու բարե-
խըղճությամբ նկարագրում է Վիրքը (Վրաստանը),
Աղվանքը (Կովկասյան Ալբանիան, այժմյան Սո-
մախան Ադրբեջանի մի մասը) և «Սարմա-
տիան», մի նկարագրություն, որն առաջինն էր հա-
մաշխարհային գրականության մեջ իր հարստու-
րյամբ և հզգրտությամբ: Մինչ այժմ հրապարակի
վրա եղած «Աշխարհացոյցի» բնագրին վերաբերող
պատմա-աշխարհագրական ուսումնասիրությունե-
նեք (Ղ. Իննիկյան, Է. Հյուրչման, Զ. Մարկվարտ

և այլք) իրենց բոլոր արժանիքներով հանդերձ, աշ-
խարհը են արել այն կարևոր հանգամանքը, որ «Աշ-
խարհացոյցը» ֆարտեզագրական երկ է, այսինքն
ֆարտեզներին զուգահեռ գոյություն ունեցած բնա-
գիր է հանդիսացել: Ս. Նրեմյանի կողմից կատար-
ված՝ Պտղոմեոսի և «Աշխարհացոյցի» բնագրերի
համեմատությունը ցույց տվեց, որ «Աշխարհացոյ-
ցը» բաղկացած է եղել առնվազն 15 ֆարտեզնե-
րից և հանդիսացել է յուրօրինակ մի առյաս: Ս.
Նրեմյանի ներկա աշխատության և նրա կողմից
վերստին կազմված ֆարտեզի շնորհիվ «Աշխարհա-
ցոյցը» շուրջ մեկ հազարամյակ իր երկրորդ կողմով
անտեսանելի լինելուց հետո, նորից ստանում է իր
գննելի տեսքը և որպես Եզակի հուշարձան վերջա-
պես իր արժանավոր տեղն է գրավում համաշխար-
հային ֆարտեզագրության պատմության մեջ:

Տվյալ աշխատությունն ու ֆարտեզն, անտա-
րակույս, մեծ ծառայություն կմատուցեն բշ միայն
հայագիտությանը գրադվող մասնագետներին,
այլև կովկասագետներին, պարսկագետներին և
արևելագիտության այլ նյութերի ներկայացուցիչ-
ներին: Այն, համոզված ենք, մեծ հետաքրքրու-
րյամբ կընդունվի նաև Հայաստանի ու Անդրկով-
կասի պատմությամբ հետաքրքրվող ընթերցողներին
այն շրջանների կողմից:

Ս. ԱՐԻՎԾԱՏՅԱՆ



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա աշխատությունը ուղեցույց է հանդիսանում նույն վերնագիրը կրող քարտեզի, որը կազմել ենք «Աշխարհացոյց»-ի տվյալների հիման վրա և այժմ հրատարակում ենք 1:1,250,000 մասշտաբով: Նման քարտեզը առանց ուղեցույցի արժեքավրկվում և անմատչելի է դառնում լայն հասարակությանը: Այդ պատճառով մենք հարկ համարեցինք կցել քարտեզին այս ուղեցույց-բացատրագիրը, որտեղ այբբենական կարգով բերվում են քարտեզում նշված բոլոր անունները: Ուղեցույցում յուրաքանչյուր տեղանուն ունի մանրամասն բացատրություն—հոդված, որը մատչելի է դարձնում քարտեզը բոլորին: Միաժամանակ այստեղ մենք համառոտակի տալիս ենք այն եզրակացությունները, որոնց հանդեպ ենք «Աշխարհացոյց»-ի երկաբամյա ուսումնասիրության ընթացքում: Այդ եզրակացությունները մենք շարագրել ենք ընդլայնված կերպով սուպրալիան պատրաստվող «Հայաստանը և Կովկասը ըստ VII դ. «Աշխարհացոյց»-ի» մենագրության մեջ, իսկ այստեղ տրվում է հարցի միայն համառոտ աեսությունը և տեղանունների բացատրությունը:

Ուսումնասիրության ընթացքում մենք եկել ենք միանգամայն նոր եզրակացության մեղ հասած VII դ. սկզբի «Աշխարհացոյց»-ի բնույթի մասին: Ստորև բերում ենք մեր հիմնական դրույթները այդ խնդրի շուրջը, որից հետո նորից մասնավորում ենք հարցը, կենտրոնացնելով ուշադրությունը Հայաստանի և նրան հարևան Անդրկովկասի երկրների տերիտորիայի վրա:

VII դ. սկզբի «Աշխարհացոյց»-ը, որը մի ժամանակ վերագրվում էր Մովսես Խորենացուն, իսկ այժմ՝ Անանիա Շիրակացուն, Հին Հայաստանի

աշխարհագրության և քարտեզագրության անզուգական հուշարձան է: Մեր նոր եզրակացությունները հանդում են այն դրույթին, որ «Աշխարհացոյց»-ը սկզբում եղել է մոտավորապես 15 բարտեզների ժողովածու—Ատլաս, որոնց մեջ հիմնականը եղել է մեր կողմից վերակազմվող Մեծ Հայքի, Կողքիսի, Վիրքի և Աղվանքի քարտեզը: Հարցի ուսումնասիրությունն այդ տեսանկյունից ցույց տվեց, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը նկարագրում է Հայաստանը և Անդրկովկասը երկու ժամանակաշրջանում: Առաջինն այն ժամանակաշրջանն է (մինչև 387 թ.), երբ Հայաստանը մի ընդարձակ կենտրոնացված պետություն էր «Մեծ Հայք» անունով, որ նրան հարևան Անդրկովկասի երկրների հետ իրրև առանձին քարտեզ տալիս ենք սույն հրատարակությունով, իրրև վերակազմության փորձ ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա: Երկրորդը՝ հեղինակի ապրած ժամանակաշրջանն է և արտացոլում է Հայաստանի վարչատերիտորիալ բաժանումը 591—610 թվականների միջև: Հայաստանի այս ժամանակաշրջանի քաղաքական սահմանները բոլորովին այլ են և նյութ են հանդիսանալու այլ քարտեզի համար:

Որպեսզի հիմնավորենք մեր նոր տեսակետները «Աշխարհացոյց»-ի մասին, հարկադրված ենք երկար էքսկուրս կատարել անտիկ աշխարհի քարտեզագրության պատմության մեջ: Այս հետադարձ հայացքը քարտեզագրության պատմության ընդգրկում համողիչ է դարձնում մեր ստորև բերվող նոր տեսակետները «Աշխարհացոյց»-ի մասին:

Աշխարհագրության ու նրա հետ սերտ կապված քարտեզագրության զարգացումը պայմանավորված է Հին Հունաստանի ստրկատիրական հասարակարգի զարգացմամբ ու վերելքով:

Մ. Թ. ա. VI դարում Հունաստանում տեղի ունեցած տնտեսական վերելքը և քաղաքական հեղաշրջումները նպաստեցին այն բանին, որ մտավոր աշխատանքը դատվեց ֆիզիկականից և լայն հնարավորություններ ստեղծվեցին մի քննականոր՝ համապարփակ գիտության զարգացման համար: «Հոնիական» պորոցին պատկանող հին հունական մտածողները հանդես են գալիս իբրև տարերային մատերիալիզմի հետևորդներ և արտահայտում են մեկ հասած հնադուր տիեզերագիտական հայացքները. սկսում ք դարգանալ ֆիզիկական աշխարհագրությունը:

Զարգացող առևտուրն ու նավագնացությունը ստաջ են բերում պահանջ՝ կազմելու ծովեղերների նկարագրություններ—պերիպլուսներ (περίπλους) և առանձին երկրների նկարագրություններ—պերիեգեսներ (περιήγησις): Վերջինով էլ պայմանավորված էր աշխարհագրության մեջ երկրորդ ուղղության՝ նկարագրական աշխարհագրության առաջացումը, որը հին հայերը կոչում էին «երկրագրութիւն» կամ «աշխարհագիր»: Ահա այս ժամանակն էր, երբ կազմվեցին առաջին բարտեզները, որոնք պատկերում էին այն ժամանակվա հույների հայտնի երկրամասերը: Առաջին աշխարհագրական բարտեզներից է VI—V դդ. մ. թ. ա. Փոքր Ասիայում ապրող Հեկատոս Միլետացու բարտեզը: Վերջինիս կրտսեր ժամանակակիցն էր (շուրջ 500-ական թթ. մ. թ. ա.) Պարմենիդը՝ «Էլեական» պորոցի ներկայացուցիչը: Նա առաջին անգամ հանգեց այն գաղափարին, որ երկիրը զնդաձև է¹: Հետագայում այս պատկերացումը մեր մոլորակի մասին անընդհատ խորանում է՝ ընդգծելով անտիկ գիտության առաջնորդությունը և կենսունակությունը: Նոր դարացուցող տեսություն էր պայմանավորված երկրի առաջին բարտեզի կազմումը, որի հեղինակն է հին աշխարհի խոշորագույն մտածող՝ փիլիսոփա Դեմոկրիտը (460—370): Վերջինիս բարտեզը հիմք հանդիսացավ հետագա հելենիստական ժամանակաշրջանի մեծ գիտնականներ և մտածողներ Դիկեարքեսի (326—296) և Էրատոսթենեսի (276—194) քարտեզների համար:

Առաջին անգամ փորձում է գիտականորեն ապացուցել երկրի զնդաձևությունը Արիստոտելը (384—322), որի ծառայությունները գիտության առաջ այնքան մեծ են, որ նրան նախորդող շրջանի անտիկ գիտության պատմության մեջ կոչվում է «Ն ա ի ս ա թ ի ս տ ո ս ե լ լ յ ա ն շ ը ջ ա ն»²: Իսկ նրան հետևող նոր շրջանը, որը համապատասխանում է

հելենիստական ժամանակաշրջանին, աշխարհագրական գիտության պատմության մեջ կոչվում է «Ա թ ի ս տ ո ս ե լ լ յ ա ն շ ը ջ ա ն»:

Այս ժամանակաշրջանը բնորոշ է նրանով, որ մի շարք գիտություններ, այդ թվում նաև աշխարհագրությունը, դուրս են գալիս փիլիսոփայության գերիշխանությունից և զարգանում իրենց համար սուսանձնահատուկ ուղիներով: Աշխարհագրության մեջ նշմարվում են երկու տարրեր ուղղություններ՝ ֆիզիկական աշխարհագրություն և երկրագրություն (Χωρογεωγία): Հելենիստական ժամանակաշրջանի կարկառուն դեմքեր Դիկեարքեսը, Էրատոսթենեսը, Պտոլեմիոսը փորձեր են անում չափազերելու երկիրը և կազմում են քարտեզներ, հիմք ընդունելով աստղաբաշխական հաշվումները: Այս ժամանակաշրջանը վերջանում է Ստրաբոնով (65 թ. մ. թ. ա.—21 թ. մ. թ.):

Հելենիստական «արիստոտելյան» ժամանակաշրջանի գիտության նվաճումների հիման վրա է կարգանում Հռոմեական կայսրության գերիշխանության ժամանակաշրջանի գիտությունը:

Հռոմեական կայսրության լայնածավալ տիրությունը, որը ընդգրկում էր Միջերկրական ծովի ավազանը, պահանջում էր նոր աշխարհագրական ստուննասիրություններ կատարել և դրանց հիման վրա կազմել այն ժամանակ հայտնի երկրամասերի քարտեզը:

Հռոմեական տիրապետության ժամանակաշրջանում աշխարհագրությունը և նրա ճյուղը կազմող քարտեզագրությունը նոր վերելքի շրջան են ապրում: Ֆիզիկական աշխարհագրության բնագավառում այս ժամանակ առանձնապես հայտնի էին՝ Օգոստոս կայսեր (27 թ. մ. թ. ա.—14 թ. մ. թ.) ժամանակակից Մանիլիոսը, ակամավոր գիտնական-հանրագիտակ Պլինիոս Ավագը (23—79) և նրա ժամանակակից՝ Սենեկա փիլիսոփան (6 թ. մ. թ. ա.—65 թ. մ. թ.), Կեղծ-Պլուտարքոս անվան տակ հայտնի անանուն հեղինակը և Վիարովլիոսը (I դ. մ. թ. ա.):

Հռոմեական ժամանակաշրջանում շարունակում է իր վերելքը ապրել երկրագրությունը (Χωρογεωγία), որն իր արտահայտությունն է գտել Մարինոս Տյուրոսցու (մ. թ. I դ. վերջին), Փլավիոս Արիանոս պատմաբանի (95—175) և III դ. աշխարհագրագետ Ագաթեմիոսի երկրում: Ավելի երկրորդական դեմքեր էին Կեղծ-Արիանոսը (I դ. կեսերին), Դիոնիսիոս Պերիեգետեսը (II դ.), Պավսանիասը, Սոլինեսը և Ալիենոս Ռուփոս Փեստոսը:

Այս ժամանակաշրջանի համար բնորոշ է, որ ցամաքի և ծովի դասավորման խնդրում գերիշխում էր երկու տեսակետ. ըստ մի տեսակետի,

¹ Дж. О. Томсон, История древней географии, пер. с англ. Н. И. Скаткина. Вступительная статья А. Б. Дитмара, М., 1953, стр. 9.

կիր արտահայտություն է գտել Սենեկայի, Մանլի-
լիոսի և Կեղծ-Պլուտարքոսի մոտ, երկրագնդի մա-
կերեսի վրա գոյություն ունեն միմյանցից օվկիա-
նոսներով անջատված մայր ցամաքներ, ըստ
մյուս կարծիքի, որը գտնում ենք Մարինոս Տյու-
րոսցու և Կղավդիոս Պտղոմեոսի մոտ, գոյություն
ունի մեկ մայր ցամաք՝ իր ներքին ծովերով շրջ-
ջայատված մեկ համաշխարհային Օվկիանոսով:

Այս ժամանակաշրջանում աստղագիտու-
թյունն ու քարտեզագրությունը մեծ ծաղկում ապ-
րեցին աղեքսանդրյան դարոցի ներկայացուցիչ-
ների գործերում, որոնք երկար ժամանակ ազդում
էին գիտության այդ ճյուղերի զարգացման վրա՝
հին հայերի ու արաբների մոտ, և նրանց միջոցով
աշխարհն անցան Արևմտյան եվրոպա¹:

Անտիկ հասարակարգի կործանումից հետո
նրա ոլորտում ընկած երկրներից Հայաստանը
միակ երկիրն էր, որտեղ շարունակում էին զար-
գանալ աշխարհագրությունն ու քարտեզագրու-
թյունը, սակայն արաբական արշավանքների հե-
տևանքով առաջացած երկրի քաղաքական ու տն-
տեսական անկումը երկար ժամանակով ընդհա-
տեց այդ գիտությունների հետագա զարգացումը
մեր երկրում: Բնորոշ է, որ Բյուզանդիայում այս
ժամանակ (VI—VII դդ.) գերիշխում էր Կոլոմաս
Ինդիկոպլևիստի (Կոստանդին Անտիոքացու) հե-
տադիմական տեսությունը տիեզերքի կառուցված-
քի մասին:

Հռոմեական կայսրության առօրյան արդեն
գիտեր քարտեզ կազմել և այն գործածել պործնա-
կան կյանքում:

Աղբյուրներում մնացել են տեղեկություններ
այն մասին, որ հռոմեական զորավարներն իրենց
արշավանքների ընթացքում Հայաստանից Հռոմ
էին ուղարկում ռազմական արշավանքների քար-
տեղներ, որոնք, անշուշտ, պատկերում էին
Հայաստանի այս կամ այն մասը: Սովորաբար
ոտղմական արշավանքը զեկավարող զորավարն
իր ձեռքի տակ ունենում էր քարտեզ, որը նրան
ծառայում էր իբրև ուղեցույց զորամասերի շարժ-
ման ժամանակ: Մեկ հասել են տեղեկություններ,
որոնցից իմանում ենք, որ Օգոստոս կայսեր մեր-
ձավորներից մեկը՝ Ագրիպպան (68—12 մ. թ. ա.)
մտադիր է եղել կառուցել հատուկ սրահ, որտեղ
որմնակարի ձեռով պատկերացնելու էր այն ժամա-
նակվա հայտնի երկրի քարտեզը: Սակայն մահվան
պատճառով նրան չի հաջողվում իրագործել այդ
Ագրիպպայի մահից հետո, որը տեղի ունեցավ
մ. թ. ա. 12 թ., կայսրը իրագործեց այն՝ հրապա-
րակելով Ագրիպպայի նյութերը իբրև քարտեղին

կից տեղեկագիր: Ենթադրում են, որ Ստրաբոնի
մոտ հիշվող «խորոզրաֆիան» հենց Օգոստոսի
կողմից հրատարակված աշխարհագրական տեղե-
կատուն է: Պլինիոսը առանձնապես մեծ գովա-
սանքով է խոսում այդ քարտեղի մասին, այն հա-
մարելով ճշգրիտ գործ:

Ենթադրվում է, որ Ագրիպպայի քարտեզը
կազմելու ժամանակ օգտագործվել են պաշտոնա-
կան նյութեր, դրանց թվում այն նոր չափագրու-
թյուններն ու վիճակագրական տեղեկությունները,
որոնցից օգտվել է նաև Պլինիոսը:

Գիտնականներից ոմանք ժխտում են, որ
սկզբից ևեթ գոյություն է ունեցել բացատրագիր.
նրանք գտնում են, որ հետագայում այդ տեղեկու-
թյունները գրի են առնվել ուղղակի քարտեղից:
Ըստ նրանց կարծիքի, վերջիններս համառոտ բա-
ցատրական նկարագիր են հանդիսանում հիշյալ
քարտեղի դրսևանային օրինակների համար:

Այդ քարտեղին, որը մեզ չի հասել, Պտղոմեո-
սը քննադատորեն էր մոտենում: Մեկ հասած հռո-
մեական միակ քարտեզը Tabula Peutingeriana-ն
է: Վերջինս իրենից ներկայացնում է ժապավեն, ո-
րին հարմարեցված է այդ ժամանակ հայտնի հռո-
մեական քարտեզը:

Ենթադրվում է, որ Ագրիպպայի քարտեզը
վերարտագրում էր էրատոսթենեսի քարտեզը¹,
Ինչպես տեսնում ենք, արդեն Օգոստոսի ժամանա-
կաշրջանում փորձեր էին արվում ստեղծելու ման-
րամասն քարտեղներ և նրանց հիման վրա կազ-
մված բացատրական նկարագրություններ, ինչ-
պիսին, մեր կարծիքով, պետք է լինի նաև հին հա-
յերի «Աշխարհացոյց»-ը:

Այն, ինչ որ Օգոստոսի ժամանակ շկարողա-
ցավ իրագործել Ագրիպպան, մեծ հաջողությամբ
կատարեց II դ. նշանավոր աշխարհագրագետ ու
քարտեզագետ Կղավդիոս Պտղոմեոսը:

«Աշխարհացոյցը» հասկանալու համար մեկ
հարկավոր է ավելի հանգամանորեն կանգ առնել
Պտղոմեոսի ժառանգության վերլուծության վրա:
Անտիկ քարտեզագրությունն իր զարգացման պա-
ղաթնակետին հասավ աղեքսանդրացի աշխար-
հահռչակ գիտնական Կղավդիոս Պտղոմեոսի (90—
168) աշխատություններում, ուստի նշանակալից
է, որ «Աշխարհացոյց»-ի համար իբրև օրինակ ծա-
ռայել են նրա քարտեղներն ու աշխարհագրական
նկարագրությունները և առաջին հերթին Պաուս-
մեոսի՝ այն ժամանակվա համար ամենաառաջա-
գեմ տիեզերագիտական հայացքները:

Պտղոմեոսը աշխարհագրությանը մոտենում է
աստղագիտության տեսանկյունից և նրա քար-

¹ А. Б. Дитмар, см. Дж. О. Томсон, ук. соч.,
стр. 15.

¹ Дж. О. Томсон, ук. соч., стр. 461.

տեղագրական աշխատությունները իր իսկ տիեզերագիտական հայացքների գրաֆիկ արտահայտությունն էին հանդիսանալու: Պտղոմեոսը 127—141 թթ. միջոցին կատարած աստղագիտական դիտողությունների հիման վրա գրում է իր հռչակավոր «Աստղաբաշխության սխեման»¹: Այս աշխատության մեջ Պտղոմեոսը ընդհանրացնում է անտիկ գիտության (Հիպպարքոսից սկսած) եզրակացությունները տիեզերագիտության բնագավառում, ավելացնելով նրանց իր սեփական դիտողություններն ու աստղագիտական հաշվառումները և զարգացնելով երկրի զնդածեղծության մասին գոյություն ունեցող տեսությունը:

Պաղոմեոսը ընդունում է իր նախորդների այն դրույթը, թե երկիրը գնդաձև է, թե այն տեղավորված է տիեզերքի կենտրոնում և գտնվում է անշարժ վիճակում: Այնուհետև Պտղոմեոսը անդրադառնում է երկրի ցամաքի տեղագրության վրա, խոստովանելով լայնության և երկայնության մասին, հիմք ունենալով իր աստղագիտական հաշիվները: Այդ հետազոտությունը, բնականորեն, Պտղոմեոսին բերեց երկրի քարտեզ կազմելու անհրաժեշտություն: Այս նպատակին պիտի ծառայեր նրա 150 թ. մոտերքը հրապարակված ութ գրքից բաղկացած «Աշխարհագրության ձևնարկը» կամ ավելի ճիշտ՝ «Քարտեզների պատրաստելու ձևնարկը»², որտեղ, ինչպես ինքն է ասում, հետապնդում է մի հիմնական նպատակ՝ տալ գիտական քարտեզագրության հիմունքները³:

Հիշյալ աշխատության մեջ հեղինակը ընդգրծում է, որ քարտեզագրումը պիտի հիմնվի բնական վայրերի տեղագրման աստղագիտական հաշիվարկումների վրա, սակայն, իրականում Պտղոմեոսի ցույց տված բնական վայրերի տեղագրման լայնության ու երկայնության տվյալները մեծ մասամբ մտացածին են: Այնուհետև Պտղոմեոսը բացատրում է, թե ինչպես պիտի պատել գլոբուսը համապատասխան զուգահեռների և միջօրեականների ցանցով և նրանց միջև տեղադրել այն ժամանակ հայտնի մայր ցամաքները: Բացի գլոբուսից, Պտղոմեոսը ցույց է տալիս, թե ինչպես պիտի դժագրել քարտեզը հարթ մակերևույթի վրա, օգտագործելով պրոեկցիայի զանազան մեթոդները:

Պաղոմեոսը մայր ցամաքները բաժանում է

¹ Այս աշխատության իսկական վերնագիրն է՝ Μεγεθὺς εὐναεῖα (բառացի՝ «Մեծագույն երկ»), որը առաջին անգամ միջին դարերում թարգմանեցին արաբները և կոչեցին «Almagest»:

² Լավագույնն է Ֆիշերի հրատարակությունը՝ Clavdii Ptolemaei Geographiae, edit. J. Fischer, I—IV, Leyden, 1932.

³ Տես՝ Дж. О. Томсон. ука. соч., стр. 327—328, 463—477.

բազմաթիվ երկրամասերի և, դրանցից յուրաքանչյուրը առանձին վերցնելով, նշում է նրա սահմանները, ապրող ցեղերն ու ժողովուրդները, լեռները, գետերը, քաղաքները և կղզիները (եթև ալգոլիսինները գոյություն ունեն):

Յուրաքանչյուր երկրի նկարագրությունը իրենից ներկայացնում է անունների երկար ցանկ, որոնց մեծագույն մասը (շուրջ 8000 անուն) ունի նրա երկայնության ու լայնության համապատասխան թվական նշում: Այս ձևով նա հերթականորեն տալիս է Եվրոպայի, Աֆրիկայի և Ասիայի ընդհանուր, ապա նրանց մասերը կազմող առանձին երկրների նկարագրությունը:

Այդ թվարկումների հիման վրա ընթերցողը ինքը կարող է ոչ միայն առանձին մի երկրի, այլև աշխարհի ընդհանուր քարտեզ կազմել:

Այդ մեթոդով նրա բնագրի հիման վրա կարելի է կազմել եվրոպական երկրների 10 քարտեզ, Աֆրիկայի՝ 4 և ասիական երկրների՝ 12 քարտեզ: Կարելի է ավելի մանրացնել երկրամասերի թիվը, սրբ և տալիս է քարտեզների մի ամբողջ կոմպլեքս՝ բաղկացած 63 քարտեզից: Այդ են վկայում Պտղոմեոսի տվյալ աշխատության մի քանի ձեռագրերը, շնայած այն բանին, որ հեղինակը ոչ մի տեղ չի նշում, որ նա մտադիր էր քարտեզ կազմել:

Այս է պատճառը, որ գիտության մեջ գերիշխում է այն կարծիքը, թե Պտղոմեոսը իր աշխատությանը քարտեզներ չի կցել, որ մեղ հասած նրա անունով հայտնի քարտեզները կազմվել են ուրիշների կողմից նրա աշխատության բնագրի հիման վրա: Յիշերը առաջինը գիտության մեջ ցույց տվեց, որ «Աշխարհացոյց»-ը առաջին երկն է, որը պահպանել է հնագույն վկայությունը, թե Պտղոմեոսը իր աշխարհագրության ձեռնարկին կցել է քարտեզներ⁴:

Գծախատարար, Պաղոմեոսը երկրի շրջանակի երկարությունը նշելու համար, հետևելով հոտոսյան զուգահեռականին, ընդունել է անհաջող մի թիվ՝ 40.000 ստադիա, որի հետևանքով նա ստացել է ոչ ճիշտ մեծություն: Այս սխալ ելակետը պատճառ է դարձել ամբողջ կառուցվածքի սխալին: Նա բերում է մոտ 8000 աշխարհագրական կետերի անուններ, որոնց կոորդինատները մտացածին են և պարզապես արտադրված են նրա կողմից կազմված քարտեզներից: Այլ կերպ ասած՝ բոլոր այդ քարտեզները կազմված են մոդեռաչափերի (պերիպլոսների և ինտիներարիաների) տարա-

⁴ Տես J. Fischer. Pappus und die Ptolemäuskarten, Ztschr. d. Gesel. f. Erdkunde zu Berlin, 1919, S. 336 և հետ:

ծովթյուններ թվական նշումների հիման վրա, որոնց ճշգրտությունը սովորաբար կասկածելի էր: Այն ժամանակ դեռևս գոյություն չուներ կողմնացույց և կատարյալ ժամացույց, ուստի, աստիճանները որոշելու համար դիմում էին պարզունակ ձևերի: Այս սխալ հաշվումների հետևանքով հաճախ միևնույն կետը հիշվում է երկու անգամ, այն էլ իրարից բավական հեռու:

Պտղոմեոսի յուրաքանչյուր քարտեզ ունի իր մասշտաբը, ուստի միացնել այդ քարտեզները միմյանց հետ հնարավոր չէ:

Պտղոմեոսի բերած առանձին երկրամասերի բնակավայրերի ցուցակները իրենց արժեքը ստանում են այն ժամանակ, երբ նրանց տեղադրում ենք քարտեզի վրա, իսկ առանձին վերցրած՝ նրանք ոչինչ չեն ասում:

Եթե այդպես է, ապա ինչու՞ է Պտղոմեոսը իր նյութը շարադրում է այդ ձևով և ոչ թե քարտեզի ձևով: Սովորաբար այս բացատրվում է նրանով, որ եթե նյութը տրվեր քարտեզի ձևով, ապա հետագա պատճենահանությունները անընդհատ աղավաղումների հետևանքով քարտեզը կհասցնեին անճանաչելիության աստիճանին: Ահա այս հանգամանքն է համարվում հիմնական պատճառը, որ Պտղոմեոսը դերադասել է քարտեզի ամբողջ նյութը շարադրել նկարագրության ձևով, որը հնարավորություն է տալիս ընթերցողին կազմելու քարտեզ: Ենթադրվում է, որ Պտղոմեոսը կազմել է լաբորանտների մի ամբողջ ժողովածու՝ Ատլաս, բայց միևնույն նյութը նա շարադրել է իրեն աշխարհագրության ձևով: Դժվար է պատասխան տալ նաև այն հարցին, թե մեզ հասած մի քանի ձեռագրերին կից գոյություն ունեցող քարտեզները լիստ՞ում են Պտղոմեոսի կողմից կազմված քարտեզներից, թե կազմված են նրանց բացատրական նկարագրությունների հիման վրա: Ինքը՝ Պտղոմեոսը առաջարկում է կազմել 26 տերիտորիաների քարտեզ, սակայն այդ տերիտորիաները նա նկարագրում է նրանց առանձին մարզերով, ուստի այդ շարագրությունից կարելի է կազմել 63 քարտեզ²:

Ինչևիցե, բոլոր դեպքերում, մեզ հասած քարտեզները մեծ արժեք են ներկայացնում, անկախ նրանց կից ընագրից: Քարտեզները կարող են ավելի հին նյութ պարունակել, քան թե նրանցից արտագրված ընագրի չոր ու ցամաք շարադրությունը: Առհասարակ, Պտղոմեոսի Աշխարհագրությունը տարբեր ժամանակաշրջաններին պատկա-

նող փաստերն ամփոփող մի ձեռնարկ է համարվում:

Պտղոմեոսի քարտեզագրական ժառանգության վերլուծությունը ևս ցույց է տալիս, թե ինչ էր իրենից ներկայացնում մեզ հասած «Աշխարհացույց»-ը:

Առաջին աշխարհագրագետը, որը ուշագրություն դարձրեց Պտղոմեոսի աշխարհագրական քարտեզագրական ժառանգության վրա, ըստ X դարում ապրող բյուզանդական դրող Սվիդասի վկայության, Դիոկղետիանոս կայսեր (284—305) ժամանակակից Պապյոս Աղեքսանդրացին էր: Վերջինս ըստ «Աշխարհացույց»-ի, նկարագրեց երկիրը՝ «ըստ ինքնագիր բյուրակին կղաղեայ Պրտղոմէի տիեզերագրութեանց շափուց»¹:

Պապյոս Աղեքսանդրացու «Երկրագրությունը» (ըստ Սվիդասի կոչվել է *Ἐρωστρασια οἰζο: μενικη*)՝ հիշատակվում է միայն «Աշխարհացույցի» մեջ և նրա միջոցով է, որ դադափար ենք կազմում այդ աշխարհագրագետի և նրա երկի մասին: «Աշխարհացույց»-ի համապատասխան վկայությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Պապյոսը սալիս է Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկի» համառոտ շարագրությունը: Միևնույն ժամանակ «Աշխարհացույց»-ը մի շարք տեղերում բառացի կրկնում է Պտղոմեոսի հայտնի երկը: Այս հիմք է տվել Ա. Սուբրյանին ենթադրելու, որ «Աշխարհացույց»-ի հեղինակը Պտղոմեոսի դուրծերի հետ ծանոթացել է ոչ միայն Պապյոսի միջոցով, այլև անմիջականորեն³: Այս վերին աստիճանի ուշագրավ ենթադրությունը, որը անուշադրության են մատնել Ք. Պատկանյանը և Հ. Մանանդյանը, մանրազնին քննարկման է ենթարկել Չիչերը և հանգել է վերին աստիճանի հետաքրքիր և կարևոր եզրակացության: Նա ապացուցեց, որ «Աշխարհացույց»-ի հեղինակը իր ձեռքի տակ է ունեցել ոչ միայն Պտղոմեոսի բնագիրը, այլև նրա կողմից կազմված քարտեզները, որոնց հիման վրա պիտի գրված լիներ մեզ շահասած Պապյոս Աղեքսանդրացու աշխարհագրական երկը: Չիչերը նույնիսկ փորձում է ապացուցել, որ ինչպես Պապյոս Աղեքսանդրացին, այնպես էլ «Աշխարհացույց»-ի

¹ «Աշխարհացույց է դարու», էջ 5 (К. П. Патканов. Армянская География VII века, СПб, 1877), տես և «Աշխարհացույց Մովսեսի Նորենացույ յաւելուածովք նախնեաց», Վինետիկ, 1881, (տես 3-րդ ծան.), էջ 9:

² Պապյոսի մասին տես՝ J. Fischer, Pappus und die Ptolemäuskarten, Ztschr. d. Gesell. f. Erdkunde zu Berlin, 1919, S 336—358.

³ A. Soukry, Géographie de Moïse de Corene d'après Ptolémée. Texte arménien, traduit en français par le P. Arsène Soukry, Venise, 1881, p. III և հետ.

¹ Д.ж. О. Томсон, նշված աշխատությունը, էջ 327—329:

² Նույն տեղում, էջ 477:

հեղինակը, իրենց ձեռքի տակ են ունեցել նաև III դարի քարտեզագետ Ադաթոգեմոնի աշխարհի քարտեզը: «Աշխարհացոյց»-ի բնագրի այդ մասերը ստուգվում են հիշյալ քարտեզով և Պտղոմեոսին վերագրվող այլ քարտեզներով:

Այժմ մենք հիմք ունենք ասելու, որ համաշխարհային աշխարհագրական և քարտեզագրական գրականության մեջ «Աշխարհացոյց»-ը առաջին երկն է, որ շարունակում է անտիկ ժամանակաշրջանի աշխարհագրական գիտության տրագիգիաները, այն էլ սկսված վաղ միջնադարի անհույաստ սլամոններում:

Ինչպես գիտենք, Արևմտյան Եվրոպայի Պրուդոմեոսին վերհիշեց միայն Ռենեսանսի ժամանակաշրջանում, այն է՝ XV դ., իսկ Հայաստանում, «Աշխարհացոյց»-ի և նրան շարունակող Անանիա Շիրակացու երկերի շնորհիվ, Պտղոմեոսի սխեմայի և նրա տիեզերագիտական հայացքները գերիշխում էին ամբողջ միջնադարի ընթացքում: Այս երևույթը ունի իր խոր պատճառները, որոնք պայմանավորված էին մեր երկրի պատմական և արդարացիան յուրահատկություններով:

Հայաստանում ֆեոդալական հասարակարգի դարգացումը հետևանք չէր «քարտեզագրության» ներխուժումների, ինչպես այդ եղավ Արևմուտքում, այլ հետևանք էր երկրի ներքին դարգացման: Այս երևույթը իր կնիքն է դնում հայկական վաղ ֆեոդալական ժամանակաշրջանի մշակույթի դարգացման վրա: Այս ժամանակաշրջանի Հայաստանում մենք չենք տեսնում ընդհատում կամ հետադիմություն երկրի մշակութային երևույթների բնագավառում: Ընդհակառակն, ձևավորվող վաղ ֆեոդալական հայկական մշակույթը հանդիսանում է նախաֆեոդալական ժամանակաշրջանի՝ հայկական սուլ-հելլենիստական մշակույթի անմիջական օրինակալի շարունակությունը: Սրանով է բացատրվում այն երևույթը, որ IV—VII դդ. հայկական մշակույթն իր բոլոր գրեթե ամբողջությամբ հանդես է գալիս իբրև մի ամբողջականություն, իբրև ներդաշնակ միահյուսումն հայ ժողովրդի նախորդ ժամանակաշրջանների նյութական և հոգևոր մշակույթի դարգացման:

Այս ժամանակում էր, որ Հայաստանում իր ժողովրդի շրջանն է ապրում «յունարան դարոցը»: Այս դարոցի ներկայացուցիչները մեծ ուշադրություն են դարձնում անտիկ հույների գիտական ու գրական ժառանգության վրա:

«Հելլենասեր» հայ «քերդողներն» ու «վարդարյետները», պայքարելով քաղկեդոնական եկեղեցու դեմ, պաշտպանում են իրենց տեղական

մշակույթը, դիմելով անտիկ շրջանի հունական մշակույթին: Այս կասկածությունները լայն ծավալ է ստանում թարգմանչական գործունեությունը:

Հունարան դարոցի ներկայացուցիչները, բացի վաղ-բրիտանական ժամանակաշրջանի աստվածաբանական երկերից, թարգմանում են Արիստոտելի, Պլատոնի և անտիկ աշխարհի փիլիսոփայության այլ ներկայացուցիչների գործերը:

Հելլենիստական ուղղությունը VI—VII դդ. հայ փիլիսոփայության մեջ մեծ ազդեցություն է թողնում նաև բնագիտական հայացքների կազմավորման վրա: Այս ժամանակաշրջանում հունարենից հայերենի է թարգմանվում «Արիստոտելի Իմաստասիրի թուղթ առ Աղեքսանդրոս թագաւոր՝ Պատմութիւն յաղագս աշխարհի»՝ երկը: Գիտական բնագիտությունը վաղուց պարզել է, որ հիշյալ երկը Արիստոտելին չի պատկանում: Նրա անվան տակ թարգմանված է մի անձնավորություն, որն ապրել է մոտավորապես մ. թ. I դ. և որին ընդունված է անվանել «Ինդ-Արիստոտել»: Վերջինիս «Ցագագս աշխարհի» երկը մի ծաղկաբաղ է, որտեղ միմյանց են հարմարեցվում Արիստոտելի, Պոսիդոնիոսի, Փիլոն Երբայեցու և այլոց աշխատությունների դրույթները:

Հիշյալ երկը, անշուշտ, «Աշխարհացոյց»-ի և ապա Անանիա Շիրակացու երկերի ազդեցություններից մեկն է. սակայն չի կարելի համաձայնվել այն մտքի հետ, թե իբր այն հանդիսացել է զոլիստիկոս և մեծ ազդեցություն է ունեցել: Այս ժամանակաշրջանի բնագետ-գիտնականների միջև իր ամբողջ հասակով բարձրանում է դարիս մեծագույն մտածող և առաջադեմ գործիչ՝ Անանիա Շիրակացին (610—685), որի գիտական ժառանգությունը անմահ մնաց հայկական միջնադարի ամբողջ ժամանակաշրջանում: Մեր նպատակից դուրս է տալ Անանիա Շիրակացու գիտական ժառանգության բնութագիրը¹. մենք կանգ կառնենք միայն «Աշխարհացոյց»-ի վրա, որը զիջար թե պատկանի Անանիա Շիրակացու գրչին: Մեր նոր եզրակացությունները գալիս են ժխտելու այդ ընդհանրացած կարծիքը:

Հունարան դարոցի ժողովրդի ժամանակաշրջանում շատ բնական է հետաքրքրությունը

¹ Կիրիլև վարդապետի, Մամրէի վերձանդի և Գաւթի Անյաղթի մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 603.—628:

² Ա. Յ. Օ. Թոմսոն, նշված աշխատությունը, էջ 456:

³ Գալուստ Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, «Արարատ», 1896, փետրվար և ապրիլ:

⁴ Տես Ա. Գ. Արբաբաբյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, և В. К. Чалоян, История армянской философии, Ереван, 1959, стр. 129—157.

կղզավիտա Պտղոմեոսի գիտական ժառանգության հանդեպ: Սակայն, բոլոր բանասերները, որոնք խոսում են «Աշխարհացոյց»-ի աղբյուրների մասին, ընկնում են մի ծայրահեղության մեջ: Նրանք ուշադրություն են դարձնում «Աշխարհացոյց»-ի միայն այն մասերի վրա, որոնք առնչություն ունեն Պտղոմեոսի երկերի, կամ նրան ընդօրինակող Պապյոս Աղեքսանդրացու հետ, և գալիս են այն եզրակացության, որ այն Պտղոմեոսի երկի մի ընդօրինակություն է: Ա. Սուբրյանը նույնիսկ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ բնագրի ֆրանսերեն թարգմանությունը վերնագրում է՝ «Géographie de Moïse de Corène d'après Ptolémée», որ անընդունելի է. ընթերցողն այն տպավորություն է ստանում, որ այդ երկը լուրջ մի ընդօրինակություն է, ղուրկ ինքնուրույնությունից: Այլ ծայրահեղության մեջ է ընկել Յ. Ֆիշերը: Նրա կարծիքով ավելի ճիշտ կլիներ «Աշխարհացոյց»-ը վերնագրել «Géographie de Moïse de Corène d'après Pappe d'Alexandrie»¹:

Հարցիս ուսումնասիրողներն անտեսել են այն հանգամանքը, որ «Աշխարհացոյց»-ի հիմնական մասն է կազմում Հայաստանի, Կովկասի և Սասանյան Իրանի աշխարհագրական նկարագրությունը, որը բոլորովին ինքնուրույն և ինքնատիպ երկ է և բոլորովին նոր խոսք է համաշխարհային աշխարհագրության ու քարտեզագրության պատմության մեջ: Մենք տվյալ աշխատության մեջ նույնտակ ենք դրել մասնագետների ուշադրությունը հրավիրել այս հանգամանքի վրա և նոր լույսի տակ զննելով «Աշխարհացոյցը», ճիշտ գնահատական տալ նրան:

Երանականիւով մեր խոսքը «Աշխարհացոյց»-ի մասին, նորից ենք հիշեցնում, որ ներկա աշխատության մեջ մեզ հետաքրքրում է մի հիմնական հարց՝ ի՞նչ է իրենից ներկայացնում մեզ հասած «Աշխարհացոյց»-ը, ի՞նչ նպատակ է դրել իր առաջ հեղինակը՝ հրատարակելով իր աշխատությունը: Գիտության մեջ արմատացած է այն կարծիքը, թե «Աշխարհացոյց»-ը աշխարհագրության ձեռնարկ է. և ղեկ միջնադարյան Հայաստանում: Այդ ճիշտ պետք է լինի դարդացած միջնադարի համար, սակայն արդյոք այդպես էր սկզբնական շրջանում, VII դ. սկզբում:

Այս հարցերին պատասխան տալու համար նախ և առաջ հարկավոր է համեմատել Պտղոմեոսի երկի և նրա քարտեզների ու Ագաթոգեմոսի աշխարհի քարտեզի հետ և «Աշխարհացոյց»-ի բնա-

գիրը իր կառուցվածքի տեսակետից: Երկու բնագրերի համեմատությունը շատ բան է ասում մեզ: Ընդհանուր առմամբ «Աշխարհացոյց»-ի հեղինակը հետևում է Պտղոմեոսի երկի շարադրության հաջորդականության, սակայն հայ քարտեզագետ-աշխարհագրագետը նախ և առաջ իր ժամանակաշրջանի ծնունդ էր և Պտղոմեոսից իր երկի մեջ թողնում էր միայն այն տվյալները, որոնք համապատասխանում էին նաև իր ապրած ժամանակաշրջանին, հակառակ դեպքում նա աշխատում էր նոր նյութերով ամապատասխան դարձնել իր ժամանակվա վիճակին: Արևմտյան Եվրոպան և Աֆրիկան — Լիբիան, ավելի ճիշտ, Արևմտյան Հռոմեական կայսրության տերիտորիաները, «Աշխարհացոյց»-ի հեղինակի հետաքրքրության տեսողաշիջ հետու էին. այստեղ ուժեղ էին անտիկ դրականության տրագիցիաները, ուստի և այս մասում նա բավական հարազատ է Պտղոմեոսի և նրա վրա հենվող Պապյոս Աղեքսանդրացու շարադրություններին: Սակայն ավելի է հեռանում նրանցից, երբ անդրադառնում է հարավարևելյան Եվրոպային, ավելի ճիշտ՝ Արևելյան Հռոմեական կայսրության տերիտորիայի եվրոպական մասին և հատկապես Հունաստանին: Այստեղ նա աշխատում է որոշ պատմական փաստերով կասկածներ հայ ժողովրդի և հույների պատմական անցյալի միջև: Բնորոշ է այս տեսակետից հետևյալ բաժինը՝ Փոքր Ասիայի նկարագրությունը, որը նա անվանում է «Միջերկրեայք»: Այստեղ «Աշխարհացոյց»-ի հեղինակը տալիս է Փոքր Ասիայի վարչական-քաղաքական բաժանման այն պատկերը, որը գոյություն ուներ իր ժամանակ, այսինքն՝ VI—VII դդ.: Պտղոմեոսի երկից մնացել են միայն այն փաստերը, որոնք շարունակում էին գոյություն ունենալ Փոքր Ասիայի բյուզանդական իրականության պայմաններում: «Աշխարհացոյց»-ի հեղինակը խոսում է այնպիսի վարչական բաժանումների մասին, ինչպիսիք են՝ Ուրբիան, Էլիսոպոստոսը, Առաջին Հայքը, Երկրորդ Հայքը և այլն, որոնք Պտղոմեոսի և Պապյոս Աղեքսանդրացու ժամանակները գոյություն չունեին: Պտղոմեոսի բնագրից շատ քիչ բան է մնացել Ասիական Սարմատիայի և Կողքիսի նկարագրության մեջ. իսկ Մեծ Հայքը, Վիրքը և Ալվանքը բոլորովին նոր նյութերի հիման վրա են շարադրվում: Միևնույն ժամանակ շատ հետաքրքիր է, որ Մեծ Հայքին հաջորդող «Յաղագս Ասորուց» վերնագիրը կրող հատվածը համարյա ամբողջովին հարազատ է մնացել Պտղոմեոսին: Այս բացատրվում է նրանով, որ նախարարական ժամանակաշրջանի հելլենականացված Ասորիքը, Եղիպտոսի հետ միասին, մնում էր իրեն անտիկ հասարակարգի և մշակույթի ավանդությունների ամենամեծ պաշտպանը:

¹ J. Fischer, նշված աշխ., էջ 337:

պան: Հոմեակիան ժամանակաշրջանի Ասորիքից շատ քիչ բան էր փոխվել նրա քաղաքական-վարչական բաժանման տեսակետից նաև բյուզանդական ժամանակաշրջանում:

Ասորիքից հետո, երբ խոսվում է Միջագետքի մասին, համոզվում ենք, որ Պտղոմեոսի տվյալները չէին համապատասխանում «Աշխարհացոյց»-ի ժամանակաշրջանի իրականության և վերջինս փաստորեն տալիս է բոլորովին նոր շարադրություն:

Մեծ Հայքից, Վիրքից, Աղվանքից և «Սարմատիայից» հետո «Աշխարհացոյց»-ի լավագույն և ամենից ինքնատիպ բաժինն է «Յաղագս Պարսից» հատվածը, որտեղ հեղինակը մի կողմ է թողնում Պտղոմեոսին և տալիս է բոլորովին ինքնուրույն մի բաժին՝ Սասանյան Իրանի քաղաքական-վարչական բաժանումը: Այստեղ հարկավոր է նշել, որ Մեծ Հայքի, Վիրքի և Աղվանքի համար տալիս է մինչև 387 թվականի քաղաքական-վարչական բաժանման պատկերը, մինչդեռ Սասանյան Իրանի սկետիվյան քաղաքական-վարչական բաժանումը արդեն վերաբերում է «Աշխարհացոյց»-ի հոլինման ժամանակաշրջանին:

Սասանյան Իրանի՝ «Նրանշահր»-ի կազմի մեջ են ցույց տրված 387 թ. հետո Հայաստանում և Անդրկովկասում գոյություն ունեցող քաղաքական բաժանումները՝ Մեծ Հայքի փոխարեն ցույց է տրված՝ «Արմն, որ է Հայք», այսինքն՝ մարզպալեական Հայաստանը, որը «Վարջան, որ է Վիրք» և «Ռան, որ է Աղուանք» մարզպալեությունների հետ մտնում է Քուստի Կապիոհ երկրամասի մեջ: Ինչպես մյուս բաժինները, «Յաղագս Պարսից» հատվածը ևս պիտի իրենից ներկայացնեն մի առանձին բարտեզ: «Յաղագս Պարսից» հատվածը նյութ զարծավ Մարկվարտի «Նրանշահր» կապիտալ մենագրության:

Հետագա շարադրության մեջ «Աշխարհացոյց»-ի հեղինակը նորից վերագտնում է Պտղոմեոսի մոտ ընդունված հաջորդականությանը: Հետևյալ բաժինը համապատասխանում է Պտղոմեոսի մոտ եղած՝ Ասիայի 5-րդ քարտեզի բովանդակությանը:

Asiae tabula V

Assyriae

(«Աշխարհացոյց», էջ 42):

Արուստամ. որ կոչի Ասորեստամ ալսինքն Մուծղ²

¹ J. Marquart, Eranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenacl, Berlin, 1901.

² Այս մասը պահպանվել է «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ և Արուստամը չի կարելի նույնպիսի Ասորեստամի հետ:

Mediae

Sustanae

Persidis

Parthiae

Karmaniae Desertae

Մարք

Աշխարհ Ասիոյ Նլիմացոց է, որ է խուժատան, որում Յոնք Շաւշանիկ կոչին

Պարսք

Արիք, որ կոչին Բուստի խորասահ

Հայ աշխարհագրագետ-քարտեզագետը բաց է թողնում Անապատային Կարմանիան և վերջացնում է հատվածը ասելով՝ «եկևտլք յարեկելս՝ դարձցուք առ հիւսիսի»: Ինչպես այլ տեղերում, այստեղ ևս այս շեղումը պիտի նշանակի, որ սրանով վերջանում է այս քարտեզի նկարագրությունը և սկսվում է հետևյալը: Ասիայի հինգերորդ քարտեզի նյութը շարադրելիս «Աշխարհացոյց»-ի հեղինակը այնքան է շեղվում Պտղոմեոսից, որ փաստորեն մնում է միայն հաջորդականության սիտեմը: Այդպես է նաև Ասիայի վերջին քարտեզների նկարագրությունը:

Հարազատ պահպանելով Պտղոմեոսի մոտ ընդունված երկրամասերի նկարագրության հաջորդականությունը, «Աշխարհացոյց»-ի հեղինակը, այն դեպքում, երբ տալիս է համառոտ շարադրություն, զուրա է գալիս իր մեծ նախորդի մոտ մասանշված քարտեզների շրջանակներից. և տալիս է ընդհանրացնող քարտեզներ: Այս պատճառով քարտեզների թիվը «Աշխարհացոյց»-ում ավելի քիչ է, քան Պտղոմեոսի մոտ:

Բաղդաստությունը Պտղոմեոսի շարադրության սիտեմի հետ, մեզ բերում է այն նկարագրության, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը իր նյութը շարադրում է հետևյալ քարտեզների սահմաններում:

Առաջին քարտեզը, որը բոլոր քարտեզների համառոտ հանրագումարը պիտի լինեն, «Աշխարհացոյց տիեզերաց»-ն է, որի պատկերացման հաջող փորձը կատարել է Ք. Պատկանյանը¹ և որը բխում է հայ հեղինակի և Պտղոմեոսի տիեզերագիտական հայացքների ընդհանրությունից: Այս քարտեզը արտարուստ նման լինելով Պտղոմեոսի քարտեզին, իր մանրամասնություններով, սակայն, տարբերվում է նրանից: Ֆիշերին հետևելով, պիտի կարծել, թե այդ տարբերությունը առաջացել է նրանից, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ղեկավարվել է Ազաթոդեմոնի աշխարհի քարտեզով:

¹ Տես՝ «Աշխարհացոյց է դարձ», էջ 6, «Քարաէս Պոպոմեոսի»: К. П. Пагканов, Армянская География VII века, Пб., 1877.

Ինչպես Պտղոմեոսը, այնպես էլ «Աշխարհացոյց»-ը Եվրոպայի երկրները բաժանում է երկու մասի՝ արևմտյան և արևելյան: Պտղոմեոսի մոտ այդ սահմանագատումը արևելյան մասում է թողնում Իտալիան՝ իր Սարդիինիա, Կորսիկա և Սիկիլիա կղզիներով, այնինչ նրանցից արևելք գտնվող Դալմատիան ընկնում է արևմտյան մասում: «Աշխարհացոյց»-ի մոտ այդ սահմանագիծը անցնում է մոտավորապես միջօրեականի 18-րդ աստիճանով, որը համապատասխանում է Արևմտյան և Արևելյան Հռոմեական կայսրությունների 395 թվականի բաժանման գծին:

Այդպիսով, «Աշխարհացոյց»-ում երկրորդ բարտեզը ընդգրկում էր Արևմտյան Հռոմեական կայսրության եվրոպական մասը: «Սիկիլիա մեծ կղզի»-ն նկարագրելուց հետո «Աշխարհացոյց»-ի հեղինակը նշում է՝ «Արդ զայս կարգ ի բուն հանելով՝ դարձցուք ի հիախիս, ի մնացեալ մասնէն Ուլկիանոսի և Անծանօթ երկրի, այլ աշխարհատող զԵւրոպիա ամցուք ի հարսու կոչս մինչև ցՅունաց ծովն»¹:

«Աշխարհացոյց»-ի երրորդ բարտեզն ընդգրկել է Արևելյան Հռոմեական կայսրության եվրոպական մասը, ներառյալ Եվրոպական Սարմատիան՝ «քնաշխարհ Եւրոպիայ Սարմատացոց աշխարհին», «Տաւական ցամաքկղզին, այսինքն գՔևոսոն», «Թրակացոց աշխարհին», Մակեդոնիան և Ելլադան: Սրանով վերջանում է «Առաջին հատածն», այսինքն Եվրոպայի մայր ցամաքը և ապա սկսվում է «Երկրորդ հատածն աշխարհիս», այսինքն՝ Աֆրիկան՝ «Արիս»-ն, որը կազմում էր առանձին՝ չորրորդ բարտեզ և հանդիսանում է Պտղոմեոսի՝ Աֆրիկայի 4 բարտեզների համառոտությունը:

Եթե Հայաստանից հետո գտնվող Եվրոպայի և Լիբիայի համար «Աշխարհացոյց»-ի հեղինակը բավարարվում էր երեք համառոտ բարտեզներով, ապա իր հայրենիքի և նրան շրջապատող երկրների համար նա օգտագործում է Պտղոմեոսի մոտ գոյություն ունեցող բարտեզների տախտակները: Այդ տեսակետից ուշադրավ է, որ Պտղոմեոսի Astae tabula prima-ն ճշտիվ համապատասխանում է «Աշխարհացոյց»-ի «Միջերկրային» կոչված հատվածին: Մեկ հասած՝ XV դարում տպագրված այդ բարտեզը՝ լրիվ գաղափար է տալիս, թե ինչ էր իրենից ներկայացնում նրա հայրենի փոփոխված ընդօրինակությունը: Բնորոշ է, որ հայ բարտեզագիրը օգտագործել է Պտղոմեոսի բարտեզի

սխեման, ներդրելով Փոքր Ասիայի բյուզանդական ժամանակաշրջանի քաղաքական-վարչական բաժանումը, կցելով նրան նաև Կիպրոս կղզու նկարագրությունը: Փոքր Ասիայի նկարագրությունը «Աշխարհացոյց»-ում վերջանում է հետևյալ բաներով. «Ահա կատարեցան Միջերկրեայք կոչեցեալք»: Վերջինս «Աշխարհացոյց»-ի հինգերորդ բարտեզը պիտի լինի: Վեցերորդ բարտեզը պիտի համապատասխաներ Պտղոմեոսի Asiae tabula secundae-ին և բովանդակելու էր «Աշխարհ Ասիոյ Սարմատացոց» բաժինը:

Յոթերորդ բարտեզն է Պտղոմեոսի Asiae tabula tertia-ն, որի XV—XVII դդ. Եվրոպական ապագիր ընդօրինակությունները մեզ հասել են մի քանի հատի: Բավական է նայել այդ բարտեզների վրա, սրբուհիի համովինը, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ճշտիվ պահպանել է Պտղոմեոսի բարտեզի շրջանակները և այդ բարտեզը պարունակող երկրամասերի նկարագրության հաջորդականությունը:

Colchidis	Կողքիս
Iberiae	Վիրք
Albaniae	Աղուանք
Armeniae Maioris	Մեծ Հայք ²

Վերջացնելով այս բաժինը՝ «Աշխարհացոյց»-ը ստում է՝ «Ահա կատարեցան ամենայն Հայք»³ («Աշխարհացոյց», էջ 38), որ պիտի նշանակի, թե սրանով վերջանում է այս բարտեզը և սկսվում է հետևյալը: Մեր ենթադրությունը ավելի ակնհայտ կդառնա, եթե բերենք Պտղոմեոսի տեղեկությունները Asiae tabula tertia-ի մասին: Իր «Աշխարհագրության» վերջին՝ ութերորդ գրքի 19-րդ գլխում Պտղոմեոսը նկարագրում է Ասիայի երրորդ բարտեզը հետևյալ շրջանակներում.

«1. Ասիայի երրորդ բարտեզը պարունակում է՝ Կողքիսը, Վիրքը, Աղուանքը և Մեծ Հայքը: Նրա մեջտեղով անցնող զուգահեռականը այնպես է հարարելում միջօրեականին, ինչպես 14-ը 15-ին:

2. Այդ բարտեզը արևելքից սահմանափակված է Վրկանից ծովով և Մեդիայի մասով, հարավում՝ Միջագետքով և Ասորեստանով, արևմուտ-

¹ Ibid. pp. 64 (Tertia Asiae tabula), 65 (Tabula Asiae III).

² Պտղոմեոսի ժամանակ Մեծ Հայքին սահմանակից Փոքր Հայքը վարչականորեն մտնում էր Կապադովիայի կազմում:

³ Դատելով այս մեջբերումից, կարելի է կարծել, որ «Աշխարհացոյց»-ում այս բարտեզը պիտի կոչվեր «Հայք», կամ «Աշխարհացոյց Հայք»:

¹ «Աշխարհացոյց», էջ 16:

² Z. Khanzadian, Atlas de cartographie historique de l'Arménie. Courbevoile (Seine), 1960, pp. 66 [Prima Asiae tabula], 66 [Tabula Asiae I],

րից՝ Կասպագոլվիայով և Նվքսիճյան Պոնտոսի մասով, հյուսիսից՝ Ասիական Սարմատիայով»¹։

Օգտագործելով Պտղոմեոսի քարտեզի սխեման, «Աշխարհացոյց»-ի հեղինակն այն հագեցրել է բոլորովին նոր բովանդակությամբ։ Այդ տեղյալների տեղադրումը այժմյան քարտեզի վրա ցույց է տալիս, որ հայ «Աշխարհացոյց»-ի մեղ շհասած Հայաստանի ու Անդրկովկասի քարտեզը իր ճշգրտությամբ բավականին մոտ պիտի լիներ այժմյան քարտեզներին։

Հետևյալ՝ ութերորդ քարտեզը համապատասխանում է Պտղոմեոսի Asiae tabula IV-ին և իր ժամանակին արդեն այնքան ճշգրիտ է եղել, որ այժմյան քարտեզին շատ է մոտենում։ Բավական է ցույց տալ 1572 թ. հրատարակված ընդօրինակությունը², որպեսզի համոզվենք դրանում։

Այստեղ ևս «Աշխարհացոյց»-ը ճշտիվ պահպանել է Պտղոմեոսի քարտեզի սխեման և տալիս է երկրամասերի նկարագրության նույն հաջորդականությունը։

Cypri insulae³
Syriae
Palestinae
Arabiae Petraeae
Mesopotamiae
Arabiae Desertae

Ասորիք
Հրեաստան
Ապառաճ Արարիա
Միջագետք
Անապատ Արարիա
Արարիա և զեմուն⁴, որ է Երջանիկ
Աշխարհ Բարիլացոց

Babyloniae

Իններորդ քարտեզը, ինչպես նշեցինք, «Աշխարհացոյց»-ի հեղինակի կողմից կազմված Սասանյան Իրանի՝ «Նրահախու»-ի քարտեզն էր, որը պիտի կոչվեր «Աշխարհացոյց Պարսից»։ Հետևյալ տասներորդ քարտեզը նորից վերարտադրում է Պտղոմեոսի սխեման՝ Asiae tabula V կոչվող քարտեզը, որի մասին խոսեցինք վերև։ Այս քար-

տեզից արեւելք և հյուսիս գտնվող երկրների համար «Աշխարհացոյց»-ի հեղինակը նորից պիտի դիմեր ընդհանրացնող քարտեզներին։ Ըստ երեւոյթի գոյություն ունեին՝ Սկիթիայի, Հնդկաստանի, Տապաբաւնիա (Տեյլոն) կղզու, Ճենաստանի (Չինաստան) և Սինէացոց (Հնդկաչինի) աշխարհի քարտեզները։ Եթե մեր ենթադրությունը ճիշտ է՝ «Աշխարհացոյց»-ը, իբրև առաջինն ատլաս, բաղկացած էր մոտավորապես 15 կարտեզից։

Մենք վերևում մանրամասն կանգ առանք Պտղոմեոսի «Աշխարհագրության» ձեռնարկի բրեւոյթի վրա, որպեսզի բացահայտենք «Աշխարհացոյց»-ի բնույթը նրա հրատարակման ժամանակաշրջանում։ «Աշխարհացոյց»-ի բնագրի մանրազնին ուսումնասիրությունը, այդպիսով, ցույց է տալիս, որ վերջինիս հեղինակը նույն նպատակներն էր հետապնդում, ինչ որ Պտղոմեոսը, այն է՝ տալ քարտեզագրական բնույթի աշխատություն։ Ինչպես Պտղոմեոսի «Աշխարհագրության ձեռնարկը» սովորաբար անվանվում է «Քարտեզներ պատաստելու ձեռնարկ», այնպես էլ «Աշխարհացոյց»-ը կարելի է դիտել իբրև մի խումբ քարտեզների նկարագրող ձեռնարկ։ «Աշխարհացոյց»-ի ժամանակաշրջանում արդեն պարզ էր, որ Պտղոմեոսի քննակալայնքի տեղադրման հիմնական եղանակը, հիմնված աստղագիտական հաշիվների վրա, ժխտվում էր իրական տվյալներով և պարզ էր, որ նրա տված քննակալայրերի տեղադրման լայնության ու երկայնության տվյալները մեծ մասամբ մտացածին են, իսկ այդ տեղադրումները ճշտորոշելու համար իրական Պտղոմեոսը դիմել է մղոնաչափերի ցուցմունքներին։ Իհարկում, մենք տեսնում ենք, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը այնտեղ, որտեղ Պտղոմեոսի «Աշխարհագրության ձեռնարկի» համառոտ շարադրությունն է ներկայացնում, բերում է որոշ տեղյալներ Պտղոմեոսի քարտեզագրական հաշվառումներից, իսկ այն մասում, որտեղ նա ինքնուրույն է մանավանդ Մեծ Հայքի, Վիրքի, Ադվանի և Սասանյան Իրանին վերաբերող պոլիսներում, նա բուրոյին անտեսում է Պտղոմեոսի աստիճանական ցանցը, ղեկավարվում է իր կողմից հավաքված իրական փաստերով և հասնում է փայլուն սրբյունքների։ Ինչպես ցույց է տալիս Տիրերը «Աշխարհացոյց»-ը մեծ մասամբ ղեկավարվել է քարտեզագրական նյութերով, որոնց մեջ դպրի տեղ էր գրավում Ազաթոգեմոնի աշխարհի քարտեզը, հիմնված մեղ հասած Պտղոմեոսի աշխարհի քարտեզի վրա։ Այն և նման նյութերի օգտագործումը ինքնին բացասում էր Պտղոմեոսի մոտ բերվող քննակալայրերի ու աշխարհագրական կետերի

¹ Asiae Pinae γ. § 1. 'Ο τρίτος πίνας τῆς Ἀσίας περιέχει Κολχίδαν, καὶ Ἰβηρίαν καὶ Ἀλβανίαν καὶ τὴν Μεγάλην Ἀρμενίαν. 'Ο δὲ διὰ μέσου αὐτοῦ παράλληλος λόγος ἔχει πρὸς τὸν μεσημέριον, ὃν τὰ αὐτὰ πρὸς τὴν.

² § 2. Περιορίζεται δὲ ὁ πίνας ἀπὸ μὲν ἀνατολῶν μέρει τῆς Ὑγκανίας θαλάσσης καὶ ὁμοίως μέρει τῆς Μηδοίας, ἀπὸ δὲ μεσημέριας Μεσοποταμίας καὶ Ἀσσυρίας, ἀπὸ δὲ δόσεως Καππαδοκίας καὶ μέρει τοῦ Ἰσθμοῦ Ἰνδοῦ, ἀπὸ δὲ ἀρκτων Σαρματίας τῆ ἐν Ἀσία (Cl. Ptol. Geographiae, lib. VIII, cap. 19, Asiae tabula III).

³ Z. K h a n z a d i a n, Atlas de cartographie historique de l'Arménie, Gourbevole (Seine), 1960, p. 107 (Asiae III tab.).

⁴ Ինչպես տեսանք «Աշխարհացոյց»-ի հեղինակը Կիւրոսը ցույց է տալիս «Միջերկրեայք» քարտեզի վրա։

⁵ Պտղոմեոսի մոտ Ἀραξία Ἐσθραΐμων երկիրը բոլորովին այլ տեղ է ցույց տրվում՝ Իրանի խորքերը գտնվող Կարմանիայի կողմին։ «Աշխարհացոյց»-ի այս մոտեցումը կարիք ունի պարզարանման։

լաշնութեան ու կրկանութեան թվական ավայ-
նեքը:

«Աշխարհացոյց»-ի հեղինակն ինքը ցույց է տալիս, որ իր համար ամենից ծանոթ երկիր՝ իր հայրենիք Մեծ Հայքի նկարագրման համար, Պտղոմեոսի ավայնեքը չէին բավարարում, ուստի նա հարկադրված է ղրմել այլ աղբյուրներ: Երեսնամյա Մեծ Հայքը կազմող 15 նահանգների մասին, նա ասում է՝ «Արդ կամիմ զգոսս ման-
րամասնաբար պատմել, թէ և սակաւ ինչ աշ-
խատիցիմ ի զիր և ի քարտէս»¹: Սակայն համեմա-
տութեամբ Պտղոմեոսի աշխատութեան հետ ցույց է տալիս, որ նա նոր նշումներով է ղեկավարվել ոչ միայն Հայաստանի մասը ղրելիս, այլև նրան հարևան երկրները նկարագրելու ժամանակ: «Սար-
մատիայի» և Կողքիսի նկարագրութեան համար նա ղեռնա որոշ շարժում օգտվում է Պաուսանոսի ավայ-
նեքից, սակայն, հիմնականում ղեկավարվում է նոր ավայնեքով, որոնք ցույց են տալիս հիշյալ եր-
կրների մասին Պաղոմեոսի տեղեկութեանների ոչ բոլոր ղեկավարում հավաստի բնույթը: Իսկ Վիրքիի ու Ազովանքի նվիրված ղրկվածները ոչ մի առնչու-
թեան չունեն Պաղոմեոսի ավայնեքի հետ, զբը-
ված են բնութագրելու նոր նշումների հիման վրա և իրենց մանրամասնութեաններով ետ շին մնում Հայաստանին նվիրված բաժնից: Վերջապես, հի-
շատակենք Սասանյան Իրանին նվիրված բաժնը, որը վերարտադրում է այդ պետութեան VI—VII դդ. ղրկված ունեցող բաղադրական ու վարչական բա-
ժանումը և իր մանրամասնութեամբ շունչի նախոր-
դը համաշխարհային գրականութեան մեջ:

Վերևում մենք տեսանք, որ Պաղոմեոսը ոչ մի տեղ չի նշում, թե մտադիր էր կազմելու քար-
տեղներ, այնինչ հասաղտոտողները միաբան հան-
դիւն են այն եզրակացութեան, որ նա կազմել է քարտեղների մի ամբողջ ժողովածու, այսինքն՝
ատլաս. սակայն քարտեղների վրա եղած նշումը
նա շարադրել է նաև առանձին և, սյուպիսով,
միևնույն ժամանակ ավել է աշխարհագրութեան
ձեռնարկ: «Աշխարհացոյց»-ի մանրադնին քննու-
թեանը բերում է նույն նկարագրութեան, որ նրա
հեղինակը ճիշտ և ճիշտ նույն նպատակն է հետա-
պնդել, ինչ որ Պաղոմեոսը—տալ քարտեղների
ժողովածու-ատլաս, և միևնույն ժամանակ այդ
քարտեղների ավայնեքը շարադրել առանձին, ա-
յլով աշխարհագրական ձեռնարկ՝ որը հասել է մեզ,
իսկ քարտեղները բաժանել են Պաղոմեոսի քար-
տեղների բախտը՝ նրանք կորել են: Ոմանք նույ-
նիսկ տարակուսում են, թե արդյոք այդ քարտեղ-

ները հիմք են ծառայել Եվրոպայի վերածննդի ժա-
մանակաշրջանի քարտեղների համար, թե վերջին-
ները կազմված են Պաղոմեոսի տեքստի ցուց-
մունքների հիման վրա:

Վերոհիշյալ մեր կոհեմում «Աշխարհացոյց»-ի
բնույթի մասին արտացոլվում է նաև «աշխարհա-
ցոյց» բառի քննութեամբ: Այս ժամանակաշրջանի
համար «աշխարհագրութիւն» տերմինի կողքին
հայերենում ավելի հաճախ գործ էին ածվում՝
«աշխարհագիր» և «եւրագրութիւն» բառերը, որոնք
հոմանիշ են հունարեն γεωγραφία և κοσμο-
γραφία տերմիններին¹: «Աշխարհացոյց» բառը,
պարզապես, նշանակել է՝ «Յույց և ցուցակ աշ-
խարհի, տեսարան տիեզերաց ծրարելալ իւր օրի-
նակաւ»², կամ «Աշխարհը ցոյց տուող քարտէս,
որի վրայ նկարուած է աշխարհը, կամ նրա մի
մասը»³: Ուրեմն, հին հայերենում, բացի «Բարտեզ»
բառից գործ են ածել նրան հոմանիշ և ավելի
հասկանալի «աշխարհացոյց» բառը: Այս բառը
գործ է ածվել ղեռնա XVII—XVIII դդ., Ամստեր-
դամում և Վենետիկում հրատարակված մի շարք
հայերեն քարտեղներում: Օրինակ, 1695 թ. Ամս-
տերդամում հայերեն լեզվով հրատարակված կի-
սագեղների քարտեղը կոչվում է՝ «Համապարտ աշ-
խարհացոյց»⁴:

Ուրեմն, կարելի է ենթադրել, որ հեղինակը
«աշխարհացոյց» ասելով հասկացել է «Բարտեզ»
կամ «Բարտեզների ժողովածու»՝ «ատլաս», սա-
կայն, ժամանակի բնիցքում, երբ քարտեղները
կորել են և մնացել են միայն նրանց նկարագրող
տեքստերը, նույն վերնագիրը ստացել է «աշխար-
հագրութեան ձեռնարկ» իմաստ:

Այդպիսով, մեզ հասած «Աշխարհացոյց»-ի
բնագիրը կարելի է համեմատել հին ռուսական
«Книга Большому Чертежу» աշխատութեան
հետ XV դ. Ռուսաստանը գործել էր լայնածավալ
է հզոր բաղմազ պետութեան, որի մասին ճիշտ
պատկերացում ունենալու համար հարկավոր էր
կազմել մանրամասն քարտեղ: Ահա այդպիսի մի
քարտեղ կազմվեց XVI դ. երկրորդ կեսին, որը
հայտնի էր «Большой Чертеж» անունով: Այս


¹ Տե՛ս՝ Նոր Բաղադրք Հայկական լեզուի, Ա., Վե-
նետիկ, 1836, էջ 260, «Աշխարհագիր» բառի տակ: Այս
բառը ունեցել է նաև այլ իմաստ՝ պետական մարզահամար
և ցուցակագրութեան, վիճակագրութեան:

² ՆՆԲ (Նոր Հայկացյան բառարան), Ա., էջ 261, «Աշ-
խարհացոյց» բառի տակ:

³ Ստ. Մ ա լ ի ս ս լ ա ն յ ց, Հայերեն լեզուի բացա-
րական բառարան, Ա., էջ 197, «Աշխարհացոյց» բառի տակ,
իրեն օրինակ բառակազմութեան բերվում են՝ «Աշխարհա-
ցոյց քարտէս», «Ամերկամասն բազմագույնեան աշխարհա-
ցոյցներ»:

⁴ Տե՛ս՝ Z. K h a n z a d i a n, Atlas de geographie his-
torique de l'Arménie, Paris, 1920, planche XI, carte № 17,

¹ «Աշխարհացոյց է գարու»: Տե՛ս К. П. Парканов,
Армянская География VII века, СПб, 1877 էջ 17:



քարտեզը այնուհետև մի քանի անգամ վերակազմվել է նոր ուղղումներով ու հավելումներով, սակայն, ցավոք սրտի, ոչ մի օրինակ այդ քարտեզից մեզ չի հասել, կորստից փրկվել է միայն նրա հավելումը կազմող «Книга Большому Чертежу» գիրքը, որը քարտեզից արտագրված բնագիր է՝ Ռուզարովի է, որ XVII—XVIII դդ. շեմքին «Книга Большому Чертежу» գիրքը դիտվում է իբրև ոչ միայն որպես տեղեկատու ձեռնարկ, այլև իբրև Ռուսաստանի աշխարհագրության ձեռնարկ և այն մտնում է հանրակրթական գրականության շարքը։ Այս ժամանակվանից «Книга Большому Чертежу» գիրքը մտնում է պատմա-աշխարհագրական բնույթ ունեցող ժողովածուների մեջ։ Հենց այդ ձևով են մեզ հասել այդ աշխատության բազմաթիվ գրչագիր օրինակները։ Հետաքրքիր է նաև այն, որ «Книга Большому Чертежу» գիրքը անընդհատ փոփոխվում էր նոր ընդմիջարկումներով ու հավելումներով, որոնք գրի էին առնվում «Большой Чертеж» քարտեզի գոյություն ունեցած տարրի փարիսաներից¹։

Ինչպես տեսնում ենք, քարտեզագրության սկիզբը Ռուսաստանում նույն ձևով է ընթացել, ինչ որ հին աշխարհում՝ կազմվել է երկրի քարտեզ, ապա նրա տվյալների արտագրությամբ կազմվել է առանձին գիրք, որը նրա բացատրական բնագիրն էր։ Հետագայում քարտեզները կորել են, իսկ բնագիրը մնացել է և գործ է ածվել իբրև Ռուսաստանի աշխարհագրության ձեռնարկ։

Վերագառնալով «Աշխարհացոյց»-ի խնդրին, մենք տեսնում ենք, որ վերջինս հանդիսանում է հայկական քարտեզագրության անդրանիկ գործը։ Հեղինակը, հետևելով Պտղոմեոսին և մասամբ էրա աշխատության համառոտ շարադրության բնագրին, որ III դ. վերջին կատարել էր Պապայոս Աղեքսանդրացին, համառոտ տալիս է նրա տիեզերագիտական տեսությունը, ապա, նրա քարտեզների հիման վրա, կազմում է մի քանի «աշխարհացոյց»-փառեզ և միևնույն ժամանակ գրի առնում այդ քարտեզների բովանդակությունը, բաժանելով այն առանձին զլուխների ըստ այն հաջորդականության, որ ուներ Պտղոմեոսի «Աշխարհագրության ձեռնարկը» (հիշենք, որ վերջինս կոչվում էր նաև Քարտեզներ պատրաստելու ձեռնարկ)։

Այստեղ հարկավոր է նշել նաև մի վերին աստիճանի հետաքրքիր երևույթ։ XV—XVI դդ. տպագրված՝ Պտղոմեոսի քարտեզները հաճախ իրենց վրա կրում են քարտեզի տվյալների բովանդակու-

թյունը, որ, Պտղոմեոսին համապատասխան, երկրի եկարագրության համառոտ բովանդակությունն է՝ Այս հանգամանքը թերևս մեզ բացատրում է, թե ինչ էր իրենից ներկայացնում Պապայոս Աղեքսանդրացու բնագիրը՝ արդյոք իր կողմից պատրաստած քարտեզների համառոտ բացատրագիրը չէ՞ր, որ ինքնին Պտղոմեոսի երկրի համառոտությունն էր հանդիսանալու ի վերջո հարկավոր է նշել, որ XV դարից սկսած, երբ Արևմտյան Եվրոպան սկսեց գրադվել քարտեզագրությամբ և սկսեց քարտեզների տպագրության գործը, Արևելքի երկրներից ամենից մեծ ուշագրության թերևս արժանանում է, Պաղեստինից և Ասորիքից հետո, Հայաստանի քարտեզը, հատկապես այն ձևով, որ Պտղոմեոսի մոտ հայտնի է իբրև Asiae tabula III: Բացի նրանից, որ այդ երևույթը դալիս էր հնից, երբ Հայաստանը դիտվում էր իբրև անտիկ աշխարհի հյուսիս-արևելյան ծայրամաս, ուներ նաև մի այլ պատճառ։ Միջնադարյան Եվրոպայի եկեղեցական միջավայրում տակավին վառ էր մնում հիշողությունը բիրլիական Արարատ լեռան մասին, իսկ Հայաստանը դիտվում էր այն երկիրը, որտեղ գտնվելիս է եղել, ըստ ավանդության, «գրախորը»։ Մեզ հասել են Հայաստանի մի շարք տպագիր քարտեզներ, սովորաբար Պաղոմեոսի քարտեզի հիմքի վրա, որտեղ նշված է Արարատ գագաթը՝ Նոյի տապանը վրան, իսկ Կասպից ծովում նկարված է մի տուն, որի վրա սովորաբար լատիներեն գրված է arca Noe¹, Կան նաև Հայաստանի քարտեզներ, որտեղ հատկապես ցույց է տրված «գրախորը»²։

Ինչպես տեսնում ենք, այս հանգամանքը ևս նպաստել է այն բանին, որ ուշ միջնադարյան եվրոպայում բավական շատ են լույս տեսել Հայաստանը նկարագրող քարտեզները։

«Աշխարհացոյց»-ի բնագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն է ունեցել մոտավորապես 15 քարտեզ, հետևյալ հաջորդականությամբ.

1. «Աշխարհացոյց Տիեզերաց»³,
2. «Աշխարհատող Եւրոպիաց» (Արևմտյան Հռոմեական կայսրության եվրոպական մասը),
3. Արևելյան Հռոմեական կայսրության փառեզ,
4. Լիբիայի (Աֆրիկայի) փառեզ,
5. «Աշխարհացոյց Միջերկրեայց».
6. Ասիական Սարմատիայի փառեզ,

¹ Z. Khanzadian, Atlas de cartographie historique de l'Arménie, Corbevoie (Seine), 1960, p. 65.

² Նույն տեղում, էջ 43:

³ Մենք գտնում ենք, որ «Աշխարհացոյց»-ը պետք է սկսվի աշխարհի բնականորեն մի նման քարտեզով:

¹ Книга Большому Чертежу, М.—Л., 1950, с.р. 3.

² Там же.

7. «Աշխարհացոյց Հայոց»—Մեծ Հայքի, Կող-
բիսի, Վիրքի և Աղուանքի քարտեզ,

8. Ասորիի, Բիջազնի, Ռարիլոնի և Աւա-
լիայի քարտեզ,

9. «Աշխարհացոյց Պարսից» — Սասանյան
Իրանի պետութեան («Մահաշահ»-ի) քարտեզ,

10. Արեւմտյան Իրանի քարտեզ:

Պատր Է լինելին նաև այլ քարտեզներ, մասա-
վորապես 5 հատ—Սկիւրիայի, Հնդկաստանի.
Տապոբարանի (Տեյլոն) կղզու, Ճենաստանի (Չի-
նաստան) և Սինէացոց աշխարհի (Հնդկաշին):
Նշված քարտեզներից առաջինը և վերջին հինգը
պիտի կազմված լինելին համաձայն Պողոտմնոսի
քարտեզների հիման վրա կազմված Ագաթոգեոսի-
նի քարտեզի: Դեռևս Մարկվարտը (տե՛ս Eransahr,
էջ 140 և 150, ծան. 49), անդրադառնալով Սկյու-
թիայի նկարագրութեանը «Աշխարհացոյց»-ում, նը-
շում է, որ վերջինիս հեղինակը այդ երկրի մասին
խոսելիս դեկլավարվել է Պողոտմնոսի քարտեզնե-
րով: Յիշերը ցույց է տալիս, որ տվյալ գեոգրոմ
օգտագործվել է Պողոտմնոսի Ասիայի VII քար-
տեզը: Մնացյալ քարտեզները մեծ մասամբ կազ-
մրվել են նոր նյութերի հիման վրա, որոնք տալիս
էին VI—VII դարերի քաղաքական-վարչական բա-
ժանման պատկերը: Ուշագրավ է, որ մեզ հասած
բնագրի հիման վրա կարելի է կոահել, թե այս
քարտեզներն ունեցել են տարբեր մասշտաբներ:
Տիեզերքի կամ աշխարհի քարտեզը ունեցել է ավե-
լի փոքր մասշտաբ: Ավելի բնագրաձակ է եղել
«Նորանշահ»-ի (Սասանյան Իրանի պետութեան)
քարտեզը, իսկ Կողքիսը, Վիրքը, Աղվանքը, Մեծ
Հայքը և «Սարմատիան» (հարավային մասը)
պատկերացնող քարտեզը եղել է մեծագիր և ման-
րամասն. ինչպես ցույց է տալիս մեր կողմից հրա-
տարակված քարտեզը:

Վիրքը և Աղվանքի այդպի մանրամասն նկա-
րագրութեանը պայմանավորված է ոչ միայն այն
բանով, որ նրանք բնկնում էին Հայաստանի քար-
տեզի շրջանակներում: Կար նաև մի շատ ավելի
կարևոր հանգամանք: Հեղինակի համար պարզ է,
որ Հայաստանը շրջապատող երկրներից՝ բոլորից
հարազատ և մոտ էին Վիրքը և Աղվանքը: Այդ մեր-
ձավորութեանը դրսևորվում էր կյանքի բոլոր երե-
վույթներով և առաջին հերթին մշակութային և
կրոնա-գաղափարական ընդհանրութեամբ: «Աշ-
խարհացոյց»-ի հեղինակը, լինելով հոգևորական
և միաբնակ եկեղեցու ջատագով, չէր տարբերում
վրացիներին ու աղվաններին հայերից: Նա նույն-
պիսի մանրամասնութեամբ է նկարագրում Վրաց
աշխարհն ու Աղվանքը, ինչպես իր հայրենի եր-

կիրը՝ Մեծ Հայքը: Այս ժամանակ ընդհանրացած
կարծիք էր, որ այդ երեք երկրները մեկ միասնու-
թյուն են կազմում: VI դարի հեղինակ ասորի Ջա-
րարիա Հոտորը Հայաստանը, Վիրքը, Աղվանքը,
Սիսականը (Սյունիք) և Բազզունը (Բազկան),
մշակութային-գաղափարական տեսակետից հա-
մարում էր մեկ աշխարհ և անվանում էր Հայաս-
տան, իսկ արարական գերիշխանութեան ժամա-
նակաշրջանում պաշտոնապես էլ այս երկրները
կազմում էին մեկ վարչական միավոր և հայտնի
էին «Արմենիա» անվան տակ:

Քարտեզների «աշխարհացոյցներ» հեռ
միաժամանակ կազմվել են նրանց «աշխարհա-
ցի»-նկար, այսինքն գրի է առնվել այդ քարտեզ-
ների վրա եղած ամբողջ բնագիրը և ստացվել է մի
բավականին ընդարձակ բնագիր, որը դարձել է այ-
նուհետև աշխարհագրութեան ձեռնարկ: Կարելի է
կոահել, որ քարտեզների ընդօրինակութեան ըն-
թացքում ներմուծվել են նոր տվյալներ, որի հե-
տևանքով առաջացել են նրանց մի քանի վա-
րիանտներ: «Աշխարհացոյց»-ի բնագրի գոյու-
թյուն ունեցող զանազան գրչագիր օրինակներում
ներմուծվում էին տվյալներ քարտեզների տարբեր
վարիանտներից, որի հետևանքով առաջացել են
բնագրի տարբեր վարիանտներ: Կավագույն օրի-
նակների բնութեանը ցույց է տալիս, որ այդ ընդ-
միջարկումները VII դ. վերջից և VIII դ. սկզբից
այս կողմը շեն անցնում, ինչ որ ենթադրել է տա-
լիս, թե VIII դ. «Աշխարհացոյց»-ի քարտեզները
այլևս գոյութեան չունենին:

Հետագայում, երբ քարտեզների գոյութեանը
մոռացութեան էր արվել և մնացել էր միայն «Աշ-
խարհացոյց»-ի բնագիրն իր զանազան վարիանտ-
ներով, այն զիտվում էր իբրև աշխարհագրութեան
ձեռնարկ ու տեղեկատու և դասավանդվում էր
պարսիներում: Բնորոշ է, որ «Աշխարհացոյց»-ի
բնագիրը մեծ մասամբ մեկ հասել է ձեռագիր այն
ժողովածուներում, որտեղ գտնվում էր Մովսես
Խորենացու «Հայոց պատմութիւնը», կամ Անանիա
Շիրակացու երկերը, ուստի այն վերագրվեց Մով-
սես Խորենացուն, կամ (ավելի նվազ) Անանիա
Շիրակացուն²:

Մեր այս մտորումներն ու կոահումները «Աշ-
խարհացոյց»-ի մասին պիտի հիմնավորել մեկ
հասած բոլոր գրչագրերի մանրագրին ուսումնա-

¹ Հետագայում՝ միջնադարի ընթացքում եղած ընդ-
միջարկումները համեմատաբար քիչ են և հեշտ է նրանց
գտել մայր բնագրից:

² Տե՛ս Աշ. Արքա հ ա մ յ ա ն, Խորենացուն վերա-
գրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը, երևան
1940, մանավանդ էջ 25—34:

սիրութեան ու քննական բնագրի հրատարակման միջոցով:

Անդրադառնալով վերստին «Աշխարհացոյց»-ի քարտեզներին, անհրաժեշտ է տալ նրանց ավելի հանգամանալից բնութագիրը: Մենք սույն հրատարակութեամբ լրիվ վերարտադրում ենք Պաղոմնոսի տեքստինով ասած՝ 'Ασίας πίνταξ γ' քարտեզը, որտեղ ներկայացված են՝ Կողքիս, Վիրքը, Աղուանքը և Մեծ Հայք երկրները, ընդգրկելով նաև Ասիական Սարմատիայի հարավային մասը: Սույն քարտեզից հետո մենք մտադիր ենք մտա ժամանակներս հրատարակ հանել մնացյալ նշված քարտեզներից հատկապես «Երանշահրք», «Միջերկրեայք», Ասորիքը և այլն, կազմված այժմյան քարտեզագրական հիմքի վրա, որոնք նույնպես զաւու են ապացուցելու մեր նոր եզրակացութեանները «Աշխարհացոյց»-ի բնույթի մասին: Առաջին քարտեզը, որը պատկերում էր այն ժամանակվա հայտնի աշխարհը, ամբողջովին վերարտադրում էր Պաղոմնոսի քարտեզը, սակայն ավելի համառոտ տրվել էր: Ինչպես վերը նշեցինք, «Աշխարհացոյց»-ը ուսումնասիրողների ուշադրութեանը գրավել է այդ հուշարձանի միայն այս մասը, որը դուրի է ինքնուրույնութեանից և համարյա ամբողջովին վերարտադրութեան է հույն հեղինակի, ուստի հայ հեղինակը լավագույն դեպքում համարվել է իրրե սոսկ Պաղոմնոսի և Պապարոս Աղերսանդրացու բարեխիղճ ընդօրինակողը¹: Հետադրոտողների ուշադրութեանից սովորաբար վրիպում են «Աշխարհացոյց»-ի հիմնական մասը կազմող՝ Հայաստանին, Անդրկովկասին և Սասանյան Իրանին նվիրված գլուխները, որոնք բոլորովին նոր խոսք են հին աշխարհի աշխարհագրական գիտութեան մեջ: Քարտեզի այդ բնագիրը համաշխարհային գրականութեան մեջ Սասանյան Իրանի ամենահին մանրամասն նկարագրութեանն է: Անտիկ ժամանակաշրջանի հույն և հռոմեացի հեղինակների ավյալները այդ երկրի մասին, սովորաբար, շատ ավելի համառոտ են ու աղքատիկ, ելի են հատուկ անունների աղավաղումներով:

Հայերենը, հագեցված լինելով պահլավերեն լեզվի բառապաշարով, ավելի հարողատ ձևով էր վերարտադրում հարեան Իրանի տեղանուններն ու ցեղանունները: Սակայն իր մանրամասնութեամբ

Իրանի նկարագրութեանը զիջում է սույն քարտեզում ներկայացված Մեծ Հայքի, Վրաց աշխարհի, Աղվանքի, Կողքիսի ու «Սարմատիայի» նկարագրութեան: Սորե կտեսնենք, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակի համար հալասարասլես հարագատ էին Անդրկովկասի բոլոր ժողովուրդները, հատկապես՝ հայերը, վրացիները և աղվանները: Երեք եղբայրակից ժողովուրդներն այն ժամանակ ևս իրենց հզորութեանը տեսնում էին սերտ կապի և փոխօգնութեան մեջ: Այդ միասնութեանն էր, որ օտար նվաճողներին՝ Սասանյան Իրանին և Բյուզանդիային, հարկադրեց ճանաչել VI դ. վերջին և VII դ. սկզբին Անդրկովկասի երկրների քաղաքական ինքնուրույնութեանը:

Մեծ Հայքի, Վիրքի, Աղվանքի և «Սարմատիայի» նկարագրութեանը նվիրված գլուխների մեր բազմամյա ուսումնասիրութեանը և նրանց համարումը հայ մատենագիրների, հույն-հռոմեական հեղինակների, բյուզանդական, վրացական, արաբական, պարսկական և այլ ազգայրների տվյալների հետ, հնարավորութեան են տալիս տեղագրել «Աշխարհացոյց»-ի հիշյալ գլուխներում պատահող երկրների, ժողովուրդների, «ազգագաւառ»-ների (ցեղերի և նրանց տերիտորիաների), «իոնր աշխարհներին»—նահանգների, «գաւառներին», լեռների ու լեռնազագաթների, ծովերի, լճերի, գետերի ու բնակավայրերի անունները: Այս բազմաթիվ տվյալների գրանցումը քարտեզի վրա ակրնհայտ է դարձնում, թե որքան մանրամասն ուսումնասիրութեան է կատարել «Աշխարհացոյց»-ի հեղինակը, որպեսզի կարողանա կազմել իր հայրենիքի քարտեզը:

Մի անձնավորութեան, որը այդքան մանրամասն ուսումնասիրել էր Հայաստանը, պարզ է, չէր կարող գեկավարվել Պաղոմնոսի կողմից պատարաստված՝ Հայաստանի քարտեզով:

«Աշխարհացոյց»-ի բնագրի գրանցումը այժմյան քարտեզագրական հիմքի վրա ակնհայտ է դարձնում, որ Մեծ Հայքի, Վիրքի, Աղվանքի և «Սարմատիայի» քարտեզն ավելի էր մոտենում այժմյան քարտեզին, քան թե Ամստերդամում կամ Վենետիկում XVII—XVIII դդ. հրատարակված՝ Հայաստանի քարտեզներին:

Հեղինակը հիմնական ուշադրութեանը դարձնում է Մեծ Հայքի քաղաքական ու վարչական բաժանման վրա, որն արդյունք էր երկրի պատմական դարպացման, գալիս էր դարերի խորքից և զգալի չափով պալմանավորված էր երկրի լեռնազրական ու ջրազրական պալմաններով:

Քարտեզի հեղինակը Մեծ Հայքի տերիտորիան բաժանում է 15 «իոնր աշխարհներին» կամ նահանգների, որոնք, իրենց հերթին, բաժանվում են

¹ Այդ տեսակետից բնորոշ է «Աշխարհացոյց»-ի ընդարձակ բնագրի առաջին հրատարակիչ Արսեն Սուքրյանը, որն այն գիտում է սոսկ իրրե Պաղոմնոսի «Աշխարհագրութեան համառոտ շարագրութեան»: Նա անտեսել է այն փաստը, որ բնագրի մեծագույն մասը հանդիսանում է հայ հեղինակի օրգիչնալ աշխատութեանը: Տես՝ Geographie de Moïse de Corene d'après Ptolemee. Venise, 1881, Preface, p. III.

տառանձին գաւառներ: Մեծ Հայքի 15 նահանգները պարունակում են 198 գաւառ: Մեծ Հայքի սահմաններում հեղինակը հիշատակում է՝ 6 լեռնաշղթա, 10 լեռնագագաթ, 3 լեռնաղաշտ, 4 դաշտավայր, 6 լիճ, 8 կղզի (Վանա և Մովք լճերի), 25 մեծ գետ և 8 փոքր գետ: Հիշատակվում են ապա՝ 49 բնակելի կետեր, որոնցից՝ 22 քաղաք, 11 ավան, 3 գյուղ, 13 ամրոց ու բերդ: Բնդամենը՝ 361 աշխարհագրական անուն:

Այդքան մեծ թվով անունների տեղագրումը ցույց է տալիս, որ հեղինակը քարտեզի վրա չի թողել «սպիտակ բիծ»: Նրան քաջ հայտնի են եղել ամենափոքր գետային ավազանները, հովիտներն ու կիրճերը:

Մեծ Հայքի նկարագրության տվյալների տեղագրումը քարտեզի վրա հնարավորություն է տալիս ամենայն մանրամասնությամբ վերականգնել Մեծ Հայքի պետության քաղաքական սահմանները մինչև 387 թ. նրա բաժանումը: Այս հարցի պարզաբանումը, իր հերթին, հնարավորություն է ընձեռում պարզելու Մեծ Հայքի պետության տերիտորիայի մակերեսի ընդհանուր տարածությունը:

Մեծ Հայքի քարտեզի վրա անդրադարձել են Հայկական պետության քաղաքական սահմանների այն բոլոր փոփոխությունները, որ տեղի էին ունեցել 298—387 թթ. միջև: Քարտեզի վրա նըշված են քաղաքական սահմանները Մծրինի 40-ամյա դաշնագրի (298—338 թթ.) և նրան հետևող 338—363 և 363—387 թթ. տեղի ունեցած տերիտորիալ փոփոխությունները: Ինչպես տեսնում ենք, VII դ. սկզբում, այսինքն՝ 200 տարի հետո, կազմվել է Հայաստանի IV դ. քարտեզը, երբ այն դեռևս անկախ պետություն էր:

Քարտեզի վրա վերջին Արշակունիների ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական ու վարչական բաժանման սխեմանը այնպիսի մանրամասնությամբ է տրված, որ սակամայից հարց է ծագում՝ արդյո՞ք հեղինակը չի ունեցել իր ձեռքի տակ IV դ. առաջին քառորդի նյութեր: Եթե այո՞, ապա ի՞նչ կարգի նյութեր էին դրանք: Դրանք կարող էին լինել տվյալներ հերթական աշխարհագրի, որ պետությունը պարբերաբար անց էր կացնում, երկրի հարկային հնարավորությունները պարզելու համար¹:

Արևելյան բռնապետությունների, նրանց թվում նաև Արշակունյաց Հայաստանի ու Սասանյան Իրա-

նի համար բնորոշ էր, որ պետության ամբողջ տերիտորիան համարվում էր «արժուճի երկիր» (χώρα βασιλευσῆ) և գտնվում էր արբունիքի ներկայացուցչի՝ հազարապետի տնօրինության ներքո: Հարկային քաղաքականության հիմնական մասն էր կազմում երկրի վարչական բաժանումն ըստ առանձին հարկային միավորների՝ գավառների: Արշակունյաց Հայաստանը՝ Մեծ Հայքը, համաձայն Պլինիոսի (23—79), բաժանված էր 120 այգյալի միավորների, որ նա կոչում է ստրատեգիա կամ պրեֆեկտուրա¹, Գրեկականության մեջ վաղուց է հայտնվել այն միտքը, թե Պլինիոսի այդ ստրատեգիաները կամ պրեֆեկտուրաները ոչ այլ ինչ են, եթե ոչ հայկական ազդյունների «գաւառ»-ները: Հետագայում, երբ առաջացան նախարարական «ալեուրիան»-ները, որոնք ընդգրկում էին մեկ կամ մի քանի գավառ, անկախ տվյալ նախարարական տոհմի ժառանգական իրավունքներից, արքունի դիվանում զբանջված էին նախկինի պես առանձին գավառները, իբրև հարկատվության առանձին միավորներ: Նույնիսկ Մեծ Հայքի 387 թ. բաժանումից հետո, երբ Սասանյան Իրանը և Բյուզանդական կայսրությունը պաշտոնապես ճանաչեցին նախարարների ժառանգական իրավունքները Արշակունիների կողմից նրանց տրված «ալեուրիան»-ների վրա, այնուամենայնիվ գավառների բաժանումը մնաց, և նրանք, օրինակ, Մարդպանտիան Հայաստանում, հարկատվության տեսակետից ենթարկվում էին արքունի հազարապետին: Այս հանգամանք բացատրում է, թե ինչու «Աշխարհացոյց»-ում բոլորովին հաշվի չի առնված Մեծ Հայքի բաժանումը ըստ առանձին նախարարական տերիտորիաների: Մեծ Հայքի բաժանումից հետո էլ իբրև հարկատվության հիմնական միավոր մնում էր գավառը: Ժամանակի ընթացքում տվյալ երկիրը, որը հանդիս էր գալիս իբրև գաւառների հանրագումար, անտեսապես աճում էր. նրա հետ աճում էր և փոփոխություններ էր առաջացնում աղաքանակության աճը, ինչպես և անասունների զլխաքանակի աճը և մրգատու պարտեզների և խաղողի այգիների աճը. իսկ նոր փոփոխությունները պարզելու համար պետությունը անց էր կացնում հերթական «աշխարհագիր»:

Հայաստանի, Իրանի և այլ երկրների համար, սովորական էին պարբերաբար անցկացվող աշխարհագիրները, այսինքն՝ հողային կադաստրը, հարկատու ազգաբնակչության ու անասունների վիճակագրությունը: Պետական այդ մեծ ձեռնարկումն ի կատար էր ածվում արքունի հազարապետի միջոցով:

¹ Ք. Պատկանյանն անդրադառնալով Մեծ Հայքի վարչական բաժանման խնդրին, նշում է, որ հեղինակն այդ տվյալները հավանորեն քաղել է պաշտոնական աղբյուրից, որ ճիշտ պետք է լինի: Տես՝ К. П. Патканов, Армянская География VII века. СПб. 1877, стр. 42, прим. 150.

¹ Plinius, Nat. hist., VI, 10.

Սովորաբար, նման աշխարհագիրը սնց կր կացվում այն դեպքերում, երբ իշխանությունը գլուխ գալիս էր նոր հարստություն, կամ երկրում հաստատվում էր օտար տիրակալություն: Յուրաքանչյուր նոր աշխարհագրի ժամանակ որոշվում էր ավյալ գավառի հողային սեփականությունը և փոփոխվում էին սահմանաքարերը, որոնք սովորաբար կոչվում էին նրանց կանգնեցնող հարստության տոհմական անունով: Այսպես, օրինակ, մեկ հայտնի են սահմանաքարեր Սեանա լճի ավազանից, որոնք իրենց վրա կրում են արամեական արձանագրություններ և կոչվում են «Ռալանդական», այսինքն՝ «Նոուանդական» և ցույց են տալիս երուանդների դինաստիայի պետական գործունեությունը III դ. մ. թ. ա.¹:

Մովսես Խորենացու մոտ պահպանված տեղեկությունները ցույց են տալիս, որ, երբ Յրվանդունիներից հետո հայկական դահը դարձել է Արտաշեսյանների ժառանգական սեփականություն, սնց է կացվել նոր աշխարհագիր, տեղի է ունեցել նոր սահմանադատում կալվածների, որոնց բաժանող սահմանաքարերը նոր հարստության հիմնադիր Արտաշես Ա-ի (189—161) անունով կոչվել են «Արտաշեսյական»²: III դ. երբ Սասանյանները համառ պայքար էին մղում Հայաստանին տիրանալու և վերացնելու հայ Արշակունիների դինաստիան, մի առ ժամանակ (253—272 թթ.) նրանց հաջողվում է տիրել երկրին: Նոր ավյալների համաձայն, Սասանյան արքայից արքա Շապուհ Ա-ն (241—272) Մեծ Հայքի թագավոր է նշանակում իր որդիներից մեկին՝ Որմիզդ-Արտաշիին (261—272)³, որը Մովսես Խորենացու Պատմության մեջ հայտնի է «Արտաշի» անունով: Խորենացին տեղեկացնում է, որ այս Արտաշիը «գահահաման հաստատեալս յԱրտաշիսէ, զքարինս յերկրի կացուցանելով, նորոգեաց, և յիւր անունն փոխելով Արտաշիական»⁴: Ինչպես տեսնում ենք այս մեջբերումից, Որմիզդ-Արտաշիին իր պետական գործունեության ընթացքում Հայաստանում, երկրի հարկային ունակությունը պարզելու համար, սնց է կացրել նոր աշխարհագիր և վերանայել է երկրի կալվածների սահմանները, որի ընթացքում Արտաշես Ա-ի ժամանակաշրջանից հայտնի սահմանները փոփոխվել են և կանգնեց-

վել են նոր սահմանաքարեր, որոնք Սասանյան հարստության հիմնադիր Արտաշի Ա Պապականի (224—241) անունով կոչվել են «Արտաշիական»: Հետագայում, երբ Հայաստանում վերականգնվեց հայ Արշակունիների իշխանությունը, այս սահմանաքարերը պիտի նորից փոփոխվեին, և այդ միջոցառումը, ամենայն հավանականությամբ, պիտի տեղի ունենար 298 թ. 40-ամյա խաղաղության զանազորից հետո, երբ Տրդատ Գ. Մեծը (287—332) լայն հնարավորություններ ստացավ զբաղվելու երկրի ներքին շինարարությամբ:

Տրդատ Մեծի ժամանակ տեղի է ունեցել նոր աշխարհագիր և նախարարական իշխանությունների նոր վերաբաժանում: Նախարարական կալվածատիրության տեղաշարժի հարցը՝ ևս հանդիսանում է հողարժանման ընդհանուր հարցի մի մասը, որի հետ սերտ կապված էր աշխարհագիրը: Անշուշտ այս աշխարհագրի ժամանակ «Արտաշիական» սահմանաքարերի փոխարեն նորից հաստատվեցին «Արտաշիական» անունը կրող սահմանաքարերը: Այս ժամանակ պիտի նորից վերահաստատվեր Գաննամակը և Ջուրանամակը: Այդ ևս վկայում Ստեփաննոս Օրբելյանի մոտ պահպանված պատմական տրադիցիայի վերհիշումները²:

Սակայն նախարարական տերիտորիաները որքան էլ փոփոխության ենթարկվեին, զավառու իրրե սուսնձին միավոր, շարունակում էր մնալ. սակայն նրանից, թե այն մտնում էր այս կամ այն նախարարական «տէրութեան» սահմանները, անկախ նրանից՝ համընկնում էին նրանք գավառների սահմաններին, թե ոչ: Միայն հետագայում, երբ վերջնականապես ձևավորվեց հայ նախարարների ժառանգական հողատիրությունը, ժամանակի ընթացքում «Աշխարհացոյց»-ի մեջ տրված գավառների բաժանման սխեման խախտվեց: Առաջ էր եկել տերիտորիալ նոր բաժանում, որտեղ բացակայում էր որոշ սխեմա, որ բնորոշ է ֆեոդալական ժամանակաշրջանի տերիտորիալ բաժանման համար: Ծիշա է, այդ գավառների մեծագույն մասը առկալին մնում էր, բայց այնքանով որ օտարն օտարը պարբար յուրաքանչյուր գավառ համապատասխանում էր որոշ օրոգրաֆիկ միավորին—գուցե մի ինքնավար հովիտ, լեռնադաշտ, կամ ձոր էր, սակայն բաղաբույսական տեսակետից տրոհված էր և մտնում

¹ Տես՝ К. В. Тревер, Очерки истории культуры древней Армении, М.—Л., 1953, стр. 162—174.

² Մովսեսի Խորենացու Պատմությունը Հայոց, 11, ԾԶ, Տփղիս, 1913, էջ 186:

³ Տես՝ Ernest Honigsmann et André Marcq, Recherches sur le Res Gestae divi Saporis. Bruxelles, 1953, p. 15.

⁴ Ընդգծումը մերն է — Ս. Կ.:

⁵ Մովսեսի Խորենացու, 11, չէ, էջ 216:

¹ Տես՝ Հակոբ Մանանդյան, Քննական տեղեկություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 122, տես նաև М. И. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата, СПб. 1911, стр. 28.

² Ստեփաննոս Օրբելյան, Պատմությունը նահանգին Արտաշես, գլ. Է, Թիֆլիս, 1910, էջ 35:

ևր տարբեր ֆեոդալական իշխանությունների ուժ-
մանները: Ժամանակի ընթացքում նման գավառի
տարբեր մասերը հաճախ ստանում էին առանձին
անուններ, որոնց մասին վկայում են մատենա-
գիրները: Այդ տեսակետից բնորոշ են, օրինակ,
Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին
Սիսական» երկի տվյալները:

«Աշխարհացոյց»-ի Մեծ Հայքին նվիրված
գլխի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա
հեղինակը ամենայն մանրամասնությամբ ծանոթ
է երկրի այն քաղաքական ու վարչական բաժան-
ման հետ, որ հաստատվեց Հայաստանում 298 թ.
հետո և որը խախտվեց 338 թ. հետո: Այս վկայում
է, անշուշտ, այն բանի մասին, որ հեղինակը իր
ձեռքի տակ ունեցել է Տրդատ Մեծի կողմից անց-
կացված աշխարհագրի նյութերը: Այդ նյութերը
կարող էին գրված լինել ասորերեն կամ հունարեն
և պահպանված լինել երկրի դիվանում մինչև
591—610 թթ., երբ կազմվել էր «Աշխարհա-
ցոյց»-ը: Այս հարցի առնչությամբ պարզվում է,
որ բոլորովին պատահական չլսե՞տք է համարել
այն, որ «աշխարհագիր» տերմինը հին հայերե-
նում, քացի վերը նշված քարտեզ իմաստից, ունե-
ր նաև երկու այլ նշանակություն. ա) «գրութիւն և
դրոսած համաշխարհական ի դիւան արքունի» կամ
«Քննութիւն թիւ համարոյ մարդկան անցեալ ի
դիր», այսինքն՝ բոլոր հարկատու աշխատավոր
տղամարդկանց թվի փնտհազրութիւն, առչքաքա,
descriptio և բ) առչքաքաքա, descriptio. այստ անէ
զմատինադրութիւն դրից երկնի և երկրի, սրպէս
և շաքաքաքոս, շաքաքաքա, geographus, geographia...
զորոց տես ի բառն աշխարհագրութիւն»¹:

Աշխարհագիր անցկացնելու ժամանակ գրանց-
վում էին մշակվող հողերը ըստ նրանց տեսակ-
ների և նրանց վրա աճող գյուղատնտեսական մշա-
կույթների տեսակների: Մշակվող հողերի գրան-
ցումը տեղի էր ունենում ըստ վարչական բաժան-
ման միավորների—գավառների: Աշխարհագրի այդ
տվյալները պահվում էին արքունի դիվանում, որը
գտնվում էր երկրի մայրաքաղաքում՝ Արտաշա-
տում, ապա Դվինում, Հայաստանի հաղարապետի
իրավասություն ներքո: Արքունի դիվանումն էին
պահպանվում ոչ միայն գավառների ցուցակները,
այլև Գահնամակն ու Զորանամակը: Ահա այս երեք
կարգի վարչա-տերիտորիալ և վարչա-ռազմական
փաստաթղթերն էին վերաբրտագրում լիովին երկրի
քաղաքական ու վարչական բաժանումը, որոնք
հնարավորություն են տվել կազմել Տրդատ Մեծի
ժամանակաշրջանի Մեծ Հայքի տիրություն և նրան

հարևան Կողքիսի, Վիրքի և Այդուանքի «Աշխար-
հացոյց»-ը, այն է՝ քարտեզը: Տալով այս ժամա-
նակաշրջանի «Աշխարհացոյց»-ը, հեղինակը միև-
նույն ժամանակ նշում է վարչա-տերիտորիալ բա-
ժանման այն փոփոխությունները, որ տեղի էին
ունեցել 387 թ. Մեծ Հայքի բաժանումից հետո:
Այս դեպքում ևս հեղինակը, անշուշտ, իր ձեռքի
տակ պիտի ունենար հետագա աշխարհագիրների
նյութերը:

Հետագա աշխարհագիրը տեղի ունեցավ Մեծ
Հայքի բաժանումից և հայ Արշակունիների հարբս-
տություն վերացումից հետո, երբ երկիրն ընկավ
Ետար տիրապետությունների տակ: Սասանյան
Իրանին ենթակա Հայաստանում աշխարհագիր
անցկացվեց Հազկերտ Բ-ի (438—457) ժամանակ,
439 թ.¹: Այս աշխարհագրով վերջնականապես վե-
րանում էին «Արտաշխակա» անունը կրող սահ-
մանաքարերը և նորից վերականգնվում են «Ար-
տաշիրական» սահմանաքարերը: Նոր հողարածա-
նումների հետ էր կապված Սասանյանների վար-
չական քաղաքականությունն իրեն ենթակա երկ-
րամասում, որը, կազմում էր պատմական Հայաս-
տանի տերիտորիայի 3/4 մասը: Կազմվում է մարգ-
պանական Հայաստանի գավառների ցուցակը և
սրոշվում նրանց պատկանելությունը աբուների-
բին, նախարարական տներին և եկեղեցուն: Մինչ
այդ՝ մեծի դատավորության գործակալության
պետ՝ կաթողիկոս Սահակ Պարթևի (388—439)
ջանքերով, 432 թ. Պարսից արքունիքում՝ Տիգրո-
նում վառվեց Կրմանի (418—438) ձեռք, հաս-
տատվեց նոր Գահնամակը և նրա վրա հիմնված
Զորանամակը²: Արանով վերականգնվում էին հայ
նախարարների կալվածատիրական իրավունքները
և նրա հետ կապված ժառանգական պատիվներն
ու գործակալությունները և այլ դասային արտո-
նությունները: Հարկավ, կաթողիկոս Սահակ Պար-
թևը չմոռացավ նաև Հայոց եկեղեցու շահերը և
վերստին հաստատել տվեց ֆեոդալական Հայաս-
տանի այդ հյուսիս նեցուկներից մեկի արտոնություն-
ները: «Աշխարհացոյց»-ի հեղինակի ձեռքին պիտի
լինեին նաև նոր աշխարհագրի տվյալները, որ
անցկացվեց պարսից արքունիքի կողմից Կավաա
Ա-ի (488—531) թագավորության վերջին տարի-
ներին և խոսրով Ա. Անուշիրվանի (531—578) տի-
րակալության սկզբին: Բացի Հայաստանին վերա-
բերվող նյութերից, հեղինակը իր ձեռքի տակ ու-

¹ С. Т. Еремян, Народно-освободительная война армян против персов в 450—451 гг. „Вестник древней истории“, 1951, № 4, стр. 46.

² Նույն տեղում, էջ 46, Գահնամակի և Զորանա-
մակի մասին տես Н. Адонци, Армения в эпоху Юс-
тинниана, СПб, 1908, стр. 242—283.

¹ Նոր Հայկազեան Բաղարան, Ա, էջ 280:

² Նույն տեղում:

նեցել է նաև հարևան Վրաց աշխարհը ու Անլիանդը կազմող դավառների ցուցակները, որոնց տվյալները VI դարից ավելի հին չէին կարող լինել:

Նշանակալից է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ազոտ տեղեկություններ ունի Հուստինիանոս Ա-ի (527—586) նոր վարչական վերաբաժանումների մասին, Բյուզանդիային անցած Մեծ Հայքի $\frac{1}{5}$ մասի և Փոքր Հայքի տերիտորիայի վարչական բաժանման մասին: Բյուզանդական կայսրության գերիշխանության ներքո գտնվող Մեծ Հայքի մասերը, ինչպես հայտնի է, Արշակունյաց Հայաստանի 387 թ. բաժանումից հետո, բաղկացած էին երկու մասից. հյուսիսային մասը—«ներքին Հայքը» (Armenia interior), որը «Աշխարհացոյց»-ում կոչվում է «Βαρὰρ Հայք», կազմում էր սուսանձին վարչական միավոր, որտեղ մինչև 389 թ. թագավորում էր Արշակ Գ-ը: Նրա մահից հետո այդ երկրամասում վերացվեց հայ Արշակունիների անվանական իշխանությունը, և այնուհետև այն կառավարվում էր կայսրության արքունիքի կողմից նշանակվող Հայաստանի «կոմէս»-ի (comite Armeniae)² միջոցով: Հարավային մասը կազմում էր հինգ նախարարություններ կամ սատրապություններ՝ Մոսիլ Մեծ (ընդգրկում էր՝ Անգեղտուն և Նիվես գավառները), Մոսիլ Փոքր (Մոսիլ Եսիհունի), Անձիտ, Բալանոպիտ, Հաշտեանկ, որոնց ժառանգական իշխանները վերացվեցին և Հուստինիանոս Ա-ը այն վերածեց մեկ պրովինցիայի, որը կոչվում էր «Չորրորդ Հայք»: Նշված երկրամասը հին ժամանակներում, մինչև 94 թ. մ. թ. ա., կազմում էր առանձին հայկական հելլենիստական թագավորություն «Մոսիլ» անունով: Երբ նշված թվականին Տիգրան Բ Մեծը (95—56) այն միացրեց Մեծ Հայքին, այնուհետև այդ անունը մնաց իրրե երկրանուն, և այդ անունով է կոչում այս «սատրապական Հայաստանը» նաև «Աշխարհացոյց»-ի հեղինակը, շնչած, որ նրան հայտնի է նաև «Չորրորդ Հայք» անունը: Ուրեմն՝ 387 թ.՝ Բյուզանդական կայսրության կազմում մտնող Մեծ Հայքի արևմտյան մասը բաղկացած էր երկու հատվածներից՝ «Βαρὰρ Հայք», այսինքն՝ «Կարևոյ Բաղալ» կամ «Կողմն Կարևոյ» և «Չորրորդ Հայք, որ է Մոսիաց կողմն» նահանգներից³:

Ինչպես տեսնում ենք, Մեծ Հայքի՝ բյուզանդական մասի համար հեղինակը զեկավարվում է

նախահուստինիանոսյան ժամանակաշրջանի վարչական բաժանումով: Եվ այդ հասկանալի է, 387 թ. հետո «ներքին Հայք» երկրամասի հյուսիսային և արևմտյան սահմանները ճշտվել վերաբաժանում էին Մեծ Հայքի սահմանները այս մասում մինչև 387 թվականը: Հուստինիանոս Ա-ի ժամանակակից ունեցած վարչական փոփոխությունները ստեղծեցին բոլորովին նոր վարչա-տերիտորիալ բաժանում: Այժմ «Առաջին Հայք» ընդգրկում էր ոչ միայն նախկին «ներքին Հայքը», այլև Փոքր Հայքի ու Պոնտոսի զգալի մասը: Մարզպանական Հայաստանի համար իրրե հիմք «Աշխարհացոյց»-ի հեղինակը վերցնում է Մավրիկիոս կայսեր (578—602) ժամանակ 591 թ. նոր տերիտորիալ վերաբաժանման հետևանքով առաջացած նոր վարչական բաժանումները, որոնք ի մի վերցրած Տրդատ Մեծի ժամանակաշրջանի Մեծ Հայքի տերիտորիայի վարչական բաժանման, պատկենն են տալիս— Մեծ Հայք, իրրե երկիր, բաժանված է 15 նահանգների⁴: Մեր դեռևս չհրատարակված ուսումնասիրության մեջ՝ Մեծ Հայքի վարչա-տերիտորիալ բաժանման առաջացման մասին մանրամասն կանց ենք անում այդ վարչական բաժանումների ծագման խնդրի վրա, իսկ այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել միայն, որ Տրդատ Մեծի ժամանակաշրջանի Մեծ Հայքի տերիտորիայի բաժանումը 15 նահանգների՝ իրականում գոյություն է ունեցել կարճ ժամանակ, 591 թ. սկսած մինչև 610 թ. մոտերքը, և որ նոր զահ բարձրացած Հերակլ Ա (610—640) կայսրը վերացրեց այն բոլորը, ինչ որ կապված էր Մավրիկիոսի անվան հետ:

Ահա այս հարցի հետ է առնչվում «Աշխարհացոյց»-ի առաջացման ժամանակը: Ինչպես վերոհիշյալ բաժանումը Մեծ Հայքի 15 նահանգների, այնպես էլ «Մավրիկապոլիս»-ի հիշատակությունը՝ իրրե Երևակաշատ ավանի (այժմ Մավրսկ գյուղ՝ Անիից հյուսիս) նոր անվան հիշատակումը «Աշխարհացոյց»-ում, ցույց են տալիս վերջինիս կազմվելու ժամանակը. այն է՝ 591 և 610 թթ. միջև բնկած ժամանակաշրջանը: Այս այն ժամանակն էր, երբ Մավրիկիոս կայսրը, 591 թ. դաշնագրով Սասանյան Իրանի հետ, հանձինս այդ ժամանակ գահակալած Խոսրով Բ Պարվելի (591—628), տեր գահալով Հայաստանի մեծագույն մասին, նոր ձևեր բերած հայկական հողերում մտցրեց կայսրությանը հատուկ պրովինցիալ բաժանում և պատրաստվում էր այս մասում ևս վերացնել նախարարական կարգերը: Անշուշտ, այս հանգամանքն էր հիմնական պատճառը, որ նախարարներն, առա-

¹ Մովսէսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, III, ԽՁ, Տիգրիս, 1913, էջ 316:

² Տե՛ս՝ Н. А. ДОНН, նշված աշխատութիւնը, էջ 116—126:

³ Է՛. աշխարհ Հայոց, Չորրորդ Հայք, որ է Մոսիաց կողմն: Աշխարհացոյց Մովսէսի Խորենացույ՝ յաւելումովը նախնեաց, Վենետիկ, 1881, էջ 30:

⁴ Ն. Հիւրշման, Հին հայոց տեղւոյ անունները, Թարգմ. Պիլեգիկեանի, Վիեննա, 1907, էջ 1—31:

ջին իսկ սլաթհ՝ առիթից օգտվելով, անմիջապես միացան խոսրով Բ Պարվեզին և վերացրին կայսրության նոր վարչական բաժանումները:

Մավրիկիոսի ժամանակն էր, որ Եիրակաշատ-Մաուրիկապոլիսը կրճ ժամանակով (591—610 թթ.) դարձավ Բյուզանդական Հայաստանի վարչական կենտրոնը: Այստեղ պիտի փոխադրված լինեն Կարին-Թեոդոսուպոլսից (այժմ՝ Էրզրոմ) *magister militum*-ի նստավայրը:

Ի նույնատ նշված ժամանակաշրջանի են խոսում «Աշխարհացոյց»-ի բնագրի նաև այլ ցուցմունքները: Այս եզրակացությունն է հանդեպում հեղինակի աշխարհայացքը՝ նրա քաղաքական ու կրոնա-գաղափարախոսական հայացքների նույնատակացությունը: «Աշխարհացոյց»-ի հեղինակը պատկանում է «յունաբան դպրոցի» փայլուն համատեղություն, որի ծաղկման գագաթնակետը ընկնում է VI—VII դդ. շեմքին:

Ինչպես հունարան դպրոցի բոլոր ներկայացուցիչները, «Աշխարհացոյց»-ի հեղինակը ևս ջերմ-ևռանդ միարենակ-լուսավորչական է և արևելյան կողմնորոշման պաշտպան: Իր կրոնա-գաղափարական ուղղվածությունը՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակը պատկանում է նույն սոցիալական միջավայրին, ինչ որ նրա ավագ ժամանակակից՝ ասորի գրող Զաքարիա Հեռտորը. որի «Ժամանակագրությունը» գրված է 555 թ.:

Վերջինիս մոտ կովկասյան ժողովուրդների մասին եղած հատվածը հազեցված է նույն գաղափարախոսությունը: Զաքարիա Հեռտորը ևս՝ Արմենիան (Հայաստանը), Գուրգանը (Վրկան—Վիրք), Առանը (Աղվանք), Միսականը (Սյունիք) և Բագրունը (Բագվան) ճանաչում է իբրև մի միտցայլ հայկական երկիր, որոնց հողերը պետք է համարվում Գլխում նստող հայոց կաթողիկոսը¹: Ինչպես տեսնում ենք, այս միասնության հիմքը հեղինակի համար առաջին հերթին կրոնական ընդհանրությունն է: Նույն այս դավանարանական սկզբունքը մենք գտնում ենք Մեծ Հայքի «Աշխարհացոյց»-ի հեղինակի մոտ: Այս հանդամանքը պարզում է այն հարցը, թե ինչու կովկասի երկրները՝ Վիրքը (Արև-վելյան Վրաստան), Աղվանքը և «Սարմատիան» (Գլխավոր կովկասյան Լեոնաշղթայի հյուսիսային փեշերը) իրենց մանրամասնությունը հետ շին մնում Մեծ Հայքից:

«Աշխարհացոյց»-ն արտացոլում է Անդրկովկասի ժողովուրդների միջև դրսևություն ունեցող այն փոխհարաբերությունները, որոնք գտնվում են իրենց

արտահայտությունը կաթողիկոսի տեղապահ: Վերջանես Քերզոզի (604—607) և կաթողիկոս Արրահամ Ա. Աղրաթանեցու (607—615) վրաց Կյուրիոն կաթողիկոսի հետ ունեցած դրագրությունների մեջ: Ուշագրավ վկայություն է տալիս Կյուրիոն կաթողիկոսն իր պատասխան նամակում առ Արրահամ կաթողիկոս. «Եւ աղատ մարդիկն որ ի Հայոց ի Վիրս խնամութիւն արարեալ էր, ի սրբոյ Շուշանկայ պաշտանն գային, և ի սուրբ խաչս Մծխիթայի աղաթիլ և արինաց հաղորդէին: Նոյնպէս և որ աստի այդր գային ի սուրբ Կաթողիկէ, և յայլ եկեղեցիսդ աղաթիլ, անխիղճ ի միմեանց արինաց հաղորդէին: Եւ միարանութիւն էր Վրաց և Հայոց ընդ միմեանս, և ամենայն իսկ վիճակիս սրբոյ տեսնոն Գրիգորի միարանութիւն էր ընդ հաստայն Երուսաղէմի, որով Հուռմք վարին»²:

Այնուհետև. երբ վրաց եկեղեցին վերջնականապես հարեց Երևաթանակ՝ քաղկեդոնական եկեղեցուն, 608/609 թ. հղած իր շրջարևրական թղթում Հայոց կաթողիկոս Արրահամ Ա. Աղրաթանեցի կարգադրում է. «Վասն որոյ և զյառաջագոյն սահմանն վարդապետացն մերոց, զոր ի վերայ Հռոմին հատին, և կացցէ մինչև ցրուն՝ թէ ոչ դարձցին ի ճշմարիտն, մեք գնոյն ի վերայ Վրաց հրամայեցար, ամենեկմք մի հաղորդել ընդ նոսա մի յաղաթս, մի ի կերակուրս, և մի յըմպելիս, մի ի բարեկամութիւն, մի ի զայնկումիւն, մի աղաթիլը երթալով ի խաչն որ ի Մցխիթայի տեղաքն համբալի, մի ի Մանդղեաց խաչն և մի ի մեր եկեղեցիս գնոսա ընդունել. այլև ամուսնութեամբ ամենեկմք հեռանալ, բայց միայն գնել ինչ և կամ գնոյ տալ որպէս Հրէից»³:

Գալով «Աշխարհացոյց»-ին, մենք այնտեղ ևս պատահում ենք նույն սրբավայրերին, ինչ որ տեսանք վերահիշյալ մեջբերումներում: Խոսելով Արաղվի դեպի մասին, «Աշխարհացոյց»-ը հայտնում է, որ այն «գնալով ընդ հարաւ ընդ Ախալցխիս, բերդ, և անցանէ ընդ մէջ Մցխիթայ քաղաքի և Բլրոյ սուրբ խաչին, իջանէ ի Կուր»⁴: Այսպես կարող էր դրել միայն հայ հողերական հեղինակը, մինչև 608/609 թ., երբ տեղի ունեցավ Հայոց և վրաց եկեղեցիների բաժանումը, որը մեծապես թուլացրեց այն քաղաքական ու գաղափարախոսական կապերը, որ գոյություն ունեին մինչև այդ հայ և վրաց ֆեոդալների միջև⁵:

Ինչպես տեսնում ենք. բոլոր փաստերը՝ և՛ ուղղակի, և՛ անուղղակի, դալիս են ասելու, որ «Աշ-

¹ Տես՝ Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941, էջ 163, Զաքարիա Հեռտորի «Ժամանակագրություն» այս տվյալները վերաբերում են 532 թ. հավերժական դաշտագրի» նախորդին:

² Գրքը թղթից, Թիֆլիս, 1901, էջ 178—179:

³ Նույն տեղում, էջ 194:

⁴ Աշխարհացոյց, էջ 28:

⁵ Տես՝ ո. ց. Ջ ա յ յ Ն Ո Մ Յ Ո Ւ Ո, խորտցելու յրոն ևս Թու. ի. Գոցն Յոնգ. լու. տնոլուս, 1960, գვ. 375—387.

խարհացոյց»-ը գրվել է ամենաուշը մինչև 608—610 թթ., և այս կատակցութեամբ հարց է առաջանում, թե ո՞րքան ճիշտ են այն բանասերները, որոնք «Աշխարհացոյց»-ը համարում են Անանիա Շիրակացու (610—685) աշխատութուններից մեկը¹:

Խոսելով Հայկական «Աշխարհացոյց»-ի և Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկի» ասորնյությունների մասին, պիտի նշել, որ շատ հարցերում հայ աշխարհագրագետը ավելի առաջ է գնացել, քան իր հույն մեծ նախորդը: Այսպես, «Սարմատիա» զխում ուշագրութուն է պատվում այն հանդամանքը, որ հայ հեղինակը բոլորովին մի կողմ է թողնում Պտղոմեոսի ոչ ճիշտ պատկերացումը Կասպից ծովի արևմտյան ծովեզերքի մասին և բերում է այնպիսի ավյալներ, որոնք ցույց են տալիս, որ նրա պատկերացումը գիտական տեսակետից հեռ չէր մնում XVIII դ. աշխարհագրագետների ու ճանապարհորդների պատկերացումից:

Մեր կողմից հրատարակված քարտեզի շրջանակներում ընկնում է նաև Կողքիսը, որը և քաղաքական և դավանարանական տեսակետից ընկնում էր Բյուզանդական կայսրութեան ոլորտում: Ինտրոչ է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը վաս է տեղեկացված Կողքիսի մասին: Վերջինիս մասին խոսելիս հեղինակը մեծ շփոթում օգտվում է Պտղոմեոսի ավյալներից, իսկ կազիկայի թագավորութեան (անվանում է «Ալազիկիէ») մասին շատ ազոտ տեղեկութուններ ունի: Նա տեղյակ է այժմյան Արևմտյան Վրաստանի տերիտորիայի էթնիկական կազմի մասին, բավական ճիշտ թվարկում է այնտեղ ապրող ցեղերը և հիշատակում է այնտեղի քաղաքները—«Ջավոտիոն»-ները, սակայն այս բոլորը իր մանրամասնութեամբ զիջում է Արևելյան Վրաստանի՝ Վիրքի նկարագրութեան:

Համենայն դեպս ինչպես Ասիական Սարմատիայի հարավային մասը, այնպես էլ Կողքիսը, ընկնում էին Պտղոմեոսի Asiae tabula tertia քարտեզի շրջանակներում և հայ աշխարհագրագետ-քարտեզագետը, որի համար այդ քարտեզը հիմք էր ծառայել, պիտի ձգտեր այս երկրները ևս ներկայացնել այնպիսի տեղեկութուններով, որոնք իրենց մանրամասնութեամբ հեռ չէին մնալու Վիրքի, Աղվանքի ու Մեծ Հայքի երկրներից: Մեր քարտեզը որոշ չափով ընդլայնված է արևմտյան կողմից, որպեսզի հնարավոր լիներ ցույց տալ Փոքր

Հայքի ամբողջ տերիտորիան: Եվ ավյալ գեպտում ևս բոլորովին պատահական չէ, որ «Աշխարհացոյց»-ը վերաբաղարում է Թեոդոս Ա-ի 378—386 թթ. վարչա-տերիտորիալ փոփոխութուններից հետո գոյութուն ունեցող Փոքր Հայքի սահմանները:

Պտղոմեոսի Asiae tabula tertia քարտեզը մեծ սյամնականութուն էր ստանում VI—VII դդ. Հայաստանի քաղաքական-գաղափարական պայքարի պայմաններում, երբ Հայաստանը առանձին հետաքրքրութուն էր հանդես բերում Տրդատ Մեծի ժամանակաշրջանի Հայաստանի վարչա-տերիտորիալ բաժանումով: Ինչո՞ւ հեղինակը «Երանշահրի», այսինքն՝ Սասանյան Իրանի, քարտեզի վրա ցույց է տալիս այդ պետութեան քաղաքական բաժանումը, որ գոյութուն ուներ իր ժամանակ. բնդրկելով նրա մեջ նաև անդրկովկասյան երկրները՝ Վարդպանական Հայաստանը («Արմն՝ իր էլ Հայք»), Վիրքը («Վարջան՝ որ է Վիրք») և Աղվանքը («Ռան՝ որ է Աղուանք»), Բաղասական և Սիսականը՝ Վերջին գեպտում հեղինակն, անշուշտ, իր ժամանակաշրջանի քաղաքական քարտեզն էր տալիս, այն պետութեան, որտեղ ինքը ապրում էր, իսկ առաջին գեպտում նա կատարում էր որոշ քաղաքական պատվեր: Եթե «Աշխարհացոյց»-ը իր քարտեզներով կազմվել է 591—610 թթ. միջև, հասկանալի է դառնում այն հետաքրքրութունը զեպի իր մայրենի երկրի անցյալը, որ հանդես է բերում հեղինակը: Այդ պայմանավորված էր քաղաքական նոր իրադրութեամբ: Ինչպես հայտնի է, 589 թ. ապստամբից Սասանյան Իրանի ավազանու ակաւնավոր ներկայացուցիչներից մեկը՝ Վահրամ Չուրին Միհրեմյանցակը, որն իրեն հայտարարեց Սասանյան Իրանի պահակալ և պատերազմի ելավ արքայից արքա Որմիզդ Դ-ի (579—590) ղեմ, սակայն նրա ղեմ ղուրս եկավ պարսկական ավազանու մի այլ ներկայացուցիչ՝ Վստամը, որը կարողացավ ձերբակալել Որմիզդ Դ-ին, նրան կուրացնել և սպանել, իսկ նրա փոխարեն 590 թ. թագավորեցրեց զահաժառանգ խոսրով Բ Պարվեզին: Երիտասարդ թագավորը շկարողանալով հաղթել Վահրամ Չուրինին, փախավ մայրենի երկրից և ապառասն որոնեց Մավրիկիոս կայսեր մատ, խոստանալով վերջինիս հանձնել մարզպանական Հայաստանի և Վիրքի մեծագույն մասը, իրեն հատուցում նրա կողմից ցույց տրվող սպասական օգնութեան:

Այժմ Վահրամ Չուրինի ղեմ կռվում էին ոչ միայն պարսկական արքունի զորքերը, այլև բյու-

¹ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ի հեղինակ համարելու ղեմ առաջին անգամ հայագիտութեան մեջ լուրջ առարկութուն արեց ակադ. Ն. Մանանդյանը, չնայած որ ինքը ևս մեծ շփոթութունների մեջ է ընկել Մովսես Խորենացու ժամանակի հարցում: Տես նրա «Սորենացու տեղեկավարի լուծումը», Երևան, 1934, էջ 55—60:

¹ Աշխարհացոյց, էջ 40: Ուշագրավ է այն հանգամանքը, որ բանասերները համար անհասկանալի է մնացել, թե ինչու այս երկրները բնագրում հիշվում են երկու տեղ:

զանգալան կայսրի զտրամասերը: Ստեղծված պայմաններում Վահրամ Չուբինը գաշնակիցներ էր որոնում հայ նախարարների մեջ: Սեբեոսը բերում է այն նամակի բնագիրը, որ, ըստ պատմիչի, Վահրամ Չուբինը գրել էր «սա Մուշեղ [Մամիկոնեան] և առ այլ նախարարս Հայոց»: Նամակում հայ նախարարներից հայցում է ռազմական օգնություն, որովհետև, նրա ասելով՝ «ես և դուք միարանութեամբ ըստ ճշտի ի միջոյ զտիեզերական պատուհասն, զսուսն Սասանայ»: Վահրամ Չուբինը հայ նախարարներին խոստանում է, որ եթե ինքը հաղթի՝ կիբրականգնի հայկական անկախ թագավորությունը իր նախկին սահմաններով: «Եւ թէ ես յաղթեցից» — ասում է նա, — երդուեալ ի մեծ աստուածն Արամազդ, և յԱրեղակն տէր և ի Լուսին, ի Հուր և ի Զուր, ի Միհր և յամենայն աստուածս, եթէ ձեզ տուեալ լիցի իմ զՀայոց թագաւորութիւնն. զոր և դուք կամիր՝ արասցիք ձեզ թագաւոր: Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ԳԿապիոհ և Գուտն Աղուանից, և լկառուց կողմանէ՛ զԱրուաստան, զՄըծուին և զՆոր Երբական մինչև Կասհմանս Տաճկաց, զի առ նախնեաքն իսկ ձեզ լեալ է. և ընդ արևմուտս մինչև ԳԿասարիա Կապադովկացուց: Եւ ես մի իշխեցից քան Զարասոյ անցանել յայնկոյս»¹:

Նույնիսկ եթե այս փաստաթուղթը հորինված լինի Սեբեոսի կողմից, այնուամենայնիվ մի բան պարզ է. այն ցույց է տալիս քաղաքական այն տրամադրությունները, որոնք դերիշխող են եղել հայ նախարարների ու հոգևորականության մեջ՝ այդ Հայոց երկրի անկախության ու միասնության պաշտպան է, որը վերջին անգամ իր մարմնացումը դտավ Տրդատ Մեծի թագավորության ժամանակաշրջանում և որին զիմաց իր Մեծ Հայքի քարտեզի վրա ցույց տալու համար «Աշխարհայոց»-ի հեղինակը:

Ճիշտ է, սպասումը Վահրամ Չուբինը հաղթել էր և Սասանյանների գերիշխանությունը նորից վերականգնվել էր երկրում, սակայն, անդադար պատերազմական գործողությունները Բյուզանդիայի և Սասանյան Իրանի միջև, թուլացրել էին երկու կողմերն էլ և, որպեսզի իրենց քաղաքական գերիշխանությունը պահպանեն Անդրկովկասի երկրներում, Սասանյանները հարկարված էին մի շարք նոր արտոնություններ տալ Հայաստանի, Վրաց աշխարհի ու Աղվանքի ֆեոդալներին, արտոնություններ, որոնք հանդեցին նրանց գրեթե քաղաքական անկախության, Բայց, ավա՛ղ, Անդրկովկասի ժողովուրդներին չէր վիճակված վայելի իրենց երկրների անկախության պառօղները:

VII դ. կեսերից սկսվեցին արարների ավերիչ արշավանքները, որոնք VIII դ. սկզբին վերջացան նոր նվաճողների լիակատար դերիշխանության հաստատումով: Այդպիսով, այն ազատագրական պաշտպանությունները, որ մենք տեսնում ենք «Աշխարհայոց»-ում, ի վիճակի չէր իրականացնելու իր նպատակները երկար ժամանակով, մինչև որ նոր պայմանները հարկադրեցին նվաճողների տեղի տալ և ճանաչել հայերի, վրացիների ու աղվանների քաղաքական անկախությունը. այդ արդեն IX դարումն էր:

Վերը բերված գրույթները «Աշխարհայոց»-ի մասին սպացուցվում են այդ երկի հիմնական մասի՝ Մեծ Հայքի, Վրաց աշխարհի, Աղվանքի, Կողքիսի և «Սարմատիայի» նկարագրության մեջ պատահող անունների տեղադրությամբ այժմյան քարտեզի վրա:

Ինչպես ասացինք, մենք սույն քարտեզում վերցնում ենք Հայաստանի և հարևան երկրների վարչա-տերիտորիալ բաժանումը, որ գոյություն ուներ մինչև 387 թ. պաշտոնական փոփոխությունները, որոնց մասին մատնացույց է անում «Աշխարհայոց»-ը: Գավառների տեղադրության ճշտումը հնարավորություն է տալիս սպառնիչ ճշտությամբ վերականգնելու այժմյան քարտեզի վրա Մեծ Հայքի 298—338 թթ. միջև ընկած ժամանակաշրջանի քաղաքական սահմանները: Եթե մեզ հայտնի են սահմանները, ապա կարող ենք հաշվել այն ժամանակվա Մեծ Հայքի տերիտորիայի մակերեսի տարածությունը: Որոշելով յուրաքանչյուր գավառի տեղադրությունը, մենք աշխատել ենք որոշել նրանց սահմանները, որոնք իրենց հերթին սահմանները, իսկ այդ հնարավորություն է ընձեռում որոշելու յուրաքանչյուր գավառի ու նահանգի մակերեսի տարածությունը: Հարկավ, մի շարք գավառների տեղադրությունը դեռ կարիք ունի ճշտման, իսկ մի մասի համար էլ մեր ձեռքի տակ եղած տվյալները բավարար չեն նրանց վերջնական տեղադրությունը պարզելու, ուստի գավառների սահմանները զգալի մասով տրվում են մատավոր ճշտությամբ (տե՛ս հավելված Բ): Այս հարցում մեզ օգնության է գալիս Հայկական Լեոնաշխարհի լեոնագրությունն ու ջրագրությունը, սակայն ոչ բոլոր գեպքերում վարչական բաժանումները պայմանավորված են ֆիզիկո-աշխարհագրական առանձնահատկություններով:

Եթե գավառների սահմանների հարցում ոչ բոլոր դեպքերում հաստատ կովաններ ունենք, նահանգների սահմանների հարցում մենք ավելի վստահ հիմքեր ունենք: Այս հարցում ես դեռ շատ բան կա անելու, սակայն հետագա ուսումնասիրու-

¹ Սեբեոսի եպիսկոպոսի՝ Պատմութիւն, գլ. Թ, նրկ. վան, 1939, էջ 38—39:

թյունները կարող են մտցնել միայն մասնակի շտկումներ: Հիմնականն արդեն արված է:

Գավառների ու նահանգների տեղադրության ու նրանց սահմանների հարցի լուծումը հնարավորություն է ընձևնում որոշելու ամենայն մանրամասնությամբ Հայաստանի քաղաքական սահմանները 387 թ. հետո մինչև 591 թ., երբ Հայաստանը ենթարկվեց նոր բաժանման, և հաջորդ ժամանակաշրջանների սահմանները՝ ընդհուպ մինչև Արարական խալիֆայության գերիշխանության հաստատումը երկրում:

Առաջին անգամ հրատարակելով «Աշխարհացոյց»-ի Հայաստանին և հարևան երկրներին վերաբերվող մասը այժմյան քարտեզագրական հիմքի վրա, մենք խիստ հետևել ենք բնագրին՝ քարտեզի վրա ցույց արվող երկրների քաղաքական և վարչական բաժանման սխեմանին: Վերջինս այն ստադիան է, որի վրա խորսովված է «Աշխարհացոյց»-ի և համառոտ, և ընդարձակ բնագրեր:

Հետագայում, եթե դռնվին «Աշխարհացոյց»-ի նոր՝ ավիլի մանրամասն բնագրեր, նրանք հպվիլ թև Մեծ Հայքի դավառարամանան սխեմանին որևէ նոր բան ավելացնեն: Մնացյալ մասը՝ լեռները, դադաթները, գետերը, լճերը, բնակավայրերը՝ քաղաքներ, ավաններ, գյուղեր, ամրոցներ և բերդեր, մենք նշել ենք ավիլին, քան այդ տալիս է մեզ հասած բնագրեր: Այս տեսակետից մենք շեղվել ենք և աշխատել ենք «Աշխարհացոյց»-ին ժամանակակից բոլոր պարզություններից մեզ հայտնի այն աշխարհագրական կետերի ու վայրերի անունները, որոնք կարող էին գոյություն ունենալ մինչև 387 թ., հիշատակել քարտեզի վրա, հարկավ, աստիճան հերթին, այն տեղանունները, որոնք պարունակում են տվյալ գավառի կամ երկրամասի անունը: Բացի անուններից, մենք քարտեզի վրա տեղադրել ենք բնագրում հիշատակվող բնական հարստությունները՝ հանածոները, կենդանական և բուսական աշխարհը, գեկավարվելով այժմյան տվյալներով (տե՛ս «Բնական հարստություններ» գլուխը): Այստեղ անհրաժեշտ է նշել, որ «Աշխարհացոյց»-ում հիշվող հանածոների, կենդանական և բուսական աշխարհին վերաբերվող բառերը մեծ մասամբ բանասիրության համար մնում են մուժ և դժվար վերծանելի, ուստի մենք գերադասեցինք քարտեզի վրա նշել այդ բառերը նույնությամբ, որ բոլոր գեկաբերում ասարհովում է ուսումնասիրողին բռնազբոսիկ բացատրություններից ու սխալներից:

Նույն այդ սկզբունքից էլնելով, մենք աշխատել ենք տալ քարտեզի շրջանակներում լուսարանված երկրների մասին խոսող «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության բնագրի վերականգ-

նրման մի փորձ: Մեզ հասած ընդարձակ բնագրի սակայն հայտնի միակ օրինակը լի է աղճատումներով, իսկ տեղ-տեղ պակասում են ամբողջ տողեր ու նախադասություններ: Մենք ձգտել ենք հնարավորության սահմաններում վերականգնել բնագրի նախնական պատկերը, սակայն այդ միայն առաջին մտնեցումն է սկզբնագրին, որը մեղ լի հասել և մեր ձեռքի տակ կղածք այդ սկզբնագրի վրա ընդօրինակությունն է, մի ընդարձակ մասն էլ լրացվել է համառոտ բնագրից: Մեծ Հայքի նկարագրության բաժնում համեմատաբար լավ են պահպանվել Բարձր Հայքը, Մոփաց կողմը, Տալուրերանը, Վասպուրականը (մասամբ), Այրարատը և Տալքը: Մյուս նահանգների նկարագրությունը քիչ է սարբերվում համառոտ բնագրից: Լավ է պահպանվել Վիրքը և մասամբ Աղվանքը:

Ընդարձակ բնագրի վերականգնման փորձը պարզեց նաև այն, որ համառոտ խմբագրությունը պարզապես «Աշխարհացոյց»-ի ընդարձակ բնագրի համառոտությունն է: Համառոտ խմբագրության Մեծ Հայքը մեծ մասամբ դավառների ցուցակ է, բաժանված 15 նահանգների մեջ. եթե մեր ձեռքի տակ չլինեք ընդարձակ խմբագրությունը, մենք պիտի կարծեինք, որ դավառների հաջորդականության մեջ ոչ բոլոր գեկաբերումն է պահպանված նրանց աշխարհագրական դիրքի հաջորդականությունը: Ընդարձակ խմբագրությունը ցույց է տալիս, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ամեն մի «փոքր աշխարհ»-նահանգ առանձին է նկարագրում ըստ հովիտների, ձորերի, դաշտավայրերի և լեռնազանգուրի, դուրդողելով դրանց գավառների անունների հիշատակությունը: Համառոտ բնագրի շարագրողը, որը պարզապես կաղմել է 15 նահանգների դավառների ցուցակները, սողակի վերցրել է ընդարձակ բնագրի դավառների անունները ըստ նրանց հիշատակության հաջորդականության: Գավառների տեղադրության ուսումնասիրությունը պարզ ցույց է տալիս, որ ոչ բոլոր գեկաբերում հաջորդականությունը կարող է ցույց տալ տվյալ գավառի հարևանությունը իրեն նախողող կամ հետող գավառի հետ:

Անշուշտ, «Աշխարհացոյց»-ի մեղ հետաքրքրող հատվածի բնագրի վերականգնումը միայն մի փորձ է: Բոլոր գեկաբերում անհրաժեշտ է ունենալ «Աշխարհացոյց»-ի բնագրի գիտական հրատարակություն, հիմնված մատենագրաբաններում պահվող գրքերի համահավաք բնագրի վրա, որ պիտի հնարավոր լինի ճիշտ գաղափար կազմել մեղ չհասած սկզբնագրի մասին:

Գրքի վերջում գետեղված է աշխարհագրական ու ցեղագրական անունների և անձնանունների

լիակատար ցանկ, որը կզյուրացնի քարտեզից և նրա բացատրագրից օգտվելու խնդիրը:

Սույն քարտեզը հրատարակության համար պատրաստելու գործում մեծ աշխատանք է տարել ինժեներ-կարտոգրաֆ Հայկ Գործակալանը: Առաջին հերթին նա պատրաստել է քարտեզագրական հիմքը, որի վրա մենք տեղադրել և դրանցել ենք քարտեզի ամբողջ տեքստը և սլալմանական նշանները, որի հիման վրա, այնուհետև Հ. Ն. Գործակալանը պատրաստել է հեղինակային մակետը: Վերջինս, թե՛ քարտեզագրական և թե՛ գեղարվեստական ձևավորման տեսակետից, արժանացավ մեծ գնահատականի Սովետական Միության հայտնի և հեղինակավոր մասնագետների կողմից: Հ. Ն. Գործակալանի աշխատանքը սրանով չի սահմանափակվել: Ինչպես հայտնի է, մինչև վերջերս գոյություն չեն ունեցել հայկական քարտեզագրական տառատեսակներ: Մենք մեր աշխատանքի ընթացքում միշտ զգացել ենք այդ բացը: 1959—1960 թթ. ընթացքում, հատկապես սույն քարտեզի համար, Հ. Ն. Գործակալանը ստեղծեց հայկական քարտեզագրական տառատեսակները, որոնք շատ բարձր գնահատականի արժանացան համապատասխան մասնադեղատ-

ների կողմից: Բացի նշված աշխատանքներից, Հ. Ն. Գործակալանը սույն քարտեզի համար նկարեց գեղարվեստական շրջանակ, որի մոտիվները վերցված են VI—VII դդ. հայկական ճարտարապետական կլասիկ հուշարձանների օրնամենտներից: Հ. Ն. Գործակալանը կատարել է նաև սույն դրքի գեղարվեստական ձևավորումը (սուպերշապիկը, կազմը, անվանաթերթը, գլխադարձերը և վերջնազարդերը): Այս մեծ աշխատանքի համար Հ. Ն. Գործակալանին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Մեր պարտքն ենք համարում խորին շնորհակալություն հայտնել Սինսկի Քարտեզագրական ֆարրիկայի ղեկավար Վ. Վ. Ուռուսովին և նրա տեղակալ Ա. Օ. Լեշինովին, գլխավոր ինժեներ Վ. Ա. Մորոզովին, ապա Քարտեզագրական ցեխի աշխատակիցներին, մանավանդ, Մ. Ա. Ռուտկովիչին: Մեր պարտքն ենք համարում շնորհակալություն հայտնել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչությանը, մանավանդ Մանվել Կափլանյանին, որը օգտակար խորհուրդներ է տվել տառատեսակների ստեղծման հարցում:

Հեղինակ





Բ Ա Յ Ա Տ Բ Ա Գ Ի Բ

Ա.

Աբառնել (վաղարշակուպալիս) քաղաք—Գ3—
այժմ՝ Զերմուկ (Թուրք. Զերմիկ): Հնուց ի վեր
հայտնի էր իր տաք բուժիչ ջրերով: Բյուզան-
դական կայսր Թեոդոս Մեծը (389—395) այս
վայրը հանձնել էր «յուստետո» Պապի որդուն՝
թագածառանգ Վաղարշակին, ուստի նրա
անունով այս վայրը կոչվեց «Վաղարշակու-
պալիս»:

Աբեղեանք գաւառ—Բ5 — Այրարատ նահանգի 3-րդ
գավառը. հնագույն հիշատակութունը պահ-
պանվել է ուրարտական արձանագրութուն-
ներում Abilianibi ձևով: Աբեղեանք գավա-
ռը գտնվում էր Երասխ գետի ձախ ասիին և
Մեծրաց լեռների (Սողանլու-դաղ) միջև, Մը-
ժընկերոս գյուղի շրջանում: Աբեղեանք գավա-
ռի ժառանգական կառավարիչների տոհմը կոչ-
վեց «Աբեղեանք», իրրե առանձին նախարա-
րական տուն: Այս գավառի մոտավոր տարա-
ծութունն էր 1000 կմ²:

Աբխազ ալան—Բ8—այսպես էր կոչվում արարա-
կան աղբյուրներում. բոտ երևույթին, գտնը-
վում էր այժմյան Ղուբսոյի մոտ, կամ նրա
տեղում:

Ագարակ (ձահուկ) ամրոց—Գ5—Կորճայք նահան-
գի ձահուկ գավառում: Գալառի անունով կոչ-
վել է նաև ձահուկ և գտնվում էր այժմ էլ
Ագարակ կոչվող լեռներում, Զուլամերիկյ
հյուսիս-արևմուտք:

¹ Հայերեն տասնաչափը և արարական թվանիշը այս-
տեղ և անգանունների ցանկում ցույց են տալիս այժայ
աշխարհագրական կետի կորցրվածությունը քաղաքի վրա:

Ադ-Արաս կայան—Գ3—Ad Aras (Tab. Peut.)¹
Եփրատի ասիին, այժմյան Իզուլուի գետանցքի
մոտ:

Ադ-Պրետորիում կայան—Գ2—Ad Praetorium
(Itin. Ant.)² այժմյան Հասան-Չեղերի գյուղը:
Ազա կայան—Բ3—Aza (Itin. Ant.), այժմ
Աղիզ գյուղ:

Ազազ քաղաք—Գ2—այժմ նույնանուն գյուղաքա-
ղաք:

Ազատ գետ (կոչվել է նաև Գանկի)—Բ6—ալունք-
ները գտնվում են Գեղ լեռան արևմտյան փե-
շերին գտնվող Սախուրակ (այժմ Աժգահա-
յուրտ) կոչվող տեղում, որտեղ գտնվում են
վիշապանման կոթողները:

Ազատ Մասիս լեռան (5165)—Գ6—այժմ՝ Մեծ
Մասիս կամ Արարատ.—Հայկական լեռնաշ-
խարհի ամենարժար կետը, որն իրենից ներ-
կայացնում է վիթխարի հրաբխային մի
գանգված:

Ազնուաց ձոր գաւառ—Գ5—Աղձնայաց բղեշխության
6-րդ գալառն էր՝ 202 կմ² տարածությամբ:
Այս գավառը տեղադրվում է այժմյան Գյու-
զել-դերև վիճակում:

Ազոդ գետ—Բ4—այժմ Թորթում-չայ:
Ազոդ գյուղ—Բ4—այժմ էլ նույն անունով Թոր-
թում լճի մոտ:

¹ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ սույն բա-
ցարարքում մենք նշում ենք աղբյուրները և ուսումնա-
սիրութունները միայն անհրաժեշտության դեպքում,
թողնելով այն մեր կողմից հրատարակության պատրաս-
տվող հատուկ ուսումնասիրությանը:

Այտեղ և ստորև Tab. Peut.=Tabula Peutingeriana;
Տե՛ս՝ Konrad Miller, Itineraria Romana, Stuttgart, 1916:

² Այտեղ և ստորև Itin. Ant.=Itineraria Antonini.
Տե՛ս՝ Itinerarium Imp. Antonini Augusti, Recueil des itinere-
raires anciens, publies par De Fortia D'Urban, Paris, 1845,

Ազորդաց փոր գաւառ—*Բ4*—Տալքի 7-րդ գավառը, այժմ էլ Ազորդ անունով հայտնի գյուղի շրջափակում և Ազորդ գետի (այժմ Թորթում) ստորին հոսանքում Թորթում լճի շրջակայքում: Ազորդաց փոր գավառի տարածութունն էր շուրջ 500 կմ²:

Արինա քաղաք—*Բ4*—հնադարում, այժմ էլ նույն անունով բնակավայր: Վերջերս անվանվել է Բազար:

Արշի-Բագաւան գաւառ—*Գ8*—կոչվել է նաև Բագաւան և Բագուան: Փայտակարանի 6-րդ դարում, շուրջ 2480 կմ² տարածութեամբ: Այս գավառն հիշյալ անունով հիշատակվում է նաև Ղեղնի մոտ Արարական և պարսկական ազդրուրներում՝ Բաշարվան, Օլեարիուսի (1600—1671) մոտ՝ Betziruan. Տե՛ս Բագաւան կամ Արշի-Բագուան անունները:

Ալադարաւիգա (Աղանդարաւիգ) —*Բ3*— Aladara-riza (մեկ հասել է. տղճատված ձևով՝ Olo-toedariza (Hlin. Ant.) ձևով, պիտի գտնվեր Բուրգից հյուսիս:

Ալանաց դուռն—*Ա6*—պարսկ. Դար-ի-Ալան, վրաց. დარბაჯი Դարիալանի: Այսպես էր կոչվում այժմյան Դարիալի անցքը, որտեղով անցնում է սպիտակիական ճանապարհը:

Ալանք—*Ա5*—ցեղային միութուն: Ալանները այժմյան օսերի նախնիներն են: Ալանների բնակության տերիտորիան ընդգրկում էր Կուրան գետի ակունքների շրջանից դեպի արևելք՝ մինչև Թերեք գետի միջև գտնվող երկրամասը:

Ալգեա—*Բ6*—վրաց. ალგეთი Ալգեթի, այժմ էլ նույն անունով գետ, Կուր գետի աջափնյա վտակներից մեկը:

Ալեւան գաւառ—*Գ7*—Փայտակարանի 9-րդ գավառը՝ շուրջ 1300 կմ² տարածութեամբ. գտնվում էր Արասու գետի և Հալասար գագաթի լեռների միջև: Համարվում էր Ղաղվինին այս տեղերում է գետեղում «Ալվան ռաբարը», դեպի Ահար քաղաք տանող ճանապարհին:

Ալիս (Ալիս) գետ—*Գ2*—Halys այժմ Քըզըլ-Ըրմաք գետը, որի վերին հոսանքը գտնվում էր Փոքր Հայքում:

Ալկի ամրոց—*Գ5*—Տմորյաց աշխարհում, ասորա-բարեկական արձանագրութունների «Էլա-կուչ», այժմ էլ: Այս վայրը Ստրաբոնի մոտ (XVI, 1, 24) հիշվում է Σόταρα ձևով, որ առաջացած պիտի լինի հայերեն Շատ-Ալկի ձևից (հմմտ. Շատերդ): Վարդանի «Աշխարհացոյց»-ում կոչվում է «Ալկեֆար»:

Ալվմինոն մար—*Բ8*—այսպէս էր կոչվում այժմյան Ալ-գիրի լիճանը:

Ախալցիխէ ամրոց—*Բ6*—այժմ էլ նույնանուն գյուղ Արազի գետի աջ ափին, Մցխեթայից հյուսիս, Միծամուրի գյուղի դիմաց:

Ախուրեան գետ—*Բ5*—այժմ Կարս-չարս և նրա շարունակութունը կազմող՝ Ախուրյան գետը: Այս գետի ակունքների շրջանում, այժմյան Սարիգամիշի մոտ, գտնվել է ըստ ուրարտական արձանագրութունների, «Ախուրիանի» «քաղաքը»:

Ականիս, որ է Վոնի (Յոնի) կամ ճորոխ—*Բ4*—հուն. Βοαζ, լատ. Acampsis գետ, միջին դարերում, և այժմ կոչվում է Ճորոխ: Այս գետի ստորին հոսանքը վրացիների մոտ կոչվել է յգրոն Գյալո եգրիս-ձղալի (էգրոլ ջուր): Ակամիս էր կոչվում նաև Ան ծովը, տե՛ս «Պոնտոս ծով»:

Ականիս բերդ—*Գ5*—այժմ էլ նույն անունով վայր Ալե գավառում, որի անունը աղբրակցվում է Ականիս անվան հետ:

Ականիս լեռան (3350)—*Գ5*—կոչվել է նաև Ա. Բաղալու կառու, այժմ՝ Մերքեղ-գաղ:

Ալե գաւառ—*Գ5*—Վասպուրականի 16-րդ գավառը՝ 250 կմ² տարածութեամբ. Ալեգի նախարարական տան ժառանգական տիրակալութունն էր:

Աղանէնք գաւառ—*Գ7*—գտնվում էր Աղուան գետի (այժմ Հաղարու) վերին հոսանքում: Սյունիքի 6-րդ գավառը՝ 1402 կմ² տարածութեամբ. համապատասխանում է այժմյան Լաչինի շրջանին: Միջին դարերում կոչվում էր Քաշարալ և Խոժոռաբերդ:

Աղանգարաւիգ, տես Ալադարաւիգա:

Աղանդոն (Արմն) գետ—*Ա6*—այսպէս պիտի կոչվեր Թերեք գետի անվանված վերին հոսանքը, որը անցնում էր Ալանաց երկրի սահմաններով: Վերին աստիճանի ուշագրավ է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը Պտղոմեոսի (V, 8, 6) Ἀλόντα, Alontae գետի անունը դարձրել է իրեն համար հասկանալի՝ Աղանդոն, որ բառացի նշանակում է՝ «Ալանաց գետ»:

Աղանդ-ոռո գաւառ—*Գ6*—Վասպուրականի 25-րդ գավառը՝ 850 կմ² տարածութեամբ. գրավում էր համանուն՝ Աղանդ-ոռո գետի հովիտը մինչև Նուարասի գյուղը:

Աղանդ-ոռո գետ—*Գ6*—այժմ՝ Ալյանդ-ոռո:

Աղան-ոռա—ԳՑ. այսպես պիտի կոչվեր այժմյան Աղանիա-չայ գետը:

Եղանոյ գետ, տե՛ս Աղուան գետ:

Աղրակ գետ—Գ6. ուրարտական ժամանակաշրջանում կոչվում էր «էլամունիա», այժմ՝ Այրակ-սու, որ Մեծ Զար գետի վերին հոսանքն է:

Աղրակ գետ—Գ6, այժմ կոչվում է Այրակ-սու: Այս գետի հովիտն էր դրավում Փոքր Աղրակ գավառը:

Աղրակ Մեծ գետառ—Գ6—Վասպուրականի 17-րդ շախմատը, 1655 կմ² տարածությամբ, գրավում էր Մեծ Զավ գետի վերին հոսանքը, որը կոչվում էր Աղրակ գետ, այժմ Այրակ-սու. զավառիս կենտրոնն էր Հաղամակերտ ավանը (այժմ Բաշ-կալե): Նրանից ոչ հեռու գտնվում էր Սուրբ Խաչ կամ Բարգուղիմեոսի վանքը: Աղրակ Մեծը Արծրունի տոհմի ժառանգական հայրենիքն էր:

Աղրակ Փո՛ր գետառ—Գ6—Կորձևից նահանգի 11-րդ գավառը՝ շուրջ 405 կմ² տարածությամբ:

Աղրեւի Մեծամար գետոյ—Բ6: Քարտեզի վրա չի նշված: Ըստ Երևույթին այժմյան Այգր-լճի մոտ էր:

Աղրեւի Տիգրիս գետոյ—Գ4—այստեղ էին գտնվում Արեւմտյան Տիգրիսի արեւելյան ագրյուրները, որոնք հայտնի էին գեւես ասորա-բարեյական արձանագրություններում: Տիգրիսի ակունքներից սկսվում էր հռչակավոր լեռնանցքը գեպի Արածանիի հովիտը:

Աղեւսանդրեակ քաղաք—Գ2—կոչվում է նաև Աղեւսանդրեատա. որ նշանակում է Փո՛ր Աղեւսանդրիա: Այսպես պիտի կոչվեր ի տարբերություն Նեղոսի գետաբերանին գտնվող Մեծ Աղեւսանդրիայի:

Աղրամար ամրոց—Քարտեզի վրա չի նշված. տե՛ս՝ Աղթամար կղզի:

Աղրամար կղզի և ամրոց—Գ5—Վանա լճի կղզիներից մեկը. VII դ. Ռշտունյաց նախարարական տան կենտրոններից մեկն էր, իսկ X դ. Արծրունյաց թագավորության, իր հռչակավոր Սուրբ Խաչ տաճարով: Աղթամար կղզին համարվում էր Ռշտունիք գավառում:

Աղի գետ—Գ5—այժմ Դալի-չայ՝ Վասպուրականի Աղիովիտ գավառում:

Աղի գյուղ—Գ5—Վասպուրականի Աղիովիտ գավառում, այժմ Աղի կամ Աղասավ գյուղ:

Աղի լեռան (3519)—Գ5—այժմ Ալա-դաղ գագաթ: Աղի լեռնանցք (1973)—Գ5—այժմ՝ Աղի-գյաղուկ: Աղիովիտ գավառ (Վասպուրականի)—Գ5—Վասպուրական նահանգի 5-րդ գավառը՝ շուրջ

600 կմ² տարածությամբ: Ըստ Երևույթին, սկզբում գոյություն ուներ մեկ Աղիովիտ գավառ, սակայն հետագայում, Երբ բարձրանում է մաճառաշահ Զարիշատ քաղաքը, վերջինս, ի պատիվ Արտաշես Ա-ի հոր Զարեհի, ստանում է «արհունի Բաղավի» իրավունք և նրա հետ միասին հողային տարածություն՝ Աղիովիտ գավառի արեւմտյան մասը, իրեն Զարիշատ Աղիովիտ քաղաքի քաղաքային տերիտորիա: Վերջինս հիշատակվում է «Աշխարհացոյց»-ում իրեն Տավուրբերան «աշխարհի» գավառ: Վասպուրականի Աղիովիտ գավառը Արեւրանի գավառի հետ միասին իրեն Արշակունյաց տան սեպուհների բնակավայր, կոչվում էր «Սևալուրիակալե» կամ «Վասպուրական», «Երկիրն սեպակալե գեղին»: 591 թ. հետո Վասպուրական անունը տարածվեց այն տերիտորիայի վրա, որը «Աշխարհացոյց»-ում հայտնի է այդ անունով:

Աղիովիտ գաւառ (Տարուրբերանի)—Գ5—Տավուրբերան նահանգի գավառը 1575 կմ² տարածությամբ: Այս գավառը գրավում էր Վանա լճի հյուսիսային եզերքը, որի անունով էլ լիճը կոչվել է նաև «Աղի» (այդ անունը գիտե Մովսէս Խորենացին, գիրք Ա, գլ. ԺԲ): Այս գավառը Զարիշատ Աղիովիտ քաղաքի քաղաքային տերիտորիան էր:

Աղին (Առին) գաւառ—Գ3—Բարձր Հայք նահանգի 2-րդ գավառը, ուշ ճիջնագարում ժողովուրդը կոչում էր Աղեցիլ: Գրավում էր Մադեն-դևրեսի գետի հովիտը, որտեղ այժմյան Ղուու-չայ գյուղի մոտ գտնվում էր բյուզանդական աղբյուրների Առինօօօօ — «Անալինաձոր» ամրոցը, որ անտիկ շրջանի Առինօօօօն է: Այս գավառի Առին անունը, ըստ Երևույթին, սխալ ընթերցման հետևանք է: Աղին գավառի տարածությունն էր շուրջ 950 կմ²: Առինօօօօ = Analibna վայրը (այժմ Ղուու-չայ) Նիկոպոլիս-Ձիմարտ ճանապարհի կայաններից մեկն էր: Ըստ Երևույթին, այս գավառի կենտրոնն անունը՝ հույն-հռոմեական աղբյուրներում Analibna առաջացել է հայերեն Անի-Աղին ձևից: Ըստ իս Անի Աղինոյ պիտի կոչվեր այս Անին ի տարբերություն Անի Գարանդեացի-ի:

Աղձն (Արգն) գաւառ—Գ4—Աղնձևաց բղեշխության 1-ին գավառը, 3575 կմ² տարածությամբ:

¹ Հակոբ Կարնեցին այս Աղեցիլի մասին գրում է, որ այն կամախ երկրի երեք գավառներից մեկն էր՝ «Ղուու-նույան, երկր խոր և թաւամայրի, որ ի գրոց Աղեցիլ ստենա՝ Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրութուններ, XIII—XVIII գգ. հատ. II: Երևան, 1958, էջ 852:

Անտիկ աղբյուրներում հայտնի է իբրև Arzannenae և մեկ անգամ հիշատակվում է եղիշեի մոտ՝ Արգնարգիւն ձևով: Այս գավառը սկզբում կոչվել է *Արգիւնի՝ համանուն Արգան կենտրոնով, այժմ հարզան կամ Զոխ վայրը: Մի այլ տեղ («Աշխարհացոյց», էջ 37) Աղձն գավառը կոչվում է «Աղձնիք Հայոց, որ է Արձն»: Այս գավառը հսկում էր հարավից դեպի Միջնաշխարհը տանող ճանապարհը Չորսպահակով (կամ Տաւրոյ-բերան, այժմ Բիթլիսի լեռնանցք): Աղձն գավառը Աղձնյաց բղիշխութեան կենտրոնն էր:

Աղձնիք նահանգ—Գ4—առաջացել է ասուրա-բարելական և ուրարտական արձանագրություններում հայտնի Ալգիւնի անունից: Աղձնիքը հանդիսանում էր Արշակունցյաց Մեծ Հայքի շորս բղիշխություններից մեկը և ուներ 17,532 կմ² տարածություն:

Աղուան ամրոց—Բ7—Մեծ Իրանը գավառում: Ըստ երևույթին այսպես էր կոչվում միջին դարերում հայտնի Գանձասար վանքի տեղը: Այս վայրը եղել է Աղվանից թագավորների ամառանոց՝ «Տնովոց տեղիք» IV—V դդ.:

Աղուան գետ—Բ7—այսպես էր կոչվում Ալազան գետը (համեմատյալ դեպ ստորին հոսանքում), որը հոսում էր Աղվանքի միջով: Հուլյն հեղինակները երկու անունով էլ կոչում են՝ Ἀλζαννα և Ἀλζάνονος: Ալազանը կոչվել է նաև Ղանուխ գետ:

Աղուան գետ (Սղաւնոյ գ.)—Գ7—այժմ Հապարու գետ: Արարական աղբյուրներում այս գետը կոչվում է «Աուան»:

Աղուան գետ—Բ8—այսպես պիտի կոչվեր այժմյան Աղ-սու գետը, որը Աղվանից թագավորության արևելյան սահմանն էր հանդիսանում: Ըստ երևույթին, անտիկ աղբյուրների Albana անունով գետերից մեկը պիտի լինի:

Աղուանք աշխարհ—Բ6—Բ8—այն է՝ գրուն աշխարհն Աղուանից, որ բնդ մէջս է գետոյն Կուրայ և Կովկաս լեռինն» («Աշխարհացոյց», էջ 29), որ նկատի ունի Աղվանից թագավորության տերիտորիան մինչև 387 թվականը և որի մայրաքաղաքն էր Կապադակը: Այս տերիտորիայի ընդհանուր տարածությունն էր շուրջ 23.002 կմ²: 387 թվականից պաշտոնապես ճանաչվեց Ուտիք և Արցախ նահանգների միացումը Աղվանքին 22.843 կմ² տարածությամբ, որից հետո Աղվանքը պարունակում էր 45.845 կմ² տարածություն: 510 թ. վերջնականապես վերացվեց Աղվանից թագավորության իշխանությունը և երկիրը սկսեց կառավարվել մարգարաններով, որոնց կենտրոնը դարձավ նոր հիմնված Պարտաւ

թագարը: Այնուհետև Աղվանից մարզպանությանը հեռուցեցին միացվեցին՝ Ռուրսուակ գավառը (Փայտակարանի Հուսուտ-Պերոն գավառը), Բագիւանը, Խուրուանը, Շուուանը, Չողան, Ակիւաց և Թաւիսուպարճերի ազգագավառները և վերջնապես Գարբանդ թագաբեր ամբոթյուններով: Այս տերիտորիալ աճից հետո Աղվանից մարզպանությունը ընդգրկում էր 72.204 կմ² տարածություն:

Աղուէ ամրոց—Բ7—համանուն գավառի կենտրոնը պիտի լիներ: Այս ամրոցի տեղը պիտի փնտրել հետագա Գյուլիստան մելիքանիստ գյուղի տեղը:

Աղուէ գաւառ—Բ7—պիտի գտնվեր այժմյան Գյուլիստան գավառի տեղում: Աղուեն Ուտիք նահանգի 4-րդ գավառն էր և ընդգրկում էր շուրջ 590 կմ² տարածություն:

Աղուաւակաւնք աղբաղաւստ—Բ7—Սամուր գետի վերին հոսանքում, այնտեղ, որտեղ միախառնվում է Ախտի-չայ գետը: Այժմ էլ այստեղ ապրող ախտի ժողովրդի (АХТЯНЦЫ) հնագույն հիշատակությունն է:

Աղստն գետ—տես՝ Լովինաս:

Աղտոյ ձոր լեռնանցք (2250)—Գ5—գտնվում էր Սուկավյան լեռներում (Հայկական պար) և կապում էր Ալարատն ու Երասխաձորը Բագրևանդի և առհասարակ Հարավային Հայաստանի հետ: Հիշում է Աստղիկը (III, ԽԱ): Ռուսական քարտեզների վրա այս լեռնանցքը կոչվում է АХТИНСКИЙ пер., որից հարավ գտնվում է АХТЫ գյուղը, որ հայերեն պիտի կոչվեր Աղաք կամ Աղտոնձոր: Այսպես պիտի կոչվեր նաև նրա մոտով անցնող վտակը, որը թափվում է Արածանի գետը:

Անարա գավառ—Բ5—բյուզ. Ἄναρα, վրաց աշխարհում, ընդգրկում էր Նոստե գետի (այժմ Աճարիս-ձղալի) հովիտը, որը կազմում է այժմյան Աճարական ԱՍՍԻ-ի հիմնական մասը: Աճարա գավառի տարածությունն էր 1450 կմ²:

Ամաղիա աւան—Գ5—այժմ էլ նույն անունով:

Ամաւնու լեառն—Գ2—միջին դարերում հայերը կոչում էին Սեա լեառն, այժմյան Գյավուրգաղ լեռնաշղթան:

Ամաւիա թագար—Բ1—Ելինոպոնտոսի կենտրոնը, այժմ էլ գոյություն ունի նույն անունով:

Ամաւաւ վանք—Գ7—այժմ էլ նույն անունով գյուղ կենդային Ղարաբաղում: Այս վայրի հետ է կապում ավանդական պատմությունը բրիտանոնության մուտքը Աղվանից երկրում:

Ամաւոյս գետ—Գ7—այժմ Սևֆիդ-ոուզ կամ Ղըզըլ-ուզկն գետը:

Ամիլ քաղաք—Գ4—Միջագետքի Կնադույն կենտրոններից մեկը՝ ասորա-բարելական աղբյուրների Ամեդու քաղաքը, այժմ կոչվում է Դիարբեքր:

Ամիսսա քաղաք—Բ2—Պոնտոսի մայրաքաղաքը, այժմ էլ գոյություն ունի Սամսուն անունով:

Ամիլ ամրոց, տես՝ Ամիլ ցամաքակղզի:

Ամիլ ցամաքակղզի—Գ5—Լիմ կղզույց հարավ գտնվող անմատչելի հրվանդանը, որտեղ միջին դարերում հայտնի էր Ամիլ ամրոցը, այժմ Համոկ կամ Ամիլ գյուղը: Քարտեզի վրա չույց է տրված միայն Ամիլ ամրոցը:

Այգառ գաւառ—Գ5—Կորճեից նահանգի 6-րդ գավառը՝ 302 կմ² տարածությամբ, այժմյան Ջուլամերկից հարավ:

Այլի, որ է Կուսիբան գաւառ—Գ6—Պարսկահայր նահանգի 1-ին գավառը՝ 1380 կմ² տարածությամբ, ընդգրկում էր Նազու-չալ գետի հովիտը՝ Բարաղոսս մահալը: Միջին դարերում այս գավառը հայտնի էր էլի կամ էլոյ գաւառ անունով և ընդգրկում էր միայն Այլի գավառի արևմտյան բարձր լեռնային մասը: Այս գավառումն էին՝ էլի, Սուրէնապատ (այժմ՝ Սուրբարան), Կարենիս և Դաստակերտ (այժմ Դաստագիր) վայրերը:

Այլի վանք, տես՝ էլի:

Ալմպտկուն Լեռան (3124)—Գ4—այժմ Փայան-Յոքեն-դաղ:

Ալպալիս—Գ1—բյուզ. Ալբուլ, այժմ Պալաս գյուղ:

Ալբառատ նահանգ—Բ5—Գ6—Մեծ Հայրի կենտրոնական նահանգը, որի տարածությունն էր 40-105 կմ², վերջին Արշակունիների ժամանակ Ալբառատ նեղ իմաստով հասկացվում էր Արբունի սասանը՝ Աբառատյան դաշտավայրը շրջակա գավառներով, որը Մեծ Հայրի անտեսական, քաղաքական և մշակութային կենտրոնն էր:

Ալբրտուն գաւառ—Գ5—աղճատված ձևն է՝ Ատրուան, Կորճեից նահանգի 5-րդ գավառը՝ շուրջ 325 կմ² տարածությամբ: Այս գավառի անվան մեջ պահպանվել է Ուրուառի երկրի անունը, ինչպես և Ստրարունի մաս՝ Բջռու: ձևով հայտնի երկիրը Գտնվում էր Մեծ Ջար գետի միջին հոսանքում, այժմ՝ Տիարի:

Անալիմ (Անի Աղլիմոյ) ամրոց—Գ3—բյուզ. Առալեթոթա (Անալիմանոթ), այժմ Դուսու-չալ գյուղ համանուն գետակով:

Անարգարա քաղաք—Գ1—Կիլիկիայի մայրաքաղաքներից մեկը, բյուզ. Առաթարա, այժմ Անավարգա գյուղ:

Անգեղ-տուն գաւառ—Գ3—Գ4—հուն. Անգելոս, ասորա-բարելական աղբյուրների Purgulumzi երկիրը և արարական Arme երկրի կենտրոնական մասը՝ Ingala, հայերեն Անգղ գավառը համանուն քաղաքով: 160 թ. մտերբը Մոսիքի Արկաթիաս թագավորը խնց այս գավառը Մեծ Հայրից և միացնելով Մոսիքին՝ դարձրեց իր թագավորության կենտրոնը. Անգղը վերանվանվեց Արկաթիակերտ (Առաքաթաթա) և հռչակվեց իրրի մայրաքաղաք, իսկ գավառը կոչվեց նաև Մեծ Մոսիք: Մոսիքի թագավորության վերացումից հետո 93 թվին, երբ այն վերամիացվեց Մեծ Հայրին, Անգեղ-տունը մտավ Աղճնյաց բոջխություն կազմում: Այնուամենայնիվ հայերը Անգեղ-տունը շարունակում էին կրել նաև Մեծ Մոսիք, հուն. Σοφαινας, լատ. Sophanenae: «Աշխարհացոյց»-ում Անգեղ-տունը չի հիշատակվում իրրի առանձին գավառ: Ինչպես ճիշտ դիտում է Հյուբշմանը (էջ 157)՝ VI դարում Նիոնես կամ Մեծ Մոսիքի հետ էր ձուլված: Մենք վերականգնում ենք նախկին գրությունը, երբ գոյություն ուներ Անգեղ-տուն անունով գավառ Աղճնյաց բոջխության կազմում: Անգեղ-տուն գավառի տարածությունն է 2430 կմ²: Բովմա Արծրունու (III, ԺԲ, էջ 309) մոտ հիշվող Անգեղ-տունը Մոսիքի գավառի Անգղ ավանն է և չպետք է շփոթել Անգեղ-տուն գավառի հետ:

Անգղ աւան—Գ4—Անգեղ-տուն գավառի կենտրոնը՝ հիշվում է ղեռես խեթական արձանագրություններում՝ Ingala, ձևով Մ. թ. ա. 160 թ., երբ Անգեղ-տունը միացվեց Մոսիքին և կոչվեց Մոսիք Մեծ, Անգղը վերանվանվեց Արկաթիակերտ՝ Առաքաթաթա (սխալ ընթերցումն է՝ Առաքաթաթա) և դարձավ Մոսիքի թագավորության մայրաքաղաք: Հետագայում կորցրել է իր վաղեմի նշանակությունը և հիշվում է իրրի ավան Անգղ, Ingila անունով, այժմ կիլի գյուղը:

Անգղ դիզարաղաք—Գ5—Մոսիքի գավառում, առաջին անգամ հիշատակում է Եղիշեն (III, 1957, էջ 58): Բովմա Արծրունու (III, ԺԲ) մոտ հիշատակվում է Անգեղտուն ձևով:

Անի քաղաք—Գ3—կամ Անի Դարեանդեաց: Հին Հայաստանի հնագույն կենտրոններից մեկը, որը կոչվում էր նաև Կումախա: Վերջինս կուսաս երկրի կենտրոններից մեկն էր: Այս Անին մ. թ. ա. IV—I դարերում Փոքր Հայրի քաղաքական կենտրոնն էր: 66 թ. մ. թ. ա., երբ Փոքր Հայրի թագավորության հիմնական մասը կազմող Բարձր Հայր նահանգի տերիտորիան միացվեց Մեծ Հայրին, Անին մնաց իրրի

սրբաւայր և արքայական դամբարան: Անիի մոտ գտնվող Կամախունն էին թաղվում Արտաշէսյան և Արշակունի զինաստիաների հայ թագավորները: Անիումն էր գտնվում գերագույն աստված Արամազդի զլխավոր մեհեյանը:

Անթեմուսիա քաղաք—73— Anthemusia քաղաք Ոսրոյենեի, այժմ էսկի-խարբե գյուղ:

Անձախի ձոր գաւառ—76—Վասպուրականի 18-րդ գավառը՝ 825 կմ² տարածութեամբ: Գտնվում էր Կոտոր (այժմ Կոտուր-չայ) գետի հովտում, հայտնի էր Կոտորոց ամրոցը: Կոչվել է նաև Չոր Բնձալից:

Անձեւացիի գաւառ—75—Վասպուրականի 11-րդ գավառը՝ 2525 կմ² տարածութեամբ, գրավում էր Արեւելյան Տիգրիս (Ջերմ, Բոհեանսու) գետի ափունքների բարձր, ղեկարամատչելի լեռնային շրջանը: Գավառս եղել է Անձեւացեաց նախարարական տոհմի ժառանգական հայրենիքը:

Անձեւացիք գավառը հնագույն ժամանակներում կոչվել է Աղլի, որի մասին վկայում է այժմ գոյութուն ունեցող Ախսի (կամ Հուսեյին) գյուղը: Ասուրա-բարեկական արձանագրութուններում այս գավառը կոչվում է Alzi (որից «Աղլի») և Anzi կամ Enzi (որից՝ Անձեւացի-Բ, Անձեւացի-Բ):

Այս գավառումն էին՝ Կանգաւար ամրոցը (այժմ՝ Կենգեխար գյուղ), Ալաման (ասուրա-բարեկական Alamun) և Լէկ գյուղերը: Այս գավառի հյուսիսային ծայրամասումն էր Պաշատ լեռը (ասուրա-բարեկ. Պաձատու): Ուրարտական Արուբանա աստվածուհու և հայկական Անահիտի պաշտամունքի կենտրոններից մեկն էր Գարրնացքար կամ Ազոաւաքար վայրը, որտեղ հետագայում հիմնվեց Հոգվոց վանքը (այժմ Գիր-Մարիամ-Քիլիսասի, տե՛ս Մ. Խորենացուն վերագրվող «Պատմութիւն պատկերի Տիրամօրն» երկը):

Անձիտ բերդ—73—միջին դարերում և այժմ Թիլէնգիտ գյուղ Խարբերդից հարավ-արեւելք:

Անձիտ գաւառ—73—ասուրա-բարեկական Enzitu հուն. 'Ανζιτηγή, բյուզ. Άνζιτι, լատ. Anzete-nae, Չորրորդ Հայքի 6-րդ գավառը՝ 3,825 կմ² տարածութեամբ: Գրավում էր Խարբերդի դաշտի հիմնական մասը: Այս գավառումն էին գտնվում Անձիտ, Հոսերբրդ, Ծովք և այլ ամբութիւնները:

Անտիոֆ քաղաք, տե՛ս Աւագն Անտիոֆ:

Անտիտաւոս լեռան—72—այժմ էլ նույն անունով:

Աշ-Գիգոր աղգագաւառ—Ա5—ըստ երեւութին, Գի-

գորից հյուսիս Ուրուխ գետահովտի միջին և ստորին մասերում: Աշան(օվս) ժողովուրդը կազմող ցեղերից մեկը:

Աշիմուն լեռան (1919)—73—«Աշխարհացոյցի» մեկ հասած բնագրում աղճատված «Ազիսուն» ձևով է, բյուզ. Αισιμιονος, ասոր. Tura Ašimna, այժմ Ղարաջա-գաղ:

Աշոց գաւառ—Բ5—այժմ Ղազանչի կամ Ղաչուլի գյուղ: Աշոցք գավառի կենտրոնն էր:

Աշոց գաւառ—Բ5—Այրարատ նահանգի 14-րդ գավառն է, շուրջ 900 կմ² տարածութեամբ, համապատասխանում է այժմյան Ղուկասյանի շրջանին: Հետագայում կոչվում էր ԿՅՕԿԵԼՕ Ղաչուլի: Ուրարտական արձանագրութուններում կոչվում է Iškigulu.

Աշոցքը կոչվել է նաև Աշոցան, որի արխայիկ ձևն է *Աշոցան, որ չի վկայված: Վրացական աղբյուրներում Աշոցք գավառը կոչվում է ձՅՕԿՅՕ Արոցի, որ սկզբնական ձՅՕԿՅՕ Աշոցի ձևի հետագա աղճատումն է հանդիսանում: Այս գավառը մինչև 387 թ. պիտի մնաներ Գուգարաց բղջիւթյան կազմում, սակայ՝ Մարգպանական Հայաստանում:

Աշոցք գավառի կենտրոնը պիտի լիներ համանուն Աշոց գավառը, որը հետագայում կոչվում էր Ղազանչի: Այս գավառը Աշոց նախարարական տոհմի ժառանգական սեփականութունն էր:

Աշտիշատ ասան—74—Հնադույն ձեռ պիտի լիներ Յաշտիշատ, այժմ Դերիկ գյուղ: IV դ. Մեծ Հայքի խոշորագույն կրոնական կենտրոն էր:

Աշարէրի գյուղ, տե՛ս՝ Աշէլտիս-Խեւ:

Աշէլտիս-Խեւ—(աղճատված ձևերն են՝ Խաշաւ, Աշայի) գաւառ—Ա5—Վրաց. ახაძეთის ხევი Աշարէրիս-Խեւի, այժմ էլ գոյութուն ունի Աշարէրի գյուղը, Հարավ-Օսեթիայի Ա. Մ. կենտրոն Տիսինվալից հյուսիս: Այս գավառի ընդհանուր տարածութիւնն էր՝ 175 կմ²:

Ապահունի գաւառ—75—Տաւրուբերան նահանգի 14-րդ գավառը՝ 2375 կմ² տարածութեամբ: Ապահունի անվան նախնական ձեռ պիտի լիներ *Ապահունի և կապվում է ապահ ցեղանվան հետ, որը V դարում բնակվում էր կատիշնիքին հարեան այժմյան Թալիշի հյուսիսային մասում: Ապահունիքը ընդգրկում էր այժմյան Մանաղիկերտի (Մելիգեբրդի) սանջակը: Արարները կոչում էին «Բաշունայիս»: Այս գավառի կենտրոնն էր Մանաղիկերտ քաղաքը:

Ապամիա քաղաք—72—Apameia, գտնվում է Եփրատի դեղանցքի աջ կողմում, նշանավոր Զևվոմայից հարավ:

Ապգուտ-կաւատ պարիսպ—ԲՏ—այն պարիսպն է, ուր գտնվում էր Վելվելի-չայ և Շաբրան-չայ գետերի միջև: Այս պարիսպը սկսվում էր Կովկասյան լեռնաշղթայից և անցնում էր Շապորան քաղաքից հյուսիս՝ մինչև Կասպից ծովը: Տես՝ Քաղկանք:

Առանգա կայան—Գ3—Arangas (Tab. Peut.)՝ Զիմարայից Մելիտինն տանող ճանապարհի կայաններից մեկը, գտնվում էր Կիակկաս-Ջերմուկից հյուսիս, Սոգյուբլու գետի գետաբերանի մոտերքը:

Առանիս աւան—Գ2—բյուզ. Ἀράν, այժմ Ալաջախան գյուղը:

Առան-ոտ գաւառ—Բ7—Ուտիք նահանգի առաջին գավառը Առան-ոտ: Այժմ Գերան-չայի գետի հովտում, շուրջ 2225 կմ² տարածութեամբ:

Առան-ոտ գետ—Բ7—այժմ Գերան-չայի:

Առաջին Հայկ—Գ2—Armenia Prima պրովինցիան, որը կազմվեց Բեռոս Մեծի ժամանակ 378—386 թթ. միջև: Կենտրոնն էր Սերաստիա քաղաքը: Առաջին Հայքի տարածությունն էր 34200 կմ², Հուստինիանոս Ա-ին 536 թ. նովեմբրայից հետո Առաջին Հայկ էր անվանվում բոլորովին այլ տերիտորիա: Տես՝ Քարձր Հայկ:

Առբերանի գաւառ—Գ5—Վասպուրականի 7-րդ գավառը՝ 1025 կմ² տարածութեամբ: Գրավում էր Վանա լճի հյուսիս-արևելյան եզրերը ներառյալ Առեստ (Բանդիմահի) գետի միջին և ստորին հոսանքի հովիտը: Այս գավառում հայտնի էին Բերկի բաղաքը, Առեստ աւանը և Ամիոկ ամրոցը:

Առեստաւան կամ Առեստ աւան—Գ5—Վանա լճի տառեխը այս վայրումն էր որսվում, ուտի Փափսոս Բուզանդի մոտ կոչվում է «Ձկնատեանք արեունի»: Առեստ աւանը գտնվում էր Առբերանի գավառում, Վանա լճի ափին, այժմյան Առնիստ գյուղից դեպի արևելք, Բանդիմահիի գետաբերանին: Առեստի ձկնորսարանը ամենայն հավանականությամբ մեծ հռչակ է վայելել նաև անտիկ ժամանակաշրջանում, սակայն շփոթության մեջ է գցել Առեստ անունը: Վերջինս անտիկ աշխարհագիրներն ու քարտեզագետները շփոթել են Ասորիքի Ἀρεστας կամ Arist[ο]n քաղաքի հետ, որը կոչվել է նաև Ἀρεσθουσα և գտնվել է Որոնտես գետի վերին հոսանքում՝ Համա և Հոմա քաղաքների միջև, այժմյան Ռաստան գյուղի տեղում: Առեստ անունը նույնացրել են Aristia (Ariston) անվան հետ, իսկ սրովհետև վերջինս կոչվել է նաև Ἀρεσθουσα, հայկական Առեստի երկրորդ անունը համարել են Arethusa:

Այս նույնացումը, իր հերթին, բերել է այն կրակակայանության, որ Վանա լճի հյուսիսային մասը, որտեղ գտնվում էր Առեստ աւանը, կոչվում է Արեթուզայի լիճ—Lacus Arethusa (Տես՝ Plinius, Nat. hist. VI, 31): Այս անգամ ևս նրանք զեկավարվել են նրանով, որ Ասորիքի Aristia-Arethusa քաղաքից վերև, Հոմա քաղաքից հարավ գտնվող այժմյան Հոմա-Բահրեթ լճակը ևս կոչվել է Lacus Arethusa: Այս կրակակայանությունը բացատրում է, թե ինչու, օրինակ, 1653 թ. հրատարակված Հայաստանի քարտեզի վրա գտնվող Palus Thospitis (Տասպալ լիճ, այժմ՝ Վանա լիճ) լճից հյուսիս նշված է Palus Arethusa¹, որ անշուշտ սուաջ է եկել Առեստ, Aristia, Arethusa անունների նույնացման հետևանքով: Վերջինս իր հերթին առաջ է եկել հին հունական ավանդությունից Արեթուզա զիցուհու մասին:

Առեստ գետ—Գ5—այժմ Բանդիմահի գետ:

Առիւծ գաւառ, տես՝ Աղիւն (Առիւծ) գաւառ:

Առնա գաւառ, տես՝ Ըննայ գաւառ:

Առնա վանք—Գ6—Ըննայ կամ Առնա գավառի կենտրոնը, այժմ Գերիկ գյուղ, հռչակված իր նշանավոր ուխտատեղիով:

Առնոյ-ոտն գաւառ—Գ5—Վասպուրականի նահանգի 10-րդ գավառը 275 կմ² տարածութեամբ: Գրավում էր Առնոս լեռան արևելյան փեշերը մինչև Շատախ (Բաղ) ալանը: Գեոս XVIII դարում գոյություն ունեւր «Առ-նոյ-ոտն» սխալ ստուգաբանությունը, որի հետևանքով այն տեղագրվում էր Մասիս լեռան հարավային փեշերին, որ կողիտ սխալ է: Կոչվել է նաև Ոտն-Առնոյ:

Առնոս լեռան (3550)—Գ5—այժմ Առնոս-գաղ, Շատախի (Բաղի) շրջանում:

Առոս գյուղ—Գ8—այժմ Առոս գյուղ, Բալիշում:

Առոս-Պիժան գաւառ—Գ8—կոչվել է նաև Առոս, Առոս-Յիժան, Առոս-Պիժան. Փայտակարանի նահանգի 4-րդ գավառն էր և գտնվում էր այժմյան Առոս գյուղի շրջակայքում՝ Վիլաջչայ գետի հովտում, շուրջ՝ 675 կմ² տարածութեամբ:

Առուեկից Ջոր գաւառ—Գ5—Մոկաց նահանգի 4-րդ գավառը շուրջ 200 կմ² տարածութեամբ, գրտնրվում էր Երեմյարք և Ռշտունիք գավառների արանքում, ուտի Մոկաց աշխարհի ամենահյուսիսային գավառն էր: Առուեկից ձոր կամ Առուեկից ձոր գավառը գտնվում էր նախա-

¹ Տես՝ Z. Kianzadian, Atlas de cartographie historique de l'Arménie, Corbevoie (Seine), 1960. 103-րդ քարտեզը, տես նաև E. Honigmann et A. Maricq, Recherches sur les Res Gestae Divi Saporis, Bruxelles, 1953, p. 153.

սեռւոյցիոն շրջանի առսական բարտեղների
Оранс-дараси կոչվող հովառւմ: Կենտրոնն էր
այժմ Աւանց կոչվող գյուղը, որ Թովմա Ար-
ծըրունու (IV, Գ) մտա հիշվող Առուանից ձու-
ամբոցը (Յերես կոչվում էր նաև Առուանց)
պիտի լիներ: Քարտեզի վրա սխալ է նշված:
Շփոթութիւնը առաջացել է այն պատճառով,
որ Հչուբշմանը (էջ 307) այս գավառի տեղը
ենթադրում է Մոկս ավանից գետի հարավ-
արևմուտք գտնվող Աւվանց գյուղի շրջակայ-
քում:

Առուն գետ—Գ5—այժմ Չուխուր գետ. հստում էր
Գայլատու լճից, ապա միանում Տղմուտին
(այժմ Զանգիմար-չայ) և թափվում Երասխ:

Ասորեստան երկիր—Գ5—Գ6—հայերը այսպես էին
կոչում Սասանյան Պարսկաստանի սահման-
ներում գտնվող Միջագետքը, հատկապես նրա
միջին և ստորին մասերը: Ասորեստանը Պար-
թեական, ապա Սասանյան, պետութան արն-
տեսական, քաղաքական ու մշակութային
կենտրոնն էր: Այս երկիրը ասորական և պահ-
լավական գրականութան մեջ կոչվում է «Ասոր-
եստան» կամ «Սուրիստան»:

Ասորի երկիր—Գ2—Գ3—Գասական հեղինակնե-
րի Syria-ն, այժմ էլ նույն անունով՝ Սիրիա:

Ասպական գետ—Գ4—այժմ Շատախ գետի խորա-
ծորը, Քաղիթ (Բաթման-սու) գետի ձախ
վտակներից մեկը Սասունում:

Ասպական գյուղ—Գ4—այժմ Սպականք գյուղ
Տալվորիկի ձորում: Ասպականեաց գավառի
կենտրոնը պիտի լիներ:

Ասպականեաց ձոր գաւառ—Գ4—գրվում է նաև
Ասպականեանեաց ձոր, Տալվորերան նահան-
գի 2-րդ գավառն էր՝ 655 կմ² տարածութեամբ:
Գտնվում էր Քաղիթ (այժմ Բաթման-սու)
գետի վտակ Շատախ գետի ձորահովտում և
Սիմասրի լեռնանցքով ամենակարճ ճանա-
պարհն էր Տիգրանակերտից գետի Արտաշատ
գնացող «արքունի սողոստայի» համար: Գա-
վառի անունը պահպանել է այժմյան Սպա-
կան (Ասպական) գյուղը Տալվորիկի ձո-
րում: Ըստ մի աղբյուրի վկայութեան, այս
գավառը կոչվել է նաև Գոգովիտ—Ալգրա-
գրնունեաց գաւառին որ կոչի Գոգովիտ, ի գեղն
որ Բգրայրի Գոմ անուն կոչի» (տես՝ Ղ. Ալի-
շան, Հայաստանում, Վենետիկ, 1901, էջ 297),
կամ մի այլ տեղ՝ «ի գաւառն Ասպականեաց,
ի Կոգովիտ, ... ի գեղն որ կոչի Գոմ Բճրայրի»
(անց, էջ 299):

Ասպանե գետ, որ է Խոզմուր—Բ6—ակունքները
գտնվում էին Վաղարշապատի մոտ, որտեղից
այս գետը հստում էր հարավ և թափվում Մե-
ծամուր գետի մեջ: Քարտեզի վրա չի նշված:

Ասրպատական երկիր—Գ6—Գ8—կոչվում էր
նաև՝ Ասրպայական: Հուն. Ἀτροπατηνή, լատ.
Atropateneae, արար. պարսկ. Աղբերագան,
Ագերպչան, Ագրբեջան, այժմյան Իրանա-
կան Աղբրեջանը:

Արաբխու (Եփեսոս) քաղաք—Գ2—այժմ Յար-
փուզ:

Արագած լեռան (4095)—Բ6—այժմ էլ նույն անու-
նով հրաբխային զանգված:

Արագածոտն գաւառ—Բ6—կոչվել է նաև Ուն
Արագածու: Այրարատ նահանգի 10-րդ գա-
վառը, այժմյան Թալինի, Աշտարակի, էջմի-
ածնի և Հոկոտեմերկյանի շրջանները, 3050 կմ²
տարածութեամբ:

Հայաստանի սիրտը, Արարատյան դաշ-
տի կենտրոնական գավառը՝ Արագածոտնը
հայկական պետականութեան կենտրոնական
մասն էր: Այստեղ էին գտնվում միացյալ Հա-
յաստանի՝ Մեծ Հայքի մայրաքաղաքները՝
Արմավիրը, ապա Վաղարշապատը: Երուան-
դունիների ժամանակաշրջանում՝ Արագածո-
տնը Այրարատյան թագավորութեան կենտրո-
նական գավառն էր և Արմավիր մայրաքաղա-
քի քաղաքային տերիտորիան պիտի լիներ:
Այս գավառում հիմնվեց Վարդգէսաւանք, որը
ապա վերանվանվեց Վաղարշապատ:

Արագ գետ—Ա6—Վրաց. ძრავჯო, ძრავჯო Արագի
այժմ էլ նույն անունով:

Արած գաւառ—Գ6—կոչվում էր նաև Արածոյ կող-
մըն, Այրարատ նահանգի 22-րդ գավառը,
չուրջ 250 կմ² տարածութեամբ, գրավում էր
Գայլե-գրունքի և Եղեղնաձորի շրջանի միջև
ընկած այժմյան Սաղարակ գյուղի շրջակայքի
տերիտորիան:

Արածանի գետ—Գ5—Արևելյան Եփրատ (Մուրադ-
սու) ասուրա-բարելական արձանագրութեան
ներում հայտնի է Արածանի անունով:

Արայի լեռան (2614)—Բ6—այժմ էլ նույն անու-
նով:

Արասի որ է Ուլլա գաւառ (ընագրում աղճատված՝
Արխի)—Գ6—Պարսկահայքի 4-րդ գավառը՝
1120 կմ² տարածութեամբ, միջին զարկում
կոչվում էր Շնան համանուն քաղաքով (այժմ
Ուշնուն): Այս գավառի և ամբողջ նահանգի
հարավային սահմանն էր Արասի (այժմ Գե-
տուր-սու) գետը:

Արասի գետ—Գ6—այժմ Գետուր-սու, հուն. Ἀράξ-
ης, լատ. Araxes, ակունքները գտնվում են
Զարասպ լեռան արևելյան լանջին: Արասի
գետը թափվում է Կասպուտան (Ուլմիա) լիճը,
նրա հարավ-արևմտյան ձալքին: Թերևս այս
գետը կոչվել է նաև *Գիև-Արասի, որից առա-
ջացել է այժմյան թուրքացած ձևը՝ Գետուր-սու:

Արասի գետը Մեծ Լայքի սահմանն էր Գանձակ Շահաստան քաղաքի քաղաքային տերիտորիայի կողմից, որը մտնում էր Ատրը-պատականի կազմում: Որոշ անտիկ հեղինակներ այս Արասի-Արաֆոս շփոթում էին Երասի-Արաֆսի հետ:

Արասա կայան—Գ1—Arasaxe այժմ Զերեզեկ գյուղ, Կեսարիայից դեպի արևելք:

Արաւակ բերդ—Գ3—հայ. Արաւակ, որ չի վկայված, անտիկ հեղինակների Arauraka, բյուզ. Ἀραύρακα, ավելի ուշ կոչվում էր Արգնցիք, գտնվում էր Քյոմուր-չայի գետակի ակունքների շրջանում:

Արարդ լեռն (2089)—Գ5—ուրարտերեն Arartu, ասուրա-բարեկական՝ Nibur, հուն. Νίβαρος.

արար. Gabal Gaudi, այժմ՝ Զուգի-դադ: Ըստ տեղական ավանդության՝ այդ լեռան վրա ջրհեղեղից հետո կանգ է առել նոյի տապանը:

Արարատ լեռն, տե՛ս Ագառ—Մասիս լեռն:

Արգաուս քաղաք—Գ2—Ἀργαύς, հայ. Արգաւան, որ անունն էլ պահպանել է այժմյան բնակավայրը:

Արգաստ գետ—Գ5—այսպես պիտի կոչվեր այժմյան Կերկանդիլ-սու վտակը, որը թափվում էր Արեւելյան Տիգրիս՝ ձախ կողմից:

Արգաստովիտ կամ Արգաստեայ ովիտ գավառ—Գ5—Մոկաց նահանգի 7-րդ գավառը, ենթադրարար տեղադրում ենք Արեւելյան Տիգրիսի (Բոհոտան-սու) գետի ձախ վտակ՝ Կերկանդիլ-սու գետի հովտում: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է՝ Արգաստովիտ գավառի ընդհանուր տարածությունը պիտի լիներ շուրջ 500 կմ²:

Արգէսու լեռն (3916)—Գ1—այժմյան էրջիսս-դադ գավաթը:

Արգիրոկաստրոն ամրոց—Բ3—այժմյան Գյումուշ-խանե ավանը: Հայտնի էր իր արծաթի հանքերով:

Արգուե[[ք], որ է Մարգու[[ք] աղգագաւառ—Ա5—վրաց. არგუეთი, არგუეთი Արգուէրի, Արգէրի կամ Զարգუეთი Մարգուէրի: Այս «աղգագաւառը» գտնվում էր Ղիբրիյա գետի և Արգվեթի կամ Լիխի լեռնաշղթայի միջև: V—VI դդ. իրեն առանձին Արգուէր գաւառ, մտնում էր Վիրքի (Վրաց աշխարհի) կազմում: Տարածությունն էր՝ 1450 կմ²:

Արգուէր գաւառ, տե՛ս Արգուե[[ք], որ է Մարգու[[ք]: Արգէրու լեռին—Ա5—այսպես էր կոչվում Մուրամի կամ Լիխի լեռնաշղթան:

Արդոզ աղգագաւառ—Ա6—Արդոն գետի միջին և ստորին հովտում: Ալան(օփս) ժողովրդի կազմում մասնող ցեղերից մեկն էր:

Ար-դոն գետ—Ա6—Թերեք գետի վտակներից մեկը, այժմ էլ նույն անունով:

Արեւրանս վայր—Գ6—ուրարտական Arubana սրբավայրի տեղում, ուր հետագայում գտնվում էր Բաբելոնի վանքը: Առաջին անգամ հիշատակում է Մովսես Խորենացին (II, 17) Արեւրանս Բաբելոն անունով: Տե՛ս նաև Մ. Խորենացուն վերագրվող «Պատմութիւն պատկերի Տիրամօրն» երկը: Թերեք Արաբանս աստվածունուն փոխարինել է Անահիտը, որի անունով այս քաղաքը հելլենիստական ժամանակաշրջանում կոչվել է Ἀραβαντα, որը հիշատակում է Պտղոմեոսը (V, 12, § 10):

Արեւելեան Խարուր գետ—Գ5—այժմ էլ նույն անունով:

Արեւիք գաւառ—Գ7—Սյունիքի 11-րդ գավառը՝ 625 կմ² տարածությամբ, համապատասխանում է այժմյան Մեղրիի շրջանին:

Արեւելեան Տիգրիս, տե՛ս Արեւ գետ:

Արեւմտեան Տիգրիս գետ—Գ4—Տիգրիսի վերին հոսանքը:

Արգան գետ—Գ4—այժմ Խարզան-սու:

Արգան քաղաք, տե՛ս Շուկառքա:

Արխարախ քաղաք—Գ2—'Αρχαράχεια, այժմ Աղիլի գյուղ Մամիդավ գետի ակունքների շրջանում:

Արծկէ սուան—Գ5—ուրարտական արձանագրություններում Ziukuni «քաղաքը», բյուզ. Ἀρτζιζέ, արաբները կոչել են՝ Dat. al-Ghavz. որտեղից առաջացել է այժմյան Ալջավազ կամ Աղիլի վազ անունը: Արծկէ ավանը գտնվում էր Բղնունիք գավառում:

Արծկէ կղզի—Գ5—այժմ գոյություն չունի, պիտի գտնվեր Արծկէ (Աղիլի վազ) ավանի լճափից ոչ հեռու: Հետագայում, երբ լճի մակերեսը բարձրացել է, հիշյալ կղզին մնացել է ջրի տակ: Արծկէ կղզին գտնվում էր Բղնունիք գավառում:

Արեւել քաղաք—Գ5—Տավրուբրանի Աղիովիտ գավառում. ուրարտական ժամանակաշրջանում այստեղ հայտնի էր Argistiuna քաղաքը, այժմ այս քաղաքի ավերակները մեծ մասամբ արդեն ջրի տակն են և ցամաքում մնացած ժայռ կոչվում է Էրջիլ-կալա: Արճել քաղաքի անունով Վանա լիճը կրթման կոչվել է Արեւելի ծով, որի մասին վկայում է հիշյալ լճի հունարեն անունը՝ Ἀρσησσα λιμνη կամ՝ 'Αρση[σ]η|νη, որ դարձ էր անվում Θω[σ]πετις անվան հետ միասին:

Արեւիշակ գետ—Գ5—այժմ Մահմեդիկ-չայ:

Արեւիշակ լիճ—Գ5—այժմ Արեւակ լիճ, ծովի մակերեսից բարձր է 1890 մ: Լճից ոչ հեռու գետ

այի արևելք գտնվում էր Արեճիակ գյուղը. այժմյան Արճակը.

Արեճիակովիտ գավառ—Գ5—Վասպուրականի 4-րդ գավառը՝ 1075 կմ² տարածությունը. գրավում էր Արճակ (կամ Արճիշակ) լճի ավազանը:

Արմավիր քաղաք—Բ5—ուրարտական ժամանակաշրջանի Արգիշտիխիսիլի քաղաքի հայկական անունը, հուն. Ἀρμαύρα (Ptol., V, 12, § 5), որը երուանդունիների ժամանակ Այրարատյան թագավորության մայրաքաղաքն էր, այժմ ավերակներ Արմավիր գյուղի մոտ: Ըստ երևույթի Արագածոտն գավառը հնագույն ժամանակներում Արմավիրի քաղաքային տերիտորիան էր:

Արմատան գիւղ—Գ3—այժմ Արմատաններ կոչված գավառակ՝ Մեծ Արմատան և Փոքր Արմատան գյուղերով. համապատասխանում է մ. թ. ա. XV—XIV դդ. խեթական արձանագրությունների Armatana տեղանվան հետ: Այս վայրը մտնում էր Հայաստանի ցեղային միությունների կազմում (տես՝ Նշան Մարտիրոսյան, Պրոպագանդայի փոքրասիական անուններում մասին: Պատմա-բանասիրական հանդես, 1961, դիրք 3, էջ 92—93): Հակոբ Կարնեցին հիշատակում է՝ «Արմատաններն, որ դեռ ցեղային հասանելի մինչև ի Տիրիկէ» (Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ. հատ. II, Երևան, 1956, էջ 552): Արմատան անվան մեջ պիտի պահպանված լինի Արմն ցեղանվան նախնական ձևերից մեկը:

Արշամաշատ գաւառ—տե՛ս Բալխոնովիտ գաւառ:

Արշամաշատ քաղաք—Գ3 այժմ Խարաբա-Նաջարան ավերակների գյուղ: Արշամաշատը ('Αρσαμύσατα—(Ptol., V, 12) Ծովային թագավորության մայրաքաղաքներից մեկն էր, սակայն մ. թ. առաջին դարերում ավերվել է և միջին դարերում հայտնի էր իրրե ավան Աշմուշատ (բյուզ. Ἀσμάσατον, արաբ. Šimšat) անունով: Մինչև վերջին կոտորածները տեղացիները այս քաղաքի շրջակայքը անվանում էին Աշմուշատ: Իրրե այդ քաղաքի քաղաքային տերիտորիա, մինչև 387 թ.՝ ամբողջ Բալխոնովիտ գավառը պիտի կոչվեր Արշամաշատ: Տե՛ս Բալխոնովիտ գաւառ:

Արշամունիլ գաւառ—Գ4—Տավուրերան նահանգի 4-րդ գավառը՝ 2180 կմ² տարածությունը, գրավում էր Բյուրակն (Բինգյուլ-սու) գետի հովիտը, ներառյալ Գինեկ գետի աղուներների շրջանը: Այս գավառը Մանգլակունի նախարարական տոհմի հայրենիքն էր:

Արշարունիլ գաւառ—Բ5—Այրարատ նահանգի 5-րդ գավառը, միջին դարերում կոչվում էր

Աշունկ (վրաց. აშუნკის Աշունիա), գտնվում էր Երասխ գետի ձախ ափին, Կաղզվանից հյուսիս:

Արշարունիք գավառը Գարեգեանք գավառի հետ կազմում էր Երասխի խորածոր կիրճը, ուստի երկուսը միասին կոչվում էին Երասխածոր: Արշարունիք գավառի տարածությունն էր 1225 կմ²: Արշարունիք անունը կապվում է Կամսարականների, իսկ Նրանցից առաջ՝ Երուանդունիների տոհմական անուն Արշաիր-ի հետ: Այս գավառը ըստ երևույթի գտնվել է Շիրակից իրրե Երուանդաշատի քաղաքային տերիտորիան: IV դ. և հետո Կամսարականներին պատկանում էր Շիրակի հետ նաև Արշարունիքը:

Արշարունիքումն էր գտնվում Արտագեոս հռչակավոր ամրոցը (այժմ Քերս):

Արշոյ-Առիճ լեռան (2695)—Բ5—այժմ Ալաշաղաղ լեռը Անիի ավերակների մոտ:

Արուաստան երկիր—Գ4—հուն. Միգրոնիա, ասոր. Bēth 'Arabāyē, բյուզ. Βεαρζασι: Մինչև մ. թ. 37 թ. մտնում էր Մեծ Հայքի կազմում՝ 5850 կմ² տարածությունը: Կենտրոնն էր Արժըրին քաղաքը, որի քաղաքային տերիտորիան էր հանդիսանում Արուաստան երկիրը:

Արսեաց փոքր կամ Ասեաց փոքր—Բ4—վրաց. ახოს-გორა Ասխ-Փորա, Տայքի 8-րդ գավառը և պարունակում էր հետադայի Կիսկիմ, Խոարբուր և Բերդազրակ միջակները:

Այս գավառումն էր գտնվում հռչակավոր Ոսկեհանկը Փառաչչույս-ը, ըստ երևույթի, այժմյան Քարվանի գյուղի մոտերքը: Արսեաց փոքրի տարածությունն էր 2250 կմ²:

Արսխ գյուղ—Բ4—այժմ Էրսիս, Ճորոխ գետի աջ ափին, Արսեաց փոքր գավառի կենտրոնը պիտի լինի:

Արտագեոս ամրոց—Բ5—հուն. Ἀρτάγεσσα, այժմյան Քերս գյուղը:

Արտագ գաւառ—Գ6—Վասպուրականի 15-րդ գավառը՝ 2225 կմ² տարածությունը. ուրարտական արձանագրություններում կոչվում էր Utuza: Արտագի կենտրոնն էր Մալու բերդաքաղաքը: Արտագ գավառը Ամատունի նախարարական տան ժառանգական հայրենիքն էր:

Արտալեսոն ամրոց—Գ4—բյուզ. Ἀρταλεσων ամրոցը, պիտի գտնվեր այժմյան Քրդիկից հարավ՝ Հանգաստն գյուղի մոտ:

Արտահան գաւառ—Բ5—վրաց. არტახანო, არტახანო Արտահանի, Արտահանի, 7-րդ գավառ Գուգարաց բյուզանդական: 387 թ. ամբողջ Գուգարքի հետ մտավ վրաց աշխարհի կազմում:

Գրավում էր համանուն—այժմ Արդահան,—
քաղաքի շրջանը, Կուր գետի տեղումներից
հյուսիս: Արտահան գավառի տարածությունն
էր 2025 կմ²:

Արտահան քաղաք—Բ5—այժմ էլ նույն անունով՝
Արդաճան քաղաք, սակայն հնում այս քա-
ղաքը պիտի գտնվեր այժմյան Ուր գյուղի
տեղում: Վրաց. არტახი, ქალაქი არტახისა
Արտահի. Քալաֆի Արտունիսա: Տե՛ս Քաջաց
քաղաք (Հուր): Պաղտմեսոսի մոտ (V, 10, § 2)
հիշվող 'Αρταξιασα քաղաքի անունը կապ
չունի Արտահանի հետ, պիտի ուղղել 'Αρξά-
νιασα, որ վրացական Ուրբնիսի քաղաքի ան-
ունն է, այժմ գյուղ նույն անունով:

Արտաշատ քաղաք—Գ6—հուն. 'Αρταξάτα, 'Αρταξί-
άτατα. լատ. Artaxata. այժմյան Արտաշատ
շրջանային կենտրոնից հարավ. Խոր Վիրապ
վանքի և Գինոյ գետի (այժմ՝ Կարաս-սու) ու
Գինոյ բլուրի (այժմ՝ Кырмызы тапа) միջև:
Արտաշատը հիմնվել է Արտաշես Ա-ի (189—
160) կողմից և այնուհետև Մեծ Հայքի թագա-
վորության մայրաքաղաքն էր մինչև Արշակու-
նիների հարստության անկումը 428 թ. և նույն-
իսկ մինչև V դ. երկրորդ կեսը: Արտաշատ քա-
ղաքի քաղաքային տերիտորիան կոչվում էր
Ոստան Հայոց:

Արտաշիսեան որ է Արտահանեան ւան—Գ5— ու-
րարտական արձանագրությունների Tarirahi-
nili, այժմ Արտամես:

Արտաշիսեան, որ է Արտահանեան գաւառ—Գ5—
Վասպուրական նահանգի 27-րդ գավառը՝
150 կմ² տարածությամբ, հանդիսանում էր Ար-
տաշիսեան կամ Արտավանեան ավանի տաճա-
րական տերիտորիան, այժմ Արտամեսի շրջա-
կայքը: Այս գավառը գեոևս ուրարտական
ժամանակաշրջանում պիտի լիներ Tarirah-
hinni (այժմ՝ Արտամես) վայրի տաճա-
րական երկիրը:

Արտաւազդական ւան—Բ6—կամ Արտաւազդայ
այաւաւան, այժմյան Արդական գյուղը:

Արտահանեան գաւառ, տե՛ս Արտաշիսեան գաւառ:
Արտաւէտ քաղաք—Գ8—այժմ Արդարիլ քաղաք:
Սասանյանների ժամանակ կոչվել է նաև
Ռամ-Պերոպ:

Արտի կղզի—Գ5—այժմ Արտե: Վանա լճի կղզ-
յիներից մեկը: Արտի կղզին Ռշտունիք գա-
վառումն էր համարվում:

Արտին լեռան (2047)—Բ5—այժմ էլ նույն անու-
նով (Արտննի):

Արտու լեռան (3475)—Գ5—այժմյան Արտուս
գաղը, Ոստանից հարավ:

Արփանեայ գետ («Աշխարհացոյց»-ում, որի Ար-

տունկն, հիշա ընթերցումը պիտի լինի՝ *Ար-
փունկն, այսինքն՝ Արփաւանեայն)—Գ6—այժմ
Արփա գետ: Եզիշեի մոտ (III, 1957, էջ 69)
պահպանվել է հիշատակը՝ Արփանեայ, իբրև
ավանի անուն (այժմ Աունի):

Արցախ նահանգ—Բ6—Գ7—Մեծ Հայքի 10-րդ նա-
հանգը, 11,528 կմ² տարածությամբ: Գրա-
վում էր այժմյան Լեւոնային Ղարաբաղը՝
Արաքս գետից սկսած մինչև Իջևանի շրջանը:
387 թ. միացվեց Աղվանքին, սակայն, արդեն
հայացած երկիր էր և հետագայում, երբ վե-
րականցնվեց հայկական անկախ պետակա-
նությունը, Արցախը մտնում էր Հայաստանի
կազմում: Տեղական լեզուն համարվում էր
հայերեն լեզվի բարբառներից մեկը՝ Արցա-
խի բարբառը (այժմյան Ղարաբաղի բա-
բառը): Տե՛ս Ստեփաննոսի Մրունեցոյ (VIII դ.
սկիզբ)՝ Մեկնութիւն Քերականիս՝:

Արփայ քաղաք—Գ2—Ազգալ քաղաքից հարավ,
այժմյան Ռել-Ռիփալ գյուղը:

Արփայից գաւառ, տ. Մոկր Առանձնակ գաւառ:

Արփուպալիս քաղաք—Ա5— 'Αρφαυαλις, եզե-
րացիները (մեզրեւ-դաները) կոչել են չօծսծ
յջօջօ Ջիխան-Քվիլս, իսկ վրացիները՝ Օոնց
ցօջօ Յիխէ-Գոչի, այժմ Նարայրեվի գյուղ:
Այս քաղաքը եզրեիկէ երկրի (Առանձնակ
եզրայ, որ եզերաց աշխարհի կենտրոնական
գավառն էր) կամ Լազիկայի թագավորության
մայրաքաղաքն էր:

Աւագն Անախի քաղաք—Գ2 'Αντιόχεια. Antio-
cheia primoris, երբեմնի Սեւեկյան հզոր պետու-
թյան մայրաքաղաքը, որը հելլենիստական
աշխարհի երկր խոշորագույն կենտրոններից
մեկն էր (Ազեբասնյրիա՝ նեղոսի վրա, Սելե-
կիա՝ Տիգրիսի վրա և Անախի Ռոմանի վրա,
այժմ Անտարիա) և Անտիոք անունը կրող
բազմաթիվ քաղաքների միջև ամենախոշորը—
Աւագը: Այս քաղաքի քաղաքային տերի-
տորիան, իբրև Սելևկյան պետության կենտ-
րոն, կոչվում էր Սելևկիա:

Աւագով աշխարհ—Ա5—Բ6, հմմտ. Արազ. АБАЗИ-
НЫ ցեղը, այլ ձևն է հուն. 'Αρξάγος, 'Αβασσοί.
Abasges. Աւագ՝ տեղական —ով (հմմտ. «Քոց-
խով») վերջավորությամբ: Աւագով Ափխա-
ղիայի տնվան հնագույն ձևն է:

¹ «Եւ. դարձեալ զբն լեզուից զիսկն զրոմանակ
զրասան զեզերականս, որպէս զհորձանս եւ զճայեցին եւ
զՅուսթայինս եւ զՉորրորդ-Հայեցին եւ զՍպերտցին եւ
զՍիււնին եւ զԱրցախայինս, այլ մի միայն զՄիջերկրեայսն
եւ զՊատանիկոպ, վասն զի պիտանիք այսորիկ են ի տաղա-
շափութեան, այլեւ սուղախառք ի պատմութիւնսն...»
Н. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи,
Петроград, 1915, стр. 187.

Անիկ ամրոց—Գ4—բյուզ. *Αψιδος, տաճիկ. Զիվան-կալե, այժմ Այնիկ գյուղ:

Ասուրե՛ր աղգագաւառ—Ա5—վրաց. ձաղճած լճալճ-ցոտ Մարրան Դվալէրի, Լիախվի գետի ա-կունքների շրջանում, շուրջ 780 կմ² տարածութեամբ, ըստ երևութիւն ալան-օվս ցեղերից մեկը, որի անունով էլ վրացիները բոլոր ալանաց ցեղերին կոչում են օվս:

Ափխազգ՛ աղգագաւառ—Ա5—Ա—Ե—վրաց. օջնաճնո Ափխազգի: Այժմ էլ նույն անունով ժողովուրդը ապրում է նույն տեղում, գլխավորապէս Բզիբի և Կոզոր գետերի միջև:

Ափշիլ (կա և Ափշեղ՛ ևճը), աղգագաւառ—Ա4—վրաց. օջնիլնո Ափշիլնի ցեղ և օջնիլցո Ափշիլէրի երկիր, հուն. Αψιδος, ապրում էին Ափխազիայում, հետադաշում Սամուր-զաղանո կոչված գոյառում: Ենթադրվում է, որ Ափխազիայի անունը ափխազերեն լեզվով՝ Ափսնը АПСНЫ առաջ է եկել ափշիլ ցեղանունից:

Բ

Բաբեոյ ան՛ս Սմբատաւան:

Բագաոին կամ Բագայաոին գյուղ—Գ4—Ստրարոնի մոտ աղճատված ձևով է՝ Βαγοΐζα, որի ճիշտ ընթերցումը պիտի լինի Βα[γα]οΐζα: Այստեղ էր Միհրի հուշակավոր տաճարը, Կարինի և Արտաշատի վրայով գեպի Եկրատան (Համազան) տանող կարավանային ճանապարհին:

Բագաւան կամ Բագուան—Գ5—անվան ավելի հին ձևը պիտի լինեն *Բագարաւան, որը պահպանվել է Բագրաւանդ կամ Բագրեւանդ գովառի անվան մեջ: Բագաւանը գտնվում էր Նպատ լեռան ստորոտում և նախաքրիստոնեական և վաղ քրիստոնեական Հայաստանի խոշորագույն կրոնական կենտրոնն էր: Մինչև այժմ էլ գոյութուն ունի Բագաւանի IV դ. բազիլիկ տաճարի մոնումենտալ շէնքը, այժմ Ուշթիլիս կոչվող գյուղում: Անտիկ հեղինակների մոտ Baguana անունը պահպանվել է Sacavana աղճատված ձևով:

Բագաւան կամ Արշի-Բագուան, Արշի-Բագաւան ասան—Գ8—արարտ-պարսկական աղբյուրներում՝ Բագարվան կամ Բաջարվան, կենտրոնն էր համանուն գովառի: Այժմ էլ նույնանուն Բաջարվան գյուղ՝ Պրիշիբ շրջանային կենտրոնից հարավ: Բագաւան անվան ավելի հին ձևը պիտի լինեն Բագարաւան, որից էլ առաջացել է Բագաւան անունը: Անվան առաջին՝ Արշի մասնիկը ցույց է տալիս, որ այս վայրը

եղել է վրացաշտական պաշտամունքի կենտրոններից մեկը:

Բագարվանը գտնվել է Բագարվան գետի մոտ, որ այժմյան Բաղար-չայ գետակը պիտի լինի: Հայերը և տեղի բնիկները՝ Քալիշները, պիտի այդ գետը կոչեին՝ Բագաուո:

Բագարան ասան—Բ5—այժմ Բաքրան գյուղ: Երվանդունիների թագավորութեան կրոնական կենտրոն: Ըստ պատմական ավանդության, երբ Երվանդաշատը հայտարարվեց Այրարատյան թագավորութեան մայրաքաղաք, Բագարան փոխադրվեցին Արմավիրի տաճարում գտնվող կուռքերը:

Բագրեւանդ գաւառ—կամ Բագրաւանդ—Գ5—առաջացել է սիլքնական Բագարա-վանդ (որից՝ Բագար-վան, Բագաւան), Այրարատ նահանգի 6-րդ գավառը՝ 5275 կմ² տարածութեամբ: համապատասխանում էր այժմյան Ալաշկերտի հովտին:

Բագրեւանդ գետ—Գ5—այժմ Շարիան-սու, Արածանի գետի վտակը:

Բագալէր գաւառ—Բ6—վրաց. ձաճալցո Բագալէրի: Այժմ էլ նույնանուն գյուղ և լիճ Դուշեթի քաղաքի շրջանում:

Բագալէթ գովառի ընդհանուր տարածութեան էր 525 կմ² և մտնում էր Վերին աշխարհ՝ Վրաց երկրամասի կազմում:

Բագկան կամ Բագկան աղգագաւառ: ՄԵԿ հասած դրչադրերում հիշատակվում է՝ Բա՛ւան, Բագան, Բագան, Դաշտ ի Բագկան ձևերով և ճիշտը վերջինն է: Բագկան—ը համապատասխանում է Ջաքարիա Հոնտորի Βαζουտ երկրին, որը բանասիրության մեջ համարվում է անբացատրելի: Այս անունը սովորաբար նույնացնում են Βαλασαδουտ—Բաղասական անվան հետ, իբրև վերջինիս աղճատված ձևը: Մեր հարցի համար կարևոր է նշել, որ Բագկան երկրի արևմտյան մասը, իբրև առանձին գովառ՝ «Դաշտ-ի-Բագկան» անունով, հիշատակվում է բուն Աղվանքի գովառների շարքում: Սակայն անվան այս ճիշտ ձևը պահպանվել է միայն վերջերս հրատարակված «Աշխարհացոյց»-ի պրչագրում (տես Ա. Գ. Արրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրութեանը: Երևան, 1944, էջ 348), մնացյալ հրատարակված օրինակներում տեղի է ունեցել շփոթություն «Բաղասական» անվան հետ, ուստի գոյություն ունեն՝ Դաշտ-ի-Բաղասական, Դաշտ-ի-Բաղական, Իրաղական, Իրագական: Վերջինս էլ առաջ է եկել նրանից, որ Դաշտ-ի-Բագկան գովառին նախորդում է Բաղաղաշտը: Հետագա արտագրող»

ների մոտ Քաղաղաշտ, Դաշտ-ի-Քաղկան շարքը աղափաղվելով դարձել է՝ Քաղաղաշտ, ի Քաղկան, կամ՝ Քաղա, Դաշտ ի Քաղկան, ապա՝ Դաշտ ի Քալական և Դաշտ ի Քալասական: Այս սխալ ընթերցումները մեզ ևս գղեցին շփոթության մեջ և առաջ բերեցին ենթադրություն, որ Քաղական-Քալական ձևը համապատասխանում է պարսկական աղբյուրների Baylakan-ին, որ Փայտակարան քաղաքի անունն է, ուստի քարտեզի վրա սխալմամբ նշված է՝ Քաղասական դաշտ (Դաշտ-ի Քաղական)՝ իբրև այժմյան Միլի դաշտի անուն: Սակայն բացառված չէ, որ անկախ մեր խնդրից, Միլի դաշտը հիբավի կոչվում էր Քաղասական դաշտ, այդ ևս ապացուցում արարական աղբյուրները, որոնք ևս գիտեն Balasakan դաշտը, որը պահպանվեցին պիտի հնչեր Dašt-i-Balasakan, ուստի մեր քարտեզի վրա նշված Քաղասական դաշտը (անս) պիտի թողնել, միայն փակագծերում Դաշտ ի Քաղական-ը պիտի դարձնել՝ Դաշտ ի Քաղասական:

Քաղկան երկիրը համապատասխանում է արաբա-պարսկական աղբյուրների El-Iran (կարդացվում է նաև՝ Liran) երկրին, որը տեղադրվում է այժմյան Ափշերոնի թերակղզուց մինչև Շամախի քաղաքը և Աղ-սուզ գետը ընկած դաշտավայրում, մոտավորապես 9980 կմ² տարածություն: Զարաթիա Հնետորի մոտ հայտնի է Bazgun անունով և VI դարից հայտնի էր իբրև առանձին ֆեոդալական իշխանություն, որի կառավարիչը, ըստ վաղ շրջանի արաբական աղբյուրների, կրում էր «Էրան-շահ» տիտղոսը: Այս իշխանությունը պիտի առաջ դար Մազբթաց թագավորության վերացումից հետո, մոտավորապես 510 թ.: Կենտրոնը պիտի գտնվեր Շամախի քաղաքում: Այս երկրանունը, ըստ երևույթին Եղիշեի մոտ պահպանվել է «Շիրան» ձևով, իբրև անձնանուն (Եղիշեի՝ Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Զ-երորդ կղանակ, Երևան, 1957, էջ 134), ուստի քարտեզի վրա նշված է [Շիրան] (Բ—Տ), սակայն ավելի շիշա կլեներ փոխել և դնել Քաղկան անունը: Քաղկան երկիրը հյուսիսից կղերվում էր Կովկասյան լեռնաշղթայով, որտեղից (այժմյան Վել-վելիչայ գետի ակունքների շրջանից) սկսվում էր Ապգոտ-Կասառ պարիսպը (տես) («Քաղկան», ուստի անուն պարիսպի երկայն՝ որ կոչի Ապգոտ-Կասառ, մինչև ցԱլվմինոն մօրս և ցժով», «Աշխարհացոյց», էջ 27): Տե՛ս В. В. Бартольд, Место прикаспийских

степеней в истории мусульманского мира, Баку, стр. 37, 1925. Տե՛ս և Հեբան կամ Իրան:

Բասիլիկ-Ռեմի (Βασίλειον Ῥωμαίων) աւան—Գ1—այժմ Թերշիլի Համամ գյուղ:

Բալախովիա գաւառ—Գ3—հուն. Βελαβιτηναε: Զարրոզ Հայքի 4-րդ գավառը 1750 կմ² տարածություն: Բալախովիա էր կոչվում իր կենտրոնը հանդիսացող Բալաքաղաքի անունից: Այսպես պիտի կոչվեր գավառը 387 թվականից հետո, երբ բյուզանդական գերիշխանության ներքո անցնելով, կասավարվում էր Բալախովիա նստող հայ սատրապի՝ նախարարի կողմից:

387 թ. առաջ այս գավառը պիտի կոչվեր Արշամաշատ և հանդիսանալու էր Արշամաշատ քաղաքի բաղաքային տերիտորիան:

Այս գավառը հիշվում է գեոսես Պուլիբիոսի մոտ իբրև «Վեկեցիլի դաշտ» (Καλιθεσσαλια), իսկ բյուզ. պատմիչ Միքայել Ատաուլիատը կոչում է այն Ἀριθια, որի անվան Ἀριθιαցի-ի աղձատված ձևն է Ստարաբնի մոտ պահպանված Ἀριθιαցի ընթերցումը:

Բալու բերդ—Գ3—այժմ էլ նույն անունով ավան:

Բախուրակերտ աւան—Գ6—կամ Բաբրան, գտնվում էր Մարանդ քաղաքի արվարձաններում՝ այժմյան Բաբրան գյուղի տեղը: Բախուրակերտ (Մով. Խոր. II, 4) պիտի կոչվեր ավանը ի հիշատակ Տրդատ Ա Արշակունու (62—80) կրթող՝ Մարաստանի թագավոր Բախուրի, որի գերեզմանը պիտի գտնվեր այս վայրում: Տրդատ «եղրարատներ» (Σελινοβίτης) իր եղբայր Բախուրի հիշատակին կառուցել է տաճար, որին սպասարկելու համար կցվել է մի ամբողջ գավառ, որը «Աշխարհացոյց»-ում կոչվում է Բաբրան: Tab. Pent.-ում կոչվում է F-ladefia. Հետազայում (II—III դդ.), երբ բարձրացել է Մարանդ քաղաքը, գավառը ստացել է նրա անունը՝ Մարանդ:

Բաղաբերդ ամրոց—Գ7—Գեղի և Ողջի գետերի միախառնման տեղում:

Բաղան-նոտ աւան—Գ8—պարսկ. Բալխաբ, այժմ՝ Բողարու-բենդ գյուղ, որ թալիշերեն Բոլխանու կոչվող գետի անունից է առաջացել, իսկ վերջինս հոմանիշ է պահպանվեցին Բաղան-նոտին:

Բաղան-նոտ, որ է Ռոտ ի Բաղա գաւառ—Գ8—Փայտակարան նահանգի 3-րդ գավառը՝ այժմյան Մուղանի դաշտում, գրավում էր Բաղան-նոտ (այժմ Բուլղարու-շայ) գետի ներքին հոսանքի գաշտավայրը: Այս գավառի

անվան նոր պարսկերեն ձևը պիտի լինի՝
Քալին-ար:

Բաղան-ոտտ գետ (Ռոտ ի Բաղա)—98—Նոր
պարսկ. Բալին-ար, Թալիշերեն՝ Բոլին-աոու,
այժմ Բոլղարու-չայ:

Բաղասակյան դաշտ—97—այժմյան Միլի դաշ-
տը, ավելի վաղ շրջանում կոչվում էր
«Կարգարացոց դաշտ»: Բաղասակյան դաշտի
այն մասը, որը գտնվում էր Կուր և Երասխ
գետերի միախառնման հռանկյունում, կոչ-
վում էր Բեղամլեջ (տե՛ս Կիրակոս Գանձակե-
ցի, Պատմութիւն Հայոց, գլ. ԺԱ, Երևան,
1961, էջ 203):

Բաղաղեջ բերդ—95—Բաղեջ անվան հին ձևն է
(հուն. Βαλαλέισον), որի աղճատված ձևը
պահպանվել է Փափասոս Բուզանդի մոտ՝ «Բա-
ուալեջ»: Այս ամբողջունը հսկում էր հարա-
վից Տաւրոյրեւան կամ Չաբապահակ լեռ-
նանցքին, որը ամենակարճ ճանապարհն էր
Միջագետքից դեպի Հայաստանի Միջնաշ-
խարհը: Բաղեջ բերդի տեղում միջին դարե-
րում աճեց մեծ քաղաք, որը արարենբը կո-
չում էին Ռիրլիս, այժմ էլ նույն անունով է
կոչվում օտարների մոտ, իսկ հայերը շարու-
նակում են անվանել Բաղեջ:

Բաղաղեջ գետ—94—այժմ Բիթլիս-սոս:

Բաղ՛ գաւառ—97—Այունիքի 9-րդ գավառը՝
925 կմ² տարածութեամբ, համապատասխա-
նում էր այժմյան Հափանի շրջանի հիմնական
մասին:

Բայրեբեղ—94—կամ՝ Սմբատաւան, Սմբատայ
բեղ, այժմ Բարեբեղ, կամ Բայբուրբ, Ճորոխ
գետի ձախ ափին: Ըստ Երևույթին՝ այստեղ է
գտնվել Բազրատունիների սկզբնական կենտ-
րոնը:

Բասեն աւան—94—կոչվել է նաև Վաղարշա-
ւան, այժմ Քյոփրի-քյոյլի:

Բասեան գաւառ—94—Այրարատ նահանգի 1-ին
գավառը՝ 2525 կմ² տարածութեամբ, այժմ էլ
նույն անունով՝ Բասեն կամ Փասին, Փասին-
լիւ ձևերով:

Բարբալիսոս քաղաք—93—հուն. Βαρβαλίσος:
Բարբալիսիս Երկրամասի (տե՛ս ստորև)
կենտրոն, այժմ Քալաթ Բալի գյուղը: Պատ-
մութեան մեջ այս քաղաքը նշանավոր է 249 թ.
Ճակատամարտով, որ տեղի ունեցավ հռոմեա-
ցիների և պարսիկների միջև:

Բարբալիսիս «փոքր աշխարհ Ասորիքի»—92—«Աշ-
խարհացոց-ում (էջ 36) վկայված է աղճատ-
ված «Բալրանիտիս» ձևով: Վերոհիշյալ Բար-
բալիսոս քաղաքի քաղաքային տերիտո-
րիան էր:

Բարդող լեառն (2562)—95—այժմ Թաքալթու
Բարդողլիմէոսի վանք, տե՛ս Արերանոս:

Բառիգակովիս գաւառ—Վասպուրականի գավառ-
ներից մեկը, որը հիշատակվում է միայն որոշ
ցուցակներում: Ենթադրաբար գետեզում ենք
Ճուարշ-ոտտ գետի վերին հոսանքում: Քար-
տեղում չի նշված:

Բարձր Հայկ (Կողմն Կարևոյ)—93—94—Մեծ
Հայքի 1-ին նահանգը, ընդգրկում էր 11 գա-
վառ 23.760 կմ² տարածութեամբ: «Բարձր
Հայկ» անունը գիտե միայն «Աշխարհացոյցը»,
որը այսպես է անվանում 387 թվից հետո
Բյուզանդիային անցած «Ներքին Հայկ» (Ar-
menia interior) կոչված տերիտորիան, որը
Հուստինիանոս Ա-ի 536 թ. նովեմբրայից հե-
տո Փոքր Հայքի և Պոնտոսի առանձին մասե-
րից կազմեց Առաջին Հայք (Armenia Pri-
ma) պրովինցիան:

Բարսալա ամրոց—93—Βαρζαλώ, Barzalo (Ptol. V,
6, 25), Եփրատի աջ ափին, ըստ Երևույթին,
այժմյան Բերենիլյան գյուղի մոտերքը:

Բաւբրան (Մարանդ) գաւառ—96—«Աշխարհա-
ցոյց»-ում «Բաւբան» աղճատված ձևով, ընդ-
հանուր տարածութեունն էր 4105 կմ²: Սկզբ-
բում Բաւբան կամ Բակուրակերտ ավանի տե-
րիտորիան էր, հետագայում դարձավ Մա-
րանդ քաղաքին ամրացված տերիտորիա: Տե՛ս
Բակուրակերտ աւան:

Բաւբան աւան, տե՛ս Բակուրակերտ:

Բեղ կամ Բեխ գաւառ—97—Մուրղալ և Կարա-չայ
գետերի միջև, այժմյան Կախի շրջանում:
Բեղ գավառի տարածութեունն էր շուրջ
1600 կմ²: Գաւառի անունը պիտի առնչու-
թյուն ունենա «բեղ» բառի հետ:

Բեմաղա լեառն (1520)—93—ըստ Երևույթին, այս
գաղաթն է, որ հնագույն ժամանակներում կոչ-
վել է Եգալա, Իշալլա: Քարտեզների վրա նըշ-
ված է միայն բարձրութեունը, իսկ գաղաթի
այժմյան անունը չկա:

Բեռիս (Խալիսոն) քաղաք—92, այժմ Հալեպ քա-
ղաք:

Բերան Երախայ—98—այսպես էր կոչվում Երաս-
խի հին հունի գետաբերանը, այժմյան Ար-
մյանկա գետի գետաբերանի մոտ՝ Ղըզըլ-աղաջ
ծովախորշում:

Բերդանոր կամ Բերձոր գաւառ—97—Արցախի
3-րդ գավառը, միջին դարերում կոչվում էր
Վերին Խաչկն, այժմյան Քերաշարի շրջանը:
Ընդգրկում էր 625 կմ² տարածութեուն:

Բերդազ վոք—95—Տայքի 2-րդ գավառը, հետա-
գա Բանակի (այժմ Փենսել) շրջանը: Այստեղ
էր գտնվում X դ. հայտնի Բանակի (վրաց.

ծծճճ Բանա) վրացական տաճարը, կառուցված Զվարթնոցի ձեռով: Բերդաց-փոր գավառի տարածությունն էր 990 կմ²:

Բերդկունք ամրոց—Բ7—գտնվում էր Բերդաձոր գավառում, Սողթի լեռնանցքի մոտ:

Բերդիկ ամրոց—Բ5—այժմ էլ նույն անունով հայտնի գյուղ Բերդաց փոր (այժմ Փենեք) գավառում և վերջինիս կենտրոնը, որի անունով էլ կոչվում էր գավառը:

Բգարդի քաղաք—Գ5—հուն. Βησσαρί, գտնվում էր Տիգրիս գետի աջ ափին, Զեղիբե-Իրն Օմար քաղաքի դիմաց:

Բզնունեաց ծով—Գ5—հուն. Θω[σ]ρετις և Ἀρσ[ε]τι[α] կամ Ἀρσ[ε]σσα λιμνη, Հայկական լեռնաշխարհի երկրորդ խոշորագույն լիճը՝ կոչվում էր նաև Ռշտունեաց ծով. Տոսպայ լիճ, Ալի ծով, Արնեշի ծով, և այժմ՝ Վանա լիճ: Վանա լիճը ծովի մակերևույթի բարձր է 1662 մետր, լճի մակերեսը համասար է 3733 կմ², միջին խորությունն է 16 մ, ամենախոր տեղը, հասնում է 25 մ: Լճի ամենամեծ լայնությունն է 63 կմ: Ըստ «Աշխարհացոյց»-ի Վանա լիճը ունեցել է յոթ կղզի՝ Լիմ, Ախտան (այժմ Կոռուց), Աղբամար, Արտի (այժմ Արտեր), Արծկ, Միպան և Տոհան: Զուրը աղի է և պարունակում է բորակ: Վանա լճում հայտնի է տառեխ ձուկը:

Բզնունիք գառա—Գ5—Տարուբերան գավառի 11-րդ գավառը՝ 925 կմ² տարածությամբ Այս գավառի անունով Վանա լիճը կոչվում էր Բզնունեաց ծով: Այս գավառը համապատասխանում է ուրարտական և ասուրա-բարելական արձանագրությունների Aīadu կամ Aiduni երկրին:

Բզնունիք գավառը համանուն՝ Բզնունեաց ճախարարության հայրենիքն էր: Այս տոհմի պարտականությունն էր հսկել հարավից Տարուբ-բերան կամ Զորա-պահակ անցքին:

Բլանդոս գիւղ—Գ2—պիտի գտնվեր Գանդոս (այժմ Ուլաշ-դերեսի) գետակի ափունքների շրջանում, այժմյան էսկի-բոյ գյուղի տեղում):

Բլուր գիւղ—Բ3—այժմ էլ նույն անունով:

Բղար (Յուք) քաղաքիկ—Գ5—տրար. Բալադ, այժմյան էսկի-Մոսուլ գյուղը:

Բնարեղ ամրոց—Գ4, այժմ Բենարիլ գյուղ:

Բոգունիք գառա—Գ5—Վասպուրական նահանգի 3-րդ գավառը՝ 275 կմ² տարածությամբ. գտնվում էր Մարմետ գետի ստորին հոսանքի ձորահովտում: Միջին դարերում այստեղ հայտնի էր Անըստան գյուղը, որը ուրարտական ժամանակաշրջանի Aniaštania քաղաքն էր, այժմյան Աննավանք գյուղը:

Բողխա գավառ—Բ4—հետագայում Բոխա ձևով է հայտնի. գտնվում էր համանուն Բոխա գետի (այժմյան Սլի-չայ) հովտում: Բոխան Տաչբի 5-րդ գավառն էր և ընդգրկում էր 2080 կմ² տարածություն:

Բողխա գետ—Բ4 այժմյան Սլի-չայը:

Բողբերդ ամրոց—Բ4—այժմ Բուղա-կալա, Բոխա գետի ափունքներում: Բողբերդը բյուզ. Βολωνη և միջնադարյան վրաց. ბუღდათა շրջո Բուղարա-ղուրի ամրոցն է: Անվան վրացերեն ձևը առաջ է եկել հայերեն հետագա արտասանությունից՝ Բուղա ձևից:

Բոլնիս, Բողնիս աւան—Բ6—այժմ Բոլնիս-Խաչեն գյուղ. այստեղ է գտնվում Բոլնիսի հռչակավոր բաղիլիկ տաճարը V դ. վրացերեն արձանագրությամբ:

Բոլնիս, Բողնիս գետ—Բ6—այժմ էլ նույն անունով Բոլնիսի գետ, վրաց. ծոլեոնոն Բոլնիսի-ձղալի, Գաջենագետի (այժմյան Մաշավերա) վտակն է:

Բողնույր գառա—Բ6—Վրաց. ծոլեոնոն օցցո Բոլնիսիս-խնի: Գուգարաց բղեղխություն 13-րդ գավառը, Գաջենագետի վտակ Բոլնիս գետի ձորահովտում. ընդգրկում էր 555 կմ² տարածություն: Համանարար 363 թ. հետանջատվել է Գուգարբից և միացվել է Վրաց աշխարհին Այս գավառի կենտրոնն էր Բոլնիս ավանը (այժմ Բոլնիս-Խաչեն գյուղ): Բողնույրը, ըստ երևույթին, Գուգարաց բղեղխության կենտրոնական գավառն էր, որտեղ պիտի գտնվեր բղեղխների նստոց Յուրտավ քաղաքը: Յուրտավը կոչվել է նաև Գաջեն, վրաց. ջժոժոժ Գաչխնի, և գտնվում էր Գաջենագետի (Մաշավերայի) և Յուրտագետի (վրաց. Քյխա) միախառնման կետում, այժմյան Արուսուլ գյուղի մոտ:

Բուժունիք գառա—Գ5—Վասպուրական նահանգի 9-րդ գավառը շուրջ 400 կմ² տարածությամբ. գրավում էր Սուրբ Տիկի կամ Սև Տիկին գետակի ձորահովտը՝ Շասախից հյուսիս: Գավառի տեղագրությունը պարզվում է Մ. Խորենացուն վերագրվող «Ճառ պատմութեան բանից ի սուրբն Հովհաննիս և յընկերան» գրքվածքով:

Բուն Մարդաստան գառա—Գ5—«Աշխարհացոյց»-ի մեկ հասած օրինակներում բացակայում է, որովհետև նրանից հետո գալիս է այլ գավառ Մարդաստան անունով. մենք վերականգնում ենք շնորհիվ Բովնա Արծրունու (III, ԻԲ, 1887, էջ 252):

Բուն Մարդաստանը Վասպուրականի 13-րդ գավառն էր, շուրջ 1100 կմ² տարածու-

իյամբ, և ընդգրկում էր Հայոց ձոր գետի վերին հոսանքը: Այս գավառը, ըստ երևույթին, մարդ ցեղի գլխավոր բնակատեղին էր, որը V—VI դդ. արդեն հայացած պիտի լիներ:

Քոնակապան լեռնանցք—Բ4—այժմ էլ նույն անունով (Փիոնեկապան): Այս լեռնանցքի մոտ պիտի գտնվեր Ստրարոնի մոտ հիշվող Sionora սահմանամերձ ամրոցը: Մինչև 66 թ. մ. թ. ա. այստեղով էր անցնում սահմանագիծը Մեծ Հայքի և Պոնտոսի թագավորությունների միջև:

Քոնակապան գիւղ—Գ4—այժմյան Փիոնեկապան գյուղը:

Գ

Գարառու բաղինի մեհեան—Գ3—Պտղոմեոսը հիշում է Γαργαροι βωμοι (աղճատված ընթերցումն է՝ Σαβασο βωμοι) անունով մեհյան: Այս անունը պահպանել է սովետա-իրանական սահմանագծի մոտ գտնվող Καδρυρρι կուրգանը: Տե՛ս եւթն փորակեան բաղինի:

Գարառու դաշտ—Գ8—այսպես պիտի կոչվեր Մուզանի դաշտի այն մասը, որը Համգալահ Հազվինին կոչում է Կավրաշյան դաշտավայր:

Գարեղեանի գաւառ—Գ5—Այրարատ նահանգի 2-րդ գավառը՝ 1275 կմ² տարածությամբ: Ընդգրկում էր այժմյան Կաղզվանի շրջանը: Հայտնի էր Գարեղեանի նախարարական տոհմը:

Գարիբեան գաւառ—Գ6—Վասպուրականի 29-րդ գավառը՝ 2270 կմ² տարածությամբ. տեղադրում ենք Կապուտան (Ուրմիա) լճի հյուսիսային եզրերին՝ մինչև Սոֆիան վայրը:

Գարիբեան անունը Կապուտան անվան տեղական ձևը պիտի լինի:

Գարուլա գիւղ—Գ2—Gabula, արար. Gabbul.

Գագիուրա տառ—Բ2—գտնվում էր Զելա բաղաբի մոտ:

Գագրիկ ամրոց—Գ6—Այստեղ պիտի գտնվեր Վասպուրականի Գագրիկեան գավառի կենտրոնը: Ըստ երևույթին, այժմյան Կասրիկ գյուղն է:

Գագրիկեան կամ Գագրիկեան գաւառ—Գ6—Վասպուրականի 30-րդ գավառը՝ 600 կմ² տարածությամբ. ենթադրարար տեղադրում ենք Տարսնոյ գետի (այժմ Զուլա-չայ) ակունքների շրջանում, որտեղ գտնվում է Կասրիկ գյուղը:

Գամիւր գիւղ—Գ2—այժմ Կեմերեկ գյուղ:

Գայլախազուտ լեռան, տե՛ս Պախո:

Գայլ գետ—Գ3—Նդի-գերելար լեռնանցքի մոտից բխող վտակը, որը թափվում է Եփրատի մեջ, Երզնկա բաղաբի մոտ:

Գայլ գետ—Բ2—հուն. Αγοζ, այժմյան Գելգիտաչայ. անտիկ աղբյուրների Քերմոզոն գետը պիտի լինի: Տե՛ս Քերմոզոն գետ:

Գայլատու լիճ—Գ5—այժմ Բալբի-գյուղ, 2247 մ բարձր ծովի մակերեսից: Լճից բխում է Առուն գետը (այժմ կոչվում է Չոխուր), որը միանում է Տղմուտ գետին (Չանդիմար-չայ) և թափվում Երասի գետի մեջ:

Գանձակ գաւառ—Գ6—Գանձակ Շահաստանի բաղաբային տերիտորիան, որը Արասի գետով Մեծ Հայքին անմիջական սահմանակից էր, ուտի Փափստոսը Մեծ Հայքի սահմանը համարում է Գանձակ Բաղաբ, որ պիտի հասկանալ նրա բաղաբային տերիտորիայի իմաստով:

Գանձակ Շահաստան բաղաբ—Գ7—հուն. Γαζαχα, Γαζα. Ատրպատականի մարզաբաղաբ՝ արար. Չանգա, գտնվելիս է եղել այժմյան Լիլյան գյուղի տեղը, Մարաղայից հարավ:

Գաջենագետ—Բ6—այժմ Մաշավերա գետ:

Գառան գետ—Գ7—տե՛ս Կալբիսևս գետ:

Գառնի բերդ—Բ6—հուշակավոր ամրոց, որ առաջին անգամ հիշում է Տակիստոսը Gorneae ձևով. այժմ էլ նույն անունով ավան:

Գառնի գաւառ—Գ5—Վասպուրական նահանգի 8-րդ գավառը՝ 1275 կմ² տարածությամբ: Գրավում էր Առեստ (Բանդիմահի) գետի վերին հոսանքում և Բոնգրակ հրաբխային զանգրվածի հարավային լանջերին փոխած Արաղա դաշտը: Ըստ երևույթին, արդեն V դ., Գառնի գավառը Աորերանի գավառի հետ միասին կազմում էր մի գավառ՝ Քաջբերունիկ կամ Քաջբերունեաց երկիր անունով:

Գառնի գիւղ—Գ3—այժմ էլ նույն անունով գյուղ:

Գառնիձոր լեռնանցք—Գ6—այժմ հայտնի է Գիրեսուր անվամբ:

Գարգաւր գետ—Գ7—այժմ Կարկար-չայ. Միլի դաշտում. սկիզբ է առնում Արցախի Գրգափայտ լեռներում:

Գարգաւցւոց դաշտ—Գ7—այժմ Միլի դաշտ, Գարգաւր գետի հովտում:

Գարդման ամրոց—Բ6—վրաց. ვარდამან Կարդարանի, հետագայում այս ամրությունը կոչվում էր Աղջա-ղալա, Գերեղ գետի ներքին հոսանքի աջ կողմում:

Գարդման գաւառ—Բ6—վրաց. ვარდამან Կարդարանի, Ուտիք նահանգի 6-րդ գավառը շուրջ 800 կմ² տարածությամբ. համապատասխանում է այժմյան Ղազախի շրջանին:

Գարդմանը Գարդմանացուց իշխանության կենտրոնական գավառն էր և զարձակ

- Գարգմանի նախարարական տոհմի ժառանգական սեփականությունը:
- Գարսանիս աւան—տե՛ս Կերճանիս:
- Գարիսա աւան—Բ1—Չորումից գեպի հարավարևելք, Չորում-գերեսիի գետարհրանի մոտ:
- Գարէնէ աւան—Գ2—Gaurenae, այժմյան Գյուրուն քաղաք:
- Գարէ՛ գաւառ—Գ3—ուրարտական արձանագրությունների Gaurahi, հուն. Γαυρη. Չորրորդ Հայքի 7-րդ գավառը՝ 1215 կմ² տարածություն: Այստեղ Արածանիի գետարհրանից հարավ գտնվում էր Լուսաթանո՛ճ քաղաքը:
- Գեղ լեռան (3609)—Բ6—Գեղմաղան (այժմյան Աղմաղան) հրաբխային զանգվածի հիմնական գագաթներից մեկը:
- Գեղայի ցեղ—Գ8—հուն. Γελοῖ—այժմյան գիլանցիները:
- Գեղան երկիր—Գ8—այժմյան Գիլանը:
- Գեղափունեաց ծով—Բ6—այժմ՝ Սևանա լիճ, Λαχνη-εις, Lychnitis (Ptol. V, 12, 3), վրաց. ზღვა გელაქუნისა Ջուղայ Գելաբունիայ: Սևանա լիճը ծովի մակերևույթի բարձր է 1916 մ, իսկ լճի մակերեսը հավասար է 1416 կմ², որից Փոքր Սևանը՝ 334 կմ², Մեծ Սևանը՝ 1032 կմ², Փոքր Սևանի խորությունն է՝ 45 մ և մաքսիմալ 95 մ. Մեծ Սևանի խորությունն է՝ 36 մ և մաքսիմալ 47 մ: Սևանա լճում թափվում է 21 վտակ: Սևանա լճի ջուրը անուշահամ է, որովհետև այնտեղից բխում է Հրազդան գետը: Սևանա լճի ձկներն են՝ կարմրախայտ իշխան, գեղափունիք, բաղդակ և կողակ: Ունի մեկ կզղի Սևան անունով:
- Գեղափունի աւան—Բ6—Այսպես էր կոչվում այժմյան Կամո քաղաքը: Գեղափունի անունը Welikuni կամ Welikuni անունից է առաջացել. այսպես պիտի կոչվեր ոչ միայն գավառը, այլև նրա կենտրոնը, որը ուրարտացիների կողմից նվաճվելուց հետո կոչված է «եսալդի աստուծո քաղաք»: Միջին դարերում Գեղափունի ավանը կոչվել է Գաւառ կամ Գաւառնի, տեղական բարբառով՝ Քեւափառ:
- Գեղափունի գաւառ—Բ6—վրաց. გელაქუნის Գելափունի, Մյունչյաց նահանգի 4-րդ գավառն էր և բնդրվում էր այժմյան Կամոյի և Մարտունու շրջանները 1735 կմ² տարածությամբ: Միջին դարերում իմաստավորվելով Գեղափունի անունը դարձել է Գեղափունի:
- Գեղաու գաւառ—Բ8—տեղը որոշվում է այժմյան Քյալվա կամ Գելաբու գյուղի անունով, որը գտնվում է այժմյան Աղ-սուի շրջանում: Անունը առաջացել է Գեղ կամ Գել ցեղից, որ հիշատակում են հույն հեղինակները Γελοῖ Կե-
- րավնյան լեռների հարավային փեշերին, որոնցից հյուսիս բնակվում էր Ադհո՛ այսինքն՝ Լեկի—Լեզգի ցեղը: Գեղաու գավառի տարածությունն էր՝ 975 կմ²:
- Գեղաու գետ—Բ8—այժմյան Գրրղման-չայ (Գարգման) գետի վերին հոսանքը: Այս Գարգման գետը շփոթել է շփոթել Գարգման գավառի տեղադրության հետ, որ բոլորովին այլ տեղ է որոշվում:
- Գեղմանց լեռինք—Գ8—այժմ՝ Գիլանի լեռներ:
- Գեղաբերդ ամրոց—Բ5—այժմ՝ Գյուլարբերդ գյուղ:
- Գեղմանիկէ (Մարաշ) քաղաք—Գ2 հուն. Γεργα-νιξεα, այժմյան Մարաշ քաղաքից գեպի արևելք 20 կմ հեռավորության վրա գտնվող խեթական ժամանակաշրջանի Մարբասու քաղաքի ավերակները:
- Գլտաուու գաւառ—Բ7—այժմյան Աջինուուրի—էլ-գարի տափարակ տերիտորիան՝ Ագրի-չայ, Կլազան, Ալշիզան-չայ և Կուր գետերի միջև 1575 կմ² տարածությամբ: Մեղ հասել է աղճատված ձևով՝ «Գլտաուու»: Գլտաուու անվան հնագույն վկայություն է Պտղոմեոսի՝ Մաթաթա (V, 11, 2), իրեն գետի և բնակավայրի անուն:
- Գլտաուու գետ—Բ7—Պտղոմեոսի մոտ հիշվում է՝ Մաթաթա անունով, այժմ՝ Ագրի-չայ:
- Գղեղիս գաւառ—Գ4—Աղձնյաց բլուզիության 8-րդ գավառը, 375 կմ² տարածությամբ. գրավում էր Բաղէշ գետի (այժմ՝ Բիթլիս-սու) վերին հոսանքը: Այժմ էլ այդտեղ գտնվում է Գղեղիս գյուղը: Այս գավառի հյուսիսային սահմանում էր գտնվում Տաւրոյերան լեռնանցքը (Չորապահակ, այժմ՝ Բիթլիսի կամ Ռահվա լեռնանցքը): Դեռևս ասուրա-բարելական աղբյուրներում այս գավառը հիշվում է Gilzanu անունով և ուներ կարևոր սաղմա-ստրատեգիական նշանակություն:
- Գղեղիս գիւղ—Գ4—այժմ՝ Գղեղիս անունով:
- Գրլգա քաղաք—Բ7—ըստ երևույթին, Այազան գետի գետաբերանի մոտ («...և վայրն անապատ մինչև ցկուր գետ, յորոյ յնչից կողմանէ Գրլգա քաղաք, առ Ալուան գետով...»), տե՛ս «Աշխարհացոյց», էջ 29):
- Գինեկ գետ—Գ4—այժմ՝ Գինեկ-սու գետ:
- Գինոյ բլուր, այժմ՝ Ղրրմզի-թափա (ուսական քարտեղների վրա՝ КЫРМЫЗЫ-ТАПА): Այստեղ էին հասնում Արտաշատ քաղաքի արևմտյան մատուցյները, որտեղ բնական սահման էր Գինոյ կամ Գինեկոյն գետը (այժմ Կարա-սու): Այստեղ պիտի գտնվեր արարական աղբյուրների ղ-Khirmiz քաղաքը (Արտաշատ քաղաքի մնացորդը), որը համարվում էր «որդան կարմիր» ներկի արտադրության ու ներկարտ-

րության կենտրոն: Khirmiz բառացի թարգմանությամբ է հայերեն «գինեգոյն» բառի (տես ՆՀԲ, I, էջ 552):

Գիշ գյուղ—Բ7—այժմ՝ Քիշ, Նուխից հյուսիս:

Գիշ գյուղ—Գ7—այժմ էլ նույն անունով գյուղ:

Գղուար՝ ազգագաւառ—Բ6—վրաց. ջըճըղճո Գլուարէլնի, այժմյան Գլարիլի գյուղի շրջակայքում:

Գողերձական լեռնանցք—Բ5—այժմ՝ Գողերձի լեռնանցք:

Գողրն գաւառ—Գ6—հուն. Γολθρυνη. վասպուրականի 33-րդ գավառը՝ 1375 կմ² տարածութեամբ, ընդգրկում էր այժմյան Ապրակունիսի և Թրդուրաղի շրջանները: Այս գավառի կենտրոնն էր Գողրն ավանը (այժմ Քիլիք):

Գոռարի գետ—Ա5—այժմ Գոռարիս-Մղալի վտակը:

Գոռարիս-խելս—(մեկ հասել են Գոռարիս-խելս, Գորգովարիսխա, Թորգովարիսխա, ...վարիսխա աղճատված ընթերցումներով)—Ա5—վրաց. ջրճճոսոն-ծըցո Գոռարիս-խելի, տեղադրվում է այժմյան Գորարի գյուղի և նույնանուն վտակի հովտում, այժմյան Խաշուրի շրջանում: Վերին աշխարհ՝ Վրաց նահանգի գավառներից մեկն էր և ընդգրկում էր շուրջ 400 կմ²:

Գուգար՝—Բ5—Բ6—հուն. Γωγαρυς — Մեծ Հայքի նահանգներից և Արշակունյաց Հայաստանի շորս բղեշխութուններից մեկը: Մինչև 338 թվականը Գուգարաց բղեշխութունը իր մեծ պարունակում էր 16 գավառ և նրա տերիտորիան ընդգրկում էր 16-765 կմ² տարածություն¹: 338—363 թթ. ընթացքում Գուգարից անջատվեցին և մտան Վրաց աշխարհի կազմում՝ Շաւշէր, Ջաւախ՝ Ներքին, Մանգլեացիոր, Քուիշափոր, Բողնոփոր, Խանգիխէ և Պարուար գավառները 5070 կմ² տարածութեամբ: Գուգարաց բղեշխութեան տերիտորիան այնուհետև (363—387 թթ.) ընդգրկում էր այն տերիտորիան, որ ցույց է տալիս «Աշխարհացոյց»-ը: 387 թվից Վրաց աշխարհին միացվեց Գուգարի մնացյալ մասը, 11-695 կմ² տարածութեամբ, բացի Աշոց՝ գավառից, որը մնաց Հայաստանի կազմում և «Աշխարհացոյց»-ում նշված է իրեն Այրարատ նահանգի գավառներից մեկը:

Գուղամակար՝ ազգագաւառ—Ա6—վրաց. ջըճճճո Գուղամակարնի, բնակվում էին Գուղամակարիս Արագվի վտակի կիրճում:

Գուլլիդիս-ձիրի (Քուդիքիրի, Քուդիդ, Քուդիք աղճատված ձևերի ճիշտ ընթերցումն է)—Ա6—վրաց. ջըճըճոն-ժոճո. Գուլլիդիս-ձիրի, գրանվում էր Մեջուդա վտակի վերին հոսանքի խորածորում:

Այս գավառը վերին աշխարհ՝ Վրաց երկուամասի կազմումն էր մտնում: Գուլլիդիս-ձիրի գավառի՝ ընդհանուր տարածությունն է շուրջ 225 կմ²:

Գուկանց աւան—Գ5—այժմ Գյուկանց գյուղ Հայոց ձորի ստորին մասում: Գուկանք աւանը համանուն գավառի կենտրոնն էր լինելու:

Գուկանց գաւառ—Գ5—վասպուրական նահանգի 24-րդ գավառը՝ 225 կմ² տարածութեամբ. գտնվում էր Հայոց ձորի այժմյան Գյուկանց գյուղի շրջակայքում:

Գուլգուլա գեւղ—Բ6—այժմ էլ նույն անունով:

Գունդուսա գյուղ—Գ2—Gundusa (Itin. Ant.) կամ Պաղում. Godasa, այժմ Գյունդուլ գյուղը:

Գունիսա ավան—Բ3—Gunissa (Tab. Peut.) կայան, այժմյան Սուսուլ գյուղի մոտ:

Գ

Դագոնա ավան—Գ2 Պաղում. Dagona, այժմ Դեվեքոս գյուղ:

Դալաո գաւառ—Գ5—Տավրուրերանի 8-րդ գավառը՝ 1850 կմ² տարածութեամբ այժմյան էլմալի-գերե հովիտը:

Դանդախենէ գյուղ—Գ2—Dandaxena կայան, Արկայի և Օսդարայի միջև:

«Դաշտ ի Բաղական»—Գ7—տե՛ս Բաղասական դաշտ և Բաղկան:

Դաշտն Դուան—Ա5—վրաց. լըճճոն ջըլո Դուանիս-վելի, այժմ էլ գոյութուն ունի համանուն Դվանի գյուղը Գորի քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք: Դաշտն Դուանը վերին աշխարհ՝ Վրաց երկրամասի գավառներից մեկն էր և ընդգրկում էր շուրջ 820 կմ² տարածություն:

Դասկուսա ավան—Գ3—Dascusa (Itia. Ant.) կայան՝ Արարկիր-շայ դետարերանից արևմուտք, Կոդրենիք գյուղից հյուսիս:

Դաստէլու (Դաստարակ) բերդ—Գ3—այժմ Դաստալի գյուղ: Այս բերդը, ըստ Ստրաբոնի (XI 12) գտնվում էր Փոքր Հայքում, Մեծ Հայքի Ալիլիսեն (Նկեղեաց) գավառի սահմանի մոտ:

Դարանդաշտ—Գ8—արար. Darnik, Վարդանյան դաշտից դեպի արևելք, այնտեղ, որտեղ մինչև օրս պահպանվել է Դարանկի անունով

¹ Այսպիսով գավառի և վերին Տաշիքի հետ Գուգարաց բղեշխութեան տերիտորիան հասնում էր 18.740 կմ²:

պոստը, սովետա-պարսկական սահմանագծին:

Դարանաղի դաւառ—Գ3—Բարձր Հայքի 1-ին դավառը, 3400 կմ² տարածութեամբ: Դավառի կենտրոնն էր Անին՝ Եփրատ գետի աջ ափին և նրան կցված Կամախը՝ նույն գետի ձախ ափին, որտեղ գտնվում էին Արշակունի թագավորների տոհմական դամբարանները: Անին նախաքրիստոնէական Հայաստանի կրօնական կենտրոնն էր. այնտեղ էր գտնվում Արամազդի մեհյանը:

Այս գավառումն էին գտնվում Թորդան, Մանեայ այլք վայրերը և Սեւոյն լեռը:

Դարբանդ դաւառ—Բ8—Դարբանդ քաղաքի քաղաքային տեղիտորիան, մոտավորապէս 650 կմ²:

Դարբանդ քաղաք—Ա8—այժմյան Գերբենդ քաղաքն է, տե՛ս և Պահալկն ճորայ:

Դարեւնից բերդ (Դարոյնք) ամրոց—Գ6—այժմ Հին Բայազետ կամ Դոդու-Բայազետի:

Դարոյնք աւան—Գ4—այժմյան Հասան-ղալան:

Դասնաուրք դաւառ—Գ4—Տալլուրբերանի 6-րդ դավառը՝ 725 կմ² տարածութեամբ: Ըստ երևույթին այժմյան Շուշարի շրջանն է՝ Թեքմանից արևելք:

Դասն-գաւառ—Գ5—այժմյան Ամաղիբի շրջանը՝ 1075 կմ² տարածութեամբ: Դասնը հիշվում է ասորա-բարելական արձանագրութիւններում Իս ձևով իբրև լեռների անուն, որոնք սահման էին կազմում Ուրարտուի և Ասորեստանի միջև: Ասոր. Beš Dāsen, իբրև Արբելայի հպարթիայի թեմերից մեկը: Արար. Dāsin:

Դասն գավառը, որը մտնում էր Եոր-Շիրական բրդեղիութեան կազմում, 363 թ. հետո անջատվում է Մեծ Հայքից և միացվում Սասանյան Պարսկաստանի Հեղայք (Աղիս-րենն) նահանգին:

Դափնոս Անտիոքացոց աւան—Դ2—Daphnae նախաքրիստոնէական ժամանակաշրջանի սրբավայր:

Դելում գեղ—Դ8—Հետագա զեյլեմիտները:

Դեկից[ի]սէ ամրոց—Բ6—այժմ էլ նույն անունով հայանի բերդի ավերակներ՝ Թեճամի գետի ակունքների շրջանում:

Դերջան աւան—Գ4—այժմյան Թերջան կամ Մամխաթուն:

Դերջան դաւառ—Գ4—Բարձր Հայքի 6-րդ դավառը, հուն. Δρυϊνήγη. այժմյան Թերջանը՝ Եփրատ գետի հովտում, որտեղ այն լայնանում է կազմելով դաշտավայր (այժմ կոչվում է Թերջան օվասի): Այս գավառի տարածութիւնն է

շուրջ՝ 2575 կմ²: Այս գավառում հայտնի էր Բագաոին ավանը Միհրի տաճարով:

Դեղիք դաւառ—Գ3—բյուզ. Τετρίς. Δρυϊνήγη—Չորրորդ Հայքի 8-րդ դավառը՝ 700 կմ² տարածութեամբ, Եփրատ գետի և Չմշկածաղի միջև: «Աշխարհացոյց»-ը այս գավառում հիշատակում է Լրեք բերդ՝ Կոնի, Քրվիկ և Սոկ: Դիգուր աղգագաւառ—Ա5—Ուրուի գետի ակունքների շրջանում: Ալան-օփ ժողովուրդը կազմող ցեղերից մեկը:

Դիդոյք աղգագաւառ—Ա6—հուն. Διδόνη, վրաց. დიდონი Դիդոնի, և երկիրը՝ დიდონეთი Դիդոնի: Այժմ էլ նույն տեղում՝ Անդիական Կույսու գետի ակունքների շրջանում գոյութիւն ունի դիդոնցիների ժողովուրդը:

Դիգափայտ լեռան (2480)—Գ7—այժմյան Զիարաթ լեռը: Այս լեռան վրա էր կառուցված Կատարոյ վանքը, որը մինչև վերջերս սրբավայր «զիարաթ» էր: Տե՛ս Ղ. Ալիշան. Հայաստանում, Վենետիկ, 1901, էջ 187:

Դիլաք գետ, տես՝ Տիգրիս գետ:

Դոլիխէ աւան—Դ2—հայ մատենագիրների Տլուրք. այժմյան Թիւ-Պյուլլուկը:

Դուան դաշտ, տես՝ Դաշտն Դուան գաւառ:

Դուին քաղաք—Դ6—հուն. Δούβιος, այժմ էլ նույն անունով պեղվող ավերակներ: Դիլինը հիմնը վէ է Խոսրով Գ Կոտակի (332—338) օրոք և դարձել է Հայաստանի մայրաքաղաք՝ 460-ական թվականներին: V դ. ավերված Արտաշատը դարձավ Դիլինի արվարձաններից մեկը, իսկ Ոստան Հայոց գավառը դարձավ Դիլինի քաղաքային տեղիտորիան և իբրև աշտիսին, այնուհետև կոչվում էր Ոստան Կրեմոյ:

Դուռն Փառխոսի լեռնանցք—Բ6—Սևանի կամ Քաղաթաղի (Շահ-ղաղի) լեռնաշղթայում, այժմ հայտնի Սատանի խաչ անունով, վկայված է միայն վրացական տարեգրութիւններում՝ յճո ջճո ճո ճո ճո Կարի Փարխոսիսա:

Դուրծ[ու]կ-աղգադաւառ—Ա6—վրաց. დურძუკნი Դուրծուկնի ցեղ և լեռնաշղթայի Դուրծուկէքի երկիր. այժմյան ինգուլներին նախորդներն են և սպրում էին Ասսա գետի վերին հոսանքում:

Դուակոն որ է Վիշապ գետ—Ա4—վրաց. ეგურონ էգուրի, կամ ეგუროն էնգուրի գետը, հնում՝ ეგროსის წყალი էգրիսիս-ծղալի, էգրիսիոյ ջուր:

Դրակոնիս կայան—Բ3—Draconis (Tab. Peut.), գտնվում էր Գայլ գետի վերին հոսանքում:

Դրուն Ասուրոց (Պլատանա)—Դ2—Πλάτωνος, լեռնանցք Ամանոս լեռներում. այստեղ էր միջնադարյան Բագրաս բերդը:

Գրունի Կասպից, տե՛ս Կասպիական գրունի:

Գրունի Կիլիկիոյ (Մալիս) — Գ2 — այժմյան Արսւան-
բոզազ լեռնանցքը՝ Ֆելիզի-փաշա կայարանի
մոտ, որտեղ գտնվում են խնկական ժամա-
նակաշրջանի Սամալ քաղաքի ավերակները
(այժմ Ջինջիրլի): Ըստ Միսաք Ճեփաճիրճյա-
նի այս լեռնանցքը նշանավոր Մառի անցքն է:

Գրունի՝ Հայոց — Գ7 — Ἀρμενίων πῶλιον (Strabo, II, 1,
25 -- 26) լեռնանցք այժմյան Ղարադաղի լեռնե-
րում, որոնք Սարարոնի (XI, 7, 1) մոտ կոչ-
վում են Հայկական լեռներ ('Αρμενίων Ὀρη):
Այստեղ, այժմյան Ահարից հյուսիս գտնվող
լեռնանցքը, որը տանում էր երասիսի հովիտը,
կոչվում էր Գրունի Հայոց: Այդ լեռնանցքը
ուշ շրջանում (XIII դ.) ասորոց պարսից աշ-
խարհազետ Ջարարիս Ղազվինին կոչում է
«Արմինիյան անց» (Arminijan):

Այս լեռնանցքից ճանապարհը գնում էր
դեպի այժմյան Խուլափեխեմի կամուրջը, որի
հյուսիսային եզրին, երասիսի ձախ ամին,
գտնվում էր Սյունիքի սուսորական կենտրոն
Խակուրգան քաղաքը:

Է

Եարեփորակեան բազինի գաւառ, տե՛ս Երեփո-
րակեան բազինի:

Եգրեխիկ, որ է Առանձնակ եգերայ — Ա4-հուն.
Ἐγρεχίτι γῶρον, այսպես էր կոչվում
Կողքիսի կամ եգերաց աշխարհի կենտրոնա-
կան մասը, որ վրացիների մոտ մինչև այժմ
էլ կոչվում է Նեմցըղա Սա-մ-եգրեկ-ո, այ-
սինքն եգերաց կամ մեգրեկների երկիր: Եգր-
ե-իկ կազմված է Ղազվիլիկ-ի նմանությամբ:
Իբրև ցեղանուն՝ Ερεγκοί δևով սրահպանվել
է դեռևս XIX դարում, որպես շերքեզական ցե-
ղերից մեկի անունը:

Եգր աշխարհ — Բ4 — Ճորոխ գետի ներքին հոսանքի
հովիտում, վրաց. ցճճո էգրի. այստեղով
հոսող Ճորոխ գետը կոչվում էր էգրոջ ջուր.
ցճճոն ցճալո էգրիս ձգալի: Այս եզրը համա-
պատասխանում է ուրարտական արձանագրու-
թյունների Kսիխա երկրին: Մ. թ. ա. VII — VI դդ.
շեմքին, սակայն հուն. Κωλχίς, վրաց. էգրխի,
հայ. եգր է կոչվում այժմյան Արևմտյան
Վրաստանի տերիտորիան, հատկապես Փա-
սիս (Ռիոն) գետի հովիտը:

Եզրը մտնում էր վրաց աշխարհի կազ-
մում: Եզր աշխարհի տարածությունն էր
1976 կմ²: Այս Եզրը կազմում էր Սարարոնի

(XI, 1, 18) Μεσζυχί, երկրի կողքիսյան (եգե-
րական) մասը:

Ելիսիա (Ուոհա) քաղաք, տե՛ս Ուոհա:

Ելեգարսինա, տե՛ս Ելեգարսին:

Եկեղեցաց գաւառ — Գ3 — Բարձր Հայքի 4-րդ գավա-
որը, այժմյան երզնկայի շրջանը, հուն. Ἀχιλι-
σική, լատ. Acilisenae: Այս գավառը կոչվել
է նաև Անախտական՝ (հուն. Ἰ'Αναχτις Ἰδρυα)
Երիզա կամ Երեզ (այժմ Երզնկա) ավանում
գտնվող Անահիտի հուշակավոր տաճարի անու-
նով: Անտիկ հեղինակների Ակիլիսենե ընդ-
գրկում էր նաև Գարանազի գավառը:

Այս գավառումն էին, բացի Երիզայից,
Մումիեն (Չումլեն, Ճիմլեն) քաղաքը և Թիլն
ավանը: Եկեղեցաց գավառի տարածությունն
է շուրջ 2250 կմ²:

Ելեգարսին (Ելեգարսինա) ավան — Գ3 — Elegarsina.
այժմյան Կամիշլի-դերե գյուղը:

Ելիզի լիճ — Գ5 — Երեխարք գավառում: Եղեզիս
գյուղի մոտ շամբուտ, որը այժմ կոչվում է
Գյուլլու: Այս շամբուտը, որը գտնվում է Վա-
նա լճի հարավային ափից ընդամենը մեկ
կիլոմետր տարածության վրա, սկիզբ է տա-
լիս Կեցան (Քեսան-դերեսի) գետին, որը
թափվում է Արևելյան Տիգրիս (Ջերմ, Բոհտան-
սու) գետում: Այս հանգամանքը շիտթու-
թյան մեջ է պեղ անտիկ աշխարհագիրներին,
որոնց մոտ այն կարծիքն էր տարածված, թե
Տիգրիսը սկսվում է Վանա լճից, օրինակ, ըստ
Պլինիոսի (Nat. hist., V, 31)՝ Elegosine տե-
ղից, որ Եղեզիս կամ Ելիզի անվան լատինե-
րեն տառագարծությունն է: Տե՛ս Առեստա-
ւան:

Եղնի (Սենի) գաւառ — Բ7 — Բուն Աղուանից երկրի
գավառներից մեկը. ընդգրկում էր այժմյան
Ջաքաթայայի շրջանը՝ 1722 կմ² տարածու-
թյամբ:

Երագգաուրս աւան, տե՛ս Երակաւան:

Երախ գետ — Գ4 — այժմ պաշտոնապես կոչվում է
Արաքս:

Երեգուան կամ Երիզայ Բաղամ — Գ3 — Պողոմենոսի
մոտ (V, 12, 5) հիշատակվում է Ἐρεσος (աղ-
ճատված՝ Բոքսոս): Մի այլ տեղ (V, 6, 19)
Պողոմենոսը հիշատակվում է Ἀρεχίς (աղճատ-
ված՝ Ἀρεχίς). այժմյան երզնկա քաղաքը
Եկեղեցաց գավառում, որտեղ գտնվում էր
Անահիտի հուշակավոր տաճարը:

Երեւան բերդ — Բ6 — հիմնվել է ուրարտական Ար-
գիշտի Ա (786 — 764) թագավորի ժամանակ,
մ. թ. ա. 782 թվին, այժմ՝ Սովետական Հա-
յաստանի մայրաքաղաք:

Երևաբ Գաւառ—Գ5—Տալրուրերան նահանգի 12-րդ գավառն էր՝ շուրջ 400 կմ² տարածութեամբ, այժմ հայտնի է Կարնիկան անունով՝ Վանա լճի հարավային ափին:

Երխեբք Գաւառ—Գ5—Աղձնայ րդեշխութեան 5-րդ գավառն էր 175 կմ² տարածութեամբ. այժմ՝ էրուն շրջան, Խիզանից հարավ:

Երծոյ Գաւառ (աղձառոված ձեւերն են՝ Երծոյ, Երծայ)—Բ6—Վրաց. ցրճոյ, ցրճո Էրծու, Էրծոյ. այսպէս է կոչվում մինչև այժմ Իորի գետի ձորը Թիանիթից մինչև Գոմբորի՝ 345 կմ² տարածութեամբ: Երծոյ գավառում հայտնի էր ժալէրի վայրը, որն ըստ Վախուշտու, հոմանիշ է Չելէրի կամ Բերբա վայրին:

Երկրորդ Հայք—Գ2—Armenia Secunda պրովինցիան, որը կազմվեց Բեռոս Ա Մեծի ժամանակ 378—386 թթ. միջև. կենտրոնն էր Մելիտինն քաղաքը: Երկրորդ Հայքի տարածութեան էր 34500 կմ²: Հուստինիանոսի 536 թ. նովելլայով Երկրորդ Հայքը վերանվանվում է Երրորդ Հայք (Armenia Tertia): Հուստինիանոս Ա-ի 536 թ. նովելլայից հետո Երկրորդ Հայք էր անվանվում բոլորովին այլ տերիտորիա: Երկրորդ Հայքը հարավային սահմաններում ունեցել է «Գրունս երկու ելաներոյ յԱսորոց» («Աշխարհացոյց» էջ 25): Այս երկու լեռնանցքները գտնվել են՝ ա) Պուրամոս (Չահան) գետի կիրճում—բ) յուզ. Κόλιγδρος, արաբ. Darb maghārat-alkuhl, այժմ Ալ-Քուսուկ. և բ) հուն. Ἰλνυδία (Ptol. V, 7, 25), արաբ. Qlīsūrā de-Hadatā կամ Darb as-Salāma. Darb al-Hadat, գտնվում է այժմյան Հաղաթա գլուղից հարավ-արևմուտք, Ինկըլու գլուղից արևմուտք: Տե՛ս Ernst Honigmann. Die Ostgrenze des bizantinischen Reiches von 363 bis 1071. Bruxelles, 1935. S. 85—87.

Երնջակ ամրոց—Գ6—այժմյան Ալինջա-կալա ամրոցի ավերակները:

Երնջակ Գաւառ—Գ6—Սյունիքի 1-ին գավառը՝ շուրջ 600 կմ² տարածութեամբ. գրավում էր Երնջակ (այժմ՝ Ալինջա-չայ) գետի վերին հոսանքի շրջանը:

Երնջակ գետ—Գ6—այժմ Ալինջա-չայ:

Երուանդաշատ քաղաք—Բ5—կոչվել է նաև Մարմետ, այժմ՝ ավերակներ Բախշալար և Խերբեկլու գյուղերի միջև: Արշարունիք գավառը Երուանդաշատի քաղաքային տերիտորիան էր:

Այս քաղաքը երբեմն եղել է Այրարատի երուանդունի թագավորութեան մայրաքաղաքը. IV դ. այս քաղաքը Կամաւուրական նախարարական սահմի կենտրոնն էր:

Երուանդունի Գաւառ—Գ5—Վասպուրականի 12-րդ գավառը՝ 675 կմ² տարածութեամբ, Հայոց ձոր (Խաշար) գետի հովտում և Արտաշեսեան ու Դուկանի գավառների հետ միասին կոչվում էր Հայոց ձոր: Երուանդունիք անունն այս գավառը ստացել է հայկական արքայական հնագույն հարստութեան Արուանդունիներից, որնք ուրարտական գահի վրա բարձրացան Տուշպա-Վանում, մոտավորապես 625 թ. մ. թ. ա.: Այս գավառում էր գտնվում Հայք ամրոցը, որը կառվում էր առասպելական Հայկ նահապետի հետ, որի գործունեությունը, ըստ ավանդության, անցել էր այս հովտում և որի անունով էլ այն կոչվում էր Հայոց ձոր:

Երդոյիսաւա ալան—Գ2—Εἰδοίξανα (Ptol. V, 6, 20) պետի այժմյան Իդդելի գլուղի մոտ գտնվելը:

Եւմենիս աւան—Գ2—Սերաստիայից արևմուտք:

Երնիտրակետ քաղինք—Գ8—«Աշխարհացոյց»-ում սխալմամբ ցույց է աւելված իբրև առանձին գավառ, սակայն պետի գետի իբրև կրակապաշտների սրբավայր, որ նույն «Աշխարհացոյց»-ում մի այլ տեղ կոչվում է Գարառու քաղինք: Այս վայրը հիշում է Ագաթանգեղոսը (Ա, 22, էջ 18)՝ «Յօրն քաղինս մենեմիցն», որտեղ ուխտագնացություն էր կատարել Հայոց Խոսրով Ա Մեծ (217—238) թագավորը: Տե՛ս Գարառու քաղինք:

Եւպատրիա (Մագնուպալիս) քաղաք—Բ2—Իսիս և Գայլ գետի միասնաբանման տեղում:

Եւպոյեմն (Ապունիոն) գլուղ—Գ2—այժմյան Գելիբու-գաշ գլուղը:

Եւրպոս (Կարմեմիշ) քաղաք—Գ3—այժմ Զերարլուս քաղաք, նշանավոր Կարբեմիշ քաղաքի ավերակներից արևմուտք:

Եփեսոս քաղաք, տե՛ս Արաբիսոս:

Եփրատ գետ—Բ4—Ասուրա-բարելական սղրյուրների Purattiu գետը:

Չ

Չարգապոն գիւղ—Գ2—այժմ՝ Սարսապ գլուղ:

Չարա քաղաք—Գ2—այժմ էլ նույն անունով:

Չարասպ լեռն (3497)—Գ6—այժմ՝ Սիահ-կուհ:

Չապետա, տե՛ս Սոգուպետա:

Չարաւանդ Գաւառ—Գ6—Պարսկահայրի 8-րդ գավառը՝ շուրջ 500 կմ² տարածութեամբ, գրավում էր Կարմիր գետի ձախափնյա երկրամասը, այժմյան Զեյրավանդա գլուղի շրջակայքում: Ուրարտական ժամանակաշրջանում՝

Սարգսն Բ-ի արձանագրություններում հիշվող
Զարանդա երկիրը պիտի բնոգրվեր, բացի
Զարաւանդից, նաև Հնր և Մարանդ գավառ-
ները:

Զարաւանդ քաղաք—Գ6—այժմ՝ Զեյրափանդա
գյուղ:

Զարեհաւան գաւառ—Գ6—Պարսկահայքի 7-րդ գո-
ւառը՝ 1100 կմ² տարածութեամբ. համապա-
տասխանում է այժմյան Սպիմաստի մահա-
լին: Այս գավառը պիտի լիներ նոր-Շիրական
բղեղխութեան կենտրոնը հանդիսացող Զարե-
հաւան քաղաքի քաղաքային տերիտորիան:
Ըստ երեւելիին, այս գավառը Զարեհաւանեան
նախարարական տոհմի ժառանգական հայ-
րենիքն էր: Այս տոհմից պիտի նշանակվին
նոր-Շիրական երկրի բղեղինները:

Զարեհաւան Բաղա՛ Պարսկահայոց—Գ6—այժմ՝
Քյոհնա-շահար, ավերակներ Սալմաստի մոտ:

Զարեհաւան գիւղ—Բ5—այժմ՝ Զարաֆիսանն գյուղ:

Զարեհաւան Բաղա՛ Մաղկունի—Գ5—այժմ՝ Գիւա-
ղինից հյուսիս:

Զարիշատ Բաղա՛ Աղիոլիտի—Գ5—գտնվել է վանա
լճի հյուսիսային կողմը, այժմյան Նոլշատ
գյուղի տեղում: Ըստ երեւելիին, այս տեղում
է գտնվել ուրարտական արձանագրություն-
ներում հիշվող Ալի կրոնական կենտրոնը,
որի անունով էլ ամբողջ երկրամասը հայերի
մոտ կոչվեց Աղիոլիտ: Ալի անունը դարձավ
Զարիշատ, հավանաբար, Արտաշես Ա-ի օրոք
(189—161), որը այդպես կոչեց ի պատիվ
իր հոր՝ Զարեհի: Ստանալով «արքունի քա-
ղաքի» իրավունք, Զարիշատը պիտի ստանար,
իրեն քաղաքային տերիտորիա, Աղիոլիտ գա-
ւառի արևմտյան մասը, որը և «Աշխարհա-
ցոյց»-ում հիշատակվում է իրրի տուանձին
գավառ Տավրուբերան «աշխարհի» կազմում:

Զարիշատ Վանանդի աւան—Բ5—այժմ՝ Զարուշաղ
գյուղ, վերջերս վերանվանվել է Արփաշաղ:

Զաւ[դ]է[ֆ] գաւառ—Բ6—մեզ հասած ցուցակնե-
րում պահպանվել է Զաւ, ձևով, իբրև Արցա-
խի գավառներից մեկը, տե՛ս Սաւղ գաւառ:

Զաւլէֆ աւան, տե՛ս Սաւղ աւան:

Զաւէ տես՝ Զաւլէֆ գաւառ:

Զեւա քաղաք—Բ1—այժմյան Զիլէն:

Զեւգմա քաղաք—Դ2—Ζεῦμα. այժմյան Խույ-
փան գյուղի մոտ, նշանավոր գետանցք եփ-
րասի վրա: Զեւգմաչի գետանցքը հայտնի էր
հնագույն ժամանակներից: Այստեղ էր զբա-
նրվում Խալպու քաղաքը, որին տիրելու հա-

մար Ուրարտուի պետութունը կատարի պայ-
քար էր մզում Ասորեստանի դեմ:

[Զ]իգան[լուն] քաղաք—Ա5—մեզ հասել է աղ-
ճատված ձևով՝ Իգանի: Այս վայրը եղել է
եզերաց աշխարհի հայտնի կենտրոններից
մեկը, որի հիշատակութունը պահպանվել է
չստ սորյուրներում: Σιγανιον (Ptol. V, 9, 2),
Sicanabis (Tab. Peut.), Siganium (Anon.
Rav.), Σιγανιον (Georg. Cypr.) տեղագրվում
է այժմյան Սուջունա գուղի մոտերքը:

Զիգանա ամրոց—Բ3—այժմ էլ նույն անունով
գյուղ:

Զիգանա լեռնանցք (1960)—Բ3—այժմ էլ նույն ա-
նունով:

Զիգոն Բասիլիկոն կամ Զիգոն Բասիլեոն լեռան—
(Ζαγόν Βασιλειον, ὄρος)—Գ2—աղճատված բն-
թերցումներն են՝ Զիգոն Վասիլեոն, Իգոն Բա-
սիլեոն, բյուղ. Ζαγός, Անտիտափրոս լեռնա-
շղթայի արևելյան ճյուղավորութունը, որը
Արարիկից հարավ հասնում է մինչև Եփրատ
գետը և վերջանում Արածանիի գետաբերանի
գիմացու Ζαγόν Βασιλειον պիտի նշանակի «աւ-
րայական գիծ»: Այսպես պիտի կոչվեր այն
հնագույն գիծը՝ լեռնաշղթան, որը պատնեշ էր
հարավից, և քաղաքական կամ վարչական
սահման էր՝ սկսած Ուրարտուի ժամանակնե-
րից:

Զիմաւա աւան—Գ3—այժմ էլ նույն անունով գյուղ:

Զինբա ամրոց—Դ6—պիտի գտնվեր Շինակ լեռ-
նանցքի (1785) արևելյան մասուղյներից,
Փոքր Զար գետի ակունքների շրջանում:
Zintha հայերեն պիտի հնչեր «Շինակ» (ճիշտ
ընթերցումը պիտի լինի *Zinaca?). Արշակուն-
ցաց Մեծ Հայքի ամենահարավ-արևելյան ծայ-
րամասի սահմանումն էր գտնվում:

Զիբուն—Ա3—Առաջացել է հուն. Ζεγών ձևից
(Ζεγών—Ptol. V, 8, 12), ցեղանուն, վրաց.
ჯიჭვი Զիբնի և երկիրը՝ ჯიჭვი Զիբնի, որը
հալ մատնագրութեան մեջ պահպանել է
Վարդան պատմիչը:

Զոնլ (Զուլլ) բերդ—Դ5—այժմ՝ Զոնլ-կալասի:

է

էգեսա ամրոց—Դ1—Egeas, Ἄγαι—ամրոց և
նավահանգիստ, կոչվել է նաև Ալեքսանդրու-
պոլիս և Մակրինոպոլիս: XI—XIV դդ. Կիլիկ-
յան Հայաստանի գլխավոր նավահանգիստը.
Այս անունով. այժմ Ալաս գյուղաքաղաք:

էլեգիա (Ջերմուկ) ավան—Գ4—հոռն.-հոռմ. Ele-
geia: Բոլոր ժամանակներում հայտնի էր իր
բուժիչ շերմուկներով. այժմ Իլիջա գյուղ: Ան-
վան Elegeia ձևը առաջացել է հայերեն «ճղի-
գրն» բառից և կապվում է Հայկական լեռ-
նաշխարհում հաճախ պատահող եղեգնուտ-
ների գոյություն հետ:

էլեգիա ամբոց—Գ3—պիտի գտնվեր այժմյան
Ենիջն (սկզբնական ընթացքումը, բայց հրե-
վայթին, եղել է «Ելիջե») գյուղի մոտ: Ան-
տիկ ազդեցությունում պատահող այս ամբոցը
սովորաբար շփոթում են Կարինի մոտ գրե-
նըվող Ջերմուկ-էլեգիայի հետ:

էլի վանք—Դ6—այժմ էլ նույն անունով գյուղ:
էրախանի բերդ—Բ4—Մամիկոնյանների ոստանը
Տալքում, այժմ Իրխան կամ Իրկնիս գյուղ
Ճորոխ գետի աջ ափին, Թուխարք բերդից
հարավ:

Ը

Ըռնայ գաւառ—Գ6—կոչվում էր նաև Առնա.
Պարսկահայքի 5-րդ գավառը՝ շուրջ 250 կմ²
տարածութեամբ, գրավում էր Սասանոսի
լուսանցքից հյուսիս ընկած լեռնային շրջանը,
այժմյան Դերիկ վանքի շրջակայքում, Կենտ-
րոնն էր Առնայ վանք, այժմյան Դերիկ գյուղը:

Թ

Թաւասպարան ամբոց—Բ8—այժմ Թաբասարան.
այստեղ էին վերջանում Դարբանդի պա-
րիսպները:

Թաւասպարք ազգագաւառ—Բ7—Եղիշիի մոտ
Թաւասպարան, արաբ. Թաբասարան. այս-
պես էր կոչվում այժմյան թարասարանցիների
տերիտորիան: Թաբասարանցիների լեզուն
պատկանում է կովկասյան լեզվախմբի լեզ-
դիական խմբին:

Թաւր ամբոց—Բ5—վրաց. տառն Թոքի, հաջակ-
ված նաև միջին դարերում, իբրև Թոքիի
իշխանական տոհմի կենտրոն:

Թաւլիք գաւառ (Թոք, աղճատված ձևն է
Թուրգաւ. նաև պահպանվել է Թոք Գովա-
թիսի ձևով)—Բ5—վրաց. տառն Թոքի: Գուշա-
րիթիս-ժղալի հովտում: Այս գավառի տերի-
տորիան ճշտվի համընկնում է այժմյան Բոր-
ջոմի շրջանին. տարածութեւնն էր՝ 732 կմ²:

Թաւրեգ քաղաք—Գ7—այժմ Թավրիզ: Հայ մա-
տենագրութեան մեջ առաջին հիշատակու-
թեւնը պահպանվել է Փալստոս Բագանդի
մոտ:

Թեմիսկիրէ աւան—Բ2—Θεμισκουσι, այժմ՝ Թեմե
գյուղաքաղաք:

Թեքմոզոն գետ, տե՛ս Կալլ գետ:

Թեոգուպալիս (Կարնոյ քաղաք). տե՛ս Կարին
քաղաք:

Թիւանէք ավան—Ա6—այժմ էլ նույն անունով հա-
մանուն շրջանի կենտրոն:

Թիւանէք գաւառ—Ա6—վրաց. տոծոցտո. Թիւանէքի
համանուն ավանով, այժմ էլ նույն անունով
շրջան Իորի գետի սիւռնքների շրջանում:
Գավառի տարածութեւնն էր 200 կմ²:

Թման գյուղ—Դ5—Հսիսիսիյանց վարքում կոչ-
վում է Թըմնիս, հուն. Κομηθ Θεμανών, ասոր.
Θεμανον, արաբ. Θamanun. այժմ՝ Բեքմանցի
կամ Հեշտանե. գտնվում էր այժմյան Ջուղի-
Կաղ (հին Արարատ, Արարատ, Նիրուր) գա-
ղաթի հարավային փեշերին: Ըստ տեղական
ավանդութեան, Նոյի տապանը կանգ է առել
այդ գաղաթի վրա և Նոյը իր ազգով բնակու-
թեւն է հաստատել Թմանում: Այս վայրի
անունով ամբողջ Կորդուք գավառը կոչվել է
Թամնիսիս (Ταμωνιτισ—Ստրաբոն, XI, 14, 5):

Թմնիս (Տոմիս) բերդ—Գ3—ուրարտական ար-
ձանագրութեւնների Տումեիշիլի, հուն. Τόμισσα,
այժմյան Իզդրուն. հին ժամանակները շատ
հայտնի էր իբրև հիմնական գետանցք Անձ
Հայքից Փոքր Հայք և արևմուտք անցնելու
համար: Այս գետանցքի մոտ հիմնվեց Մելի-
տինե քաղաքը, որը իր կենտրոնական դիրքը
պահպանում էր շնորհիվ հիշյալ գետանցքի:
Թոնդրակ լեռան (3548)—Դ5—այժմ Թանդուրեկ,
մինչև այժմ գործող հրաբուխ:

Թոնդա գյուղ—Դ2—այժմ Թոնուզ գյուղ, Կարա-
Թոնուզ լեռնաշղթայի փեշերին:

Թոռնուաւ ավան—Դ6—Թոռնուաւ գավառի կենտ-
րոն, որը պիտի լինի Տավերնի ճանա-
պարհորդի մոտ հիշատակվող Darnavin վայ-
րը. հարկավոր է փնտրել Մարմետ գետի
վերին հոսանքում՝ Տաշ-Ռումի գյուղի
մոտերքը:

Թոռնուաւ գաւառ—Դ5—Դ6—Վասպուրականի
19-րդ գավառը՝ 1300 կմ² տարածութեամբ:

Թորգան գյուղ—Գ3—այժմ էլ նույն անունով
գյուղ:

Թուխարք կամ Թուխարիիս—Բ4—վրաց. տյեծ-
հոսն Թուխարիսի, բերդ Կղարջք գավառում,
այժմ՝ Նիրես գյուղ Տալքի սահմանին մոտ:

Թուշք ազգագաւառ—Ա6—վրաց. տյեծն Թուշնի
և կրկիրը՝ տյեծոտ Թուշնի, շուրջ 730 կմ²
տարածութեամբ: Պաղոմնոսի մոտ (V, 8, 13)
հիշվում է Τυδσοι ձևով, որ պիտի առաջա-
դած լինի հայերեն Թուշք-ից:

Թռեղք գաւառ—Բ5—Բ6—«Երկիրն Թռեղեաց կամ Ծաղկայ» (Ջոանչէր, Գ), վրաց. տրոսլոցոս Թրիալէրի, Պրինտոսի մաս կոչվում է Regio Thriare, այժմ՝ Թրիալէրի կամ Ծաղկայի շրջանը՝ 2195 կմ². տարածութեամբ: Թռեղքը Գուգարաց բոլորեցիական 5-րդ գավառն էր և 387 թ. մտնում էր Վրաց աշխարհի կազմում: Ըստ երեսօլթին այժմյան Ծաղկա անունը, որը մատենագիրների Ծաղկայն է, Թռեղք գավառի հետագա անունն է և իր ծագումով պիտի նույնը լինի, ինչ որ Ծաղկոսն, Ծաղկուկը, Ծաղկի և այլ տեղանունները, որոնք սովորաբար գտնվում են գետերի սկունքների մաս և կապ պետք է տեսնան ջրի պաշտամունքի հետ:

Թրաբի գաւառ—Դ6—Պարտահաւքի 3-րդ գավառը՝ 1200 կմ² տարածութեամբ, այժմ Թերզնվեռ՝ Բերդետուր-չալ գետի հովտում: Այս գավառում հայտնի էին՝ Որմի (այժմյան Ուրմիա) և Նախնաւան (այժմ Նախիջևան-Թեփիկ) քաղաքները:

Թրաբի գետ—Դ6—այժմ Բերդետուր-չալ:

Ի

Իշայր գաւառ—Գ6—Մոկաց նահանգի 1-ին գավառն էր 175 կմ² տարածութեամբ, այժմ կոչվում է Շնիճոր՝ Մոկսի և Խիզանի միջև: Այս գավառում միջին դարերում հայտնի էր Սուրբ կանանց վանքը, որը հետագայում կոչվում էր Սուրբ Խաչ վանք՝ Կեցան գետի ձախ ափին:

Իշխանաց գետ—Բ1—Տալքի ձախը գավառում: Հիշատակվում է կաթողիկոսական գավառանագրերից մեկում իբրև Երեսն Գ. Շինոզ կաթողիկոսի ծննդավայրը (տե՛ս Գ. Ինճի-ճեան, Ստորագր. հին Հայաստանագր., Վեներաթիկ, 1822, էջ 373). այժմ կոչվում է Իշխան, ճալունի իր ճարտարապետական կոթողով՝ Իշխանի աւանարով, որ կասուցել է Հայոց կաթողիկոս Երեսն Գ. Շինոզը VII դ.: Այս վայրը Մամիկոնյան առնմի ցուտոցն էր, որի պատճառով էլ զլուղը պիտի կոչվեր Իշխանանիստ գետը, իսկ ամբողջ շրջակայքը՝ Իշխանանիստ ձոր (Յակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, տե՛ս Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրութեանը XIII—XVIII դդ., հատ. Բ, Երևան, 1956, էջ 553):

Իշխան գետ—Գ7—Ներքին հոսանքը այժմ կոչվում է Կուրու-չալ:

Իշխանձոր—Գ3—Գլուզ՝ Իշխանձոր գետի սկունքների մաս:

Իշոց գաւառ—Դ5—Մոկաց նահանգի 3-րդ գավառն էր՝ շուրջ 302 կմ² տարածութեամբ, այժմ կոչվում է Սպարկերտ:

Իսիկեան ձոց—Դ1—լատ. Sinus Issicus, միջին դարերում կոչվում էր Հայոց ձոց, Աղեքսանդրեկի ձոց. այժմ՝ Ալեքսանդրեաի ձոց:

Իսու քաղաք—տե՛ս Սիստոն:

Իսիս գետ—Բ5—այժմյան Էշիլ-ըրմազ գետը:

Իւրայ (Կամբեն) գետ («Աշխարհացոյց»-ում, էջ 29, հիշվում է ազատված ձեռով՝ Կուրալ)—Բ6—կոչվել է նաև Կամբեն, վրաց. ճոճոճոց յոճոցոս Սիլիւարի: Կամբենիստ, այժմ Իորա կամ Իորի գետը:

Իփսելէ տան—Բ2—ըլուզ. 'Իփղէր, այժմ՝ Իփսիլե զլուզ:

Լ

Լազիլիկէ երկիր—Բ4—կա նաև Վազիլիկ ձեռը, որ համապատասխանում է հուն. Λαζυκή: Այս անունով է կոչվում Լազիկա թագավորութեան հիմնական երկրամասը: Համապատասխանում է հետագա Գուրիային:

Լարիսա քաղաք—Գ2—հուն. Λάρισα. Կենթաղբյուրում է այժմյան Մանջինրկ գլուզի տեղում:

Լեկք ազգազաւառ—Բ7—լատ. Leges, լեզգիների բնակութեան տեղաբնակներ:

Լեռնաղաշարն Զաւայտաց—Բ5—այսպես էր կոչվում Վերին Զաւայտքի Արուլ լեռան հարթալիս գագաթի շուրջը փոփոխ ալպյան լճերով հարուստ լեռնադաշտը:

Լեխ գետ—Ա5—վրաց. ლეხვი Լիախվի, Կուր գետի վտակներից մեկը:

Լերինք Տաւրոսի—Գ5—այսպես է կոչվում «Աշխարհացոյց»-ում Հայկական Տաւրոսի արևելյան մասը: Տե՛ս նաև Տաւրոս լեռն:

Լիւ կղզի—Գ5—Վանա լճի կղզիներից մեկը, այժմ էլ նույն անունով հայտնի վանքով: Լիւ կղզին համարվում էր Արեւբանի գավառում:

Լուսաքառին քաղաք—Գ3—այժմ Կապան-Մաղեն, Եփրատի ափին, Արածանիի գետաբերանից հարավ: Այժմ պահպանվել է Լուսաքառին կամ Լուսավորիչ գլուզ Զարոանջակի Փերին գավառակում (տե՛ս Հ. Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ բնաբան, հատ. Բ., Վեներաթիկ, 1907, էջ 11):

Լուփնա գետ—Բ6—այժմ Աղսաւ գետ:

Լփնիք ազգազաւառ («Աշխարհացոյց»-ում ազատված՝ Փեր ձեռով—Ա6—այսպես պիտի կոչվեր Այնրուլու Կախեթը (Գաղմա Կախեթի): Հայտնի էր Լփնաց քաղաքը (Λούβιογ

αμφης, Ptol. V, 10, 2), որը պիտի գտնվեր այժմյան Լափասների գյուղի տեղը, Լոպոտա վտակի գետաբերանի մոտ:

Հավանաբար, բիհնների անունը պահպանվել է Աղուան—Ալազան գետի երրորդ անվան մեջ՝ Лабань Լաբան (տե՛ս Книга Большому Чертежу, М.—Л., 1950, стр. 89):

Խ

Խաբուր գետ (Արևելյան Խաբուր) — Դ5 — այժմ՝ Խաբուր-սու, Մեծ Հայքի սահմանն էր Տիգրիսի հովտում:

Խաբուր գետ — Դ4 — այժմ էլ նույն անունով Եփրատի ձախ վտակը, Միջագետքի ներսում գտնվող ամենախոշոր ջրային ավազանը:

Խազիրք — Ա6 — Մոշոր ցեղային միություն՝ Քրագաղորուրիւն»:

Խայզան ամրոց — Բ8 — այժմ Խըզի գյուղ — այսպես էր կոչվում Խարուան կամ Խուրսան երկրի կենտրոնը:

Խալառյ ձոր — Բ4 — Ճորոխ գետի միջին հոսանքի հովիտը:

Խանցիխե գաւառ կամ Հուեարակիրա (աղճատված ձևերն են՝ Խանցիխ և Խանցիխ) — Բ6 — վրաց. ხედაბი Խուեանի, պետք է լիներ նաև ხანჯიხე Խանցիխե, որ չի վկայված: Խանցիխե կամ Հուեարակիրաը Գուգարաց բզեշխության 16-րդ գավառն էր, որը 387 թ. հետո ամբողջ Գուգարաց բզեշխության տերիտորիայի հետ անջատվել է Մեծ Հայքից և միացվել Վրաց աշխարհին: Այս գավառը գրավում էր Կուր և Քջիս գետերի միջև գոյություն ունեցող եռանկյանին, ունենալով 275 կմ² տարածություն: Գավառի կենտրոնն էր Հուեարակիրաը կամ Խանցիխե սահմանամերձ ամրոցը, որը համարվում էր քաղաք: Խանցիխե վրացիներն բառացի նշանակում է Խանքերդ, ուստի այս անվան հնագույն հիշատակությունը պիտի լինի Ստրաբոնի Χανης-ը, որը այժմյան Խրամի գետի անունը պիտի լինի:

Խանցիխե, տե՛ս Հուեարակիրա ամրոց:

Խառան քաղաք — Դ3 — այժմ էլ նույն անունով, աշխարհիս ամենահին քաղաքներից մեկն է:

Խարսիանա (Օրսա) աւան — Դ2 — այժմյան Խորսանա գյուղը:

Խարսիանոն բերդ — Դ1 — բյուզ. Χαρσιανόν χασσών այժմյան Մուշալը գյուղը:

Խերուրք ազգագաւառ — Ա7 — ըստ երևացիին Ավարական-Կոչուս (Аварское-Койсу) ակունքների Ջարմոթ վտակի ձորում:

Խեմաւք ազգագաւառ — Բ7 — այսպես պիտի կոչվին այժմյան Ախախ-չաչ վտակի Խնով առլում

ապրող բնակիչները, որոնք կազմում էին առանձին ցեղ:

Խեցի գաւառ, տե՛ս Եղնի (Խեցի) գաւառ:
Խերկ գաւառ — Բ6 — վրաց. ხეცჯი Խերկի, գտնվում էր Արազլիի ձախային վտակ Թեձամի գետակի ձորում 175 կմ² տարածություն ուներ: Թեձամի գետաբերանի մոտ էր գտնվում Ջանաւի գյուղը:

Խերպա գյուղ — Դ2 — գտնվում էր Արարիսոսի (Եփեսոսի) մոտ:

Խիսար, տե՛ս Բուււար:
Խիրս ամրոց — Բ8 — պիտի գտնվեր Գիլգիլ-չաչի գետաբերանի մոտ: Սրա անունով ամրոցը գավառը կոչվում էր Խարուան, Խարվան կամ Խուրսան:

Խնուեխ գետ — Դ4 — այժմյան Խնուս-չալը:
Խոզան բերդ — Ե4 — այժմ էլ նույն անունով, բյուզ. Χοζανος Պաղնատուն գավառում. ուրարտացիների ժամանակ կոչվում էր Խուզանա: Խոզմաւք, տե՛ս Ասպանեն գետ:

Խոլմադարա ամրոց — Դ3 — Χολμαδαρα, Cholmadara (Ptol. V, 14, 8) կոչվել է նաև Սերասաիւս. գտնվում էր այժմ Կյախտա-չաչ կոչվող վտակի գետաբերանի մոտ:

Խողմազ գաւառ — Բ7 — այժմ՝ Խաչմազ, Վարդաշենի շրջանում: Ընդհանուր տարածությունն էր մոտավորապես 1330 կմ²:

Խոյք գաւառ — 26 Տավրուրերան նահանգի 1-ին գավառը՝ շուրջ 1190 կմ² տարածությամբ: Այժմ հարսնի է Խուր անունով: Այստեղ էին ապրում քաջ լեւոնցի խուրեցիները՝ բյուզ. Χοδαίται:

Խոռխորունք գաւառ — Դ5 — Տավրուրերան նահանգի 16-րդ գավառը: Հայ մատենագիրների մոտ հիշվում է միայն Խոռխորունց ցեղախարական առնմը, իսկ իրրե գավառ չի հիշվում: Թվում է, թե ՔԱշխարհացոյց-ի հետագա խմբագիրներն են ավելացրել, իմանալով, որ Խոռխորունքների տոհմական գավառն է եղել նույն Բզնուեցիքը, համենայն դեպս Խոռխորունց գավառը պիտի գրտնըվեր Բզնուեցաց գավառից հյուսիս, Արծկից արևելք ընկնող շրջանում, որը մոտավորապես 1000 կմ² տարածություն ունի:

Խորձեան գաւառ — Դ4 — բյուզ. Χορξαινη — Չորրորդ Հայքի 1-ին գավառը, այժմյան Բըղի՝ Մեւս Գալլ գետի վերին ու միջին հոսանքի ձորահովիտը շուրջ 3450 կմ² տարածությամբ: Կենտրոնն էր Կողորբը կամ Կեղի (այժմ Բըղի) ավանը: Այս գավառում էր նաև Արտալիսոն ամրոցը (Հանգստուն գյուղի մոտ):

Սորձեան լեռան—Բ5—Կուր գետի ակունքներում, այժմ՝ Սորձիան:

Սորսվեմ պարիսպ—Բ8—արար. Սուրսանի պատվար—այսպես էր կոչվում այն պարիսպը, որը կառուցվել էր Գիլգիլ-շայի ձախ ասիին և բաժանում էր Շարուան ազգագրատար Սարուանից:

Սուեճք ազգագրատա—Ա7—«Աշխարհացոյց»-ում այս անվան աղճատված ձևը պիտի լինի Սուեք ցեղանունը: Սուեճկը (վրաց. ԵՅԾԵՈ Սուեճնի) բնակվում են մինչև այժմ Սուեճախ անունով հայտնի շրջանում, Ավարական-Կոյստ գետի կիրճում: Երանց այլ անունն է ավար, որը և ընդհանրացած է այժմ:

Սարուան ազգագրատա—Բ8—արար. Սուրսան կամ Սալգան. այսպես էր կոչվում Գիլգիլ-շայի և Սումգալիթ գետերի միջև գտնվող երկրամասը, որի տարածությունն էր մոտավորապես 1750 կմ²: VI դ. հայտնի էր իբրև առանձին ֆեոդալական իշխանություն, որի կառավարիչը կրում էր «Սուրսան-շահ» տիտղոսը: Այս իշխանությունը պիտի առաջ դար Սազքթաց քաղաքի շրջանի վերացումից հետո, մոտավորապես 510 թ.: Կենտրոնը պիտի գտնվեր Սալգան ամրոցում:

Ծ

Մաղկաւեա լեռան—Բ4—այժմ Դումլու-զազ լեռներ, որտեղ գտնվում են Եփրատ (Արևմտյան Եփրատ կամ Կարասու) գետի ակունքները (տե՛ս Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ. հատ. Բ, Երևան, 1956, էջ 577):

Մաղկուան գաւառ—Գ5—Ալլարատ նահանգի 7-րդ գավառը 675 կմ² տարածությունը: Ուրարտական ժամանակաշրջանում կոչվել է ԼսՅՑ, որից մնացել է Մաղկուան գավառի ուշ շրջանի իշխանական տան ներկայացուցիչների «Ալուզ» անունը (թե՛ս տիտղոսը):

Մաղկուան գավառը Արշակունիների ամառանոցն էր (ժողովրդ տեղիք), այստեղ էին գումարվում (Շահապիլվան աւանում), աշխարհագրողները և կատարվում նավաստրոյան տոներ:

Մամանգու (Մամնգա) ամրոց—Գ2—Մելիք-դադի գյուղի գլխին գտնվող Ջամանախ-կալեսի ամրոցը (ըստ Մ. Ճեփանհրճյանի):

Մամանգա գետ—Գ2—այժմ Ջամանախ-սու:

Մանախոյ ձոր գետ—Բ3—այժմյան Խարշիս գետի վերին հոսանքը (տե՛ս Վ. Ա. Հակոբյան, նույն աշխատությունը, էջ 552):

Մանարք ազգագրատա—Ա6—վրաց. Մանարձո Մանարնի, Σαναρζοι, Σαναροι (Ptol. V, 8, 13) Թերեք գետի ակունքների շրջանում, որը վրացիները կոչում էին ԵՅՅՈ-Մանարցոնոս, ԵՅՅՈ, Սեվի Մանարքիսա, Սեվի, այժմյան Կաղբեղի շրջանը, մոտավորապես 945 կմ² տարածությունը:

Մելքան դուռն—Ա6—այսպես էր կոչվում, ըստ երևույթի, այն անցքը, որը գտնվում էր այժմյան սոցիալիստական ճանապարհի վրա, Փասանուրի գյուղից վերև, որտեղ միախառնվում են Սպիտակ Արագվին և Սև (կամ Գուղամակար) Արագվին, կազմելով Արագւի գետը:

Մելքանք ազգագրատա—Ա6—վրաց. Մեջեջեջեճո Մալկանելի, բնակվում էին Արագվի գետի վերին հոսանքում, որը կոչվում էր Սպիտակ Արագվի: Սրանց սերիտորիան ընդգրկում էր շուրջ 535 կմ²:

Միպան կղզի—Գ5—այս կղզին պիտի գտնվեր այժմյան Աղարաղ հրվանդանի մոտ: Միջին դարերում այստեղ հայտնի էր «Միպնայ Ենապառ»: Ծիպան կղզին գտնվում էր Բղնունիք գավառում:

Միրանեաց լեռ (3173)—Բ4—այժմ Կանդիլ, Բասեն և Կարին գավառների սահմանում:

Միուկ գաւառ—Գ6—Միւնիքի 7-րդ գավառը՝ 1950 կմ² տարածությունը, համապատասխանում է այժմյան Սիսիանի շրջանին: Ծղուկ գավառը կոչվել է նաև Սիւնիք կամ Սիսական՝ նեղ իմաստով:

Մոր կամ Մով ամրոց—Բ6—վրաց. Մոթա Մովա, որի ավերակները գտնվում են նույնանուն Մովա գյուղի մոտ, Սաղախլու երկաթուղային կայարանից ոչ հեռու:

Մորէն գյուղ—Բ6—այժմ էլ նույն անունով:

Մորէնոր գաւառ (աղճատված ձևն է Մափան)—Բ6—վրաց. Մոթեճոճո Մորէնորի, համանուն Մորէն. գյուղով Արագվի գետի ձախ ասիին, ընդհանուր տարածությունն էր շուրջ 400 կմ²:

Մորուիք կամ Մուիուիք գաւառ—Բ6—Գագարաց բյուզնյան շրջանի 2-րդ գավառը՝ 450 կմ² տարածությունը. ընդգրկում էր Շուլավեր գետի հովիտը մինչև Ջորագեաը (այժմ՝ Դերեղ): Կենտրոնն էր Մոր ամրոցը, Մուիա գտակի վրա: 337 թ. մասնում էր Վրաց աշխարհի կազմում:

Մովակ Հիւսիսոյ, տե՛ս Յելի լին:

Մովք բերդ և կղզի—Գ3—այժմ Գյուլուկ կղզի համանուն երկաթուղային կայարանի մոտ: Այս Մովք ամրոցը չպետք է շփոթել միջին դարերում հայտնի կաթողիկոսանիսա Մովք գյուղի:

հետ, որը գտնվում էր Կիլիկյան Հայաստանի և Ասորիքի սահմանում, Ալեքսանդրի հյուսիս-արևմուտք, այժմյան Սոֆ-Քեոյ բնակավայրի տեղում (ըստ Ճեվահիրճյանի):

Մովք լին ԳՅ — այժմ Գյուլշուկ: Այստեղից էր սկսվում Արևմտյան Տիգրիսի արևմտյան բազուկը: Այս լիճը ուրարտական արձանագրություններում հիշվում է Մուա անունով:

Մովք կղզի, տե՛ս Մովք բերդ:

Մովա գետ — ԲՅ — փոքրիկ վտակ, որի ափին գտնվում էր Մովա կամ Մոք ամրոցը, այժմյան նույնանուն գյուղի մոտ:

Մովաց կողմն (Չորրորդ Հայք) — ԳՅ — ԳԿ — Մեծ Հայքի 2-րդ նահանգը, որը բաժանված էր 8 գավառների և ուներ 15890 կմ² տարածություն: Այս նահանգը ընդգրկում էր հելլենիստական ժամանակաշրջանի Մովաց քաղաքային տարածքի տերիտորիան, ուստի կոչվում էր Մովաց կողմն: 387 թ. հետո հիշյալ նահանգի տերիտորիան բաղկացած էր հինգ նախարարական տերություններից — սատրապիաններից, որոնք բյուզանդական օրենսդրական աղբյուրներում անվանվում են gens, այսինքն՝ «ազգեր»: Հուստինիանոս Ա-ի 536 թ. նովխայով Մովաց կողմը գտնում է առանձին պրովինցիա՝ Չորրորդ Հայք (Armenia Quarta) անունով:

Մովք Շահու Գեաց գաւառ — ԳՅ — կոչվել է նաև Մովք Շահի, Մովք Շահունի, հուն. Σοφρυγί, լատ. Sophenae, ուրարտական արձանագրություններում՝ Մուպանի, Չորրորդ Հայքի 5-րդ գավառն է՝ 2460 կմ² տարածությամբ: Այս գավառը Մովքի թագավորության կենտրոնական երկրամասն էր, որտեղ գտնվում էր Մովքի կենտրոնական սրբավայրը՝ Հեռապալիսը (այժմ Չմշկածաղ): Այս գավառը կոչվում էր Շահունի՝ արքայ թագավորական հարստության անունով:

Մուսինա (Չրմես, ձիմին) քաղաք, — ԳՅ — այժմ Ջիմին գյուղ:

Մուսղա քաղաք, տե՛ս Քաջատուն:

Մուքեր գաւառ (սեղխարհացոց) — ում հասել է ազատված Քեր ձևով, ճիշտ ընթերցումը պահպանվել է Ահոնգի մոտ) — ԲՅ — վրաց. შუქვათი Մուքերի, Իորի գետի հովտում, երծոյի և Կոխեթի մեջտեղում: Այս գավառում էր Կաձարիքի վայրը, որը Վերք թղթոցը պահպանել է այս անվան մի այլ՝ Կար ձևով: Այստեղ էր նստում գավառիսկայիսրպոսը, այժմ այս գյուղը կոչվում է Սամբա: Մուքեթ գավառի տարածությունն է շուրջ 250 կմ²:

Կարիրա քաղաք, տե՛ս Նեոկեսարիա:

Կազբբ ազգագաւառ — ԲՅ — այսպես պիտի կոչվեր Սուսայթ գետի օժանդակ Կոզլու-չալ ձորահովիտը, որը Բազկան երկրի մասն էր կազմում: Կազբ կամ Կասպ ցեղը վաղուց գոյություն չուներ, Կասպերի Caspianae երկիրը վաղուց այլ անուն էր կրում՝ Բաղասական կամ Փայտակարան, և միայն այս մոտացված կիսաանապատ լեռի ժայռերի շերտան էր, որ շարունակում էր կոչվել «Կազբբ»:

Կակամար, տե՛ս Պոնտոս ծով:

Կանկարար լեռ — ԴԵ — այժմ Կաչքար քաղաք (3937) Պարխարյան լեռներում:

Կաղզուան աւան — ԲՅ — այժմ էլ նույն անունով գյուղ, վրաց. აღგვეანბი Աղզելվանի, ուստ. Кагызман:

Կամախ աւան — ԳՅ — այժմ էլ նույն անունով Բեմախ, տե՛ս Անի:

Կամբեն գետ, տե՛ս Իւրայ գետ:

Կամբենան գաւառ — ԲԶ — Բ7 — այժմյան Շիրակի կիսաանապատային անջրդի դաշտավայրը, որի միջով հոսում էր միայն ամառվա շոգին հաղիվ գոյությունը պահպանող Կամբեն կամ Իւրայ (այժմ՝ Իորա կամ Իորի) գետը: Կամբենան գավառի ընդհանուր տարածությունն էր շուրջ 7510 կմ²:

Կամբիսեւ գետ — ըստ երևույթին, այսպես էր կոչվում այժմյան Դարա-սու գետը: Արարական աղբյուրներից կարելի է հետևցնել, որ Դարա-սու գետը կոչվել է՝ Ջառան, որ պարթևական Գառան ձևից պիտի առաջացած լինի: Քարտեզի վրա նշված է Գառ-աան ձևով — Գ7 —:

Կամուլիանա գիւղ — ԳԿ — այժմյան Կեմեր գյուղը: Կամիսա աւան — ԳԶ — այժմյան Կեմիս գյուղը:

Կանգարբ գաւառ — ԲԶ — վրաց. კანგარბი, ქვეყანა კანგარბისა Կանգարի, Քուեղանայ Կանգարիւայ: Գուգարաց բղիչխություն 6-րդ գավառը կենթադրաբար տեղադրում ենք Ոսկեպար գետի ձորահովտում: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, այս գավառի մակերեսի տարածությունը մոտավորապես 305 կմ² էր: Կանգարբ գավառը 387 թ. մտնում էր Վրաց աշխարհի կազմում մինչև IX դ.: Գագայ Սուր Սարգիսը (այժմյան Կորի գյուղի մոտ) համարվում էր Կանգարբ գավառում: Կան-

1 Տե՛ս Ա. Մ. Меликсет-беков, Грузинский извод сказания о поете «араджавор», Христ. Восток, т. V, вып. 2, Петроград, 1917, стр. 73—111.

գալաացի կամ Մթին լեռների անունը պահպանվել է այժմյան Մքնաձոր կամ Խավարաձոր անվան մեջ:

Կանգունար կամ Կանգունար, ամրոց— Գ5—Անձևվացիք գավառի կենտրոնը, այժմ Կենգեվեր գյուղ:

Կապաղակ քաղաք— Բ7—այժմ Կարլալ գյուղը, նիժ գլուղի մոտերքը: Առաջին անգամ հիշվում է Պլինիոսի մոտ Cabalaca ձևով, ապա Պաղոմենոսի մոտ (V, 11, 5) երկու ընթերցմամբ՝ Καβαλαχα (մեկ հատուկ է ազնավում՝ Θαβαλαχα ձևով) և Χαβαλα:

Կապ-կոն լեռն— Ա6—Բ8— այսպես էր կոչվում Գլխավոր Կովկասյան լեռնաշղթան:

Կապուտան ձուլ— Դ6—այժմ Ուրմիա կամ Ռեկոչև՝ Հայկական լեռնաշխարհի ամենամեծ լիճը, 3775 կմ² մակերեսով. երկայնությունը՝ 135 կմ, լայնությունը՝ 45 կմ, խորությունը՝ 15 մ, աղիությունը հասնում է 150—230‰: Կապուտան ձուլը բարձր է ձուլի մակերևույթի՝ 1330 մ: Այս լճի ալ սնունդն է Գաբիթեան, որ Կապուտան անվան տեղական ձևը պիտի լինի: Սարաբոնը (XI, 13, 2) այս լիճը հիշում է երկու անունով՝ Μαγναλύη և Καπώτα (ազնավում ձևն է՝ Σπαύτα) և նկատի ունենալով այս վերջին անունը՝ տալիս է նրա ստուգաբանությունը՝ Κωπνή ἐρητησίαια— «հույժ կապույտ», այսինքն՝ Կապուտան, որ լճի հալ-սլաքմական անունն է:

Կառափնոն գետ— Գ3—Փոքր Հայքում, եփրատի աջ օձանգսկը, որը թափվում էր եփրատում Համարա ամրոցի (այժմ՝ Ամբարշիկ գյուղ) մոտ:

Կառոմոսոս գետ— Գ1—Caromosos, Սարոս գետի աջ վտակը, որի վրա գտնվում էին Կոստոպոլ (այժմ Կյուրումզե) և Վահկա (այժմ՝ Ֆեկե) ամրոցները:

Կասե՝ գիւղ— Գ1—գյուղ. Κασι, Ենթադրաբար տեղադրվում է այժմյան Գեսի գլուղի տեղը:

Կասպի (Ուփլիս-ցիխե) բերդ— Բ6—վրաց. უფლის ციხე յանձնոս Ուփլիս-ցիխե Կասպիսա, այժմ Ուփլիս-ցիխե գյուղը, հռչակված իր վիճակի հռչակմանով:

Կասպիական գլուխը— Գ7—այժմ Սալավաթի լեռնանցք: Կեղծ Կալիթենիսի Վարք Ադիք-տանդրեձ երկում կարգում ենք. թի Կասպիական գլուխ մերձ յաշխարհն թալիշ ի գաւառն Գիլանայ: Կասպիական գլուխը մասին հաղորդում են նաև Ամմիանոս Մարկելլինոսը (XXIII, 6, 13) և Նիսեբիոս Կեսարացին (p. 190):

Կասպից ձուլ, որ է Վրկանաց ձուլ— Ա8—Գ8:

Կատարա գիւղ— Դ2—Մարաշից գեպի արևմուտք:

Կատարոյ լեռն— Գ4—այժմ Կատարին-թափա լեռ (2950):

Կառիշք ազգապաւառ— Գ7—հուն. Καρυσσιος ցեղը բնակվում էր Արդարիլից Ահար ձգվող Ղարասու գետի հովտի վերին մասում:

Կարբուցիք գաւառ— Դ6—Կորճեից նահանգի Գ-րդ գավառը՝ շուրջ 550 կմ² տարածութլամբ: Այժմ այս գավառի անունը հիշեցնում է Շեմ-գինանի Կատունի գյուղը:

Կարին գաւառ— Գ4—Բարձր Հայքի Գ-րդ գավառը՝ այժմյան Երզնկումի սանջակը, Սարաբոնի մոտ (XI, 14, 5) կոչվում է Καρυσσιος: Այսպես էր կոչվում Կարին ավանի, ապա քաղաքի անունով:

Կարին գավառը գրավում էր Կարնոյ դաշտը և մակերեսը հավասար էր 2275 կմ²: Այս գավառումն էին գտնվում Եփրատ գետի ակունքները:

Կարին քաղաք կամ Կարնոյ քաղաք— Գ4—այժմյան Երզնումը: Թեոդոս Բ Փոքրը (408—450) կատցեց մեծ ամրութլուններ, դարձնելով քաղաքը Բյուզանդական Հայաստանի ազդեական ու վարչական կենտրոն և կոչեց այն Թեոդոսուպոլիս, կոչվում էր նաև Թեոդուպոլիս (տես):

Միջին դարերում կոչվում էր Կարնոյ քաղաք, վրաց. კარნეჟ ქალაქი Կարնու քաղաքի, իսկ արաբները՝ Kall-Kala: XI դ. վերջից, Արծն քաղաքի՝ սելջուկների կողմից կործանմից հետո, Կարինը կոչվում էր նաև Arzan-ar-Rum, որից՝ Արզում և այժմյան Երզնում:

Կարմիր գետ— Գ6—այժմ՝ Ղըզըլ-չայ. վերին հասանքը կոչվում է Կոստրոց գետ, այժմ՝ Կոստր-չայ:

Կարմիր փորակ լեռան— Բ5—այժմ Ղըզըլ-գլա-գուկ (3022):

Կարնոյ քաղաք, տե՛ս Կարին քաղաք:

Կարուց բերդ— Բ5—Կարս քաղաքի հնագույն ամրութլունը, որը թերևս կառուցվել է ուրարտական ժամանակաշրջանում:

Կարքեֆիշ քաղաք, տե՛ս Եւրոպոս:

Կեղի, տե՛ս Կողարբրդ:

Կեսիոս գետ— Բ7—պետք է լինի այժմյան Գեոքչալ (Գըրըզման-չայ—Գարգման) գետը:

Կեսարիա Կապաղովկիոյ (Մաձակ) քաղաք— 21—Կապաղովկիայի հռչակավոր մայրաքաղաքը, որն այժմ կոչվում է Ղայսևրի:

Կերասուն, տե՛ս Փառնակիա:

Կերնակիա (Կարսակիա) աւան— Գ3—Gersagis (Hitt. Ant.) (հիշու ընթերցումը պիտի լինի Garsanis), այժմ՝ Գերջակիա գյուղ, վերջերս վերանվանվել է Ռեֆանիս:

Կեցան գետ—Գ5—այժմ Բեսան գետ:

Կեթիկ գաւառ—Գ5—Աղձնյաց բղիշխութեան 4-րդ գաւառը տեղադրւում է այժմյան Շիրվանի շրջանում, Մաղեն-սու գետակի ձորում, 352 կմ² տարածութեամբ:

Կիակիաս գետակ—Գ3—Փոքր Հայքում՝ Նիրատի աջ օժանդակը, համանուն վայրի մոտ:

Կիակիաս կայան—Գ3—«Աշխարհացոյց»-ում աղձատված Կաւկաս, Փոքր Հայքում, Նիրատի աջ ափին, հայանի իր ջերմուկներով և այժմ էլ կոչւում է Ջերմուկ (տաճկերեն Չերմիկ): Հոմեակական մղոնաչափերում կոչւում է Ciacas, ասուրա-բարեկական արձանագրութիւններում՝ Kia[kka]:

Կիր-ջուր գետ—Գ4—ըստ երևույթին այսպէս է կոչվել ուսսերեն լեզվով հրատարակված 200000-անոց քարտեզի վրա ГИД-СУ վտակը, որ թափւում է Գինեկ (այժմյան Գինեկ-սու) գետում: Այս գետի ափին պիտի գտնվեր Կիրառին ամրոցը:

Կիրառին ամրոց—Գ4—բյուզ. Κιραρζων. ըստ երևույթին, հետագայում կոչվել է ձապաղջուր:

Կիլիգա աւան—Դ2—արար. Killiz, այժմ՝ Քիլիս քաղաք:

Կիւռեստիկե պոռքը աշխարհ՝ Ասորիքի—Դ2—Κυρρεστίζή (Ptol. V, 14, 10). մի ժամանակ եղել է Կիւռու քաղաքի քաղաքային տերիտորիան, ապա վերջինս ընդարձակվել է և նրա մեջ մտել են Հերապալիս (Մամբուկ Մարուկ), Բեռիա (Խալիբոն) և Ագազ (Խազագ) քաղաքները:

Կիւռու աւան—Դ2—Κυρρεσ, Cŷrrhus (Ptol. V, 14, 10), այժմ՝ Բուրուս գյուղ:

Կիտեք գաւառ (մեկ հասկ է Խեք, Կոուէք բնթիւրցումներով—Բ6—վրաց. յեթցთი Կիտեքի (որից՝ յեթցեծი Կիտեքին ցեղանուն), յԵ-եցոտ Կուլեքի համապատասխանում է այժմյան Մագարեշուի շրջանին: Կիտեքը կամ Կուլեքը վրաց աշխարհի գաղտնեւորից մեկն է: Կուլեքում էր Բողիսի (այժմ՝ Նինո Ծմինգա գյուղ) ավանը և Ուժարմա (այժմ՝ Ուջարմա գյուղ) բերդաքաղաքը: Կուլեքի գավառի տարածութիւնն էր 550 կմ²:

Կլաւդիաս ամրոց—Գ3—հուն. Κλαυδία, Claudias, (Ptol. V, 6, 24), բյուզ. Κλαυδία, արար. Hisn Qalaudia, այժմյան Կեֆերդիս գյուղից հյուսիս, Նիրատի ափին:

Կլարջը—Բ4—վրաց. յլարჯցთი Կլարջեքի, հուն. Καλαρζήνη, Calarzene (Ptol. V, 12, 4): Գուգարաց բղիշխութեան 9-րդ գաւառը: 387 թվականից ամբողջ Գուգարքի հետ մտավ վրաց աշխարհի կազմում: Անդհեհեհ այս գաւառը

ժառանգական իշխանութիւն էր տեղական ֆեոդալական տոհմի, որի այսպէս ժառանգարար կրում էր «Ճանուարեք Կլարջքի» տիտղոսը և Կլարջք գավառն ըստ այժմ կոչւում էր «Ճանուարիբուքիւն Կլարջք» ԾճԵ-Ծ՛Րոծո յլարჯցոտեո—«Ճանուարորբ Կլարջեքիայ»: Գրաւում էր Շալշուրի (այժմ՝ Իմերետի) գետի ներքին հոսանքը: Միջին դարերում այստեղ հայանի էր Արտանուջ քաղաքը (այժմ՝ Ադա-կալն): Կլարջք գավառի տարածութիւնն էր 1280 կմ²: Կլարջք Շաւշէթի, Ներքին Ջաւախքի և Արտահան գաւառների հետ միասին կազմում էր Ստարաւնի (XI, 1, 18) Մոսչլաչ երկրի հալիական մասը, որը մի այլ տեղ Ստարաւնը (XI, 14, 4 անվանում է Մոսչլաչ):

Կղեսուրք լեռնանցք—Գ4—Κλαυδουρα. Տիգրիս (Ջերենե-սու) գետի սկունքների գեպի Արածանի գետի հովիտը տանող լեռնանցքը, որտեղ գտնւում էր համանուն Կղեսուրք ամրոցը:

Կղեսուրք ամրոց, տե՛ս Կղեսուրք լեռնանցք:

Կղեսուր ամրոց—Դ4—բյուզ. Κλαυδουρα ամրոց և լեռնանցք Քիտեքից հյուսիս:

Կոզովիտ գաւառ—Գ5—Այրարատ նահանգի 13-րդ գաւառը՝ 2460 կմ² տարածութեամբ, տարածական ժամանակաշրջանի Katarzae երկրին է համապատասխանում: Կենտրոնն էր Դարոյնք ամրոցը (այժմ՝ Հին Բալազիթ կամ Դոզու-Բարազիդ):

Կոկիսոն (Կուկուսա) քաղաք—Գ2—բյուզ. Κοκκισσος, այժմյան Գյոլբուսն:

Կոն ի Նեղար լեքիք—Դ4—այժմ՝ Ջերել Սինջար:

Կոն ի Նիհորական լեքիք—Դ6—Ջաղրոս լեռնաշղթան՝ Կորզվաց լեռներից մինչև Ջարասպ լեռը: Այս լեռնաշղթան հանդիսանում էր Պարսկահայք կամ Նոր-Նիրական աշխարհի արեւմտյան սահմանը:

Կոլ—Բ5—վրաց. յոլա Կոլա. Տալքի ստաջին գաւառը, այժմ Գյոլե, Կուր գետի սկունքների շրջանում: Կոլ գաւառի տարածութիւնն էր 1175 կմ²: Ուրարտական արձանագրութիւններում հայանի էր Kulha կամ Kolha ձևով:

Կոլ լեռն—Բ5—այժմ՝ Գյոլե լեռ:

Կողրաքար բերդ կամ Կողր բերդավան—Բ6—այժմյան Կողր գյուղը Եղեմբերյանի շրջանում: IX դ. վրացերեն «Սուրբ Գորբանի վարքում» Կողրը հիշատակւում է յոլեցաթառ Կոլիսաքարի ձևով, որ ստաջ է եկել հայերեն Կողրաքար ձևից:

Կողր աւան—Բ5—այժմ էլ նույն անունով հնուց հայանի իր աղահանքերով, այժմ վերանվանվել է Տուզլուզա:

Կողբայ գետ—Բ6—այժմ Ինչա-սու:

Կողբոխը գաւառ—Բ6—Գուգարաց բզեշխու-
թյան 3-րդ գավառը՝ 250 կմ² տարածութեամբ.
ընդգրկում էր Կողբայ գետի ձորանովիտը և
համապատասխանում էր այժմյան Եղիմբեր-
լանի շրջանին: Կենտրոնն էր Կողբ կամ Կող-
բաքար բերդավանը: 387 թ. մտավ Վրաց
աշխարհի կազմում մինչև IX դ.:

Կողբ գաւառ—Բ7—Արցախ նահանգի 14-րդ գա-
վառը: Այս գավառում էին մշակվում «քա-
րախուկի» ալտինըն շիբի հանքերը, որ
այժմ էլ հայտնի են Ձազլիկ կամ Փիլի գլու-
ղի մոտ: Այս գավառի տեղը որոշվում է այ-
ժմյան Գաստափուրի շրջանում և ընդգրկում
է շուրջ 1100 կմ² տարածութեան: Մեր տե-
ղաբույծները ճշտվում է Մխիթար Գոշի
ժամանակագրութեան վկայութեամբ. «Ստե-
փաննոս կայսրուպոս Կողթ գաւառին և քա-
ղաքին Շամքորոյն (Ղ. Ալիշան, Հայա-
պատմ., Վենետիկ, 1901, էջ 385): Կողբ
գավառի և Շամքոր քաղաքի կայսրուպոսի
նստոցը պիտի գտնվեր այժմյան Խաչակապ
գլուղում գտնվող Թարգմանչաց վանքում:

Կողմն Կարնոյ — մեծ Բարձր Հայք:

Կողբերդ (Կեղի) ամրոց — Գ4 — այժմ Բըղի գլուղ:

Կողոնիա քաղաք — Բ2 — անտիկ Koloneia, այժմ
Կոյլի-ճիսար գլուղը:

Կոմագենե — «Փոքր աշխարհ» — Գ2 — ստորա-բա-
րելական և սրարտական աղբյուրների Kum-
maġna, հուն. Κομμαγενή, լատ. Kommagene:
Հելլենիստական ժամանակաշրջանում առանձին
թագավորութուն՝ Շամուշառ (Σαμωδαρα) մայ-
րաքաղաքով, որտեղ գահակալում էին Երուան-
դունի հարստութեան շահապիղները:

Կուսի (Կասպի) գաւառ — Ա6 — Վերին աշխարհ Վը-
րաց երկրամասի գավառներից մեկը, վրաց.
კუსისი Կասպի¹, ընդգրկում էր Ռևխուլա գետի
հովիտը Ուվիխ-ցիխե Կասպիսա կամ Կասպի
ժայռախոր բերդաքաղաք կենտրոնով (այժմ
Ուվիխցիխե): Ընդհանուր տարածութունն էր
575 կմ²:

Կոռոմոզով բերդ — Գ1 — այժմյան Կարումզե գլուղը:

Կովկաս կամ Կաւկաս — Ա6 — Գլխավոր Կովկասյան
լեռնաշղթան:

Կովկաս Լերինք — Ա6 — այսպէս է կոչվում «Աշ-
խարհայոց»-ում Գլխավոր Կովկասյան լեռ-
նաշղթայի աջ մասը, որը Թերեք և Արագ-

վի գետերի շրջածանն է հանդիսանում. վրա-
ցիներն անվանում էին «Նաղիս մթա»:

Կովսակաւ գաւառ — Գ7 — Սյունիքի 12-րդ գավա-
ռը՝ 625 կմ² տարածութեամբ, համապատաս-
խանում է այժմյան Ջանդեղանի շրջանին:

Կոսա քաղաք — Ա5 — լայերը անվանում են Քորա-
լիս, վրաց. ქუთათისი Քութաթիսի կամ խո-
տաոնո Քութաթիսի քաղաքը: Միջին դարե-
րում Վերա-արխագական պետութեան մայ-
րաքաղաք:

Կոտայք գաւառ — Բ6 — Ալարատ նահանգի 16-րդ
գաւառը: Կոտայքը միակ գավառն է, որ պահ-
պանել է իր անունը իրրև շրջան: Այժմյան
Կոտայքի շրջանը համարյա նույն տերիտո-
րիան է ընդգրկում, շուրջ 860 կմ²:

Կոտիորա քաղաք — Բ2 — այժմյան Օրդու. նավա-
հանգիստը:

Կոտոր կամ Կոտորոց ամրոց — այժմ՝ Կոտուր: Կո-
տոր անունը, ինչպես և վերահիշյալ Kotiora-ն,
աննշուխուն պիտի ունենան ակադեմիկոս Կու-
մուրս լատի հետ, որ նշանակում է «սաման»:

Կոտորոյ գետ — Գ6 — այժմ՝ Կոտուր-չայ:

Կորդուք գաւառ — Գ5 — Կորճայք նահանգի 1-ին
գավառը՝ 5825 կմ² տարածութեամբ, լեռնալին
Երկիր՝ Ջերմ և Փոքր Սարուր գետերի միջև:
Այս գավառը Քահնոֆանի մոտ հիշվող կար-
դուխների (Καρδοχνοι) երկիրն է, հուն. Καρ-
δοχνοί, Իօթնդոչ, լատ. Corduene. առանձին
թագավորութուն էր՝ Փինակա մայրաքաղա-
քով (այժմ՝ Փինիկ գլուղ), որը նվաճեց Տիգ-
րան Մեծը և արևմտեան գարձալ Մեծ Հայքի
անրաժանելի մասը: Ասորա-բարելական աղբ.
Kurti, որ սովորաբար կարդում են Հաօի
կամ Babilj: Կորդուք գավառում էր Արա-
րալ սարը (ասորա-բարել. Arartu), որի հա-
րավալին ստորոտում գտնվում էր Թման
(Թմին) վայրը: Ստրաբոնը վերջինիս անու-
նով Կորդուքը կոչում է նաև Ταμουτις, որ
ասորա-բարելական արձանագրութունների
Tumni երկիրն է: Տև'ս Թման գիւղ:

Կորնայք նահանգ — Գ5 — հնագույն ձևն է՝ *Կորոնի-
նայք. Մեծ Հայքի 6-րդ նահանգն էր՝ 14707 կմ²
տարածութեամբ: Այս նահանգը Արշակունիսնե-
րի ժամանակ Մեծ Հայքի չորս բզեշխութուն-
ներից մեկն էր և կոչվում էր «Կորդուաց
(կամ Կորնից) բզեշխութիւն»: Կորդուաց
բզեշխը համարվում էր՝ «Երկրորդ սահմանա-
կալն յԱսորեստանայց կողմանէն»:

Կորդրիք Վերին գաւառ — Գ5 — Կորճայք նա-
հանգի 2-րդ գավառը՝ 1075 կմ² տարածու-
թեամբ, Արևելյան Սարուր գետի վերին հո-
սանքում, որտեղ հայտնի է Ալիի ամրոցը:

¹ Տե՛ս՝ Н. М. А р р, История передвижения яфетиче-
ских народов с юга на север Кавказа, Изв. Акад. наук,
1916, стр. 1392—93; Л. М е л и к с е т - Б е к, Введение в
историю государственных образований Юго-Кавказа,
Тифлис, 1924, стр. 91.

Կորդրիք Միջին գաւառ—ՊՅ—Կորճալք նահանգի 3-րդ գավառը՝ 1025 կմ² տարածութեամբ. Արևելյան Սարաբի միջին հոսանքի շրջանում:

Կորդրիք Ներքին գաւառ—ՊՅ—Կորճալք նահանգի 4-րդ գավառը՝ 625 կմ² տարածութեամբ. Արևելյան Սարաբի ստորին հոսանքի շրջանում:

Կորի գավառ—ՊՅ—Տուրուբերան նահանգի 15-րդ գաւառը, 548 կմ² տարածութեամբ. Կոչվել է նաև «Կորոյ ձոր», բլուզ. Κορζι բնագրիում էր Կորոյ ձոր գետի (այժմ՝ Քլոս-սու գերեւի) հովիտը՝ Սաչլու լճի շրջանը ներառելու:

Կորոյ ձոր գետ—ՊՅ—այժմյան Քլոս-սու-գերեւի գետակը, որը բխում է Սաչլու լճից:

Կոռնե ամրոց—ՊՅ—Κορνη, Corne (Ptol. V, 6, 24), պիտի գտնվեր Եփրատի աջ ափին, Շիրեմոյ գետի (ուսական քարտեզներում՝ Ширемой) խառնարկի մոտ:

Կուառս աւան—ՊՅ—այժմյան Կիրավի գլուզ՝ Մշո գաղտում:

Կուդրաք գեղաքաղաք—Ք6—այժմյան Կոճրեթի գլուզը Կախեթում:

Կուկուսա, տե՛ս Կոկիսոն քաղաք:

Կուղանովիտ գաւառ—ՊՅ—պետք է ենթադրել, որ հնագույն ձևն է *Կուղխանովիտ, որի հետ կապվում է Պաղոմեսոսի մոտ այս տեղերում հիշվող Κοιλχίς վայրը: Կուղանովիտը՝ Վասպուրականի 6-րդ գավառն է՝ 370 կմ² տարածութեամբ. զբաղում էր Կուղան գետակի (այժմ՝ Կելան-գարասի) ձորը:

Կուղան գետ—ՊՅ—այժմ Կելան-գարասի:

Կուճայրի ամրոց—Ք5—հետագայում Գլուճրի և Գուճրի, այժմ՝ Լենինական քաղաք:

Կուճաքսի որ է Ագուա գետ—Ա5—տառաչացի է հուն. Κορξαι ποταμός (Ptol. V, 8, 14), որ թարգմանաբար նշանակում է Ագուա գետ. պիտի լինի այժմյան Բզիրի գետը:

Կլուճաքս լեռան—Ա4—Κορξαι ποταμός, Corax mons (Ptol. V, 8, 8), այժմ՝ Բզիրի լեռնաշղթա:

Կուտեմուան, տե՛ս Վեդիմար (Կուտեմուան) քաղաք:

Կուր գետ—Ք5—ՊՅ—Վրաց. Ձոջյաճո Մտկուարի, անտիկ հեղինակների Cyrus-ը:

Կոնի բերդ—ՊՅ—Դեղիք գավառում, ենթադրաբար գետեղում ենք այժմյան Քարասարի տեղում:

Կաանի գետ—Ա6—այժմ՝ Քուանի գետ:

Կանիս-խեւ—(վկայված է աղճատված ձևերով՝ Խառնիս-խեւ, Կանիսիս)—Ա6—Վրաց. յեճոն եջցո, յեճոն եջցո Կանիս խեւի, Քուանիս խեւի. զբաղում էր Քուանի գետի միջին հոսանքի ձորահովիտը: Այս գավառը մտնում էր Վերին

աշխարհ Վրաց երկրամասի կազմում՝ ունենալով շուրջ 300 կմ² տարածութեան: Քուանի գետի ստորին հոսանքի շրջանը կազմում էր ստանձին գավառ Մուխնարի (Ձոճեճո, Ձոջեճո) անունով, այժմ՝ Մուխնարի հովիտ: Բալադորին այս գավառը կոչում է Քուլքիս, որի անունով այժմ էլ գլուզ գոյութեւն ունի: Այս գավառը «Աշխարհացոյց»-ը չի հիշում և համարվում է Բազալէք գավառի կազմում (տե՛ս):

Կրիախուրք գլուզ—Ք5—Կուղ գավառում, Կուր գետի տեղանքների շրջանում:

Կրեքեաց լեռնանցք—ՊՅ—Կալումերիկ-գաղ լեռան (2250) արևմտյան սիւներին գանձվող յուսնանցքը, որտեղով անցնում է Ջուլամերիկից դեպի Նորդուզ (այժմ՝ Մամուրեթլուրեսաթ) տանող ճանապարհը: Կրեքեաց լեռնանցքը գտնվել է Թովմա Արժուհու (III, I, Թ, էջ 260) մոտ հիշվող Կրեքեաց գավառում, որ համապատասխանում է ասորա-բաբելական արձանագրութեւնների Kirturi երկրին և համապատասխանում է «Պատմութեւն սրբոց Հոփսիսիկանց» վարքի «Բերկրացոց գաւառ»-ին (ճիշտ ընթացումը պիտի լինի՝ Բերկր[եր]ացոց գաւառ): Կրեքեաց—Կիրքուրի գավառը տեղագրվում է Լեվին-սու գետի հովտում:

Կրիս-խեւ (մեղ հասել է Կրիզլի աղճատված ձևով), կարող էր լինել [Մա]կ[ու]րիս խեւ—Ք6—Վրացերեն պիտի լիներ Ձոջյաճոն եջցո Մտկուրիս-խեւի, որ չի վկայված: Այս գաւառը Վերին աշխարհ Վրաց երկրամասի կազմումն էր մտնում և ընդհանուր տարածութեւնն էր 550 կմ²: Այս գավառը պիտի լիներ Վրաց աշխարհի մայրաքաղաք Մջխեքա-Արմազի քաղաքային տերիտորիան: Քարակղի վրա ցույց է տված [Մա]կուրիս խեւ ձևով:

Կրնուրք գաւառ—Պ6—հնագույն ձևն է՝ *Կորուրնուրիք, Վասպուրականի 21-րդ գավառը՝ շուրջ 800 կմ² տարածութեամբ. գտնվում էր Կոտոր գետի ակունքների շրջանում: Այս գավառի անունը պահպանվել է նախառեկուլցիոն շրջանի ուսական քարտեզներում հիշատակվող Гюрджевик և Курджан գլուզերի անուններում:

2

Հաբանդ գավառ—Պ7—Սլունիքի 8-րդ գավառը՝ 1325 կմ² տարածութեամբ. համապատասխանում է այժմյան Գորիսի շրջանին:

Հարանդ գաւառ--ԲՏ--պիտի տարբերել Սլունիքի Հարանդ և Արցախի Մեւս Հարանդ գավառներին: Այս գավառը հիշատակում է միայն Վարդան պատմիչը: Պիտի գտնվելը Շամախի քաղաքի շրջանում, որտեղ այժմ գտնվում է Մարազի գյուղը, որ հնագույն Ամարաս անունից պիտի ստաջ եկած լինի: Այստեղ էր Սաղբաւ կրօնական կենտրոնը, հետագայում՝ Սաղիանու վանք անունով հայտնի: Բայց այժմ, Հարանդ գավառը մտնում էր Բագրևան կրկրամասում:

Հարանդ Մեւս, տես Մեւս Հարանդ:
Հաղամակերտ աւան--Գ5--այժմ Բաշ-կալև. Արծրունի նախարարական տոհմի ստանն էր: Հալիս գետ--Բ1--Գ2--այժմ Ղրղը-Բրմազ գետը, որի վերին հոսանքը գտնվում էր Փոքր Հալքում: Խեթական ժամանակաշրջանում կոչվում էր Մարասանախա:

Հայոց ձոր գետ--Գ5--այժմ կոչվում է՝ ըստ ուսերեն հրատարակված տաճկական քարտեզի՝ Хавацур-Нахриачи--այսպես էր կոչվում Խոշար գետի միջին և ստորին հոսանքը:

Հայք ամբոց--Գ5--այժմ Խեք գյուղ Հայոց ձորում: Ավանդութունը այս տեղի հետ է կապում հայ ժողովրդի առասպելական նախահայր Հալիի դործանությունը: Խէք գյուղի մոտ գտնվում է Բել-սար լեռը, որի վրա իբր թե տեղի է ունեցել միամարտը Հայկի և Բելի միջև: Տես Հայոց ձոր:

Հայոց ձոր կրկրամաս--Գ5--այսպես էր կոչվում Հայոց ձորի հովիտը, որը ընդգրկում էր Երուանդունիք, Արաաշխեան (կամ Արաւանեան) և Գուկանք գավառները: Կենտրոնն էր Հայք ամբոցը, որի անունով, ըստ երևույթին, հայերի կողմից կոչվեց ամբոցը Հայաստանը Ուրարտուի պետության անկումից հետո:

Համարա ամբոց--Գ3--ասուրա-բարեկական արձանագրությունների Առուսուր, բյուզ. 'Αραχα, այժմյան Ամբարջիկ գյուղը:

Համրասի գաւառ--ԲՏ--այս գավառը ենթադրար տեղադրվում է Գարդման-չալ և Կոկիսոն (Գեորգ-չալ) գետերի սկունքների շրջանում: Ընդհանուր տարածությունը պիտի լիներ մոտավորապես 700 կմ²:

Հանի գավառ--Գ8--Փայտակարանի 5-րդ գավառը, 1620 կմ² տարածությամբ, այժմյան Թալիշում՝ Աստարա և Աղան-ոտ (այժմ՝ Ալանիա-չալ) գետերի միջև:

Հաշտասար լեռան, տես Յաշտասար:
Հաշտեանք գաւառ--Գ4--հնագույն ձևը պիտի լիներ *Յաշտեանք, հուն. 'Ασθισαγγή. Չորրորդ

Հայքի 2-րդ գավառն էր՝ 3750 կմ² տարածությունը: Այս գավառը ընդգրկում էր Արածանիի հովտի այն մասը, որտեղ թափվում էր Գինեկ գետը (այժմ՝ Գինեկ-սաւ), ներառյալ Հայկական Տավրոսի հարավային փեշերին գտնվող Արևմտյան Տիգրիսի արևելյան սկունքների շրջանը իր հաշակավոր լեռնանցքով: Այս գավառը ունի կարևոր սագմասարատեղիական նշանակություն և մինչև 387 թ. կազմում էր արքունի տան սեփականությունը:

Հարնլանք գաւառ--Գ7--արարական աղբյուրներում Խերխիլյան. Արցախի 6-րդ գավառն էր՝ շուրջ 325 կմ² տարածությամբ, գրավում էր Գլունդալան-չալ գետի հարավային կողմի տարածությունը:

Հարք գաւառ--Գ5--բլուզ. Χαρξ, արար. Al-Hark, Տաւրուրեան նահանգի 9-րդ գավառը՝ 2245 կմ² տարածությամբ. համապատասխանում է այժմյան Բուլանքիս շրջանին:

Հացիւն գյուղ--Գ6--այժմյան Հայսուն գյուղը Արտազում:

Հաւեանք աւան--Գ4--այժմ Ալբան գյուղ Մշո գաշտում:

Հաւեունիք գաւառ--Գ5--Ալբարատ նահանգի 4-րդ գավառը, շուրջ 1400 կմ² տարածություն, ուներ համանուն Հաւեիկ (*Յաւեիկ կամ Ավեիկ) ավանը և բերքը: Հաւեունիք անունը պիտի կապ ունենա Դիոգորոս Սիկիլիացու մոտ հիշվող Χαοί ցեղի անվան հետ, որ պիտի նույն յայտնի կամ ճիշտ է թնիկական անունը լինի (հմմտ. հայր-հաւ, իբրև ճեպիցիք և հայ-հայոց-հաւուց): Հայտնի էր Հաւեունի նախարարական տոհմը:

Հացեկ կամ Հացեկաց գիւղ--Գ4--այժմ Հացիկ, Մեւրոպ Մաշտոցի (361--440) ծննդավայրը: Հեմեաաակք աղագագաւառ--Ա7--տեղադրում ենք ենթադրարար Գերբեղից հլուսիս:

Հեջերի գաւառ--Բ7--անունը պահպանել է այժմ Ուջարի անունով հայտնի երկաթուղային կայարանը: Այս գավառը գրավում էր Շիրվանի տափարախի հիմնական մասը, 4900 կմ² տարածությամբ: Հավանարար, այս գավառը կոչվել է նաև Գաշտ ի Բաղկան (տես):

Հերակլայ հրուանդան, տես Հրուանդան Հերակլայ: Հերակլուպալիս աւան--Բ2--'Ηερακλειουπολις, Πηδαγγοί, տեղադրվում է այժմյան Բուպուշտուն գյուղի տեղը:

Հերապալիս աւան--Գ5--Ծոփք Շահունի գավառում. Ծոփաց աշխարհի հնագույն կենտրոնն է, թերևս ուրարտական արձանագրու-

թյուններում իբրև բնակավայր հիշվող «Մու-
պանի» վայրն է:

Հերապոլիս քաղաք (Մամբուկ, Մարուկ)— ԳՅ —
Ատորիքի խոշորագույն կենտրոններից մեկը,
հայտնի իր մեհյանով: Այժմ Մեմֆիս:

Հեր գաւառ— ԳԵ — Պարսկահայքի 9-րդ գավառը՝
1125 կմ² տարածությամբ, Հէր քաղաքի
(այժմ Սոյ) քաղաքային տերիտորիան պիտի
լիներ: Միջին դարերում Հեր և Ջարաւանդ
գավառները կազմում էին մեկ գաւառ՝ Ռու-
կաց գաւառ անունով:

Հեր քաղաք— ԳԵ — այժմ՝ Սոյ, ուրարտական ժա-
մանակաշրջանում այս քաղաքի տեղում պի-
տի գտնվեր Սարգոն Բ-ի արձանագրություն-
ներում հիշված Սիս քաղաքը (հայերեն՝
«Ուղիս»): Դարեհ Ա-ի Բիսիթունի արձանա-
գրության մեջ հիշվում է էլամական վերսիա-
լում՝ Hujāwa, որ Սոյ քաղաքի արարական
անվան՝ Huweja ձևին է մոտենում: Ըստ
Մարկլարտի՝ հայերեն «Հէր» և «Եիք» ձևերը
առաջացել են մեդական Hēd կամ Xēd ձև-
վից: Հէր քաղաքի գաշտավայրը կոչվում էր
«Եիքական դաշտ»:

Հերան կամ Իրան— ԲՑ — արար. էլ-իրան և աղճատ-
ված կիրան: Տե՛ս Բագկան:

Հիսպա աւան— ԳՅ — Hispa (Tab. Peut.) կայսրանը
Zimara-Melentenis (Melitene) ճանապարհի
վրա, այժմյան Սարաջիկ գյուղի տեղում (H.
Адоиц, Армения в эпоху Юстиниана,
СПб., 1908, стр. 80).

Հոռերերդ— ԳՅ — այժմ Խարբերդ, Սարվաթ քաղաք,
անտիկ Ziata, արար. Hisn Ziad:

Հուեարակերտ ամրոց և քաղաք— ԲԵ — Խուեան
կամ Քուեանակերտ, վրաց. ხუეანო ხონიანი
և მტკვრისცობე მთლიური-ցიქსე. կոչվել է
հակ եճճցոեց Խանցիքսե, որ չի ավանդված:
Խանցիքսե առաջացել է Սան գետի անունից,
որ պահպանել է Սարարոնը՝ Xáγος, հավա-
նարար հետագա Քցիա (Խրամ), որի գետա-
բերանի մոտ, այժմյան Ղզղալալի և «Կու-
րած կամուրջի» մոտ գտնվում էր հիշյալ ամ-
րոցը: Հունարակերտը գտնվում էր Մեծ Հայ-
քի, Վերքի և Աղվանքի սահմանների հատ-
ման կետում:

Հունարակերտը կայսրպոստանիստ էր,
որի հոգևոր պետը մասնակցել է Դիլինի
502 թ. հակաքաղկեդոնական ժողովին:

Հուր, տե՛ս Քաջաց-քաղաք:

Հրազդան գետ— ԲԵ — այժմ էլ հույն անունով:
ուրարտական արձանագրություններում հի-
շատակվում է Hidaruni ձևով:

Հրաքու-Պերոմ գաւառ— ԲԴ — Փայտակարան հա-
հանգի 1-ին գավառը՝ 3650 կմ² տարածու-
թյամբ զբաղում էր այժմյան Միլի գաշալը,
և Փայտակարան քաղաքի քաղաքային տերի-
տորիան պիտի լիներ: Այս գավառը կոչվել է
հակ Ռուքստակ:

Հրուանդան Հերակլայ— ԲԴ — այժմ Էրեզլի-Բու-
րուն:

Հրուանդան Յասուլցի— ԲԶ — այժմ Յասուն-Բու-
րուն:

Չ

Ձեյ[ե]թ գաւառ— ԲԵ — վրաց. ძველეთი მხეპრი, կոչ-
վել է հակ Եյշոճոցთո Սկուիրեթի (հայերեն
Սակուրեթ, տե՛ս Ասողիկ, III, ԻԸ, այստեղ
գտնվող Սակուրեթ բերդը 986 թ. Մմբատ Բ
Տիկղերակալի ավատն էր): Այս գավառը բնդ-
ղբրվում էր Սկվիրեթիս-Վերե (այժմ՝ Վերա)
գետի հովիտը, որի գետաբերանում, Թրիլի-
սիի այժմյան տերիտորիայի վրա, Լուրջ մո-
նաստերի տեղում գտնվում էր Ձեյեթի ամ-
րոցը, որը Պաղոմեոսի մոտ (V, 10, 2) հիշ-
վող Հάλιππα-ն պիտի լինի: Այս գավառի տե-
րիտորիան 250 կմ² էր:

Ձիրահանից սար լեռ— ԲԵ — ըստ Կրեուլթին, այս-
պես էր կոչվում ձիթահանքի համար լավա-
գույն քար արտադրելու պատճառով: Պիտի
լինի Մեծ Մարմիսը (3082):

Ձիւնկերտ քաղաք— ԳԴ — կոչվում էր հակ Պորպէս,
այժմ՝ Սարարա-Բարրաս, Բողլան գետակի
հովտում:

Ձորագետ— ԲԵ — այժմյան Դերեղը: Այժմ սխալմամբ
Ձորագետ են կոչում Տաշրայ ջուր գետը:

Ձորապահակ (Տարոյ բերան) լեռնանցք— ԳԴ —
բուդ. Κλειστόρα Βαλαχίστων, այժմ Բիքլիսի
կամ Ռահվա լեռնանցք, Բաղեշից հյուսիս:
Հայկական Տավրոսի գլխավոր անցքերից մե-
կը, որի անունով, ըստ Կրեուլթին, կոչվել է
մի ամբողջ հահանգ՝ Տարուրեթրան:

Ձոր բնձայից, տե՛ս Անձայի ձոր գաւառ:

Ձորուիր գաւառ— ԲԵ — Ձորագետի (այժմ Դերեղ)
խորածորի հովիտը 475 կմ² տարածությամբ,
ընդգրկում էր այժմյան Արավիրդու շրջանի
մեծ մասը՝ 387 թ. մտնում էր Վրաց աշ-
խարհի կազմում մինչև IX դ.: Ձորուիր գա-
վառը Գուգարաց բղեջնության 1-ին գավառն

¹ Տե՛ս С. Н. Какабадзе, К истории названия
города Тифлиса, „Исторический сборник“, изд. Централ-
хива Грузии, кн. 2, Тифлис. 1928, стр. 60—67.

էր Այս գավառը միջին դարերում կոչվում էր Զորագետ, վրաց. ժոժոռայթօ Զորոկեթախ: Զորք գաւառ— Գ7—Սյունիքի 10-րդ գավառը՝ 525 կմ² տարածութեամբ. գրավում էր Ողջի գետի ակունքների շրջանը:

Ղ

Ղազիւ, տե՛ս Ղազիւիկէ:
Ղազիւիկէ, տե՛ս կազիւիկէ:
Ղեկք ազգադաւառ—Բ7, այժմյան լեզգիների բնակութեան հիմնական տերիտորիան:

Ճ

Ճակաաք գաւառ—Գ5—Այրարատ նահանգի 11-րդ գավառն էր՝ շուրջ 825 կմ² տարածութեամբ Գանձում էր Վարդաւազը և Ագարակ վտակների հովտում: Կենտրոնն էր Կողբ աւանը, հայտնի իր պահանքերով:
Ճակք—Բ5—Տալքի 4-րդ գավառը, վրաց. ჯავიჯთი, չձայնո ճակիկերի, Ջաղնի, գտնվում էր Բոխտ գետի (այժմ՝ Օլթի-չայ) և Ճորոխ գետի կոանկրնում: Այս գավառումն էին գտնվում Մամիկոնյան նախարարական տան կենտրոնները Էրախանի, Տայոց-քար ամրոցները և Իշխանաց գյուղը: Ճակք գավառի տարածութունն էր 1172 կմ²: Հետագայում այս գավառը կոչվում էր Իշխանաբլիս անունով:
Ճահուկ ամրոց—Գ6—այժմ Ջահրի գյուղ:
Ճահուկ ամրոց. տե՛ս Ագարակ (Ճահուկ) ամրոցը:
Ճահուկ գաւառ—Դ5—Կորճեից նահանգի 10-րդ գավառը՝ 2450 կմ² տարածութեամբ, գտնվում էր Ջավ գետի վերին հոսանքում, այժմյան Ջուլամիքի շրջանում: Այստեղ հայտնի էր Ջլմար ամրոցը (այժմ Ջուլամիքի):
Ճահուկ գաւառ—Գ6—Ճահուկ (այժմ՝ Ջահրի) և Շահապոն (այժմ՝ Շահրուզ) գետերի հովտների շրջանը: Սյունիքի 2-րդ գավառը՝ 1130 կմ² տարածութեամբ:
Ճահուկ գետ—Գ6—այժմ՝ Ջահրի-չայ:
Ճանիւ (Խաղախք)—Բ4—կա և Ճանիկ ձևը, Ճանիկ (*Ճանիւիկէ), որ գալիս է հուն. Σανιά-ից, վրաց. ჯიხვიჯო Ճանեքի, այժմ կազիստան:
Ճիղբք ազգադաւառ—Ա6—հուն. Σιλβίοι, լատ. Silvi: Այս ցեղի տերիտորիան գտնվում էր Պիրիքիթիկի-Ալազանի խորածորում (տե՛ս Запнски Ил-та востоковед. АН СССР, вып. VII, М.—Л., 1939, стр. 148—149).
Ճորայ պահակ, տե՛ս Չորայ քաղաք:
Ճորոխ գետ, տե՛ս Ակաւսիս:
Ճուարշ-ոտ (Ճուաշ-ոտ) գաւառ—Գ6—Վասպու-

րականի 20-րդ գավառը՝ 3650 կմ², գրավում էր Ճարշ-ոտ (այժմ՝ Աղ-չայ) գետի ընգարծակ հովիտը:
Ճուարշ-ոտ գետ—Գ6—այժմ՝ Աղ-չայ գետ:

Մ

Մարուկ կամ Մամբուկ, տե՛ս Հերապալիս քաղաք:
Մագնուպալիս, տե՛ս Եւպատորիա քաղաք:
Մագազ գաւառ—Բ6—Այրարատ նահանգի 17-րդ գավառն էր, այժմյան Հրազդանի և Սևանի շրջանների այն մասը, որը պարփակված էր Հրազդան գետի և Գեղմազան (այժմ՝ Աղմազան) հրաբխալին գանգովածի միջև: Ընդհանուր տարածութունն էր 680 կմ²:
Մագրուքք ազգադաւառ—Բ3—արար. Մասրաք, հետագայում՝ Մուսկուր, Մուշկուր. այսպես էր կոչվում Չոպ երկրի ծովկղրա մասը, որ Մագրքաց Արշակունիների թագավորության կենտրոնական երկրամասն էր: Մագրուքների պատկանում էին սկյութա-սարմատական-իրանական ցեղերի խմբին:
Մագրուքք բնակավայր—Բ8—արար. Մասրաք, այժմ Մախսուդ-քենդ գյուղը՝ Ագրբեջանական ՍՍՌ Խուզաթի շրջանում:
Մամակ, տե՛ս Կեսարիա Կապադովկիոյ:
Մամակեքրա բերդ—Բ5—այժմ Մժնկեքրա գյուղ:
Մակու բերդ—Գ6—այժմ էլ նույն անունով Արտազ գավառի կենտրոնն էր:
Մահարձ—գետ—Դ6—այժմ՝ Մարջան-ոտ:
Մահկեքրա-տուն (Մարձին) գաւառ—Դ6—այժմ Ռեվանդուզ, Մեծ Հայքի մաննահարալալին ծայրամասը, որի արևելյան սահմանին գրտնրվում էր Zintha սահմանամերձ պարսկական ամրոցը: Մահկեքրա-տունը կոչվում էր նաև Մարձին և գտնվում էր այժմյան Ռեվանդուզից հյուսիս, ունենալով 2002 կմ² տարածութուն: Մինչև 363 թ. մտնում էր Նոր-Շիրակյանի ղրեշխութեան կազմում:
Մաղխազան աւան—Գ6—այժմ Մահլա գյուղ Հեր (Սոյ) քաղաքի մոտ: Հեր քաղաքի վերականգն—ժառանգալիս. մաղխազի իրավասութեան ներքո գտնվող վայր էր, ուստի կոչվում էր Մաղխազան:
Մանգակեքրա, տե՛ս Մանաւազակեքրա քաղաք:
Մանակեքրա ցամաքակղզի, քարտեղի վրա չի նըշված, տե՛ս Բառն Մանակեքրաի:
Մանանաղի գաւառ—Գ4—Բարձր Հայքի 5-րդ գավառը: Ուշ շրջանում կոչվել է Լակոյ անունով և կերպիւն Կերքան, այժմ Տուրլու: Գավառի ընդհանուր տարածութունն է՝ 2775 կմ²: Այս

դավառում հայտնի էր Վժան քաղաքը: Միջին դարերում այս գավառը հայտնի էր իբրև պավլիկյանների կենտրոն:

Մանանադի գետ—ԳՎ—այժմ Թուզլու-չայ:

Մանուազակեքտ քաղաք—ԳՅ—հետագայում կոչվում էր Մանազկեքտ: Ուրարտական արձանագրություններում հիշվում է Menizalani ձևով: Բյուզանդական աղբյուրներում կոչվում է՝ Μαντζουζου, այժմ՝ Մելազկեքտ:

Մանգլեաց Սուրբ Խաչ—ԲԾ—այսպես էր հայտնի Հայաստանում Մանգլիս ավանը իր հուշակավոր Սուրբ Խաչ տաճարի պատճառով: Այստեղ էր նստում «Մանգլեի» արտոգործ կրող եպիսկոպոսը («Գիրք Թղթոցը» կոչում է «Մանգլեաց»), որը մասնակցել է 506 թ. Վաղարշապատի հակաքաղկեդոնական ժողովին: Մանգլիսը հայերեն Անգլ—Անգղ անվան վրացական ձևն է:

Մանգլեաց փոյ գառու—ԲԶ—վրաց. მანგლობის Եջո Մանգլիսիս-խելի, Գուգարաց բռնապետության 14-րդ գավառը Ալ գետի (Ալչեթի) ձորանովտում, 925 կմ² տարածություն: Հավանորար, 363 թ. հետո, անշատկելով Գուգարքից միացվել է Վրաց աշխարհին:

Մանգա գիւղ—Գ1—բլուզ. Μανγα կամ 'Αγαγγια, այժմ՝ Աղբնաս գյուղը:

Մանուիլք—ԱՅ—հրկրանան՝ Μανραλι (Ptol. V, 9, 4): Թերևս այս անունը պահպանվել է Մարեիսի գյուղի անվան մեջ: «Աշխարհացոյց»-ի հեղինակը այս անունը վերցրել է Պարսիստից, սակայն իրեն համար պարզ է, թե իր ժամանակվա որ հրկրամասին է համապատասխանում: Մենք քարտեզի վրա նշում ենք Լեթադրարար:

Մասեաց ուռն գառու—Գ6—Ալբարատ հանանգի 12-րդ գավառը, զբաղվում էր Մեծ և Փոքր Մասիս գագաթների հյուսիսային ու արևելյան փեշերը՝ Սուրմալուի դաշտը՝ 2800 կմ² տարածություն: Համապատասխանում էր Ուրարտական ժամանակաշրջանի էրիկուալի կամ Իրիուա հրկրին:

Մասիս լեռն, տե՛ս Փոքր Մասիս լեռն:

Մասիոն լեռինք—Դ4—հուն. Μάσιος, կամ 'Ιαζα όρος=Μάσιον όρος, Masius mons (Ptol. V, 17, 2), սուրբ-բարեխաղի աղբյուրների Kassiarri լեռները: Ստորինները կոչում էին túra de Sala.

Մարակեքտ աւան—Գ6—այժմյան Մարաքենդ գյուղը:

Մարիկապալիս (Շիրակաշատ) աւան—Բ5—այժմ Մավրակ գյուղ: Այսպես է կոչվել Շիրակաշատ ավանն ի պատիվ Մավրիկիոս կաշ-

ուր (578—602): Հավանորար, 591 թվականից հետո Թեոփոսուպոլիս-Կարինից փոխադրվեց այստեղ բյուզանդական սպանական կենտրոնը, որը հսկում էր Հայաստանին ու Վրաց աշխարհին:

Մարանդ գառու—տե՛ս Բարբան (Մարանդ) գառու:

Մարանդ գետ—Գ6—այժմ Զիլիբ-չայ:

Մարանդ քաղաք—Գ6—այժմ էլ նույն անունով:

Մարաշ քաղաք, տե՛ս Գերմանիկե (Մարաշ):

Մարաւան աւան—Գ6—ըստ երևույթին, պիտի փնտրել այժմյան Նորաշենի տեղում:

Մարաց ամուր աշխարհ—այսպես պիտի կոչվեր Նիխորական, Մանկեքտ-տուն և Գասն գավառների տերիտորիան 7327 կմ² ընդհանուր տարածությամբ: Բարտեզի վրա չի նշված:

Մարդաւան գառու—Գ6—Սերուսի մոտ կոչվում է Մարդուցայք, Վասպուրականի 14-րդ գավառն է՝ 1265 կմ² տարածությամբ: Գորնվում էր Մակու քաղաքից գետի արևմուտք, Վասպուրականի (Կոտուրի) լեռների արևելյան փեշերին:

Մարգալի գառու—Գ4—Տուրուբերան հանանգի 5-րդ գավառը, այժմ՝ Թեքման, շուրջ 2900 կմ² տարածություն: Այստեղից՝ Սերմանց (Բյուրակն) լեռան հյուսիս-արևմտյան փեշերից, սկիզբ էր առնում Եգր (այժմ՝ Էգրի-չայ) գետը, որ Երասխ գետի սկիզբն էր: Ըստ երևույթին՝ Մարգալի անունը առաջացել է «Մարդ» ցեղի անունից, իսկ Վաղիճ վերջավորությունը պիտի ծագած լինի ուրարտական ձևի՝ Վաղիսիճ բառից:

Մարդե բերդ—Դ4—այժմ Մարդին քաղաք:

Մարդուցայք, տե՛ս Մարդաւան գառու:

Մարի գառու—Գ6—Պարսկահայքի 2-րդ գավառը՝ 1855 կմ² տարածություն, այժմ Մերգեվեո՝ Բարանդուզ-չայ հովտում: Այս գավառումն էր Շիրական գյուղը (տե՛ս):

Մարի գետ—Գ6—այժմ՝ Բարանդուզ-չայ:

Մարմետ գետ—Գ5—այժմ՝ Կարա-սու:

Մարաիբուպալիս քաղաք, տե՛ս Նփուետ կամ Նփրկեքտ քաղաք:

Մեգալատու աւան—Բ2—Megalasso(s) (Tab. Pent.)—տեղադրվում է Իսիս գետի ակունքների մոտ:

Մեգաղու պոտամոս գետ—Բ4—հուն. Μεγάλος ποταμός, այժմ՝ Բյուլբու-ղիլի:

Մեղաց աշխարհ (Մարք)—Դ6—Դ8—ընդարձակ առումով կոչվում էր ամբողջ Ատրպատականը և հին Մարաստանի (Մեղիայի) տերիտորիան:

Մելա գետ—ԳԶ—ԳՅ—Աւարտական արձանագրութիւնների Melia գետը, անտրի շրջանի Melas, այժմ Թրիմա-սու:

Մելիաիւն քաղաք—ԳՅ—ասուրա-բարելիական և արարտական աղբյուրների Melidu, Melita քաղաքը, հուն. Μελιταίη, Melitanae, այժմ Էսքի-Մալաթիա: Այս քաղաքը միշտ էլ եղել է խոշոր կենտրոն և այդ նշանակութիւնը շարունակում էր պահպանել նրանից ոչ հեռու միջին դարերում հիմնված Մալաթիա քաղաքը:

Մեծամար գետ—ԲԶ—այժմ Սև ջուր, հնում Մեծամար գետը հոտում էր երկուր անկ Արաքսին զուգընթաց և նրա մեջն էին թափվում Արարատյան դաշտը ոտոզող հիմնական գետերը՝ Քասաղը, Հրազդանը, Ագաաը և թերևս նաև Վեյիև:

Մեծ Առանք, կամ Մեծ Իրանք գաւառ—ԲԶ—Արցախ նահանգի 5-րդ գաւառը, արարական աղբյուրներում՝ «Մեխրան», միջին դարերում կոչվում էր Խաչիև՝ համանուն ամրոցով: Տեղադրում է Խաչիևագետի վերին հոսանքում և ընդհանուր տարածութիւնն է շուրջ 550 կմ²:

Մեծ Զաւ (Մեծ Զար) գետ—ԳԶ—այժմ էլ նույն անունով:

Մեծ Կուեկք (Մեծ Կուակք) գաւառ—ԲԶ—Արցախ նահանգի 4-րդ գաւառը, արար. «Մեխիվան», վրաց. მეჭევეველბი Մեծեկիվեկեկի. տեղադրվում է այժմյան Իջևանի շրջանում՝ շուրջ 975 կմ² տարածութեամբ: Այս գաւառում հայտնի էր Լալ ալանը, որը հիշատակում է Պողոմեստը (V, 12, 5) Աշէն և վրացական աղբյուրները՝ Լոլո (այժմ՝ Լալի դուղ), և Տաղձանք վանքը (այժմ՝ Դեղձնուտ վանքի ավերակներ):

Մեծ Հայք երկիր—սկզբում, ի տարբերութիւն եփրատից այն կողմը գտնվող Փոքր Հայքի թագաւորութեան, Մեծ Հայք էր կոչվում բուն Հայաստանում առաջացած Հայկական թագաւորութիւնը: Հետագայում, երբ մ. թ. ա. 112 թ. Փոքր Հայքի թագաւորութիւնը վերացվեց, իսկ նրա տերիտորիան միացվեց Պոնտոսի թագաւորութեանը, Մեծ Հայք անունը մնաց իբրև Արտաշիսյանների (189—1 մ. թ. ա. և խառնակ շրջան 37—62 թ.թ.) և Արշակունիների (62—387) ժամանակաշրջանների Հայկական կենտրոնացված ստրկատիրական միապետական թագաւորութեան պաշտոնական անունը: Այս ժամանակաշրջանի հունական և հռոմեական աղբյուրներում Մեծ Հայքի թագաւորութիւնը անվանվում է՝ Μεγαλή Ἀρμενία և Armenia Maior, իսկ V—VII

դդ. հայկական աղբյուրներում, որոնք խոսում են Հայոց թագաւորութեան մասին մինչև նրա բաժանումը, միշտ գործ են ածում Մեծ Հայք անունը: Սրանց հետ նույնանիշ է մ. թ. սառնին դարերի պարթևական արձանագրութիւններում պատահող Vazurg Armenia-ն հորջորջումը¹: 387 թ. հետո, երբ Հայկական թագաւորութիւնը բաժանվեց և Մեծ Հայքը դադարեց գոյութիւն ունենալ, իբրև միաձուլվեց պետութեան, այս անվան փոխարին գործ են ածվում Հայք, Armenia տերմինները, իսկ եփրատից այն կողմը գտնվող հայկական երկիրը շարունակում էր կոչվել Փոքր Հայք՝ Ἀρμενία Μικρά, Armenia Minor: Սակայն հետագայում ևս արագիցիայի ուժով երբեմն գործ էր ածվում նաև Մեծ Հայք տերմինը բուն Հայաստանի իմաստով: Հայկական աղբյուրների այդ հորջորջումը պահանջ էր միջնադարյան պատմաբանները արարերին և պարսկերեն աղբյուրները՝ Buzurg Armenia ձևով, վրացական լոբոս Եռոթեթո² Դիդի Մուխթի և նույնիսկ ոտսերեն՝ Арменья Великая³:

Մեծ Հայքի տերիտորիան 66 թ. մ. թ. ա. 37 թ. մ. թ. սահմաններում պարունակում է 311206 կմ²: Մ. թ. ա. 37 թ. Հռոմեական կայսրութեան և Պարթևական թագաւորութեան միջև կայացած դաշնագրի համաձայն, Մեծ Հայքի տերիտորիայից անջատվեց և կցվեց Պարթևական թագաւորութեան տերիտորիային «Միջագետք Հայոց»-ը՝ Տուռ-Արգիև (Մաղիք) և Արուստանի գաւառների հետ միասին 27600 կմ² տարածութեամբ, որից հետո Մեծ Հայքի տերիտորիան ընդգրկում էր 283606 կմ²: Այդ սահմաններում Մեծ Հայքի տերիտորիան գոյութիւն ուներ մինչև 387 թ.: Քարտեղի վրա Մեծ Հայքը ցույց է տրված 37—387 թ.թ. սահմաններում:

¹ Այսպէս՝ Շապուհ Ա-ի որդի Ներսէսը որը ավաղ եղբոր՝ Որմիզդ-Արտաշիի Սասանյան Իրանի դէր բարձրանալուց հետո համարվում էր Հայաստանի թագաւոր, Պայուրիի արձանագրութեան մեջ կրում է Vazurg Armenia sal, այսինքն՝ «Թագաւոր Հայոց Մեծաց տիրոջը: Տես՝ W. B. Henning, A. Farewell to the Khagan of the Aq-Aqataran, Bull. of the Brit. School of Oriental and African Studies, vol. XIV, p. 3, 1952, էջ 317, ծան. 4: Այս տեղեկութեան համար պարտական եմ Անահիտ Փերիսյանին:

² Քարթլիս Տխովրերա (ქართველთა ცხოვრება), հրատ. ձեռագրերի համեմատութեամբ Սիմոն Դաուսիզիլիին, հատ. 1, Թրիխի, 1953, էջ 337:

³ Повесть временных лет, под ред. Б. П. Адриа-нов-Перети, М.—Л., 1950, стр. 9.

Մեծ Հայքի տերիտորիայ ժողովրդի մասին մանրամասն տեղեկություններ են պահպանվել սկսած մ. թ. ա. 66 թ. դաշնագրից, երբ պաշտոնապես ճանաչվեցին Մեծ Հայքի քաղաքական սահմանները, մինչև մ. թ. 387 թ., երբ այս պետության տերիտորիան բաժանվեց Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության (395 թ. Արևելյան Հռոմեական կամ Բյուզանդական կայսրության) միջև Սարաթոնը (63 թ. մ. թ. ա. 21 թ. մ. թ.), որ համարյա ժամանակակից է մ. թ. ա. 66 թվականի դաշնագրին, ունի այնպիսի ստույգ աղբյուր, ինչպիսին է Պոմպոսի մ. թ. ա. 66—65 թթ. Հարաստանում և Անյոբովկասում կատարված արշավանքի մասնակից Թևոփանես Մեծի ընտանիքի տեղեկությունները: Սարաթոնը լավ պատկերացում ունի մ. թ. ա. 66 թ. դաշնագրով վավերացված Մեծ Հայքի պետության սահմանների մասին: Մեծ Հայքի սահմանները, ըստ Սարաթոնի, հյուսիսում սկսվում էին արևմտյան ծայրամասում գտնվող Դաստեյրա (Δαστείρα) ամրացից (XII, 3, 38) (տե՛ս Դաստեյրա, Դաստարակ) դեպի արևելք Սյուդիսես (Συδοίσις) լեռներով (այժմ Սուրբ Գրիշոր կամ Սիպիոն-գաղ), որտեղ Ալիլիսեն (տե՛ս Եկեղեցաց գավառ) երկիրը բաժանում էին Փոքր Հայքից (XI, 14, 1): Սահմանը այնուհետև շարունակվում էր Պարիսպինս Պոնապիան լեռներով և նրա շարունակությունը կազմող՝ Մոսիսկայի լեռներով (Վրաց. Մեսիսի լեռներ, այժմ՝ Կարշխալի և Անարայի լեռները, XI, 14, 1): Այնուհետև Մեծ Հայքը սահմանակից է Իրերիային (Վիրք)՝ Խորանեն (Մոսիսկայի այն մասը, որը մտնում էր Մեծ Հայքի սահմաններում, XI, 11, 18) և Գոգարեն (տե՛ս Գոգարք) երկրամասերով (XI, 14, 5), ներառյալ Կամբիսենի այն մասը, որը մտնում էր Մեծ Հայքի կազմում (XI, 4, 1) և պիտի կոչվեր Կամբիսեն (XI, 14, 4) (նկատի ունի ռվերաց դաշախ կամ Բվինո-Բարբրիի գաշտավայրը): Կամբիսենի հայկական մասը — Կամբիսեն, Կուր գետով բաժանվում էր Իրերիայի (Վիրքի) և Ալբանիայի (Աղվանքի) կազմում մտնող այս երկրի մասերից: Այս սահմանագիծը անցնում էր Կուր գետով, մինչև նրա Կասպից ծովը թափվելը (XI, 3, 2), թողնելով Մեծ Հայքի կազմում Կուր գետի ամբողջ աջափնյա տարածությունը Սակաունեն (Σακαουνί, II, 11, 14; XI, 8, 4; XI, 14, 4) (տե՛ս Շակաշեն) և Ուրտիա (Ուրտ, XI,

14, 14) (տե՛ս Ուրտ Անանճակ) երկրամասերով: Կուրը գետաբերանից հարավ ձգվող Կասպից ծովի ափերը, մինչև այն մասը, որտեղ Պարսիտարալը (այժմ Թալիշի և Գիլանի լեռնաշղթան) մտնում է ծովափին (մոտավորապես՝ այժմյան Աստարայի մոտ), Կասպիան երկրի (Κασπία—Կարք, տե՛ս Փայտակարան նահանգ) արևելյան սահմանն էր, իսկ Կասպիան Մեծ Հայքի սահմաններումն էր: Մի այլ տեղ (XI, 7, 1) Սարաթոնը հարգում է, որ Կասպից ծովի ափերին այրաններից (այգաններից) հետո ապրում են արմենները (հայերը), որ սակ է թև ծովափի այլ մասը մտնում է (գոնե քաղաքականապես) Մեծ Հայքի սահմաններում: Այժմյան Աստարայի մոտերքից սկսվում էին Մեծ Հայքի հարավային սահմանները: Լինելով մինչույն ժամանակ Կասպիան երկրի սահմանը, Պարսիտարալ լեռները այս մասում կոչվում էին Կասպից լեռներ (Κασπίων ορη), իսկ նրա միջով անցնող լեռնանցքը՝ Կասպից դուր (Κάσπια πύλα, տե՛ս Կասպիական դուրը)¹, որանցից հարավ ապրում էին կասիշները (Κασσιώται, XI, 7, 1; XI, 13, 3—4): Այնուհետև սահմանագիծը անցնում էր Հայկական լեռներով ('Αρμενίων ορη, այժմ Գարա-գաղ)², որից հարավ գտնվում էր Ասրոպատյան Մարաստանը ('Ασροπατίαν Μηδίαν, XI, 5, 6) կամ Ասրոպատենն ('Ασροπατινή, XI, 13, 1—3, տե՛ս Ասրպատական):

Մեծ Հայքին հարավ-արևելքից սահմանակից էր Կապուռան լինը (Κ[α]παδοκία կամ Մաուսյոն, XI, 13, 2) և նրա մաս գտնվող Միգրիակե (Միգրաչի մեկ հատկ է Տյուքաչի, աղծաոված ձևով, XI, 13, 3), հայ. Նոր-Ծիլիսկան, Նոր-Ծիրական, (տե՛ս Պարսկահայք նահանգ), սահմանակից լինելով Մափիենն (Մաուսյոն, Մաուսյոն) երկրին (XI, 13, 7; XI, 14, 13): Այնուհետև սահմանագիծը անցնում էր դեպի արևմուտք, թողնելով հարավում Ադիարենն ('Αδιαρηνή, XI, 14—12; XVI, 1, 8; XVI, 1, 19), իսկ հյուսիսում՝ Մեծ

¹ Կային մի բանի Վասպից դուրեր, ուստի այս Վասպից դուրերը հույն և հռոմեական հեղինակները սովորաբար շփոթում են, հատկապես Ռոգայի (միջնագարյան Հեռ. Ռեյ բաղաբը) մաս գտնվող Վասպից դուրերի՝ հետ:

² 'Αρμενίων και Μιγαχίων ορίων (II, 1, 17); 'Αρμενίων ορει (XI, 2, 15).

³ Մարկգարտի ուղղումը 'Αλβανί սիալ է: Տե՛ս J. Marquart, Eransahr, S. 109. Տյուքաչի-ի ճիշտ ընթերցումը պետք է լինի՝ *Տյուքաչի.

Հայքի կազմում մասնոց կորդվաց երկիրը (Γορδωνική, XVI, 1, 24—25, տես կորդուք) և նրա երկրամասերը՝ Տամոնիախ (Ταμωνιας, XI, 14, 5, տե՛ս Թվան) և Վերնարիացոց՝ (Ἐρζετρεις, XVI, 1, 25, տե՛ս Այրարուանք) երկրները: Սահմանագիծը Միջագետքում անցնում էր Միզզոնիայի (Μιζζονια, XI, 142; XVI, 1, 23, տե՛ս Արուասաան) և «Միջագետքի Հայոց»-ի սահմաններով մինչև Եփրատ, որը Մեծ Հայքը բաժանում էր արևմտաքի կողմից Փոքր Հայքից, Կապադովկիայից և Կոսմապենից:

Ստրաբոնը ապլիս է նաև նշված սահմաններում Աեծ Հայքի տերիտորիայի մակերևույթի տարածությունը: Վերջինի մեծությունը, — ասում է նա, — Թևոփանեսս [Միտիլենացիին] գնում է լաչնքը՝ հարյուր սքոնտոս, իսկ երկարությունը կրկնակի, զննելով մեկ սքոնտոսը 40 ստադիոնս: Ստրաբոնը այս հաշիվներին թերահավատությունը է վերաբերվում, նրա կարծիքով «Սա չափազանցություն է սոված: Ավելի մոտ է ճշմարտության երկարությունը գնել ինչ որ տակ է լաչնություն համար, իսկ լաչնությունը նրա կեսը կամ մի քիչ ավելի: Ստադիոնը հունական երկարության չափ է և հավասար է 185 մ (ավելի ճիշտ՝ 184, 97 մ), բայց այս մեկ սքոնտոսը ավելի զեպում՝ $185 \times 40 = 7400$ մ կամ 74 կմ: Ուրեմն Մեծ Հայքի լաչնությունը, այսինքն՝ նրա երկարությունը հյուսիսից հարավ, հավասար է 740,000 մ կամ 740 կմ, իսկ երկարությունը արևմտաքից զեպի արևելք, կրկնակի, այսինքն՝ 1480000 մ կամ 1480 կմ:

Եթե հետևենք Ստրաբոնին, այդ զեպում երկրի լաչնքը պիտի հավասար լինի 50 սքոնտոսին կամ 370 կմ, իսկ երկարությունը 100 սքոնտոս, այսինքն՝ 740 կմ: Երբ մենք չափում ենք քարեզի վրա, տեսնում ենք, որ Թևոփանեսս Միտիլենացին ավելի ճիշտ է:

Մեր թվարկության 7 թվականի մոտերքը գրած Պոմպիոս Տրոգոսի «Historiae Philippicae» պատմական երկում (XLII, 2, 8) կարդում ենք, որ «Չի կարելի լուսվյալը անցնել այնպիսի մեծ թաղափորության մասին (ինչպիսին է Հայաստանը), քանի որ նրա սահմանները, Պարթևաստանից հետո, իր մեծությունը զերազանցում են բոլոր մյուս թաղափորությունների սահմաններին, ընդ որում, Հայաստանը Կապադովկիայից մինչև Կասպից ծովը տասնեմեկ հարյուր հազար քալ լուսվածություն ունի, իսկ լաչնքով, նրա երկար-

ությունն է՝ յոթ հարյուր հազար քալ» (XLII, 2, 7—9)¹:

Մեկ քալը համապատասխանում է հունական օրջուսին և հռոմեական passus-ին և հավասար է 1,85 մ: Տվյալ զեպում գործ է ածվում հռոմեական կայսրության մեջ բնորոշված հազար քալը—mille passus, այն է՝ հռոմեական մզոնը, որը հավասար է 1,5 կմ: Ուրեմն՝ Մեծ Հայքի երկարությունը արևմտաքից զեպի արևելք՝ Եփրատ գետից, որ սահմանագիծ էր Կապադովկիայի կողմից, մինչև Կասպից ծովը հավասար էր 1100000 քալի կամ 1100 հռոմեական մզոնի, այսինքն՝ 1650 կմ: Լաչնությունը, այսինքն՝ հարավից զեպի հյուսիս ձգվող տարածությունը, հավասար էր 700000 քալի կամ 700 հռոմեական մզոնի, այսինքն՝ 1050 կմ:

Մեր թվարկության 1 դ. ապրող Պլինիոսը (23—79), անդրադառնալով Մեծ Հայքի սահմաններին, հաղորդում է՝ «Ավիդիոսի (Aufidius) կարծիքով ամբողջ Հայաստանի տարածությունը 5000000 քալ է, Կավդիոս կայսրը նրա երկարությունը Դասկոսայից մինչև Կասպից ծովի ափը հաշվում է 1300000 քալ, իսկ լաչնությունը՝ (այդ թվի) կեսը, Տիգրանակերտից մինչև Իրերիա»²: Ինչպես տեսնում ենք, Պլինիոսը ավելի կոնկրետ տեղեկություններ է հաղորդում Մեծ Հայքի սահմանների մասին: Այդ սահմանագիծը արևմտքում անցնում էր Եփրատ գետով, որից զեպի արևմուտք դառնում էր Դասկոսա վայրը (տես), իսկ արևելքում սահմանն էր Կասպից ծովը: Հարավից հյուսիս Մեծ Հայքի տերիտորիան տարածվում էր սկսած Տիգրանակերտից (նկատի ունի Տիգրանակերտի քաղաքային տերիտորիան) մինչև Իրերիա (Վերք): Պլինիոսի այս տեղեկությունը նկատի ունի Մեծ Հայքի նոր սահմանագիծը հարավում մ. թ. 37 թ. հետո, երբ իբրև սահման որոշվեց Տիգրիս գետը, որից հյուսիս սկսվում

¹ Sed quoniam in Armeniam transitum facimus, origo eius paulo altius repetenda est. Neque enim silentio regnum tantum praeteriti fas est, cum fines post Parthiam omnium regnorum magnitudinem seperent, siquidem Armenia a Cappadocia usque mare Caspium undecies centum milia patet, sed in latitudinem milia passuum septingenta porrigitur. Justinii Epitoma Pomp. Trogi, XLII, 2.

² Universae magnitudinem Aufidius quinquagies centena mill. prodidit. Claudis Caesar longitudinem a Dascusa ad confinium Caspii maris, XIII mill. passuum: Latitudinem dimidium ejus, a Tigranocerta ad Ibertam, Plinius, Nat. hi 2, VI, 10.

էր Տիգրանակերտ գավառը (ալիւի ուշ՝ Նըփ-
ուեա կամ Նփրկիքա, տես): Պլինիոսի մտա-
ցույց տված սահմանները ճշտվով համապա-
տասխանում են Մեծ Հայքի սահմաններին
ըստ «Աշխարհացոյց»-ի: Եթե Պլինիոսի մտա-
բերված թվականն ավելաներ Մեծ Հայքի
տարածութեան մասին վերածենք այժման
չափերի՝ ստացվում է հետևյալը:

Երկարութունը արեւմուտքից դեպի արե-
վելք, այսինքն՝ Գասկուսայից մինչև Կաս-
պից ծով, հավասար էր 1300000 քալլ՝ այ-
սինքն 1300 հոսմակական մղոն, որը համա-
պատասխանում է 1950 կիլոմետրին: Կաջու-
թյունը՝ հարավից հյուսիս, այսինքն Տիգրա-
նակերտից մինչև Իրեքիա (Վիրք)՝ 650000
քալլ կամ 650 հոսմակական մղոն, որ հավա-
սար է 975 կիլոմետրի: Բերված թվերի իս-
կութունը ստուգվում է քարտեզով: Մեծ
Հայքի լայնութունը Գասկուսայից մինչև
Կասպից ծով հավասար է 870 կիլոմետրի,
իսկ Տիգրանակերտ գավառից մինչև Իրեքիա
(Վիրք)՝ 550 կիլոմետր:

Ալիւի կոնկրետ ավազներ է տալիս Մեծ
Հայքի սահմանների մասին Պլինիոսից հետո
հանգես եկող հռչակավոր Կղազիոս Պողո-
սեոսը: Վերջինս իր «Աշխարհագրական ձեռ-
նարկում», որը հրատարակվել է մ. թ. 150-ա-
կան թթ. (V, 12, 1—9), Ասիայի III քար-
տեզում ցույց է տալիս Մեծ Հայքը 37—
387 թթ. սահմաններում:

Ըստ Պողոսեոսի (Գիրք 5, զլուխ 12,
§ 1), Մեծ Հայքի սահմանը հյուսիսից կազ-
մում է Կողքիսի մի մասը (նկատի ունի ձեռ-
րսիս ներքին հոսանքին գտնվող Եզր Բիտքը
աշխարհը), ապա Վիրքը և Աղվանքը՝ Կուր
գետով: Արեւմուտքից սահմանադիւր անցնում
էր Եփրատ գետով, որը բաժանում էր Մեծ
Հայքը Կապադովկասից (այսինքն՝ վերջինիս
կազմում մտնող Փոքր Հայքից), ապա Եփ-
րատից հյուսիս-արեւելք ձգվող Մոսիսական
լեռներով, մինչև Կողքիս: Արեւելքից Մեծ
Հայքի սահմանն էր Վրկանից (Կասպից) ծո-
վի մասը՝ Կուր գետի գետաբերանից մինչև
79 45' — 43 20' վրա գտնվող կետը (մոտավո-
րապես պիտի համապատասխան լինի այժմի-
շան Աստարայի վայրին): Այնուհետև սահմա-
նը անցնում էր հիշյալ կետից դեպի արե-
ւմուտք Կասպիական լեռներով, որոնք բա-
ժանում էին Մեծ Հայքը Մեզիայից: Հարա-
վից Մեծ Հայքը սահմանակից էր Միջագետ-
քին, սկսած Եփրատ գետից, Տավրոս լեռ-
ներով և Տիգրիս գետով: Ապա սահմանու-

ղիւր անցնում էր Նիփաաես (Նպատ) լեռնե-
րով, բաժանելով Մեծ Հայքը հարավում
գտնվող Ասորեստանից, մինչև Կասպիական
լեռները:

Ինչպես տեսնում ենք, Պողոսեոսի տե-
ղեկութունները ավելի ևս համընկնում են
«Աշխարհացոյց»-ի ավազներին: Պողոսեոսից
հետո Մեծ Հայքի տերիտորիայի մասին նույն
ավազներն են տալիս V դարում ապրող հալ-
պատմիչներ՝ Ագաթանգեղոսը, Փապստոս Բու-
գանդը և Մովսես Խորենացին, որոնք խոսում
են IV դարի Հայաստանի մասին:

Մեծ Հայքը նշված սահմաններում առա-
ջին անգամ պաշտոնապես վավերացվել է մ.
թ. ա. 66 թվականին, Տիգրան Բ-ի և հոսմակա-
կան զորավար Պոմպեոսի միջև կնքված դաշ-
նագրով: Ըստ այդ դաշնագրի, Մեծ Հայքի
պետության տերիտորիան ընդգրկում էր
312.795 կմ² տարածություն: Հետագայում
Մեծ Հայքի տերիտորիան ենթարկվեց մաս-
նակի փոփոխման: Հոսմակական կաշարութեան
և Պարթևական թագավորութեան միջև մ. թ.
37 թ. կայացած համաձայնագրի համա-
ձայն Մեծ Հայքից անջատվեց և կցվեց Պար-
թևների պետության «Միջագետք Հայոց»
տերիտորիան (ներառյալ՝ Տուր-Արգիս (Մա-
ղեք) և Արուստան գավառները) 27.600 կմ²
տարածությամբ Մծբին քաղաքով: Այնուհե-
տև Մեծ Հայքի պետութեան տերիտորիան
ընդգրկում էր 285.195 կմ² տարածութուն:
Հետագայում ամեն անգամ, երբ հարց էր
բարձրանում Մեծ Հայքի թագավորութեան
տերիտորիայի մասին, իբրև պաշտոնական
հիմք հանդիսանում էր 37 թ. համաձայնա-
գիրը: Վերջին անգամ այն պաշտոնապես ըն-
դունվեց 298 թվականի Մծբինի 40-ամյա
դաշնագիրը կնքելու ժամանակ:

III դարի երկրորդ կեսին, Սասանյան Իրանի
հզորութեան ժամանակաշրջանում, խախտվել
էր 37 թվականի համաձայնագիրը, սակայն,
երբ Սասանյանները պարսկացին Միջագետ-
քում հոսմակ-հայկական միացյալ ուժերից,
298 թ. Մծբինում կնքված 40-ամյա դաշ-
նագրի համաձայն, նորից ճանաչվեցին պաշ-
տոնապես Մեծ Հայքի թագավորութեան տե-
րիտորիայի սահմանները ըստ 37 թվականի
համաձայնագրի: Այնուհետև այդ սահմանները
գոյութուն ունեին պաշտոնապես մինչև Մեծ
Հայքի տերիտորիայի բաժանումը հոսմակա-
կան կաշարութեան և Սասանյան Իրանի թա-
գավորութեան միջև 387 թվականին: Արդեն
Մծբինի 40-ամյա դաշնագրի պաշտոնական

ավարտից հետո 338 թվականին, Մեծ Հայքից անջատվեցին ծայրամասերը՝ Մարաց ամուր աշխարհը (Նիկոնրական, Մանկերա-աուն և Գաւն գավառներով)՝ 7.327 կմ² տարածու-
 րյամբ: Մեծ Հայքի տերիտորիան ավելի փոքրացավ 363 թ. Հովհանոսի «ամսթաւր» գաշնագրից հետո, երբ անջատվեցին Արցա-
 խը և Ուտիքը (սե՛ս Աղուանք) և Գուգարքի
 հյուսիսային գավառները (սե՛ս Վիրք): Այդ փոփոխութունները պաշտոնապէս ճանաչվե-
 ցին 387 թվականի համաձայնագրով: Մեծ
 Հայքից այդ ժամանակ արդեն անջատվել էին
 ծայրամաս նահանգները 103.857 կմ² տարա-
 ծուրյամբ, մնացել էր Միջնաշխարհը 174.011
 կմ² տարածուրյամբ: Եղված տերիտորիան
 իր հերթին բաժանվեց երկու մասի: Արևմտ-
 լան մասը՝ 39.650 կմ² տարածութեամբ հն-
 թարկվեց Հոմեռական (395 թ.՝ Բյուզան-
 ղական) կայսրութեան, հյուսիսային մասը՝
 Ռարձր Հայքը մինչև 391 թվականը կառա-
 վարվում էր հալ Արշակունիների ձեռնարկը իշ-
 խանութեան ներքո, ապա՝ բյուզանդական
 պաշտանյանների՝ Ելմուխս-ների կողմից: Հարա-
 վային մասը՝ Յուփաց աշխարհը՝ մնում էր իր-
 բև հինգ նախարարութեանների — սատրա-
 պութեանների միջև բաժանված երկրամաս,
 մինչև Հուստինիանոս Ա-ի սեփորմները VI
 դարում: Արևելյան մասը 134.361 կմ² տարա-
 ծութեամբ, որ Հայաստանի հիմնական մասն
 էր կազմում, մինչև 428 թվականը կառավար-
 վում էր հալ Արշակունիների կողմից, իսկ
 այս հարստութեան վերացումից հետո, կառա-
 վարվում էր մարզպանների միջոցով:

Այսպիսով դադարեց գոյութեան ունենալ
 Մեծ Հայքը, նրա հետ նաև արդ տեղմինի
 գործածութեանը: Հետագայում Մեծ Հայքը
 անունը գործ էր անվում հազվագյուտ գեղ-
 քամբ բուն Հայաստանի իմաստով: Չնայած
 նրան, որ դադարեց Մեծ Հայքը իր բն ջրագ-
 րական հասկացութեան, շարունակում էր
 գոյություն ունենալ Մեծ Հայքը իր բն Եր-
 նիկական հասկացություն: Մինչև առաջին
 իմպերիալիստական պատերազմի տարիները,
 Մեծ Հայքի տերիտորիայի վրա շարունակում
 էր իր գոյութեանը հալ ժողովուրդը, որը չը-
 նայած սխառմատիկորեն տարվող հալածանք-
 ներին ու կոտորածներին, այնուամենայնիվ
 գերիշխող ազգութեան էր:

Մեծնունիք գավառ—Գ5—Վասպուրականի 22-րդ
 գավառը՝ 475 կմ² տարածութեամբ, գրավում
 էր Մարմնա գետի միջին հոսանքի ձորահո-
 վերը:

Մեծրաց լեռան—Բ5—այժմ՝ Մազրա-դալ (2517):
 Մեծագետ—Բ5—այժմ՝ Չրղզր գետ:

Մեղգետ—Գ4—հետագայում իմաստավորվել է իր-
 բև Մեղրագետ, այժմ՝ Կարա-սու, Քսենոֆոնի
 մաս հիշվում է Tylaxos անունով:

Մեղդի առան—Գ4—հիշվում է գեղես ասորա-բա-
 բելական արձանագրութեաններում Melidu,
 Melidia (?) անվամբ և շատ անգամ շիթվում
 նույնանուն այլ վայրի՝ խոշոր կենտրոն Մե-
 լիտինև-Մալաթիայի հետ: Այժմ Մելիդի
 գյուղ: Այս վայրի անունով ամբողջ Տարա-
 նը—Մշոյ գաղաղ կոչվել է Melidu:

Մեղնգուղիս լեռինը—Գ4—Փալանթոքյան-գաղից
 հարավ գտնվող ջրբաժան լեռնաշղթան:

Մերեքի լեռան—Բ5—այժմ էլ նույն անունով
 (2372):

Մեսորոմե: առան—Բ2—Mesoromae (Tab. Peut.),
 գտնվում էր Իսիս գետի ակունքների շրջանում:

Մեախա ամրոց—Գ3—Μεταξαι. Meita (Ptol.
 V, 6, 24), Լիբրատի աջ ափին, այժմյան
 Միգիկ գյուղը:

Մեւ Գալլ գետ—Գ4—կոչվում էր նաև Կեղի,
 այժմ՝ Քրդի-սու:

Մեւ Իշայր գառա—Գ5—Մոկաց նահանգի 2-րդ
 գավառը՝ 250 կմ² տարածութեամբ, այժմ կոչ-
 վում է Լիգան և բնդգրիւմ է Կեցան գա-
 վաստի մեծ մասը:

Մեւ Հարանգ (Սիսական-ի-Ուտան, Սիսական-ի-
 Կուտակ) գառա—Գ7—Արցախի կենտրոնա-
 կան գավառը, շուրջ 2550 կմ² տարածու-
 թեամբ, գրավում էր հետագա Դիգակի և
 Վարանգայի շրջանների տերիտորիան:

571 թ., երբ ամբողջ Արցախը միացվեց
 Սյունիքին և Մեւ Հարանգը դարձավ Սյուն-
 րաց նախարարութեան կենտրոն, այս գավա-
 սը կոչվում էր նաև Սիսական ի Ուտան կամ
 Սիսական-ի- Կուտակ: Վերջինս համանիշ է
 Փոքր Սիւնիք անվան: Ավելի ուշ Մեւ Հա-
 րանգ գավառը կոչվում էր Ամարաս: Մեւ
 Հարանգ գավառի կենտրոնն էր Քրիշ ամրո-
 ցը, որը հետագայում հայտնի Տոլ ավանն
 էր՝ Դիգակի մեղիքների կենտրոնը: Քրիշի
 մաս հիմնվեց Գալլ վանքը: Քրիշ ամրոցից
 գետի արևմուտք գտնվում էր Գոռոզու լեռ-
 րը, այժմյան Տոււմի գյուղը: Այս գավառում
 էր նաև հուշակալոր Ամարասի վ սնքը:

Միգրոն գետ—Գ4—այժմ՝ Նահր-Չաղ-Չաղ:

Միջա գառա—Գ5—Մոկաց նահանգի 5-րդ գավա-
 սը՝ շուրջ 250 կմ² տարածութեամբ, այժմ՝
 Մամուտանք շրջանը, սրանց այժմ էլ գտն-
 վում է Միջա անունով գյուղը:

- Միջա գյուղ — Դ5 — այժմ էլ նույն անունով գյուղ՝ Մամոտանք շրջանում:
- Միջագետք — Դ3 — Դ4 — Եփրատի և Տիգրիսի միջև պարփակված երկիրը, հուն. Μεσοποταμία, որը և ընդունված է բոլոր եվրոպական լեզուներում՝ Mesopotamia:
- Միջագետք Ասորոց — Դ3 — Դ4 — Միջին Միջագետքի տերիտորիան:
- Միջագետք Հայոց — Դ3 — Դ4 — Վերին Միջագետքի տերիտորիան, մինչև մ. թ. 37 թ. կազմում էր Մեծ Հայքի մասը, ունենալով 17.775 կմ² տարածություն: Այս երկիր խոշոր քաղաքն էր Ամիզը (այժմ՝ Գիարբեքի): Հայտնի էին Բնարեղ (այժմ Բենարիլ) և Մարդե Բերդ (այժմ Մարդին) ամրոցները: Միջագետք Հայոց ընդարձակ իմաստով պիտի ընդգրկեր նաև Տուր-Արդին (Մադեք) և Արուստան գավառները Մծբին կենտրոնով և ուներ 27.690 կմ² ընդհանուր տարածություն: Հիշյալ տերիտորիան մ. թ. 37 թ. ընդմիջում անջատվեց Մեծ Հայքից և հետագայում կըուփանանոր գարձավ Հոմի և Իրանի միջև:
- Միջնաշխարհ — այսպես էր կոչվում Մեծ Հայքի տերիտորիայի հիմնական մասը, որ ընդգրկում էր՝ Այրարատ, Տաք, Սիւնիք, Վաապուրական, Մոկք, Տաւրուբերան, Մոփաց կողմն և Բարձր Հայք նահանգները, 174.011 կմ² տարածություն: 377 թվին, երբ Մեծ Հայքի ժայռամաս նահանգները՝ Աղձնիքը, Կորնայքը, Պարսկահայքը, Արցախը, Փայտակարանը, Ուտիքը, Գուգարքը անջատվեցին, մնաց միայն Միջնաշխարհը, որը իր հերթին բաժանվեց երկու մասի՝ Հռոմեական կայսրությանն անցան Բարձր Հայքը և Մոփաց կողմը՝ 39.650 կմ² տարածությամբ, մնացյալ մասը կազմեց Մարգալանական Հայաստանը 134.361 կմ² տարածությամբ:
- Մուգուր (Մընձուր) գաւառ — Դ3 — գյուղ. Μογγουρος, այժմ էլ նույն անունով՝ Մընձուր, Բարձր Հայքի 3-րդ գավառը 2775 կմ² տարածությամբ:
- Մուգուր (Մընձուր) գետ — Դ3 — այժմ՝ Մոնգուր-սու:
- Մուգուր (Մընձուր) լեռան (3188) — Դ3 — այժմ՝ Մոնգուր-գագ:
- Մլ ջերկրական ծով — Դ1 — այժմ էլ նույն անունով: Մծբին քաղաք — Դ4 — հուն. Νισβητις, այժմ՝ Նուսայրիմ. Մծբինի քաղաքային տերիտորիան էր Արուստան երկիրը:
- Սորդանը գաւառ — Դ6 — կործնեց նահանգի 7-րդ գավառը՝ 875 կմ² տարածությամբ, այժմյան Ռամաթի շրջակայքում:
- Մոկս աւան — Դ5 — այժմ՝ Մոկսուս գյուղ:
- Մոկք առանձնակ, որ է Արքայից գաւառ — Դ5 — Մոկաց նահանգի 6-րդ գավառը Որբ (այժմ՝ Մոկս-սու) գետի հովտում: Մոկաց նախարարական տան կենտրոնական գավառն էր, ուստի կոչվում էր Արքայից գաւառ և հետագայում հայտնի էր Արքուրական երկիր անվանումով: Կենտրոնը պիտի գտնվեր համանուն Մոկս ավանում: Պիտի ենթապրել, որ այս գավառը թարքուսականն է եղել դեռևս IX—VIII դդ. մ. թ. ա., երբ այն Խուրուշկիա փոքրիկ թագավորության կենտրոնն էր:
- Մոկք նահանգ — Դ5 — Դ5 — Մեծ Հայքի 5-րդ նահանգը, իր տարածությամբ շուրջ 2962 կմ², բոլոր նահանգների փոքրագույնն էր և Մոկաց նախարարական տոհմի ժառանգական սեփականությունն էր: Կոչվում էր Մոկաց աշխարհ: Լատ. Moxoene, բյուզ. Μοξαι, ասոր. Bet Moksaije:
- Մովկան դաշտ — Դ8 — այժմ՝ Մուգան դաշտ:
- Մուխանք գաւառ — Դ7 — Գարգար գետից հարավ, որոշվում է Մուխուր-ովախի վայրով: Մուխանք գավառը Արցախի 7-րդ գավառն էր՝ շուրջ 1250 կմ² տարածությամբ:
- Մուձլ քաղաք — Դ5 — արաբ. Մոսուլ, այժմ՝ Էսկի-Մոսուլ:
- Մուշ քաղաք — Դ4 — այժմ էլ նույն անունով քաղաք Մշո դաշտում: Միջին դարերում Մուշը Տարուն (Տարոն) գավառի կենտրոնն էր:
- Մուրցամուր կամ Մուրց գետ — Դ4 — այժմ՝ Հասան-Ղալա-սու:
- Մրնն աւան — Բ5 — Տեկորի գետաբերանի մոտ, իր IX դ. հաջակավոր տաճարով:
- Մրխա — Բ4 — վրաց. მურჯეთი Մերեքի, եզր աշխարհի երեք գավառներից մեկը Մաճախելիս-ժղալի գետակի ձորում, որը հոսում է Մերեքի սարից: Մրխա գավառի տարածությունն էր 476 կմ²: Ըստ երևույթին՝ Պլինիոսի մոտ հիշվող Ampreutaec-ն է:
- Մրուղ — Բ4 — բյուզ. Μορτζούλι, վրաց. მურჯული Մուրղուլի, Մուրղուլ-սու գետակի ձորում: Եզր աշխարհի երեք գավառներից մեկը: Մրուղ գավառի տարածությունն էր 550 կմ²:
- Մրուղ գետ — Բ4 — այժմ Մուրղուլ-սու գետ: Մրխա լույսի-խել գաւառ — տես Կրխա-խել:
- Մցխիթայ քաղաք — Դ9 — վրաց. მცხეთა Մցխիթայ, Վրաց աշխարհի հնագույն մայրաքաղաքը, որ հիշատակում է դեռևս Պաղոմիսը՝ Μετ-ι-η-α, Mescheta (Ptol. V, 10, 2), այժմ փոքրիկ քաղաք, հաջակված իր հնություններով: Վերջին 25 տարվա ընթացքում տեղի ունեցած Մցխիթա-Արմազիի պեղում-

ները հնարավորություն տվեցին պարզելու վրաց աշխարհի վաղեմի մայրաքաղաքի ներքին կյանքը և սարկատիրական ժամանակաշրջանի վրացական քաղաքի կառուցվածքը ու քաղաքի գերը երկրի աշտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքում: Տհ'ս Мцхета. Итоги археологических исследований. I, Тбилиси, 1958.

Յ

*Յաշտասար լեռն (2939)—Գ7—այժմ՝ Հաշտասար:

*Յաշտեանք գաւառ, տե՛ս Հաշտեանք գաւառ:

Յաշտիշատ աւան, տե՛ս Աշտիշատ աւան:

Յատովի հրուանդան, տե՛ս Հրուանդան Յատովի:

Յոն գետ, տե՛ս Վոն գետ:

Յուլիոպոլիս ամրոց—Գ3—'Ιουλιόπολις, Iulioopolis (Ptol., V, 6, 25), գտնվում էր Լիւրատի աջ ափին, Բարսալալից հյուսիս, այժմյան Տարաքսու գյուղի մոտ:

Ն

Նախնաւան գաւառ—Գ6—Նախնաւան քաղաքի քաղաքային տերիտորիան, Վասպուրականի 34-րդ գավառը՝ 1220 կմ² տարածութեամբ, այժմյան Նախիջևանի շրջանը:

Նախնաւան քաղաք—Գ6—Ναξουα, Naxuana (Ptol., V, 12, 5), արար. Naxava, այժմյան Նախիջևան քաղաքը:

Նախնաւան քաղաք—Գ6—այժմ՝ Նախիջևան-թեփե, Ուրմիա քաղաքից գեպի հյուսիս-արևելք՝ Կապուտան լճի ափին: Հիշատակում է Սեբեոսը:

Նախնամասեանք ազգագաւառ—Ա6—այսպէս պիտի կոչվին այժմյան չեչենների նախորդները, սրոնց ինքնանունն է Նախնուո, Պտղոմեոսի մոտ (V, 8, 12) հիշվում են 'Ιαξαρτασι ձեով (պիտի ուղղել՝ Ναξαρτασι): Պիտի տեղադրել Աստա և Արզուն գետերի միջև:

Նախորդան քաղաք—Գ7—պիտի գտնվեր Երասխ գետի ձախ ափին Մուղափեռի կամուրջի մոտ: Այս կամուրջի վրայով ճանապարհը տանում էր լեւնային դժվարին տեղանքով (Համգալլան Ղազվինին կոչում է Արմինյան), իջնում՝ գեպի Ահար քաղաք, այնտեղից գեպի Թավրիզ և Արզարիլ:

Նեխ-Մասիք լեռն—Գ5—այժմ Սիփան կամ Սուփհան (4434), Մասիսից հետո Հայկական լեւնաշխարհի բարձրագույն գագաթը, որի հյարթալին զանգվածը փոփոք է վանա լճի հյուսիսային ափին:

Նեոխարիա (Կարեյրա) քաղաք—Բ2—այժմ՝ Նիխար քաղաք:

Նիզ գաւառ կամ Նիգատուն գաւառ—Բ6—Այրա-րատ նահանգի 15-րդ գավառը, համապատասխանում է այժմյան Ապարանի շրջանի տերիտորիային շուրջ 1000 կմ²: Նիզ գավառը Գեքուեի նախարարական տոհմի ժառանգական սեփականությունն էր. կենտրոնն էր Քասաղ ալանը (այժմ Ապարան գյուղ):

Նիգատուն գիւղ—Բ6—այժմ Ղալաջուխ կամ Ղալաջա գյուղ, որ նորից վերանվանվել է Նիգատուն Մատենագարանի զրչազրի հիման վրա. տե՛ս Մատենագարան, ժողովածու, № 2180, ՌՂ—1611 թ., գրիչ Սահակ. կարդում ենք՝ «Նիգատունն Ղալաբջուղ ասի»:

Նիգալ—Բ4—վրաց. ნიგალო, ხევი ნიგალოსა Նիգալի, Նեվի Նիգալիսա, հետագայում՝ Լոջանո կիզանի, այժմ՝ Արդվին քաղաքի շրջանը: Նիգալը եզր աշխարհի երև. գավառներից մեկն էր: Նիգալ գավառի տարածությունն էր 950 կմ²:

Նիխորական գաւառ—Գ5—Գ6—պիտի գտնվեր Կոն-ի-Նիհորական լեռների արևմտյան փեշերին, Կորճալքի սահմաններից հարավ և Մահկերտ-տունից հյուսիս. տեղադրվում է Շեմգինան-սու գետի հովտում և ընդգրկում էր 4250 կմ² տարածություն: Նիխորականը մտնում էր Նոր-Նիրական բղջխտոբյան կազմում, սակայն 363 թ. հետո անշատից Մեծ Հայքից և միացվեց պարսկական Հեգայար (Ադիարեն) նահանգին:

Նիկոպոլիս աւան—Գ2—այժմ՝ Իսլահիև ալան: Նիկոպոլիս քաղաք—Բ3—այժմ Բուրզ (Պյուրկ): Նիկորիա քաղաք, տե՛ս Քալկիս:

Նինուէ ալկրակ քաղաք—Գ5—այժմ՝ Նինվա-սարար: Ասորեստանի հռչակավոր մալրաքաղաքը, որի ալկրակները հայտնի էին բոլոր ժամանակները, այդ քաղաքի ավերումից հետո 612 թ. մ. թ. ա.:

Նոստ: գետ—Բ5 այժմ՝ Անարիս-ձղալի գետ:

Նոսախ-քաւ լեռն (2506)—Բ5—այժմ՝ Չանչախի գագաթ, որտեղից հոսում է Նոստե կամ Անարիս-ձղալի գետը:

Նուարսակ գյուղ—Գ6—այժմ՝ Նիսակ գյուղ, Մորզպանական Հայաստանի սահմանամերձ գյուղը:

Նպասական կամ Նպաս լեռն (2832)—Գ5—հուն. Νιφάτης, լատ. Niphates, այժմ՝ Թափա-Շեյլ: Նպաս լեռն հյուսիս-արևելյան ստորոտին, Արածանի գետի ձախ ափին գտնվում էր Բագաւան ալանը իր հռչակավոր Սուրբ Հովհաննէսի գմբեթավոր բաղնի-

իկ տաճարով: Անտիկ հեղինակների Ուօպտոս (Ptol. V, 12, 1) լեռնապարը պիտի լինի այժմյան Զելու լեռները Զուլամների շրջանում:

Նփոնա կամ Նփրկերա (Տիգրանակերա) գաւառ— Դ4—համանուն քաղաքի (հնում Տիգրանակերաի) քաղաքային տերիտորիան, Աղձնյաց բրնձիտության 2-րդ գավառը՝ 5395 կմ² տարածութեամբ: Տե՛ս Տիգրանակերա գաւառ:

Նփոնա քաղաք, տե՛ս Նփրկերա (Տիգրանակերա) քաղաք:

Նփրկերա (Տիգրանակերա կամ Մարտիրոպալիս) քաղաք— Դ4—Միջին դարերում կոչվում էր Մարտիրոպալիս, Մարտիրոսաց քաղաք, Նփոնա, Մայիերկատ, Մայափարիկին, Մուֆարդին և այժմ Փարկին կամ Սիլվան: Շուրջ 77 թ. մ. թ. ա.: Տիգրան Մեծի կողմից հիմնված քաղաք, որը տարբեր անուններով գոյութիւն ունի մինչև հիմա: Տե՛ս Տիգրանակերա:

Շ

Շակաշէն գաւառ — Բ6 — Բ7 — հուն. Σακασση, լատ. Sacasene, Ուտիք նահանգի 7-րդ գավառը, որն ընդգրկում էր 2900 կմ² Ջակամ (Ջեղամ) գետից մինչև Կուրակ (Քյուրակչայ) գետը, փակած Կուր գետի հովտի աջակողմյան մասում:

Շահապաւնք կամ Շահապաւնս ամրոց— Գ6—այժմ Շահրուզ շրջանային կենտրոն: Այս շրջանը, համանաբար 387 թ. հետո, մինչև վերջերս, կոչվում էր Շահապաուկիք:

Շաղագոմք— Բ4—Բարձր Հայքի 8-րդ գավառը, գտնվում էր Սարչամա գետի վերին հոսանքում—այժմյան Օվաճըխ վիճակը: Ըստ երևույթի, հնագույն անունն է կղև *Շ ա ա ա լ ա գ ո մ ք, որից առջացել են Շաղագոմք և Շաղոմք ձևերը: Շաղագոմք գավառի տարածութիւնն էր 500 կմ²:

Շամախի քաղաք— Բ8—հայտնի է VI դ. և զրտնրվում էր Հին Շամախիի տեղում:

Շամբ Կոզովտի— Գ6—այժմ՝ Շելխիլի-գյուլ՝ Հին-Բալազետից հյուսիս:

Շամբ Կարնոյ— Դ4—Կարին քաղաքից հյուսիս՝ Նփրատ գետի ակունքներից հարավ գտնվող շամբուտները:

Շամուշատ (Սամուսատ) քաղաք— Դ3 - Σαμόσατα, Samosata (Ptol. V, 14, 8)—Կամադինե թագավորության կենտրոնը, այժմ Սումեյսատ, ասուրա-բարելական արձանագրութիւններ

ում կոչվում է Kummaha և անտիկ շրջանում պիտի կոչվեր Commagene, որի անունով կոչվիլ է ամբողջ երկիրը: Շամուշատ անունն այս քաղաքը ստացել է ի պատիվ Շամես Ա. թագավորի (Σάμας I 240 թ. մտակերքը), երուանդունի դինաստիայից:

Շանքային լեռինք— լատացի թարգմանութիւն է Պաղոմեսոսի մոտ (V, 8, 9) հիշվող Κεραυνίων ὄρεων անվան, որ արվում էր Գլխավոր Կովկասյան լեռնաշղթայի այն մասին, որը հյուսիսից եզերում էր Աղվանքը և Վաղարշապոսից կոչվում է «Կապ-կոն լեռինք»: Շանթային լեռինք քարտեզի վրա չի նշված, տե՛ս Կապ-կոն լեռինք:

Շանեան երկիր— Դ8—տեղադրվում է այժմյան, Ջենջանի շրջակայքում:

Շանեան քաղաք— Դ8—այժմ՝ Ջենջան քաղաք: Շապորան գետ— Բ8—այժմ՝ Շարրան-չայ:

Շապորան քաղաք— Բ8—այժմ՝ Շարրան գյուղ՝ Շարրան-չայ գետի աջ ափին:

Շատալագոմ գաւառ, տե՛ս Շաղագոմ գաւառ:

Շատրեթ ամրոց— Բ5—հիշվում է միայն վրաց պարտերներում Յոթնորոց Շատրեթի, այժմ՝ Փորթա գյուղ: Տե՛ս Н. Марр, Георгий Мерчул, житие св. Григория Хандзтийского, грузинский текст и перевод, СПб., 1911:

Շարուր գաշա— Գ6—Այրարատ նահանգի 20-րդ գավառը՝ շուրջ 450 կմ² տարածութեամբ. համապատասխանում էր նախկին Երևանի խանության Շարուր մահալին, իսկ այժմ՝ Նորաշենի շրջանին, Արփանեալ (այժմ Արփա) գետի ստորին հոսանքում:

Շաւշիք— Բ5—վրաց. შავშეთი Շաւշիքի գավառը և բնակիչները՝ შავშბი Շաւշիք—Շաւշք. Գուգարաց բնակչության 10-րդ գավառը. 338 թ. հետո անջատվելով Գուգարքից մտավ Վրաց աշխարհի կազմում: Գրավում էր Շավշուրի (այժմ՝ Իմերետի) գետի վերին հոսանքը: Շաւշէթ գավառի տարածութիւնն էր՝ 1045 կմ²:

Շաւշուրի գետ— Բ5—այժմ՝ Իմերետի գետ:

Շաքի գավառ— Բ7—այժմյան Նուխի շրջան՝ 870 կմ² ընդհանուր տարածութեամբ:

Շաքի քաղաք— Բ7 - վրաց մատենագրության մեջ հայտնի է Շեքձաթու Նուխաառ անունով, այժմ Նուխի քաղաք:

Շիթիքմա, տե՛ս Վաղիթք որ է Շիթիքմա գետ: Շիղպք տղգապալառ— Բ8—այժմյան Շիղա գյուղի շրջակայքը Հայնկույս Կախիթում (Գաղմա Կախիթի):

Շիրակ գաւառ— Բ5—Այրարատ նահանգի 8-րդ գավառն էր, հուն. Σιρακηνή, գրավում էր

Ախուրյան գետի միջին և ստորին հոսանքի հովիտը: Տարածությունն էր 3730 կմ²: Երբակ անունը տառաջցել է Հյուսիսային Կովկասից այստեղ բնակություն հաստատած Երբակ կամ Սիրակ (Σιρακοί) ցեղից: Երանցից սառչ, ըստ ուրարտական արձանագրությունների վկայության, այս անբիտորիան կոչվել է Eriahi. այսպես էր կոչվում ինչ որ սկյութական ծագում ունեցող ցեղից: Էրիախի ցեղի անունից է առաջացել Արաքս, Արախս կամ Էրախս, Երախս (վրաց. ორხსი, ორხვი) գետի անունը: Երբակը Կամսարական նախարարական տոհմի ժառանգական սեփականությունն էր:

Patria Caspia անվան տակ: Հայկական աղ-
բյուրներում միայն «Աշխարհացոյց»-ն է ու
նրան հետևող Ղևոնդը, որ գործ են անում
«Փայտակարան» անունը: Այլ աղբյուրներում
այս երկիրը կոչվում է՝ Կասպ, Կագրբ, Աշ-
խարհն Կասպից, Աշխարհն Պարսից, Պարսբ,
սպա՝ Բաղասական: Վերջինս՝ Balasakan,
Balasadan ձևերով պահպանվել է արարական
աղբյուրներում:

Մեծ Հայքի այս ծայրամասային երկիրը,
որ նվաճվել է Արտաշես Ա-ի (189—161)
ժամանակ, համարվում էր Փայտակարան
քաղաքի քաղաքային տերիտորիան: Այս դու-
րանը մտնում է 338 թ. հետո, երբ պար-
սիկների սադրանքով մասքթենյն իրենց
թագավոր Սանատրուկ Արշակունու զինա-
վորությունը ներխուժեցին Մեծ Հայք, տի-
րեցին Փայտակարան նահանգին և սկիզբ
դրին Ադվանից երկրի Արշակունյաց հարըս-
տությունը:

Փայտակարան քաղաք—Գ7—համանուն նահանգի
կենտրոնը, այժմյան Օրեն-Կալայի մոտ, Միլի
գաղտում: Փայտակարան քաղաքը 338 թ.
գտնում է Ադվանից թագավորության ժա-
մանակավոր կենտրոնը: 338 թ. սկսած այս
քաղաքումն էին նստում մասքթաց Արշա-
կունի թագավորները:

Փանակիրա ամրոց—Բ5—վրաց. თანდასვეტი Փա-
նակիրაի, բյուզ. Παναζαρε, այժմ Փանա-
կերա գյուղ: ենթադրվում է, որ այս անունը
տառաջացել է *Փառնուազկիրա ձևից:

Փառանգիոն ամրոց—Բ4—ըստ երևույթին այ-
ժմյան Բարվանքի տեղում, կամ մոտերքում:
Փառանգիոնը հայտնի էր իր ոսկե հանքե-
րով:

Փառխոս ամրոց—Բ6—այժմ՝ Կալաքենդ գյուղը-
միջին դարերում Փառխոսի քաղաքի ու-
րյան մայրաքաղաքն էր:

Փառնակիա (Կերասուն) քաղաք—Բ3—այժմ
Գիրևուն նավահանգիստ:

Փառնեա գավառ—Բ6—Շամքոր գետի ակունքների
շրջանում, որտեղ միջին դարերում գտնվում
էր Փառխոս քաղաքը (այժմ Կալաքենդ):
Արցախ նահանգի 12-րդ գավառն էր՝ շուրջ
775 կմ² տարածությունը:

Փասիս գետ—Ա4—այժմ Ռիոն գետ: Հնում Փա-
սիս էր կոչվում Ղվիրիլա գետը և նրա շա-
րունակությունը կազմող Ռիոն գետի ներքին
հոսանքը, սկսած Ղվիրիլայի գետաբերանից:

Փասիս քաղաք—Ա4—այժմ՝ Փոքի (Ղևոնդի մոտ՝
Փոյք), սակայն Փասիսը գտնվում էր Փսթից
արևելք, Ռիոն գետի և Պալեսոսոմի լճի
միջև:

Փասիս աղագալառ—Ա6—այսպես էր կոչվում,
ըստ երևույթին, Բացր կամ Մովա-Փուշ ցեղը:
Փեռոսակ գյուղ—Ա6—այժմ՝ Փեռե: գյուղ, Սոռ
քաղաքից հյուսիս-արևմուտք:

Փիլադելֆիա ասան, տե՛ս Բաքրան ասան:

Փոխք (Փուսիք) աղագալառ—Ա6—վրաց. თხო-
ველი, თხოვნი Փիտովելի, Փիտովի: «Աշ-
խարհացոյց»-ում կա նաև այս անվան երկ-
րորդ ձևը՝ Փուսիք, որ մենք գտնում ենք
փակագծում:

Փոսագուն լեռնանցք—Բ3—ըստ VII դ. «Մզնա-
չափք»-ի վիպություն, այս վայրը գտնվում է
Կարինից դեպի Կոզոնիա տանող ճանապարհի
վրա, Մեծ Հայքի և Փոքր Հայքի սահմանագծի
վրա, Գայլ գետի (Լյուկոս) ակունքների
մոտ: Փոսագուն պետի լինի Պրոկոպիոս Կե-
սարացու մոտ հիշվող Γεργαζος ποταμος ամ-
բույթունը, որ հայերը իմաստավորել են,
կապելով «Փոս-խրամառ» բառի հետ: Փոսա-
գուն լեռնանցքը համապատասխանում է
այժմյան Վալուկի լեռնանցքին (1660):

Փուսիք—տե՛ս Փոխք:

Փոքր Զաւ գետ—Դ6—այժմ էլ նույն անունով
Փոքր Զաւ:

Փոքր Հայք երկիր—Գ2—Բ3—հուն. Μικρά Ἀρμε-
νία, լատ. Armenia Minor, Եփրատի և Անտի-
տավրոսի միջև ընկած երկրամասը, որը հան-
դիսանում էր առանձին թագավորություն
(321—112 թթ. մ. թ. ա.), սպա միացվեց Պոն-
տոսին, իսկ 65 թ. մ. թ. ա. Փոքր Հայքի արև-
մայան մասը զարձալ հռոմեական պրովինցիա,
իսկ արևելյան մասը, որը «Աշխարհացոյց»-ում
կոչվում է Բարձր Հայք, ընդմիջտ միացվեց
Մեծ Հայքին: Թևոփոս Ա. Մեծի ժամանակ
378—386 թթ. միջև Փոքր Հայքը բաժանվել
է երկու պրովինցիաների՝ Առաջին Հայք և
Երկրորդ Հայք: Այս ժամանակաշրջանի Փոքր
Հայքի տերիտորիան ընդգրկում էր 68700 կմ²:
«Աշխարհացոյց»-ը տվյալ դեպքում նկատի

ունի Փոքր Հայքի վարչական բաժանումը մինչև Հաստինիանոս Ա-ի 536 թ. նույնիսկ: Փոքր Մասիս լեռն (3925)—Գ6—ի տարրերություն Մեծ Մասիսի, որը կոչվում էր Ազառ-Մասիս, Փոքր Մասիսը պիտի կոչվեր սոսկ Մասիս անունով, կամ ավելի ճիշտ՝ Սլա:

Ք

Քալկիս (Նիկորիա) քաղաք—Դ2—Χαλκίς, Κίονας-ρίη. Հալկայից հարավ, նշանավոր քաղաք:

Քաղ (Քեղ) գաւառ—Գ4—Աղձնկաց բզեշխության 3-րդ գավառը՝ 350 կմ² տարածութեամբ: Ասուրա-բարեկական արձանագրութիւններում կոչվում է Gal: Քաղ կամ Քեղ անունը, ըստ հրեային, կապ ունի Քիլիմար անվան հետ:

Քաղաքերից ամբողջ—Բ7—տե՛ս Քաղազաշ (Քալա-ձոր) գաւառ:

Քաղաքերից գավառ—Բ7—տե՛ս Քաղազաշ (Քալա-ձոր) գաւառ:

Քաղազաշ (Քալաձոր) գաւառ—Բ7—այսպէս է կոչվել Դուրիան-չայ և Ալջիգան-չայ գետերի ստորին հոսանքների տափարակային տերիտորիան, մտտավորապէս 1270 կմ² տարածութեամբ, այժմյան Աղբաշի և Մինգեչաուրի շրջանները: Կենտրոնը պիտի գտնվեր Քաղաքերից ամբողջում, որը հետագայում հայտնի էր Աղբերից անունով, ապա գարձիկ է Աղբաշ, որ այժմյան անունն է:

Քաղաքերից վրացական տարիգրութիւններում կոչվում է յալաձորի Քալաձորի, (յաճողոն Եւրոպոս, Եւրոպոս I, տծոլոն, 1955, թ. 334, 366): Քալաձորը միևնույն ժամանակ Դուրիանչայ գետի անունը պիտի լինէր:

Քաղաձոր գաւառ, տե՛ս Քաղազաշ գաւառ:

Քաղաձոր գետ. կոչվել է նաև Սեբոջ—Բ7—այժմ Դուրիան-չայ:

Քաղիք (Ճիքիքմա) գետ—Դ4—Գ4—այժմ Բաթման-սու, ըստ հրեային, այս գետը ուրարտական արձանագրութիւնների Kallama-ն է:

Քաղիկիկէ ՔՓոքր աշխարհ» Ասորիքի—Դ2—Χαλκιδίκες, C halcidices (Ptol. V, 14, 14), Քալկիս (Նիկորիա) քաղաքի քաղաքային սերիտորիան պիտի լինէր:

Քաջատուն (Մունգա)—Բ2—վրաց. յաջատուն, յաջատուն Մունգա, այժմ էլ Մունգա անունով գյուղ, բայց քաղաքատեղի գտնվում է նրանից ոչ հեռու գտնվող Նաքալաքիվի գյուղի տեղում: Այս քաղաքը հիշվում է միայն վրացական տարի-

գրութիւններում և նրանց հայկական համառոտ թարգմանութեան մեջ:

Քաջաց-Քաղաք (Հուր)—Բ5—վրաց. յաջոս յալո-յո, Յոյրո Քաջրա-Քալաքի, Հուրի, այժմյան Ուրի գյուղը: Հիշվում է միայն վրաց տարի-գրութիւններում, և նրանց հայկական վեր-սիայում: Ըստ հրեային, այստեղ է գտնվել Արտանան գավառի հնագույն կենտրոնը և նրա անունով էլ կոչվել է նաև Արտահան:

Քաջերունիք գաւառ, տե՛ս Գաւնի գաւառ:

Քառն Մանակերտ ամրոց և ցամաքակղզին Մանակերտ—Գ5—այսպէս էր կոչվում այժմյան Քարա-դաշ հրվանդանը Վանա լճի հարավա-լին ափին՝ Աղթամար կղզու դիմաց: Քառն Մանակերտ ամրոցը կառուցվել է գեղեւ Մե-նուայի (810 - 786) ժամանակ և կոչվել է Menuahinil, որին համանիշ է Մանակերտ անունը: Քառն Մանակերտը գտնվում էր Ռշտունիք գավառում:

Քառաղ աւան—Բ6—այժմ Ապարանի շրջանային կենտրոն: Քասաղը Գեքունի Նախարարական տոհմի կենտրոնն էր. այստեղ հայտնի էր V դ. կառուցված բազիլիկ տաճարի շինքը:

Քառաղիք սղգագաւառ—տե՛ս Գառաղ սղգագաւառ:

Քիշ ամրոց—Գ7—Մեւ Նարանդի կամ Սիսական Ոստանի կենտրոնը Իշխանի ձորում, հետագայում կոչվում էր Տող, որն այժմ էլ հայտնի գյուղ է: Վերջինիս մոտ է գտնվում Քաիչ վանքը:

Քիշ քաղաք—Գ4—Ննթաղարար տեղագրում կըք այժմյան Բամաու-Կուշ գյուղի տեղում: Ըստ հրեային, Քիշը ասուրա-բարեկական արձանագրութիւնների Սշուրիկիշա-ն է:

Քիլիմար (Կուտեմուան) քաղաք—Գ4—այժմյան Մալիգիր գյուղի մոտ: Քիլիմարը հիշվում է ասուրա-բարեկական և ուրարտական արձանագրութիւններում՝ Kullimeri, Kalmer, Kutta ձևերով:

Քուղեք—Ա5—սղգագաւառ, վրաց. յալո-յո Կու-գարո, Ռիոն գետի սկիւնքների շրջանում: Ալան-օվս ժողովուրդը կազմող ցեղերից մեկը:

Քուե-ղարա աւան—Ա6—վրաց. յալո-յո Կուե-ղարա, այժմ Զվլ-ղարա գյուղը Քիանէթ ավանից դեպի արևելք: Նանդիսացի է Մեծ Կալիքի (ճոյո յոյոյո) կենտրոնը և իր անունով է կոչվել ամրոցը գավառը:

Քուե-ղարա գաւառ—Ա6—Բ6—ալախարհ-ցոյո-ում պահպանվել է Քուեղա, Քուեղա աղձատված ձևերով, վրաց. յալո-յո Կուե-ղարա ավան, որի անունով էլ կոչվել է գաւառը: Այս գավառը համապատասխանում է

Կախէթին նկ իմաստով, ուստի վրաց ազ-
բուրներում կոչվում է Լճի յանցի Գիդի
Կախէթի (Մեծ Կախէթ): Հիշյալ գավառը ըս-
կրվում էր Տղեարս կամ Գուրգուրս գյուղից
և Թուրքոս-խի վտակից մինչև Ալագան գե-
տի ակունքների շրջանը, ընդգրկելով 522 կմ²
տարածութիւն:

Քուէշի ամրոց—ԲՅ—վրաց. շրջան Գուէշի, այժմ
Ձվլի-Քվէշի անունով համանուն վտակի
վրա:

Քուիշա գետ—ԲՅ—վրաց. շրջանի Մալախուր գետի ձախ վտակը:

Քուիշափոք գետ—ԲՅ—վրաց. շրջանի Կուիշա-խի — Գուգարաց լեռնաշխարհի 12-րդ
գավառը Մալախուր գետի վերին հոսանքում,
համանուն Քուէշի ամրոցով: Քուիշափոք գե-
տի ընդգրկում էր 495 կմ² տարածութիւն:
Այս գավառը, համանաբար 363 թ. հետո, ան-

ջատվելով Գուգարքից՝ միացվել է վրաց աշ-
խարհին:

Քուստի գետ—ԲՅ—Արցախ նահանգի 11-րդ
գավառը, արար. Վուսթասջի, մոտավորապես
այժմյան Շամշաղի շրջանը՝ 1505 կմ² տա-
րածութիւն:

Քուսաք (Եխաք) աղգագետն—ԱՅ—այսպէս են
կոչվում «Աշխարհացոյց»-ում այժմյան Քիս-
տիքը, որոնք ապրում են Արդան գետի ա-
կունքների շրջանում: Եուն «Աշխարհա-
ցոյց»-ում մի այլ սեղ կոչվում են «Եխաք»,
որը բերում ենք փակագծում:

Քրվիլ լեռ—ԳՅ—Գեղիք գավառում, ենթադրա-
բար տեղագրում ենք այժմյան Ռաբաթ գյուղի
տեղում:

Քիլա գետ—ԲՅ—վրաց. շրջանի Երվա-
նիստի, այժմյան Երվան գետը:





ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՈՍՏԱՆԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ, ԲՈՒՎԱԿԱՆ ԵՎ ԿՆԵԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ
ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-Ի

Ակն բիրեղ—ԳՅ—Βήρυλλος, Βήρυλλιον, Beryllus, горный хрусталь, горный кристалл. «Ակն ինչ պատուական, որով լաւն առ հնդիկա՝ է կապուտակ ծովագոյն կամ երկնագոյն, և լետ նորա դեղնագոյն՝ խառն ընդ երակս սակաւ, և ալլն. վարի և ի պէտս դեղոց» (ՆՀԲ, I, 491): Ըստ «Աշխարհացոյց»-ի ցոլցման Եփրատ գետը, Արածանի գետի հետ միախառնվելուց հետո, «Երեւոյ ընդ հարաւ, հատանէ զլեւորն Տաւրոս. լորտմ տեղուք զաանի ակն Բիւրեղ» (Soukry, էջ 30): Այս վիպալութեան հիման վրա բյուրեղի հանքերը տեղագրում ենք այնտեղ, որտեղ Հայկական Տավրոսը ձգվում է դեպի հարավ-արեւմուտք և հասնում է Եփրատ գետով: Այլ է ասացուցում նաև ուշ շրջանի (XIII դ.) վիպալութունը. «Բիւրեղն՝ խաժագոյն է (կամ ծովագոյն) օդանման. և լինի սա ի սպառուած լերին՝ որ կոչի Տաւրոս, և ի լանցս Եփրատ գետուց, Ոսկեխոր. և Վարդան. Ել. (ՆՀԲ, I, 491): Բյուրեղի հանքերը նշված տեղում հայտնի էին հնագույն ժամանակներից:

Աղտոր—ԲԷ—Կոծոխոր, սմաղ, кожевенное дерево, кожевник, сумах—куст или деревцо Rhus cotinus, желтник, желтинник, рай-дерево, шевское дерево, кожевенное дерево—Rhus coriaria (Даль¹, IV, 360).

¹ Այստեղ և ստորի՝ Даль—Владимир Даль, Толковый словарь живого великорусского языка, тт. I, II, III, IV, М., 1956:

«Աշխարհացոյց»-ը հիշատակում է Տալքում, որտեղ և տեղագրում ենք: Ըստ Մխիթար արարալի՝ «Բառգիրք Հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1749, հատ. Ա, էջ 19) «Աղտոր... է պտուղ ինչ կարմիր և մանր, ոսպնածև, և համով թթուաշ՝ և զովացուցիչ սրտի, ունի ի մէջ իւր վերելի վաքրիկ, որով և կերևալ լինի. զսա լաճախ ի կիր արկանեն ի հանդերձանս կերակրոց. մանաւանդ արկանեն ի վերայ զամասկեան պաղակաւորի... լինի սա լաճախ ի Հայաստան ի լաշխարհն Տալոց, զոր պարսիկք կոչեն քաւրի. և արարացիք և տաճիկք սումախ, կամ սոմախ (ԲՀԷ, I, 19):

Աղսր—ԳԷ—Αλιόζ, Salsus, հանք աղի (ՆՀԲ, I, 44), соляные копи. Հիշվում է Բարձր Հայքում: Մենք տեղագրում ենք Մանանաղի գոլթառում, Մանանաղի (այժմ Թուզլու-չայ) գետի ձախ ափին, վերին հոսանքում, որտեղ նախատեղաւորն շրջանի ուստեան 10-վերստանոց քարտեղի վրա նշված է «сол. зав.», այսինքն՝ «соляныи завод»:

Այծեամն—ԲԸ և ԴԾ—Δόρυαζ, δόρυων, Caprea, dorcas և Capreolis parva capra, серна—род горной антилопы, дикая коза; серна—антилопа, сугак (от сайга, сайгак), родовое название животного между козы и оленя (более 50-ти видов), с неветвистыми рогами, Antilopa turicarpa на Кавказе, джейран—Antilopa subgutturosa. за Кавказом (Даль, I, 178). «Այծ վայրի՝ արարուարն և սրտասև, բաղմաճղի և ակար կղջև»

րօք» (ՆՀԲ, 1, 90): «Աշխարհացոյց»-ում հիշվում է Բարձր Հայքում և Պարսկահայքում: Անալուք—Բ5—Հնում այս բառը հասկացել են իբրև *Καρμηλοσάρδαλις, жираф*: Այսպես է հասկացել նաև ՆՀԲ (1, 102), որը «Աշխարհացոյց»-ի ցուցմունքը այն մասին, թե անալուքը գտնվում է Գողարքում, ավելացնում է՝ «որպէս և յնթէովպիս և ի Հնդկիս»: Առաջին անգամ այս բառը հիշտ մեկնաբանեց մեծանուն ուսուցիչ Ն. Աճառյանը. «...անալուք նշանակում է ոչ թէ «բնձուղա», այլ, ինչպես ցույց է տալիս Համշէնի բարբառը, Վեդնիկ» (Արմատտական բառարան, 1, 281): Անալուք—հոյն, հոյնիկ, 'Ελαφος. *Cervus elaphus*, олень *благородный*: «Աշխարհացոյց»-ում «անալուք»-հիշատակվում է Գողարքում, սակայն այս բառով կոչուելու պիտի նշանակելու այժմյան Համշէնի բարբառի ոլորտում ընկնող անբնորոշիակում, որ Գողարքի համար կարող էր լինել ձորոխ գետի ավազանը, մոտավորապես Կղարջք (վրաց. Կլարջէթ) գավառում:

Անիդ—Բ4—տե՛ս Հաւր ճարակաւորք:
 Առեւծ, առեւծ—Դ3—Λεων, *Felis, Leo, лев*, «Աշխարհացոյց»-ը առեւծը հիշում է Չորրորդ Հայքում, որ տարակուսելի է, սակայն չի բացաւում, որ դեռևս VI—VII դդ. Հյուսիսային Միջագետքում կամ Հայոց Միջագետքում առեւծը պահպանվել էր: Ասուրա-բարելական պոլիտերմերից և ասորեստանյան բարձրագույն գահներից երևում է, որ առեւծը շատ տարածված է եղել Տիգրիս և Եփրատ գետերի միջև ընկած անապատային վայրերում: Մենք առեւծը տեղադրում ենք Հայկական Միջագետքում, որ հավանական է այլ ժամանակաշրջանի համար:

Առն և արաիկ—Բ3—Առն, 'Αρνός, 'αρς, αρνος—«ազգ արու ոչխարի. թերևս ոչխար կամ գառն վայրի» (ՆՀԲ, 1, 307): Առն—շիկերէ, վայրենի արու ոչխար—дикий баран, каменный баран—самец этого животного, *Ovis argali*: Արաիկ, արաիկ—վայրի ոչխարի էզը, дикая овца, «Աշխար արաի, այսինքն վայրի» (ՆՀԲ, 1, 382), «Արաիկը բազում անգամ երկաւորեակու ծնանին»։ Վեցօրեայ, Թ: «Աշխարհացոյց»-ը նշում է Բարձր Հայքում, մենք տեղադրում ենք մոտավորապես:

Արսու—Բ4—տե՛ս Հաւր ճարակաւորք:
 Արաիկ, տե՛ս Առն և արաիկ:
 Բամբակ—Գ7—Ξυλον, παμψαξ, *Gossypium L.*—«Բերք բուսող ի գողակէ ելիալ՝ սպիտակ փափուկ, նիթ հանգերձի ի ջերմ պահել զմար-

մինս» (ՆՀԲ, 1, 430): Բամբակի սերմից լուղ են հանում, մնացած քուսպը անասունների ընտիր կեր է: *Eriophorum* (Ստ. Մալխ.,¹ 1, 321—2): Մեղ մոտ աճող բամբակը Վրկանի կամ Կովկասյան բամբակն է: «Աշխարհացոյց»-ը բամբակը հիշում է Փայտակարան նահանգում. «Փայտակարան, լինի ի նմա բամբակ անբուս» (Փատկանով, էջ 19): Մենք տեղադրում ենք Գարգարացոյց (այժմ Միլի) դաշտում, որտեղ բամբակը կարող էր բուսել վայրի վիճակում, այսինքն լինել «ինքնարոյս»: «Բամբակ անբուս» Աղվանքում հիշատակում է նաև Մովսես Կաղանկատուացին (1, 6) և, անշուշտ, նկատի ունի նույն Գարգարացոյց գաղար:

Գաղպի—Գ4—Գաղպէն, գաղպպէն, 'Ρητινη, *Resina. Μάννα. αϊουμελη, Manna, Манна—сахаристый, сгущенный сок ясени италянској (круглолистной)—Fraxinus roi un-difolia*: Գաղպեն արտադրում են ծառերի հացի տեսակները և կաղնիների շատ տեսակներ: Փայտոտու Բուղանդը (III, ԺԳ) Տարօնում, Հացեկաց գյուղի մոտ հիշատակում է «Հացեկաց զրախտ» անտառը, որտեղ և տեղադրում ենք «Աշխարհացոյց»-ում Տավրոսերան նահանգում հիշատակվող գաղպին: Ըստ ՆՀԲ (1, 522) գաղպէն է՝ «Ռետինի քաղցր որպէս զմանանայ թանձրացիալ ի ցողոյ երկնից ի վերայ տերեոց տնկոց և բուսոց»: Այլիկ պարզ է վկայում Չինոթ Գլակը. «Որպէս մանանայն աստ իջան է ի վերայ անտառացն, զոր գաղպպէն կոչեմք»:

Գարի—Գ7—Κριθη, *Hordeum vulgare, ячмень*—«Աղգ արմտեաց ցորենանման, կուր երիվարաց, և հաց նորա կերակուր աղքատաց» (ՆՀԲ, 1, 531): «Աշխարհացոյց»-ը նշում է «գարի ինքնարոյս» Փայտակարան նահանգում, որտեղ և տեղադրում ենք մոտավորապես:

Գերբրի—Գ7—Գետնասունի, գոմբալա, *Tuber melanosporum*, «Աշխարհացոյց»-ը հիշատակում է Սլունիքում, որտեղ և տեղադրում ենք, նրա հարավային, բուսականութեամբ հարուստ տեղում:

Գիճի—Գ6—Օίνος, *Vinum, ღვინო, вино*—«Աշխարհացոյց»-ը հիշատակում է «Գողթն գինեկետ»-ը, որտեղ և տեղադրում ենք:

¹ Այստեղ և ստորև՝ Ստ. Մալխ.—Ստեփաննոս Մալխասեանց. Հայերէն բացատրական բառարան:

Գղթոր — Գ4—Κηκίς, Galla, чернильный, дубовый орешек—«Բերք վայրի կաղնեաց, զոր վարեն խաղախորդք, ներկարարք, և դեղավաճառք» (ՆՀԲ, I, 563), «Գղթորից ստացվում է ընտիր և սև ներկ, որը գործ է անում թանաք շինելու համար» (Մալխ. I, 451): «Աշխարհացոյց»-ում գղթորը հիշատակվում է Աղծնիքում, ուստի մենք տեղադրում ենք վայրի կաղնիների (дуб чернильноорешниковый, Quercus infectoria) անասունների դարուստ Սանասունք գավառում:

Գեղնուկ — Գ4—«Հաւ դեղնուկ»—անհայտ թուչուն, որ հիշվում է միայն «Աշխարհացոյց»-ում մեկ անգամ Աղծնիք նահանգում: Այլ տեղեկութուն չունենալով, մենք հնարավորութուն չունենք որոշելու, թե թուչունների որ տեսակին էր պատկանում և քարտեզի վրա նշված է հարցական նշանով:

Եղջերու — Բ4—'Ελαφος, Cervus, cervus elaphus— ազնիվ եղջերու: Եղջերու էր կոչվում արուն, որ գլխի վրա կրում էր եղջյուրներ: Եղջերուի էգը կոչվում էր կղնիկ— лань: Եղն կամ կղնիկ նշանակում է նաև եղջերու ընդհանրապես:

Եղն — «էրէ գեղեցիկ՝ թաթահերձ, երազտան, սատակիչ օձից, բազմաճղի եղջերօք. յորմէ կոչի և եղջերու» (ՆՀԲ, I, 656): Պատմական Հայաստանում եղջերուն գոյություն ունեւր բոլոր բարձր լեռնային գոտիներում, որտեղ անտառ կար: Այժմ այս կենդանին Հայաստանում համարյա վերացել է:

«Աշխարհացոյց»-ը կղնիկը հիշատակում է Բարձր Հայքում. մենք զետեղում ենք անտառների դարուստ Ճորոխ գետի վերին հոսանքի՝ Չորմալրի շրջանում:

Եղեգուկ — Բ7—Եղէգն, Καλαμος, Arundo, calamus, камыш. Այս բույսը պատահում է ճահճուտ տեղերում և պատահական չէ, որ «Աշխարհացոյց»-ը հիշատակում է Փայտակարանի նահանգում: Մենք զետեղում ենք Բաղասական (այժմ Միլի) դաշտում՝ Կուր գետի եզերքին:

Երկաթ — Գ3 և Գ5 Σιδηρος, Ferrum, Էրոօճ, желе-30—Հայաստանում երկաթահանքերը հայտնի էին շատ տեղերում, հատկապես Հայկական Տավրոս լեռներում. «Աշխարհացոյց»-ը տեղեկություն է պահպանել միայն երկու տեղ՝ ա) Աղծնիքում՝ «ունի երկաթ քաջ կամ սունի նույն և երկաթ առավել», որը մենք զետեղում ենք Անգեղ-տուն գավառում, որտեղ շահագործում էին երկաթահանքերը՝ այժմյան Արդանա-Մաղինի հանքերում. բ) Տավրուրե-

րանում. մենք զետեղում ենք Երևարք գավառում, որին հարավից եզերող Հայկական Տավրոս լեռնաշղթայի այս մասը հին հայերը կոչում էին «Էհասուն երկաթահատացն և կապարահատացն» (Փաւստոս, III, Ժ):

Երկ — Բ4, Գ3—Θηριον, Երթա, Ferus, fera, երթուճո, дичь—«Վայրի կենդանի չորքոտանի՝ որսալի և ուտելի» (ՆՀԲ, I, 682): «Աշխարհացոյց»-ը այս հավաքական բառով է նշում որսի կենդանիները Բարձր Հայքում և Թուրքիայ Կողմում, որ և ցույց ենք տալիս համապատասխան տեղերում:

Զառիկ — Գ5— Ինչպես մեկնարանում է Հ. Աճառյանը (Արմ. բառ., II, 900—901), «զառիկ» նշանակում է «մկնդեղ, arsenicum». լինելով իրանյան փոխառություն, նշանակում է «սուկեպուն գեղին»: Նույն խմատով է բերված նաև Սոս. Մալխասյանի «Հայերէն բացատրական բառարանում» (II, 9): Ստիպան ուշադրություն չի դարձված, որ սույն բառի այս բացատրության կողքին գոյություն ունի ավելի բազմիմաստ մեկնություն, որը տալիս է Ա. Սուդարաչյանը. «Զառիկ... Опермент, самородный желтый арсеник, мышьяк, сандарак, можжевеловая смола» (Александр Худобашев, Армяно-русский словарь, Москва, 1838, ч. I, стр. 381): «Կերչինիս իմաստը ավելի մանրամասն տալիս է Վ. Դալը. Сандаракoвая смолка, сандарак, добывается из вида можжевела; писцы протирают ею скоблешки, чтобы писъмо не растекалось. Сандарак, реальный или красный мышьяк» (Даль, IV, 137). Այս բացատրությունից պարզվում է, որ «զառիկ» բառն ունեցել է նաև այլ իմաստ, այն է «ջնարակ», Σανδαράχη,¹ Sandaracha, qummi. «Բոյս ինչ և հիւթ նորա՝ խորժեղի մեղուաց, ուտի լինի ներկ կարմիր փայլուն որպես վիրնիջ՝ ըստ իտալ. սեմտերուս, սեմտելուս» (ՆՀԲ, II, 674): Զնարակ 1) Մի քանի կոնարեր ծառերից ծորող սեղանային խեթ, սպիտակ գեղճորակ, անհոտ և անհամ, արտասուքի կաթիլների նման, որ վառում է, պայծառ բույսով և ախորժեղի հոտով:

2) Զնարակից պատրաստված ջրդեղ. վերնիճ, որով ծելվում են կավե ամանները ներսի կողմից, փայլունություն տալու և ծակոտիները լցելու համար:

¹ Սանդարակը հիշատակում է Վերոնիկոսը Պոնտոսում:

3) Քիմիական նյութ, կարմիր ծծմբակ դասիկի (AsS), բյուրեղային, ազակենման, դլուրահալ, ցնդական, անհոտ, անհամ և սաստիկ թունավոր, որ գործ է ածում նկարչության մեջ, նաև հրախաղաթյան մեջ՝ սպիտակ բոց ստանալու համար, ջնարեկ» (Ստ. Մալխ., IV, 141):

«Ջութիկ» բառի իմաստը ավել կոնաեքստում գեոես կարիք ունի լուսարանման նոր ավալների հիման վրա: «Աշխարհացոյց»-ը հիշատակում է Կորճալք նահանգում, որտեղ և գրել ենք ենթադրաբար:

Թուզ—Բ4—Թղենի ծառի պտուղը, Հայաստանում աճում էր հատկապես անտառապատ տեղերում, բարեխառն կլիմա տնեցող հովիտներում: «Աշխարհացոյց»-ում վկայված է Տալքում: Պարմանականորեն ցույց ենք տալիս Ագորդ (այժմ Թորթում) գետի ձորում:

Ինճ—Դ5—Leopardus, барс, пантера, леопард. «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է Քհնձ գեղեցիկատայտ Մոկք նահանգում, որտեղ և ցույց ենք տալիս:

Խոզ—Բ4—Sus, Porcus, վարազ, կինճ, свинья, боров, кабан—свиной самец; вепрь—дикий кабан, дикий свиной самец; веприца—дикая свиная самка. «Աշխարհացոյց»-ում հիշվում է Բարձր Հայքում. մենք տեղադրում ենք «Շամբ Կարնոյ» կոչված ճահճոտներում:

Կատանոն (մաշկամիրգ)—Դ4—Fagus castanea, Կատանայ—«Պառզ լալանի, և ծառ նորա, որ և շագանակ՝... և Շահպալուա (իր արքայական կողին)» (ՆՀԲ, I, 1060): Կատանայի (շագանակի) ծառը կոչվել է «կասկենի» (ակն առդ, էջ 1059): Կատանայ—շագանակը մաշկով պատած լինելու պատճառով կոչվել է նաև «մաշկամիրգ» (Ստ. Մալխ., III, 259): «Մաշմրգի է կոչվել Շագանակի ծառը և նրա փայտը» (անդ): Մաշկամիրգ էր կոչվում հատկապես վալրի շագանակենին—Aesculus hippocastanum, каштан дикий, որ և տարբերվում է ընտանի շագանակենից—Castanea sativa կամ vesca: «Աշխարհացոյց»-ը Տավրոսի նահանգում հիշատակում է «կատանան որ է մաշկամիրգ». զետեղում ենք Արածանիի հովտում:

Կատակ—Բ7—այս բառի իսկոխան իմաստը մնում է անորոշ: ՆՀԲ (I, 1060) քայտարում է իրբև՝ «Ալգ թուչնոյ, թերևս նոյն ընդ Կատար

(պարակ. Քեսեք, որ է անձեղ, արար. ազազ, թուրք. սաղսըղան)»: Կատարը նույնացվում է արար. gudaֆ կամ gadaֆ, իրբև Վի տեսակ ազազ կամ մի ուրիշ թուչուն: Անարոշ տեսակի խոտաճարակ թուչուն: Ըստ Քաջ բերանու լրամարդի նման թուչուն, բաճրասրունք, երկայն կտուցով, երկայն մասներով ու կարճ պսոթի, որ բնակվում է մայաներում (Rajlus)» (Ստ. Մալխ., II, 396—397): Լորամարդին հայանի է իրբև «Տատկապես մարդերի մեջ վազվող լորի պարարտ ձաղ» (անդ, II, 209), իսկ լորը՝ «կաքավների ընտանիքին պատկանող փաքրիկ չվող թուչուն» է (անդ):

Այս ցուցմունքներից հատկապես հետաքրքիր է այն փաստը, որ կատակը նույնացվում է անձեղին: Ըստ ՆՀԲ (I, 166), անձեղ կամ անձեղը է «թուչուն նման կիսի, կամ կաչաղակի, ի չափ աղանոյ, սպիտակավետար սևախառն, երկայն տամբ»: Նույն կարգին է պատկանում նաև կասկամ թուչունը: Ըստ ՆՀԲ (I, 1059), կատակ է «Ալգ բուռ, բուխճակ, պալուռ, յոր հայլ տակն Մխ. սակ. Քերխճակ աղաղակ է կաս, և միւսն սակ կամ. սակայն ոչ կայ, այլ թրուպեալ այլուր երթալ»: Նշանակալից է, որ այս անձեղ, կասկամ և կատակ թուչունները նույնացվում են կաչաղակին: Ըստ ՆՀԲ (I, 1053) «կաչաղակ—Кітца, Пика, տես Անժեղ, ԿԱՍԿԱՍ, ԿԱՏԱԿ: Անուն թուչնոյ, որ ի բժշկարանին գրի «կեչեղակ, սաղսըղան, լաղաղ»:

Այս ավալները ցույց են տալիս, որ կատակ է կոչվել կաչաղակի խմբին պատկանող թուչունը: Կարելի է ենթադրել, որ կատակը հեթանոսական Հայաստանում սրբազան թուչուն էր, նվիրված Միհր աստծուն և ընդհանրապես կոչվել է աղաւ: Օրինակ Միհրի պաշտամունքի գլխավոր կենտրոնները, հուշակված իրենց սրբազան քարայրներով, որտեղ կատարվում էին միհրական ծիսակատարությունները, կոչվում էին Ազաւարքար: Մեկը սրանցից դասվում էր Վան քաղաքի արվարձաններում և ժողովուրդը կոչում էր «Ալլիփու քար», մյուսը՝ Անձեղացույց զավտում, որտեղ հետագայում հայանի էր Հոգվոց վանքը: Անանիա Շիրակացին բերում է հունական մի ավանդություն, որ որոշ լույս է սփռում մեղ հետաքրքրող հարցին: Նա ասում է՝ «Յառապալս հեթանոսաց՝ երբևմն սիրելի Ապոդոնի վասն սպիտակն գոլոյ, այլ լետոյ փոխեալ ի սևութիւն. և վասն լամիոյն ի բերել ջուր՝ փոխադրեալ լաստեղս ի ներքոյ աստեղատան Ասիւծուն և Կու-

սին՝ դէպ չԼմպանան, առ ստամբ Վիշապին» (ՆՂԲ, I, էջ 3, «Ազոու» բառի տակ):

Մեր խնդիրը պարզաբանելու համար կարևոր է հիշել, որ կատակ բառից են առաջացել կատակ, կատակիբոլորիւն, կատակերգակ, կատակագուսան, կատակութիւն բառերը, ճիշտ այնպէս, ինչպէս մի այլ թռչունից՝ կաքաւից առաջացել են՝ կաքաւ, կաքաւանք, կաքաւերգութիւն, կաքաւիչ և այլն: Ըստ Փաւստոսի (Գ, 19) Երմայէին անդ զինի բողոք և վարձախօսք և դուսանօք և կատակօք: Մի այլ տեղ՝ «ի կատակացն, ի գուսանացն ձայնս: Կատակաց և կաքաւչաց սնուցիչք» (Ն. Լամբրոնացի, Ժող. և իմ.): Ըստ ՆՂԲ (I, 1060) կատակերգակ նշանակել է՝ *Κωμῳδός*, Comoedus, «Երգով կատակող ի թատրոնի, քերթող քատակացոյց և ծաղրածու, միմոս, որ և լուսն. ձայնին կոմիկիան», ապա բերում է վերին աստիճանի հետաքրքիր և կարևոր մատենագրական վկայութիւններ. «Եւրիպիդէս ողբերգակ... Արիստոփանէս կատակերգակ երեւին», Շիր. Քրոն... «ՉՄենանդրոս ասեմ զգլուխ կատակերգակացն: Ըզոյժ հրաշակելոյ կատակերգակիս Մենանդրի», Գիրք Պիտոյից: Ինչպէս գոյութիւն ունենաւ նոյնազերգութիւն, ողբերգութիւն՝ արագեկտիլի իմաստով, այնպէս էլ գոյութիւն ունենաւ կատակերգութիւն՝ կոմիկիլի իմաստով: Ըստ ՆՂԲ (I, 1060), կատակերգութիւն է՝ «*Κωμῳδία*, Comoedia, fabula, satira. նուագ և խաղ ծաղրաշարժ կամ միմոսական. գործ կոմիկիանց ի թատրոնի, ծաղրածութիւն». : «Ողբերգութեան արտօսը հետեի, իսկ կատակերգութեան ծաղր», Նոննոս: Մի այլ տեղ՝ «Վագներգութիւն, փանդոններգութիւն և կատակերգութիւն: Կատակերգութեանցն զեղեցկագոյնք առանց ծիծաղանաց են», Պղատ. օրին. Բ, է, Ժա, կամ՝ «Երգս կատակերգութեան ջնարահար պրոնկի», Նար. Լթ.:

Վերև բերված վկայութիւններից կարելի է կռահել, որ կատակ թռչունը կաջադակի կամ ազոուփի տեսակին պատկանող թռչուն է եղել և համարվել է սրբազան: Կատակ-ազոուը կապվում է Միհրի պաշտամունքի արարողութիւնների հետ, որոնք կատարվում էին այդ աստծուն նվիրված քարանձափներում: Միհրական միասերիաները ունեին օրգիստոսի բնութիւն և «կատակ» կամ (քատակ), «կատականք» նշանակել են Միհրին նվիրված սըրբազան պարերը: Այս կապակցութեամբ հետաքրքիր է բերել Յակոբ Մծբնացուն վերաբերյալ կոնտեքստը. «Ապականուցին բա-

զինք կատակութեամբ» (ՆՂԲ, I, 1060): Ըստ երևույթին, այս սրբազան պարերը կատարվում էին հատուկ զգեստներով և կատակ թռչունի դիմակով: Կատակ կամ քատակ բառի հետ պիտի կապել վրացերեն ჯადოვო քաղა-գի¹, որ նշանակել է նաև ուխտագնաց, ընկնավոր, որը էքստազի մեջ գորշակութիւններ էր անում: Պիտի ենթադրել, որ Ստրաբոնը (XI, 4, 7) այս «կատակները» նկատի ունի, երբ խոսում է Ազովանից երկրում ընդունված մարդկային զոհերի մասին, ուստի պատահական չպիտի է համարել, որ «Աշխարհացոյց»-ում կատակ թռչունը նշվում է Ուտիք աշխարհում: Մենք կատակ թռչունը տեղադրում ենք Ուտիք Առանձնակ գավառում:

Կաքաւ—ԲԷ—ԴԾ—ասոր. qaqawa, Πέρδιξ, Perdix, վրաց. ჯადო կակարի՝ рядчик, Tetrao bonasia. Ըստ ՆՂԲ (I, 1080) «թռչուն սաստստող՝ մոխրագուլչն ճանձկէն՝ կարմրակուռց, և կարմիր ստիւք, փափկամիս, ի չափ պարարտ աղաւնոյ, և նման լորամարդի»²: «Աշխարհացոյց»-ում կաքաւ թռչունը հիշվում է Բարձր Հայքում, որտեղ և նշել ենք:

Կըկիթ, տե՛ս Վիթ:

Հանառաձառ—ԲԾ—Հաճարի, հաճարիկ, հաճարուկ, աճարի, հաճարենի, աճարենի, Бук, Fagus sylvatica կամ Fagus orientalis, Երաժակարենների կարգին պատկանող մեծ զեղեցիկ ծառ, ողորկ մաքրագուլչն կեղևով, հափկըթաձե կաշեկերպ լերկ տերեւներով, կակղափուշ չորեքանկուրենի փոճակի մեջ դորշ լուղալի եռանկուրենի կաղիններով, կարճ կարմիր փայտով, որ ընտիր վառելիք է, փեկոն: ...Հաճառի պտուղներից ստացվում է համեղ ձեթ, նման նշի ձեթին: Հաճարի պտուղը կոչվում է նաև Աճառի, Պիտակ աճառի (Ստ. Մալխ., III, 19): Бук белый—Carpinus betulus, граб, грабина, бук черный в южной Европе. У Кавказских арб буквые оси (Даль, I, 139): Ըստ ՆՂԲ (II, 10), «հաճարի, հաճարուկ, անուն ծառոյ. «Չհաճարի և զփիճի, զի ոչ են բազմոսաք, և ոչ ընդգլխմանալ հողմոց կարեն» ի խոր արմատս ոչ ունելով: Մխ. ստակ. ԻԲ: «Մուրան և ընկողն և նուշն,

¹ Նշանակում է քարոզող, ուսուցիչ, վարպետ:

² Այս բառից են առաջացել ա) «Կաքաւ» կամ կաքաւ, "Ὀρχήσις, χορὴς, saltatio, chorea, tripodum, խաղ սաստոսելոյ, կայթ, պար, որ է կարաւանք, կարաւումն: բ) «Կաքաւարան», Ὀρχήστρα, ὄρχηστρῶν. Orchestra; pars theatri, in qua chorus saltabat: Տեղի կարաւելոյ և պարուց և թատրոնի: գ) «Կարաւիչ», Ὀρχομενος, ὄρχηστρῆς, Saltater. Այր կամ կին՝ որ կարաւէ» (ՆՂԲ, I, 1080) ևն:

և քնորուկն, և հաճարուկն» Աղաթ.: «Աշխարհացոյց»-ը ցույց է տալիս Գուգարքում, որ հատկապես հարուստ էր աճարկաւաներով հատկապես այժմյան Լուսիւմ: «Քեօթուկ Սանահնի» (Մատենադարանի ձեռ. № 3031, էջ 70բ—77բ) մատչանում, իրրև Սանահնի թեմի սահման, հիշատակվում են «Ջանդարածոր» և «Աճարածոր»: Առաջինը կապվում է «Ճանդար» բառի հետ, որ նշանակում է բարտի ծառ և տեղադրվում է Ալզեա գետի ներքին հոսանքում, որտեղ այժմ էլ գոյութուն ունի Ջանդար գյուղը, Մառնետի շրջանային կենտրոնի մոտ Ջանդարածորից ոչ հեռու պետք է գտնվեր Աճարածորը: Այս վերջին տեղումն ենք գետակում «Աշխարհացոյց»-ի «հաճարածոր»-ը:

Հարք—ԳՅ—'Ορνισον, ὄρνιθιον, Avis, avicula, ΠΗΥΑ, ընդհանրապես թռչուն և մանավորապես հավազդիների պատկանող թռչուն. հաւ նեղ իմաստով նշանակում է որձ հաւ՝ աքաղաղ, աքոր, իսկ հաւի էզը կոչվում էր մարի (Տէգ հավ կամ թռչուն, մայր ձագուց): «Յաղթամարմինք հաւքն՝ փորն և թանձրն և սալն, Դ, Փարպ.: Այսպիսի սեւաւք» անորոշ ձեռով «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է Ծոփաց կողմը, որտեղ և գետեղում ենք:

Հարք նարակաւորք—ԲԷ—Ճարակող՝ արածող, արտատկան թռչուն, ճաւ, որ ճարակին ի դաշտս», «Անբաւութիւն ձկանց, և զանազան հաւուց ճարակաւորաց Ոսկ. (տես ՆՂԲ, II, 174): «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է Բարձր Հայքում՝ «ե ի հաւուց ճարակաւորս, զորս կաքաւ, զարաւշ, զանիգ և զայլլս»: Քարակողի վրա ցույց է տրված Կարին գավառում:

Ձիթենի—ԲԴ—'Ελαια. ἔλαιον, Olea, oliva, olietum, olivetum, олива. Ձիթաբերենի կարգին պատկանող ծառ, որի պտուղից՝ ձիթապտուղից լավագուշն ձեթն է ստացվում: «Աշխարհացոյց»-ում ձիթենին հիշատակվում է Ուտիք նահանգում, մենք ցույց ենք տալիս Ուտիք Առանձնակ գավառում:

Ձիղկ—ԳԷ—անորոշ տեսակի հանքալին նյութ, որ հիշատակվում է միայն «Աշխարհացոյց»-ում և, ալլ տվյալներ չունենալով, դժվար է որոշել հիշատակվում է Տավրոսերան նահանգում Մեղեղուղի և Այծպտիւնք լեռներում՝ «գոտանի սալակ և ձիղկ և նաւթ սե և սպիտակ» մենք գետեղում ենք Մեղեղուղի լեռներում հարցական նշանով:

Չուկն—ԱԸ, ԲԾ, ԲՅ—«Աշխարհացոյց»-ում հիշատակվում է չորս տեղ:

ԱԸ—Վրաց աշխարհում, որի մասին ասված է՝ «տանի գետս լի ձկամբք». մենք ցույց ենք տալիս Արագւ գետի մոտ, որտեղ մինչև հիմա էլ որսում են Շորագուլի» կոչված ձուկը:

ԲԾ—Ջաւախք՝ Վերին գաւառում, որի համար ասված է՝ «չեառնապաշտքն Ջաւախաց բաղում լճօք լի զանազան ձկամբք»: Մենք նշել ենք Փարվանա լճում, որը հալտնի է իր կարմրախալոսների ցեղին պատկանող ձրկներով:

ԳԸ—Ծոփաց աշխարհում. մենք ցույց ենք տալիս Արածանի գետում:

ԳԾ—ձուկն [տառեխ], տե՛ս [տառեխ] ձուկն:

Մանրագոր — ԳԾ — Μανδραγόρα, Mandragoras Mandragora officinarum, mandragora. Ըստ ՆՂԲ (II, 207). «ԲՅյ կամ թուփ, որ բերէ պտուղ իր մանր խնձոր ի չափ սիտան կամ ողիւզակա: որոց հասքն են իրրև արքակաղնոյ, և ժողիկն անուշահոտ. զորմէ բաղում են կարծիք աւ զանազան. ալլ առավել կարծի բանջար ինչ, որոյ արմատն իցէ որպէս բոցկ՝ ուրուական նմանութեամբ մարմնոյ մարդոյ, և լինիցի գեղ թմրեցուցիչ և քնաբեր. վասն որոյ ասացեալ ի լատ. նաև Circaeum, իրր գործի Կիրկեսի զեղատա վնկի, և Semihomo, կիսամարդ, և Vesanium gramen, բոց՝ որ լայլոյ խելս առնէ զմարդ ի սիրոյս... Շերին կրին ծաղկանցն, որպէս մանրագորն, և վարդն, և շաշանն». Աղաթ.: Այս բույսը այժմ էլ տեղիվորդը գիտե և կոչում է լոշտակ կամ մարդ-արմատ: «Աշխարհացոյց»-ում մանրագորը հիշատակվում է Մոփաց աշխարհում, որտեղ և նշում ենք:

Մաշ կարմիր և սպիտակ—ԳԷ—Մաշ, սանս. masā—լորի, քրդ. maš—ոսպ, բակլա, Pisum sativum: Ըստ ՆՂԲ (II, 208): «Ուրուն մանր, կամ ոլոռնաձև ընդեղէն», «կաղմեալ կալր մաշ ի դարմանն հիւանդաց, և սնափառէր, և ալլոց սիրմանեաց և հընդոց ոչ տարեալ՝ այսպանն զնովաւ, և դո. (ասեն) ծանծաղամիտ գորով, ըստ որում մաշ կոչիս, փքաս»: Մի. առակ. ԽՁ: «Մաշ կարմիր և սպիտակ» «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է Տաւրոսերան նահանգում, որտեղ և նշում ենք:

Մուրա—ԳԴ—Μύρτος, Myrtus communis; μυρτ, мирсина—растение, кустик, похожий на вереск и на букс или самшит. Ըստ ՆՂԲ (II, 301), «Ծառ, որ կոչի նաև մրտենի, մրաի.

և պտուղ նորա. μύρρον, bacca, -sive fructus myrti. Տունի կամ թուփ մանրասերև մըշտականաչ անուշահոտ, որոյ պտուղն է իրրև համեմ կծու՝ արտորժելի սակայ ճաշակողացն, այլ անախորժ անտոժորից: Ճերևս մրտոց խնկենեկաց: Զոտոսխն, զմարտն, և զնոճն, Նևեմ. Ը, 15: Ես, խա, 19, Ծէ, 13: ՎՄարտ և տոսխն, զիւր և զարնիւք: Վեցօր. Ե.ձ: ՎՁխարհացոյց»-ում հիշատակվում է Սլուենիքում. մենք նշում ենք Երասխի հովտում, որտեղ (այս մասում) աճում են մերձարևադարձային բույսեր:

Նաւթ — Դ4 — Νάφθη, Naphtha, բոս նձԲ (II, 409), Վեղբ կարոյ՝ լոյծ և զիրավաւ և զմուարաչէջ, որ և անշէջ սաթ աւ լոյնս. «Ασφαλτος, Bitumen». ՎՁխարհացոյց»-ը նալթը հիշատակում է Աղճնիքում. քարտեղի վրա նշում ենք մոտավորապես:

Նաւթ սև և սպիտակ — Դ4 — հիշատակվում է Տավրուրերան նահանգում՝ Մեղեգուղիս և Այծպըտիւնք լեռներում, որտեղ և զետեղում ենք:

Նաւթ սպիտակ — Դ4 — հիշատակվում է Տավրուրերան նահանգում. մենք նշում ենք Տարոն գավառում, այժմյան Եորշն գյուղի շրջակայքում, որտեղ այժմ էլ հայտնի են նալթի աղբյուրներ:

Նհաւեգ — Դ3 — Ἴπποπόταμος, Hippopotamus, equus fluvialis, crocodilus, draco acuatilis: Բոս նձԲ (II, 430). ՎՁիտղեախ, զաղան ջրային, որպէս կոկորդիլոս, վիշապ ձուկն, փոխ, և այլն: ՎՁխարհացոյց»-ը բերում է ավանդութուն, Վևսեն թէ նհանգ կայ յԱրածանի, որպէս լնփրատ, որ, անուշաւ, սխալ է: Արածանի գետում կոկորդիլոս չէր կարող ապրել, այն կարող էր բարձրանալ մինչև Եփրատ գետի միջին հասանքը, որտեղ և նշում ենք:

Նուշ — Բ4 — Ἀμύγδαλον, Amygdalum: Բոս նձԲ (II, 452), ՎԱղնիւ և իւզային պտուղ անուշ մտանած կամ կաղնած սափարակ երկայն, ընտիր քան զամենայն չոր միրգս փեճեկաւորս: Ծառն ևս կոչի Նշեխ կամ Նշի, ևս և Նուշ: ՎՁխարհացոյց»-ում հիշատակվում է Տալքում, որտեղ և զետեղում ենք:

Նուռն ազնիւ — Դ7 — բոս նձԲ (II, 452), ՎՆուռն, նոռն, նոռնք, կամ նրճուռնք, նաանց: Ροδά, Malum punicum, malagranatum... Պտուղ գնդաձև՝ թագ ի գլխիս, կարմրակիզ և կարմրահատ կուռն մարգարառաչ հասիւք. անուշ, կամ թթուաւ, օգտակար որպէս բղղեղ զտարար: ՎՁխարհացոյց»-ը հիշատակում է Սլուենիքում. մենք նշում ենք Արևիք գալիս-

ում, որը այժմ էլ հայտնի է իր ընտիր նուսով:

Նուռն քրու — Բ4 — ՎՁխարհացոյց»-ը հիշատակում է Տալքում, որտեղ և նշում ենք:

Նսեղանակ — Դ5 — կամ շահնդակ, կանեփի սերմ, կանեփի հատիկ (Մալխ., III, 494): ՎՁխարհացոյց»-ը նշում է, որ կարճալք նահանգում աճում են Վի պտղոց շահնդակ, այսինքն զանգար փշու սերմն: Զետեղում ենք Մեծ Զար գետի հովտում:

Որդան կարմիր — Բ6 — Coccus cacti, κοκκινιά (Որդան կարմիր խոտ — Aeluropus villosus) (Մա. Մալխ., III, 581): Բոս նձԲ (II, 528) և... (առաջ ի սևուկանէ բասիս Որդն) Κοκκινιον, Coccinum, Բնախին ի մէջ կարմիր ներկոց, այն է փոքրիկ և կարմրիկ որդն գետալ ի տերևս վալլի կաղնոյ, այսինքն բալամուախ, որպէս և նիթն ներկեալ նովին, որ պարզապէս կարմիր կոչի լոյտակի. զըմբղ: Հալաստանի որդան կարմիրը մեծ համարով ունիւր ամբողջ Հին Աձխարհում: ՎՁխարհացոյց»-ում որդան կարմիրը հիշատակվում է Ալլարատում. «որդն յարմատոյ սիզոյ առ ի զարգ կարմրութեան գաւնոյ: Որդան կարմիրը մինչև վերջերս հայտնի էր Արարատյան դաշտում Վաղարշապատի և Արատշատի միջև բնիած դաշտավայրում, որտեղ և նշում ենք: Որդան կարմիր ներկով զրաղվող ներկարարները հատկապէս կենտրոնացած էին Արատշատում: Միջին դարերում Արատշատը կորցրել էր իր նախկին փալլը և համարվում էր Դվին մալլաքաղաքի արվարձաններից մեկը: Արարատյան հեղինակները ալս ժամանակվա Արատշատը կոչում են Վալլարմը» — Վերկարարների քաղաք:

Պիստակ — Դ4 — Πιστάκιον, Pistacium. Բոս նձԲ (II, 649) Վերկին ազգ պտղոյ, մին կոնոնածե բերք ծառոյ, որ նման է մալրեաց, և միւսն սղկուգածե, բերք ալլոյ անկոյ: ՎՁխարհացոյց»-ում պիստակո հիշատակվում է Տավրուրերան նահանգում. մենք զետեղում ենք Հայկական Տավրոսի հարավային — արեգունի փեշերին:

Պաղախուրակ — Բ5 — Древесный садан. Բոս նձԲ (II, 654) ՎՆուռն անուշահոտ պտղոյ և ծառոյ նորա՝ բոս Մա. Մալխ. (IV, 124) ՎՆորոշ տևակի ծառ, որ տալիս է խնկի նման անուշահոտ պտուղներ(?) : Այլ վկայութուններ չունենալով, բասիս խմատը տակավին մնում է մտթ: ՎՁխարհացոյց»-ում

հիշատակվում է Տալքում, որտեղ և նը-
շում ենք քարտեղի վրա:

Ջերմուկ—Գ.4—Θερμαε. Thermae, теплые воды.
Հայրական լեռնաշխարհը հարուստ է իր ջեր-
մուկներով, որոնցից մի քանիսը հայտնի էին
իրենց բուժիչ հատկություններով: Հին Հա-
յաստանում առանձնապես մեծ հռչակ էր
վայելում Կարնալ գավառի ջերմուկը, ան-
տիկ հեղինակների Elegeia վայրում (այժմ
Իլիջա), որը և աչքի առաջ ունի «Աշխարհա-
ցոյց»-ը, հրբ հիշատակում է ջերմուկներ
Բարձր Հայքում, որ և ցույց ենք տալիս
քարտեղի վրա:

Սալակ—Գ.4—միակ վիայությունը գտնվում է «Աշ-
խարհացոյց»-ում, սուսի մնում է անբացա-
տրելի. անհայտ անասնի հանքային նյութ:
Վերջերս պարզվեց, որ պահպանվածն դատա-
տանագրքում «Մատիկան հաղարի Գատա-
տան»-ում «սալակ» նշանակում է ձուլ արծաթ:
«Աշխարհացոյց»-ում սալակը հիշատակվում է
Տավրուսերան նահանգում Մեղեղուղի և Ալմ-
պրտիունք լեռներում՝ «...Մարդաղի (գաւառ)
առ Մեղեղուղի լեռամբ, մինչև ցնոյն Ալմ-
պրտիունս որ բաժանէ ընդ Կարին և նա (ալ-
սինքն՝ Մարդաղի գավառը--Ս. Ե), յորում
գտանի սարակ ևւ ձիղի և նաւթ սև և սպի-
տակ» (Soukry, էջ 31): Քարտեղի վրա Մե-
ղեղուղի լեռներում նշված է՝ «Սալակ [ար-
ծաթ]»:

Սերիելի—Բ5, Բ6—Սերիելի, Κιθόνιον μαύον,
Cydonium malum, cotoneum, malum sydo-
nia, cotoneus, Cydonia vulgaris, айва. Ըստ
ՆՀԲ (II, 708) «Պատու գեղին՝ մեծ քան
զինձոր, ախորժ թխուխառն, և ծառ աչնր
պըղպու... լուն. դիտածիծն, որպէս բերք Կի-
տոն քաղաքին Կրեսալ»: «Աշխարհացոյց»-ում
սերիելին հիշատակվում է Տալքում (Բ5)
և Գուգարքում (Բ6), որ տեղերում և նշված
են քարտեղի վրա:

Վարընկենի—Բ7—померанцевое дерево. Ըստ
Ստ. Մալխ. (IV, 314) «Վարընկենի»—
«Սիրաբ», բառը գործ է ածվում նաև այլ պը-
տուղների համար, ինչպես կիտրոն, խնձոր ևն:
Ըստ ՆՀԲ (II, 797) «Վարունի. ըստ նմանու-
թեան ձևոյն՝ նոյն է ընդ և կիտրոն, հուն. γι-
τρων, malum citrinum, և ընդ այլ նմանաձև
պտուղս: Ուրեմն «վարընկենի» բառը պիտի
նշանակե citrus vulgaris, цитрус, և հետա-
քըրքիր է, որ «Աշխարհացոյց»-ը նշում է

Ուտիք նահանգում: Քարտեղի վրա «Վարըն-
կենի (կիտրոն)» նշված է Ղարաբաղի դաշտա-
վայրի Կար գետի ափերի մոտ, որտեղ կա-
րոյ ևն աճել միթարեադարձային կուլտու-
րաներ:

Վիր և կըկիր—Գ3—Δόρα; Carpa, Antilope
dogas, газель, сайга. Газель—название
родовое: африканское живогное из рода
саег или серн; рога козы, стан олений
(Даль). «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է
բարձր Հայքում «վրթ և կըկիր»՝ Վրթը բա-
ցատրվում է, իբրև ապրեամն, յամոյր, և
որթ նոցա» (ՆՀԲ, II, 820), իսկ «կըկիր»-ը
բառարաններում բացատրվում է իբրև «Անո-
րոշ ցեղի կենդանի» (Ստ. Մալխ., II, 446):
Բանասերները աշարթութուն չեն գարձել,
որ «Աշխարհացոյց»-ում որսի կենդանիները
հիշատակվում են զուլդ-զուլդ արու և էգ—
ապր և քաղ, «առն և արախ», «վրթ և կը-
կիր»: Այս օրինակները մեզ իրավունք են
տալիս ենթադրելու, որ այլալ դեպքում, եթե
վրթը արուն է, ապա վրթի էգը պիտի նըշ-
վիր մեզ հետաքրքրող «կըկիր» բառով: Վր-
թը և կըկիրը հիշատակվում են Բարձր Հայ-
քում, որտեղ և ղեանդել ենք:

[Տառն]ս ձուկն—Գ5—Ταρυχο;—աղած ձուկ: Տա-
ռին է, ըստ ՆՀԲ (II, 848), «Աղղ ձկան՝
առաւել ի ծովն Վանայ, թըղաչափ, սպիտակա-
գոյն, և ձևով նման Բէֆֆալի, որ և ապխտեալ
վաճառի»: «Յաւարս բարեկենդանին եկեալ
կարասն ի յարեկից ի քաղաքն Անտիոքալ՝
բարձեալ բերէին տառին ձուկն», Մ. Ուռն.:
Ըստ Ստ. Մալխ. (IV, 377), «1) կակաթե
ձկների մի առանձին ցեղ, մի հաս կոճակի
լողարճով, մեծ և գլուրաթափ թևերով,
որոնց թլին պատկանում են ծովային տառե-
կը կամ հարինգը (Clupea Harengus), անձ-
րակը (Engraulis encrasicolus), ազկերը
(сардин): 2) Մասնավորապես Վանա լճում
մեծ քանակութլամբ բնւոյող մանր հարինգը,
որ թե թարմ ևն ուտում և թե աղում ևն ու
չորացնում՝ իբրև ձմեռվան պաշար և տառերի
առարկա: Տառիկը որսում են գարնան վեր-
ջերին, զլխավորապես Բենդիմաճի (= ձկնա-
կալանք) գետի բերանում, ուր դիմում են
ձկները ձկնկիր թափելու»: Բենդիմաճի գետը
հնում կոչվում էր Ասետ գետ, որի գետաբե-
րանի մոտ էր գտնվում Ասետավանը: Վեր-
ջնումն էր ըստ Փալստոս Բուզանդի (III,
Բ), արքունի ձկնորսարանը՝ «ձկնատեանք
արքունի» «Աշխարհացոյց»-ում տառիս ձու-

կը չի հիշատակուում, ալլ ասված է Վուստաւան, ուստի կլանէ ձուկն, որ մեզ իրավունք է տալիս հիշելու կետի մոտ նշելու փափագներում՝ «[Տառերի] ձուկն»:

Տաւալի կամ Տոսալի—*Βύξ—Πόξος, Buxus, Buxus sempervirens, ծեծ Բդա, Taxus baccata, Тис, красное дерево.* Վճուռնի մշտադալար մանրատերև ծանրահոտ. և փայտ նորա խիտ և ծանր, մինչև ընկղմիլ ի ջուր» (ՆՀԲ, II, 902): Ըստ Ստ. Մալիս. (IV, 452), զկաղանջանազգիների կարգին պատկանող թուփ՝ մշտադալար համկըթածն՝ պիրկ ու փայլուն տերևներով, մանր՝ դեղնագուլն—ճերմակ ծաղիկներով, սաստիկ կարծր՝ դեղին փայտով, որ շատ հարգի է ճախարակագործութեան, քանդակների և երաժրշտութեան սրինգներ շինելու համար, շիմշիր: Այս ծառի անտառները՝ «տոսախոտ» են: Եւրոպայում սաստիկ նոսրացել են: Վճխարհացոյցում տոսալը հիշատակուում է Գուգարքում, որ պետք է ենթադրել վերջինիս արեմտյան ծալրամասում, հատկապես բուսականութեամբ հարուստ Ճորոխ գետի ավազանում, որտեղ և նշված է քարտեզի վրա:

Ցիւ.—*Ἄσινος—Onager, Equus Asinus ferus, онагр, дикий осел.* Ըստ ՆՀԲ (II, 913), Վճալարի, էջ վայրենի ի ձև ջորույ, գորշախալտ բաղմադուր մանուածով. շրջի լանապատ և ի բարձր լերինս և ի քարածալս. և նեղի լուծ ի ծարաւոյ, խանչէ լորճեալ պահու: Վճխարհացոյցում ցիւը հիշատակուում է Պարսկահայքում, որտեղ և ցուլց ենք տալիս՝ Կոհ-ի-Նիհորական լեռների արեմտյան փեշերի լերկ ապառաժների վրա:

Քաղ և ալծ—*Ἄζ—Քաղ, Трѣгон, Hircus, որձ ալծ, քոշ, նոխաղ: Ալծ, 'A:ξ, Capra, Վճղ խաշին՝ նման ոչխարի, ալլ անհանգարտ, լանդուղն, և ճարտար, մօրուանի, և երկայն գիտովք*

կամ մազովք մարմնոյ ողջոյն, արականն կոչի Քաղ, իսկ Ալծ՝ է առաւել էգն քան արուն» (ՆՀԲ, I, 90): Վճխարհացոյցում հիշատակուում են՝ Վալք և քաղա, որը և ցուլց ենք տալիս՝ Վաղ, այժմ Պախր կամ Գալլախազուտ լեռների հյուսիսային փեշերին:

Քարախուրկ—*Βδέλλιον—Bdellium, αἰθουρά* պնդացեալ իրրև քար»... Վարախուրկի, Թեղոշ ծառոյն խիտ պասուական» (ՆՀԲ, II, 995), Վարի նման կարծր սեւի, ծառի խիտ, անթափանց; փայլուն, մթնագուլն կարմիր, որ այլովիլիս անուշ հոտ է արձակուում և գործ էր անվում երբեմն իրրև բժշկական միջոց (Bdellium), (Ստ. Մալիս., IV, 559):

Այս բոլորը, անշուշտ, ճիշտ է, սակայն, ինչպես երևում է. Վճխարհացոյցում Քարախուրկի բառի տակ հասկանում է շիրը—պաղլիղը (κβασυς, Alumen), պաղլիղաքարը—Քրուրկիային քարեղին նուրթ սպիտակ կամ դորշ գուլնով, որից ստանում են պաղլիղ» (Ստ. Մալիս., IV, 42): Բնորոշ է, որ Վճխարհացոյցում Վարախուրկը հիշատակուում է Արցախ նահանգի Կողթ գավառում՝ Վեղիթ, լորում լինի քարախուրկ: Քուստի և Փառնես գավառներից հետո հիշվող Կողթ գավառը կարող է տեղագրվել միայն ալթմյան Դաշքեսանի հանքերով հարուստ շրջանում, որտեղ հիրավի գանվում են պաղլիղի հանքերը, ալթմյան Ջաղլիկ (Փիլի) դղուղի մոտ, որտեղ և ցուլց է արված քարտեզի վրա:

Քուրամիղիլ—*Ἄζ—Ալլ բառը հալ մատենագրութեան մեջ հիշատակուում է մեկ անգամ միայն Վճխարհացոյցում. ալլ վկայութեանը չունենալով՝ հնարավոր չէ պարզել բառի իմաստը: Բառ հիշվում է Պարսկահայքում, որտեղ և տեղագրում ենք հարցականով, Կապուտան լճի հարավ-արեմտյան մասում:*





Հ Ա Վ Ե Լ Վ Ա Տ Մ Ա.

«ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ»-Ի ՄԵԾ ՀԱՅԻ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՐՏՆԶՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԸՆԳՎԱՐՁԱԿ ԲՆԱԳՐԻ ԳԼՈՒԿՆԵՐԸ (ՓՈՐՁ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ) ԲՆԱԴԻՐԸ ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Յաղագս Երկրորդ Հայոց

Աշխարհ Երկրորդ Հայք, որ արդ կոչին Երրորդ Հայք, լելից կալով Կիլիկիոյ առ Տաւրոս լեւրամբ լերի Ամանոս լերին, որ բաժանէ ընդ նա և ընդ Կոմագենի Ասորոց մինչև ցեփրատ:

Ունի և այլ լերինս. Զիգոն-Բասիլիկոն և զՈրոմանդոն. և գետ դնոլն[անուն Որոմանդոն և] զՊի[ւ]ռամիս և զՊատառիս և [զՄկլաս], զԿիսիկաս և զԿառոմոսոս, և զբունս կրկու նրանելոյ լԱսորոց:

Յաղագս Առաջին Հայոց¹

[Աշխարհ Առաջին Հայք՝ որ արդ կոչին] Երկրորդ Հայք, որ կալ լելից Կապադովկիոյ. և Երկաչն տարածի մինչև լեփրատ: Եւ ունի [Ալիս գետ և] այլ գետս կրկու՝ [Իոիս և Գալլ-գետ], և լերինս բազումս և մեծամեծս:

Յաղագս Պոնտոս Կապադովկիոյ

Աշխարհ Պոնտոս Կապադովկիոյ՝ լելից կալով Պոպեմոնական Պոնտոսի, առ ի ծովուն զՄոսքաւկան լերանս, որ բաժանեն ընդ նա և ընդ Մեծ Հայա: Ունի լերինս կրկ և գետս չորս:

Անս կատարեցան Միջերկրեայք կոչեցեալք:

Երկրորդ Հայքի մասին

Երկրորդ Հայք աշխարհը, որն այժմ կոչում է Երրորդ Հայք, սկսվում է Կիլիկիայից արևելք Տավրոս լեռներով, մինչև Ամանոս լեռները, որոնք այս աշխարհը բաժանում են Ասորիքի Կոմագենից, և [տարածվում է] մինչև Եփրատ գետը:

[Երկրորդ Հայքը] ունի և այլ լեռներ. Զիգոն-Բասիլիկոն և Որոմանդոն և գետեր՝ նույն [անուն Որոմանդոնը և] Պյուռամիսը, Պատառիսը, [Մկլասը], Կիսիկասը և Կառոմոսոսը, և կրկու դոներ, որոնք պահպանում են հաղորդակցությունը Ասորիքի հետ:

Առաջին Հայքի մասին

[Առաջին Հայք աշխարհը, որն այժմ կոչվում է] Երկրորդ Հայք, որը գտնվում է Կապադովկիայից արևելք և Երկաչնոս թլումբ տարածվում է մինչև Եփրատ գետը:

Ունի [Ալիս գետ և] այլ կրկու գետ՝ [Իոիս և Գալլ-գետ], և բազմաթիվ բարձրալեռն լեռներ:

Կապադովկյան Պոնտոսի մասին

Պոնտոս Կապադովկիո աշխարհը սկսվում է Պոպեմոնական Պոնտոսի արևելյան սահմաններից. Ծովկեղերքի մոտ, մինչև Մոսիական լեռները, որոնք բաժանում են այս աշխարհը Մեծ Հայքից: Ունի կրկ լեռնադաշտ և չորս գետ:

Վերջացավ Միջերկրեայք կոչված երկրներին և կարագրությունը:

¹ Առաջին Հայքին և Կապադովկիայի Պոնտոսին վերաբերիլոց գրուինները բացակայում են «Աշխարհայոց»-ի ընդարձակ բնագրում, և բերել ենք համառոտ խմբագրությունից: Տես՝ Ա. Գ. Արբանամյան, Անանիա Շիրակացու մասենագրությունը: Երևան, 1943, էջ 347:

Աշխարհ Ասիոյ Սարմատացւոց հասարակն է. որ բաժանի արեւելեանն ծալրիւ Ռիպիայ լերամբ եւ Տանայիս գետով եւ Միտոսիս ծովակաւ՝ մաիւքն յեւքիսիոսն Պոնտոս ծով. եւ անտի նոյն ծովեզերքն լիւս կոյս, մինչեւ ցմաւ Կուսաքսի գետով որ կոչի Ագոս, եւ անտի առ Կուկասին լերինսն՝ առ Վրօք եւ Աղուանիւք, մինչեւ ց'Կասբից ծովն, ի մասս Սուանաս գետով (Սըւանաս գետ չլիս ուրեք):

Եւ ունի |Սարմատիա| լերինս զՇանթայինն եւ զՁիականն, որ արձակէ գետս հինգ ի Միովիտ ծով. եւ Կուկաս |լիտան ձղի| մինչեւ ց'Կ|ս|աքս լեանս: |Եւ Կուկաս| արձակէ գետս երկու՝ զՎարդանէս, որ սկսանի հանդէպ Կուկասայ, եւ ձգէ զերկալնութիւն իւր ի մուտս կոյս զհիւսիսեալ, մինչեւ ի մէջ մասնէ ընդ Մէսովիտս |և| ընդ Պոնտոս ծով. եւ արձակէ գետ մի Փսեւքոսս անուն, որ մեկնէ ընդ Փոսիօրոսն եւ Ջիքուն սահմանն, յորում քաղաքիկն Նիսիսիս:

Որ|այ| ըստ հիւսիսով են ազգ Թուրքաց եւ Բուլղարաց, ըստ անուանց գետոց կոչեցեալ. Կուփի Բուլղար, Բուչի Բուլղար, Ո|նո|ղիտոսոր Բ|ու|կար եկն, Չղար Բուլղար, օտար այժմ ի Պաղոմէականէն են այս անուանք: Եւ ի Ջիական լեանէն փակեալ որդին Սուգրազայ՝:

Եւ ընդ մէջ Բուլղարաց եւ ծովան Պոնտոսի բնակին ազգք Գաշք եւ Բու|ր|թք եւ Ս|ո|ւանք մինչեւ ց'Պիտիոնտ {քաղաք} ծովեզերային Աւազով աշխարհի, որ են Ափշիւք եւ Ափխազք, մինչեւ ց'քաղաքն իւրեանց ծովեզերային Սեւաստոպոլիք, եւ անգր եւս մինչեւ ց'գետն, որ կոչի Դոսիոն՝ որ է Վիշապ, որ հոսի յԱլանաց, եւ բաժանի ընդ Ափխազս եւ ընդ Եգեր աշխարհ:

Եւ ունի |Ասիա Սարմատացւոց| ազգապաւաստ քոստասն եւ վեց: Եւ ի հիւսիսով՝ առ Անծանոթ երկրաւ, բնակին Թագավորական Սարմատք եւ |Սարմատք| Ջիակիք: Իսկ առ մաիւքն Տանայիս գետով՝ բնակին Նախճամատեանք, եւ ազգ մի այլ, որ են Կղարջք. եւ ապա Սիււակացիք, ապա Միթսիդատանէ գաւառ՝, եւ ապա յարեւելից կուսէ Շանթային լերանցն բնակեալ են Ամազոնք, որք են կանայք պատերազմողք, մինչեւ ց'գետն որ կոչի Ռա, որ երկակի բլթիս ի հիւսիսով Անծանոթ երկրի, եւ միանան, եւ հասեալ մերձ Ջիական լերանցն, արձակէ վտակ մի ի Տանայիս գետով որ ի Միովիտ ծովակ իջանէ. եւ այլն դանալ արեւլս կոյս մինչեւ հանդէպ Շանթային լերանցն. եւ ապա դան

Ասիական Սարմատիան բաժանուիւմ է Ռիպիոս լեռների արեւելան ծալրով եւ Տանայիս գետով, եւ արեւմուտքում տարածուիւմ է մինչև Միովիտս ծովակը եւ Եվքսինոս Պոնտոս ծովը: Այնտեղից (Սարմատիան տարածուիւմ է) նույն ծովեզերքի արեւելյան կողմից, մինչև Կուսաքսի, որ նշանակում է Ագոսով, գետարեւրանք, եւ այնտեղից Կուկասյան լեռներով՝ Վրաց եւ Աղվանից երկրները սահմանագծով, մինչև Կասպից ծովը եւ Սուանասի գետարեւրանք (այժմ Սուանաս գետը հայանի է):

Սարմատիա աշխարհը ունի Շանթային եւ Ջիական կոչվող լեռները, որոնք Միովիտս ծովն են արձակում հինգ գետ, եւ Կուկասյան լեռները, որոնք ձգվում են մինչև Կուսաքսի լեռները: Իսկ Կուկաս (լեռնաշղթան) արձակում է երկու գետ՝ Վարդանես՝ որը սկսվում է Կուկասի գլխաց եւ իր երկարութեամբ ձգվում է դեպի արեւմուտք եւ հյուսիս մինչև թափվում է Միովիտս (ծովակը) եւ Պոնտոսի ծովը, ապա արձակում է Փսեւքոսս անունով գետը, որը հասում է դեպի Փոսիօրոսն եւ Ջիկոն (երկրի) սահմանը, որտեղ գտնվում է Նիսիոս քաղաքիկը:

Սրանցից հյուսիս են բնակվում թուրքերի եւ բուլղարների ցեղերը, որոնք ըստ գետերի անունների կոչվում են՝ Կուփի բուլղար, Բուչի բուլղար, Ո|նո|ղիտոսոր բուլղար, Չղար բուլղար, սրանք այժմեական անուններ են եւ օտար են Պաղոմեոսին: Ջիական լեռներից փակալ Սուգրազի որդին:

Բուլղարների եւ Պոնտոսի ծովի միջև բնակվում են Գաշք եւ Բու|ր|թք ցեղերը, ապա Սուանք, մինչև Ավազով աշխարհի ծովեզրա Պիտիոնտ քաղաքը: Այստեղ ապրում են Ափշիւք եւ Ափխազք, մինչև իրենց ծովեզրա Սեաստոպոլիս քաղաքը եւ այնտեղից մինչև Դոսիոն կոչվող գետը, որ նշանակում է Վիշապ, եւ, որը հասում է Ալանաց աշխարհից, եւ բաժանում է Ափխազներին Եգերաց աշխարհից:

Ասիական Սարմատիան ունի քառասունվեց ազգազավատ: Հյուսիսում, Անծանոթ երկրին հարեան, բնակվում են Թագավորական Սարմատք եւ Ջիակիք |Սարմատները|: Իսկ Տանայիս գետի գետարեւրանի մոտ բնակվում են Նախճամատեանք, ապա Կղարջք ցեղը, ապա Սիււակացիք, ապա Միթսիդատանն գավառը (կամ՝ Միթսիկացիք):

Շանթային լեռներից դեպի արեւելք ապրում

¹ Նկատի ունի անոցիտոսոր բուլղարական ցեղի ցեղապետներից մեկի՝ Կուսաքսի Կուսաքսի հարձակումներին, իր ցեղի հետ միասին փոխադրվելին եւ բնակավայրի նստատեղիին Դանոսի արևելքին: Այս մասը պիտի լինի VIII գլխի վերջին կատարված ընդմիջարկում: «Աշխարհագրոց»-ի համառոտ բնագրում այս անվան փոխարեն հիշվում է «Միթսիկացիք»:

ալլ երկու գետք յարեւելից կուսէ ի հիւսիսոյ, [ի] լեռնէն որ կոչի Ռիմիկա, եւ ասնն զնա Եօթանաստամատակեան, զոր կոչեն թուրքք Աթլ գետ. որոյ մէջն է կղզի, յոր մտեալ ամբանայ, Բասուաց ազգն ի հզոր ազգէն Խաղրոաց եւ Բ[ո]ւլչխաց, ճարակիւց լելից եւ ի մտից, կիկուց անդ ի ձմերոց, եւ կոչեն Սեւ կղզի. զի յաղագս բազմութեանն ազգին Բասուաց՝ մարգոյ եւ անասնոյ անդ մտերոցն՝ սեւ երեւի, զոր Պողոմէոս Գուսե կղզի կոչէ:

Եւ վտակրն Աթլ գետոյ անցեալ [ընդ] կղզին դարձեալ միանան եւ մտանեն ի Կասրից ծովն, բաժանելով ընդ Սարմատիս եւ ընդ Սկիւթիս աշխարհն:

Որոյ (Կասպից ծովի) ըստ մտից, ասէ Պողոմէոս, զԱ[ր]դոն եւ զԱլգանդոն եւ զՍոնդաս եւ Գիւսուս ազգ[ս] համանուն գետօք որ ի Կաւկասայ հոսի ի ծով, մինչեւ ցԱղսանից սահմանն:

Եւ են ի Սարմատիոյ համարեալ, այսպէս, սկսեալ ի մտից լելս կոյս. նախ ազգ Ալանաց Աշ-Դիգոր եւ ըստ հարաւոյ՝ համարեակ նոցա Խերուրք եւ Բուպէտք, եւ Արգուէլ, որ է Մարգուէլ, եւ Սկիւթիք [որ են] Թակուր: Եւ Ալանք են լեռ Դիգորին, չԱրգոյ աշխարհին Կաւկասին լերանցն. ուստի հոսի գետն Արմնայ, եւ զնալով ընդ հիւսիսի՝ ընդ դաշտս անբաւս, խառնի լԱթլ:

Եւ ի նոյն լերինն՝ լեռ Արդոզեան ազգին բնակին՝ Ռաճանք, [Փինճք], Դուալք, [Հոնք], Յիսոյք, Աւսուրք, Ծանարք, յորում Ալանաց դուսըն. Եւ միւս գուսն որ ստի Ծիւքան, համանուն ազգի, եւ ապա Թուշք եւ Խուսք մարդակերք. ապա Յիւսուսք, ապա Գուզամակարք, ապա Դործ[ու]կք, ապա Դիգոյք, ապա Լեկք, ապա Տապասարանք՝, ապա Աղուտականք, ապա Խենաւք, ապա Շիղք, ապա Ճիղք, ապա [Լ]փնիք, [Խեղալք, Կաղք, Փուխք]:

Եւ ապա Կաւկաս բաժանի յերկուս բազուկս, մինն զնայ գէպ ուղիղ կոյս, յորում Շրուան եւ Խարուան ազգ՝ մինչեւ ցՆորսովմ: Եւ միւս բազուկն արձակէ նախ վտակ մի զԱրմ գետ, որ [զնայ] գէպ ուղիղ ի հիւսիսի՝ լԱթլ գետ: Եւ ապա նոյն բազուկն զնայ զկիւք հիւսիսոյ, յորում բնակեալ են Թուսուսպարք, Հեճմատակք, Իժմախք, Փասխք, Փուսխք, Փիւքանակք, Բազկան, ուստի աննա պարիսպն երկայն՝ որ կոչի Ապղուտ-Կասաւ, [եւ ձցի] մինչեւ ցԱլգմինոն մաւրս եւ ցծով: Որոյ ըստ հիւսիսոյ՝ Մասքութան ազգն բնակեալ են, ի Վարդանեան գաշտին, մինչեւ ցԿասպից ծովն, յոր բազուկն Կաւկասայ հպի, յորմէ անեալ է պարիսպն Դարբանդայ, այլինքն Կասպ եւ գուսն՝

են Ամազոնք, որոնք պատերազմող կանայք են: [Սրանք բնակվում են] մինչև Ռա կոչվող գետը, որը զուգորդված հոսում է Անձանոթ երկրի հյուսիսից, և ապա միանում են իրար: Որից հետո հասնելով Ջիախան լեռներին, (այս գետը) արձակում է Տանայիս գետի վտակներից մեկը, որը հոսում է դեպի Միովիտ ծովակը:

Եվ մյուս գետը հոսում է դեպի արեւելք, մինչև Եանթալին լեռների զիմաց: Ապա մի այլ երկու գետ արեւելյան կողմից հոսում է դեպի հյուսիս, Ռիմիկա կոչվող լեռներից, և անվանում են վերջինիս Յոթանաստամատակյան. այս գետը թուրքերը կոչում են Աթլ: (Այս գետումն) է գտնվում մի կղզի, որտեղ, մտնելով, ամբասել է Բասուաց ազգը, (պաշտպանվելով) այնտեղ Խաղրուների հզոր ժողովրդից և Բուշխնից արեւելքից և արեւմուտքից այնտեղ ձմեռելու եկող վաչկատուն [բասիլներից ցեղից]: Եվ կղզին կոչում են Սեւ կղզի, որովհետև սև է երևում կղզին այնտեղ մտնող Բասիլների բազմամարդության և նրանց անասունների բազմաքանակության պատճառով: Այս կղզին Պողոմիսը կոչում է Գուսպ կղզի:

Աթլ գետի վտակները շրջանցելով (հիշյալ) կղզին, դարձյալ միանում են և թափվում են Կասպից ծովը, բաժանելով միմյանցից Սարմատիան և Սկյութիո աշխարհը:

[Կասպից ծովից] արեւմուտք, ըստ Պողոմիսոյ, բնակվում են՝ Ա[ր]դոն, Ալան-գոն, Սոնդաս (Տանդաս) և Գիւսուս ցեղերը համանուն գետերով, որոնք Կովկասից հոսում են ծով, մինչև Աղվանքի սահմանը:

Սարմատիայում բնակվող ցեղերից են համարվում, սկսած արեւմուտքից, մինչև արեւելք, նախ Աշ-Դիգոր Ալանաց ցեղը, որոնցից հարավ են նրանց հետ բնակվող Խերուրք, Բուլքետք, Արգուելք կամ Մարգուելք, Սկյութիք կամ Թակուրք ցեղերը: Իսկ Ալանք ապրում են Դիգորից հետո, Կովկասյան լեռների Արգոյ աշխարհում, որտեղից հոսում է Արմն գետը, որը, գնալով դեպի հյուսիս, լայնատարած դաշտերով, թափվում է Աթլ գետը:

Նույն լեռներում Արգոզյան ցեղից հետո բնակվում են՝ Ռաճանք, [Փինճք], Դուալք, [Հոնք], Յիսոյք, Աւսուրք, Ծանարք, որտեղ գտնվում է Ալանաց գուսն և մյուս գուսը, որը կոչվում է Ծիւքան գուսն համանուն [Ծիւքանք] ցեղի: Ապա՝ Թուշք, Խուսք և Բուսաք մարդակերք: Ապա՝ Յիսուսպարք, Գուզամակարք, Դործուք, Դիգոյք, Լեկք, Տապասարանք (կամ Կասպասարանք), Աղուտականք, Խենաւք, Շիղք, Ճիղք, [Լ]փնիք, [Խեղալք, Կաղք, Փուխք] ցեղերը:

¹ «Աշխարհացոյց»-ի համառոտ բնագրում հիշվում է «Կասպասարանք» ձևով:

քաղաք պահակին ձորայ, աշտարակ անպին ի ներքս ի ծովուն կառուցեալ:

Իսկ ի հիւսիսոյ նորա Թագաւորութիւն Հոնաց հուպ ի ծով. եւ ի մտից նորա առ Կաւկասով Վառաչան քաղաք նոցին Հոնաց եւ Չանդարս եւ Ամընդըս:

Եւ լարեւելից բնակին Սաւիրք ցԱթլ գետ, որ մեկնէ ընդ Ասիական Սարմատք եւ ընդ Սիւլթիա աշխարհ, որ են Ապախթարք, այսինքն Թարքաստանք: Եւ Սաքանն թագաւոր նոցա [որ է տէր Խաղրայ], եւ Խաթունն Իշխոյ նոցա [թագուհի], կին Սաքանալ ի Բասլայց ազգէն:

Ապա Կովկաս (լեռնադանդլածը) բաժանուում է երկու բաղաւկների, մեկը գնում է այն ուղղութեամբ, որտեղ գտնուում են Շրուան եւ Սարուան (ազգադավանները) մինչև Սորսվիմ: Իսկ մյուս բաղաւկը նախ արձակում է մի վտակ Արմ անունով, որը հոսում է ուղիղ դեպի հյուսիս (և թափվում) Աթլ գետի մեջ: Իսկ վերոհիշյալ (երկրորդ) բաղաւկը ձգվում է դեպի հյուսիս-արեւելք, որտեղ բնակվում են Թալասապարք, Հեճմաստակք, Իժմախք, Փասխք, Փուսխք, Փյուքթնակք, Բազկանք, որտեղից սկիզբ է առնում երկար պարիսպը, որը կոչվում է Ապուտ-Կավաւտ, (և ձգվում է) մինչև Ալդմիսն մտրը եւ ծովը: Այս պարսպից հյուսիս, Վարդանյան գոշտում, բնակվում է Սասքութան ազգը, մինչև Կասպից ծովը, որտեղ վերջանում է Կովկասից եկող լեռնաբաղաւկը եւ որտեղ կառուցված է Պարիսպն Իարբանդայ, այսինքն Կապ եւ գուսն քաղաք Պահակին ձորայ, որ (երեւից ներկայացնում) է ծովի մեջ կառուցված հսկայական աշտարակ:

Նրանից (Իարբանդի պարիսպներից) հյուսիս ծովափին գտնվում է Հոնների թագաւորութիւնը, իսկ նրանից արեւմուտք, Կովկասյան լեռներում, գտնվում է հոնների Վասաչան քաղաքը, եւ Չոնգար ու Ամընդըս քաղաքները:

(Այս քաղաքներից) արեւելք մինչև Աթլ գետը բնակվում են Սավիրները: (Աթլ գետը) հոսում է Ասիական Սարմատք (երկրով) եւ Ալլուսիա աշխարհով, որը Ապախթարք է կամ Թարքաստանք: Եվ հյուսիսի թագաւորն է Սաքանը, որը Խաղիրնէրի ինքնակալն է, եւ խաթունը՝ նրանց թագուհին. բասիլների ցեղից, Սաքանի կինն է:

Յաղագս Կողքիսոյ

Աշխարհ Ասիոյ Կողքիս է, որ է Եգիպտոս. չից կալով Պոնտոս ծովուն առ երի Սարմատիոյ, ի մտիցն Դուսիոն գետոյ մինչև Գիււկաս լեան եւ ցնորին բազուկ, որ բաժանէ ընդ նա եւ ընդ Վիրս: Եւ անախ սահմանի մասամբ ինչ Մեծ Հայոց մինչև Գիւպարդ[ովի]ական Պոնտոս: Եւ բաժանեալ է չինքեան չորս աշխարհս փոքրանս. ի Մանսիլ, ի յեգրեւիկէ, որ է Առանձնակ Եգերայ, [և] ի իսպ իւրում Փասիս գետ, առ համանուն քաղաքաւ, [և] Դազիլիկէ: Եւ Ճանիւս որ են Սաղարիք, յորում գետ Մեգապոս-պոտամոս: Աւնի ևւ ալլ գետս՝ զԱկամսիս որ է Յոն, որ գալ ի Մեծ Հայոց:

Աւնի հինգ քաղաքս, [Ջ]իլգ[ան]էոն, Կոտա, Ռոզիւպատլիս, Աթինա, Ռիզոն. եւ ալլ բազում եմպոսիոնն այսինքն վեղաքաղաքս ծովեղերեալս, յորոց է Տրասպիզոն:

Կողքիսի մասին

Ասիայի աշխարհ Կողքիսը, այսինքն՝ Եգերը, սարածվում է Պոնտոս ծովից արեւելք մինչև Սարմատիա, եւ արեւմուտքից՝ Դուսիոն գետից, մինչև Կովկաս լեռը եւ նրա լեռնաբաղաւկը, որը բաժանում է Կողքիսը Վիրքից: Այնուպիս Կողքիսը մասամբ սահմանակից է Մեծ Հայքին մինչև Կասպիցովիական Պոնտոսը:

(Կողքիսը) բաժանվում է չորս փոքր աշխարհների. Մանսիլը, Եգրեւիկիկի, որ Առանձնակ Եգերն է, որով ուղղվում է Փասիս գետը համանուն քաղաքի մոտ, (այսպէս) Դազիլիկիկի եւ Ճանիլիկի, որ Սաղարիքն է, որտեղ Մեգապոս-Պոտամոս գետն է: Կողքիսը անի նաև ալլ գետ՝ Ակամսիսը կամ Հոնը, որը հոսում է Մեծ Հայքից:

(Կողքիսը) անի հինգ քաղաք՝ Ջիլգանոն, Կոտա, Ռոզիւպատլիս, Աթինա եւ Ռիզոն եւ ալլ բազում եմպոսիոններ. այսինքն՝ ծովեղրլա գլուղաքաղաքներ, սոսնկից է Տրասպիզոնը:

Աշխարհ Վիրք, լեկից կալով Եգերայ, լերի Սարմատիայ առ Կաւկասով, մինչև ցԱղուանից սահման, և մինչև ցՀայոց սահմանն՝ առ Կար գետովն:

Եւ գաւառք են այս, սկսեալ ի Վոճ գետով և ի հիւսիսոյ Տալոց, Կղարջք, զոր ի Հայոց հանեալ է, և Շաւշէթ, Արտահան գաւառ, զոր առեալ է ի Հայոց. ընդ որ անցանէ գետն հզօր Կար, որ ի Տալոց գալով, ի Կոզ գաւառէ ընդ ստորտա Ջաւախաց, իջանէ ի Սամցխէ [չորմէ մայի կուէ՝ Աճարա]: Եւ դառնայ [Կար] լարեւելս՝ անցանելով ընդ Վերին աշխարհ Վրաց, բաժանելով զգաւառսն. զԹոր, զԳոռաթիսիս, զՏանիսիս, որոյ ի զլախն Դեկից[ի]սէ բերդ, և զՄանդլեացիոր, և զՔաիշափոր և զՔոդնոփոր՝ մինչև ցՊարուար գաւառ, որ պտտէ զՏփղիս քաղաքաւ. լայց երևք փորակի ի Հայոց հանեալ է:

Իսկ ըստ հիւսիսոյ գետոյն մեծին Կարայ, հանդէպ Թա[ւ]ր գաւառի՝ Արդուէթու լերինք [հոմանուն գաւառաւ], և ի նոյն կողմանէ Դաշտն Գուան, և Աչարէթիս-իս և [Ռեխա], Գուերգիս-ձիրի, Կոսի, և մինչև ցՍալցիսմէթ, որ ի ստորտա Կովկասաւ. չորմէ հոսի կէս գետ, և անցեալ ի հարաւ կոչս իջանէ ի Կար, և առ նովաւ՝ Կանիս-իս, և Յիրադմայ, [և Բազալէթ], [և [Մա]կարիս-իս], մինչև լԱրագ. գետ, որ հոսի ի Կաւկասայ, և զնալով ընդ հարաւ. ընդ Ախալցիսէ բերդ, և անցանէ ընդ մէջ Մցիսիթայ քաղաքի և բլրոյ Սուրբ Խաչին, իջանէ ի Կար, և բովանդակի Վերին աշխարհ Վրաց, չորմէ լաւաջ լաղացեալ Կար՝ գայ ի Տփղիս մայրաքաղաք Վրաց. զնա թողլով Պարուարաւ, և զԾորոփոր և զԿոդնոփոր և զՋորոփոր հոմանուն գետօք¹, մինչև ցՀանարակիրա քաղաք՝ զորս ի Հայոց հանեալ է. որոց ըստ հարաւոյ լեանաղաշաքն Ջաւախաց բազում լճօք, լի զանազան ձկամբք, և Թուկք և Տաշիր. որոց ի հարաւ՝ Կանգարք, զամէնդ ի Հայոց հանեալ է:

Իսկ հանդէպ զոցս ըստ հիւսիսոյ կողմանէ Կարայ՝ գաւառք՝ Կխաէթ, Խերի, Էրծոյ, Թիանէթ, Ծորէնոր, Ծաքէթ, Ջել[է]թ, Վելիսց[ի]սէ, Բուկլ-գա[րա], Շուջք:

Վրաց աշխարհը սկսվում է Եգերից արևելք մինչև Սարմատիան՝ Կովկասյան լեռներում, մինչև Ադրիանքի սահմանը և մինչև Հայաստանի սահմանը Կար գետով:

Եվ այս են (Վիրքի) գավառները. սկսած Վոճ գետից և Տալքի հյուսիսային սահմաններից՝ Կղարջք, որը վերցված է Հայաստանից, Շաւշէթ, Արտահան գավառ, որը վերցված է Հայաստանից: (Արտահանի) միջով անցնում է հզոր Կար գետը, որը, հոսելով Տալքի Կոզ գավառից. Ջավախքի ստորտով իջնում է Սամցխե, [որից արեւմուտք. Աճարա]: Այդ [Կար գետը] գաւառում է արևելք, անցնելով Վերին աշխարհ Վրաց երկրամասով, բաժանելով (միմյանցից)՝ ներքսիշջալ (գավառները)՝ Թոր, Գոռաթիս-իս, Տանիս-իս, որի զլախն է գտնվում Դեկիցիսի բերդը, (այդ) Մանդլեացիոր, [Քուիշափոր] և Բոդնոփոր մինչև Պարուար գավառը, որը պտտում է Տփղիս քաղաքը, իսկ (վերջին) երևք փորակը հանվել է Հայաստանից:

Իսկ մեծ գետ Կարի հյուսիսում, Թավր գետի հանդեպ, (գտնվում են) Արդուէթի լեռները [հոմանուն գավառով]: Նույն կողմերն են գտնվում՝ Դաշտն Գուան, Աչարէթիս-իս, [Ռեխա], Գուերգիս-ձիրի և Կոսի (գավառները), մինչև Սալցիսմէթ գավառը, որ գտնվում է Կովկասի ստորտում: Ախալցից է հոսում կէս գետը, որը, անցնելով հարավ, իջնում է Կար գետը: Նրա մոտ են գտնվում Կանիսիս, Յիրադմա, Բազալէթ և [Մա]կարիսիս գավառները, մինչև Արագ գետը, որը, հոսելով Կովկասից, և զնալով հարավ, Ախալցիսի բերդի մոտով անցնելով, Մցիսիթա քաղաքի և Սուրբ Խաչ բլրի միջև թափվում է Կար գետը, բովանդակելով Վերին աշխարհ Վրաց երկրամասը:

Այնուպից Կարը, շարժվելով առաջ, անցնում է Վրաց աշխարհի Տփղիս մայրաքաղաքով, թողնելով այն Պարուար գավառով, այդ Ծորոփոր, Կոդնոփոր, Ջորոփոր [և Սանցիսիս] գավառները հոմանուն գետերով, մինչև Հանարակիրա քաղաքը, որպէք հանված են Հայաստանից:

Մրանցից հարավ են գտնվում Ջավախքի լեանաղաշները, բազմաթիվ լճերով, որոնք լի են զանազան ձկներով, այդ Թուկք և Տաշիր գավառները, որոնցից հարավ գտնվում է Կանգարք գավառը, բոլորն էլ հանված Հայաստանից: Իսկ այս գավառների հանդեպ Կար գետի հյուսիսային կողմում, գտնվում են՝ Կխաէթ, Խերի, Էրծո, Թիանէթ, Ծորէնոր, Ծաքէթ, Ջել[է]թ, Վելիսց[ի]սիս, Բուկլգա[րա] և Շուջք գավառները:

¹ Նկատի ունի՝ Ծորոփոր գետը, Կոդնոփոր գետը և Ջորոփորը
² Եւ Աշխարհացոյցք-ի համատա խմբագրութեան մեջ Հանարակիրա քաղաքի փոխարեն հիշատակվում է Ռանցիսէ (աղճատված՝ ԵՍանցիս), որ նույն անդի վրոցական անունն է, հետագայում ԵՍանունն և ԵՄունանդեկերտ՝ ձեռք բերող հայանի:

Աշխարհ Ազրանիս, այսինքն՝ Ազուանք, յե-
լից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մին-
չև [ի Կասքից ծովն եւ] ց Հայոց սահմանն, առ Կուր
գետով, թէպէտ եւ աստի ց Կուր զամենայն
սահմանս հանեալ է ի Հայոց: Քայց մեք ասաս-
ցաք զրուն աշխարհն Ազուանից որ ընդ մէջս է
մեծի զեառոյս Կուրայ եւ Կովկաս լիւրինն:

Նախ առ Վրօք՝ Եղնի (Սենի) զավառ առ
Ազուան գետովն, եւ Կամբեճան առ Իւրաւ. եւ
բոս հիւսիսոյ նորա բերդն Վարազմանավառ, հան-
ցերձ Կուրաթ զեղաքաղաքաւ, եւ վայրքն անա-
պատ մինչև ց Կուր գետ. չորոյ լիլից կողմանէ
Գրեզաւ քաղաք, առ Ազուան գետով, եւ Բեղ զա-
ւառ առ Կաւկասաւ, եւ լիլից նորա՝ Շաքէ եւ Գե-
տառու գետ. առ որով հոմանուն գաւառ՝ առ Սա-
նի գետով: Այս ամենայն հոսին ի Կովկասայ, եւ
խառնեալ ի յԱզուան գետ՝ անկանին ի Կուր գետ.
Իսկ ի լիլից կուսէ՝ Հողմազ, Գեղաւու, Համբասի (= Հարանդ?), [Ոստան-ի-մարգպան գաւառ] եւ Կա-
պաղակ [մայրա]քաղաք Ազուանից մերձ ի Կաւ-
կաս. ընդ որով մէջ գետն Աէրոջ, [եւ] դէպ ի հա-
րաւոյ, [ց Կուր գետ] ըստ [որում]՝ Քաղաղաշտ,
Դաշտ ի Բաղկան [որ է Հէջէրի], եւ այլ քսան
գաւառոս զորս ի Հայոց հանեալ է՝ [Շախաշէն,
Գարդման, Քուստի-Փաննէս, Կողթ, Ազաէ, Տուս-
Քուստակ, Ուտ-Ռոստակ, Ռոտ-Պարսեան, Մեծ-
Կուենք, Մեծ-Իրանք, Պիանք, Հարճլանք, Պարսա-
կանք, Մախանք, Վալիանք, Փոքր Հարանդ, [որ
է] Սիսական [ի Կուսակ], Ռոտըստակ, Բերդածոր,
Տսի, Առան-ուտ, մինչև ի խառնումն Երասխայ ի
Կուր գետ]:

Ազրանիան, այսինքն Աղուանից աշխարհը
սկսվում է Վրաց աշխարհից արևելք և Սարմա-
տիային սահմանակից Կովկասյան լեռներով, մինչև
Կասպից ծովն ու Հայաստանի սահմանը Կուր գե-
տով: Թեպետ և այստեղից մինչև Կուր գետը
բնկած ամբողջ տարածությունը Հայաստանից է
հանված, բայց մենք խոսելու ենք Ազուանքի բուն
աշխարհի մասին, որը գտնվում է մեծ զեա Կուրի
և Կովկասյան լեռների միջև:

Նախ (թվենք) Վրաց աշխարհին կից (զա-
վասները)՝ Եղնի (Սենի) գավառ՝ Ազուան գետի
վրա, և Կամբեճան (զավառ)՝ Իորա գետի վրա:
Իսկ նրանից (Կամբեճանից) հյուսիս (գտնվում է)
Վարազմանավառ բերդը Կուրաթ գյուղաքաղա-
քով և անապատ վայրերը մինչև Կուր գետը, որից
զեպի արևելք գտնվում է Գրեզավ քաղաքը՝ Ազուան
գետի վրա: Այս Բեղ գավառը Կովկասյան լեռ-
ների ստորոտում, և նրանից զեպի արևելք՝ Շա-
քի (զավառ) և Գետառու գետը, որի վրա է հա-
մանուն գավառը, մինչև Սանի գետը: Այս բոլոր
գետերը հոսում են Կովկասից և, խառնվելով
Ազուան գետի հետ, թափվում են Կուր գետը:

(Այս գավառներից) զեպի արևելք գտնվում
են՝ Հողմազ, Գեղավու, Համբասի (= Հարանդ?)
(զավասները), ապա Ոստան-ի-Մարգպան գավա-
ռը և Կովկասյան լեռների մոտ Ազուանից աշխար-
հի մայրաքաղաք Կապաղակը, որի միջով հոսում
է Սերոջ գետը զեպի հարավ [մինչև Կուր, որտեղ]
(գտնվում է)՝ Քաղաղաշտ (զավառ), մինչև Դաշտ-ի-
Բաղկանը (կամ Հիշլերի): (Աղուանքի կազմումն
են) նաև այլ քսան գավառներ, որոնք հանված են
Հայաստանից՝ Շախաշէն, Գարդման, Քուստի-Փառ-
նես, Կողթ, Ազուեն, Տուս-Քուստակ, Ուտ-Ռոստակ,
Ռոտ-Պարսյան, Մեծ-Կուենք, Մեծ-Իրանք, Պիանք,
Հարճլանք, Պարսականք, Մախանք, Վալիանք,
Փոքր Հարանդ (կամ) Սիսական-ի-Կուսակ, Ռո-
տըստակ, Բերդածոր, Տսի և Առան-ուտ, մինչև
Երասխի խառնվելը Կուր գետում:

Յաղագս Մեծին Հայոց

Մեծ Հայքի մասին

Մեծ Հայք են, յելից կայով [Պոնտոս] Կապա-
ղովկիոյ եւ Փոքր Հայոց, առ Եփրատ գետով, մերձ ի
Տարբոս լեռնն, որ բաժանէ զնա ի Միջագետաց,
և ի հարաւոյ սահմանի Ասորեստանիւ, և զսանայ
առ Ատրպատականաւ ընդ Մարս մինչև ի մուտս
Երասխայ ի Կասքից ծով: Իսկ ըստ հիւսիսոյ առ երի
կալով Ազուանից եւ Վրաց եւ Եգիպոց, մինչև
ցնոյն զարծուածքն Եփրատայ ի հարաւակոյս:

Մեծ Հայք երկիրը սկսվում է Կապաղովկական
[Պոնտոսից] ու Փոքր Հայքից արևելք, Եփրատ
գետով մինչև Տավրոս լեռները, որ բաժանում է
Մեծ Հայքը Միջագետքից: Հարավային կողմից
[Մեծ Հայքը] սահմանակից է Ասորեստանին,
ապա սահմանը ողողվում է զեպի [արևելք]՝ Ատր-
պատական և Մարաց աշխարհը, մինչև Երասխի
թափվելը Կասպից ծով: Իսկ հյուսիսային կողմից

Եւ ունի Մեծ Հայք լերինս անուանիս, և զկոտս մեծամեծս և մանաւնս, և ծովակս վեց՝:

Եւ ունի Մեծ Հայք փոքր աշխարհս հնգիտասան՝ որք են այսօրիկ:

Առաջին աշխարհ Բարձր Հայք, այսինքն՝ Կարնոյ կողմն, երկրորդ աշխարհ՝ Չորրորդ Հայք, այսինքն Մոսիս կողմն, երրորդ՝ Աղձնիք առ Տիրիս գետով. չորրորդ՝ Տալլաբերան որ է Տարաւն. հինգերորդ՝ Մոկք. վեցերորդ աշխարհ՝ Կորճայք, որ առ Ասորեստանեաւ. հաւթներորդ աշխարհ՝ Պարսկահայք, որ առ Ատրպատականիք. ութներորդ աշխարհ՝ Վասպուրական, որ ըստ մտից հիւսիսոյ նորս է. իններորդ աշխարհ Սիւնիք՝ որ առ Երասխաւ, տասներորդ [աշխարհ]՝ Արցախ, որ լերի նորս կայ. միասուններորդ աշխարհ՝ Փայտակարան [համանուն] քաղաքով, որ առ եզերքն Կասրից ծովուն, ի մուտս Երասխայ, երկուսասաններորդ աշխարհ՝ Ուաէպուս, որ առ Աղուանիք և Կուր գետով. երեքուսասաններորդ աշխարհ՝ Գուգարք՝ որ առ Վրօք. չորեքուսասաններորդ աշխարհ՝ Տայք, որ առ Եգերք². հնգասասաններորդ աշխարհ՝ Ալյարատ, ի մէջ նոցա: Արդ կամիմ զդոսս մանրամասնարար պատմել. թէ և սակաւ ինչ աշխատիցիմ ի զիր և ի քարտէս:

Արդ ունի առաջին աշխարհ Բարձր Հայք զաւառս ինն. Դարանաղի, Ազիւն, Մըզուր, Եկեղաց, Մանանաղի, Դերջան, Սպեր, Շաղագոմ, Կարին: Եւ ըստ անուանց արդարեւ բարձր է ոչ միայն քան [զմնացեալ] Հայք, այլ քան գամեանայն Երկիր, վասն որոյ Կատար Երկրի կոչեցին զնս, զի ի չորս կողմ աշխարհի ջուր արձակէ՝ զի բոլիէ չորս գետս զօրեղս, զԵփրատ՝ յարեւմուտքս, և ԶԵրասխա՝ յարեւելս, զԳալլ՝ ի հարաւ, զԱկամսիս որ է Վոճ՝ ի հիւսիս: Ունի լերինս մեծս երկս³. ունի երէս, եղջերու, այծ և քաղս, ասն և արախ, վիթ և կրիթ և և խող. և ի հաւտց ճարակաւորս. յորս կաքաւ, զարաւշ, զանիդ և զալլս, ունի և քերմուկս և աղտս և և զամենայն պարարտութիւնս երկրի, և քաղաք զԹէոզուպուլիս:

Երկրորդ աշխարհ Մեծին Հայք. Չորրորդ Հայք, որ է Մոսիս կողմն, լերի կայ Բարձր Հայք Մելիտինէ քաղաքս սահմանի ըստ մտից, և ըստ հարաւոյ՝ Միջագետովք, և ըստ ելից՝ Տարաւնով: Ունի գաւառս ութ. Մոսձեան՝ լեւից հիւ-

(Մեծ Հայքը) սահմանակից է Ազիւնքին և Վերքին և Եգեր աշխարհին, Մինչև Եփրատ գետի դառնալը զեպի հարավ:

Մեծ Հայքը ունի հայտնի լեռներ և մեծ ու փոքր գետեր, և վեց ծովակ:

Մեծ Հայքն ունի տասնհինգ փոքր աշխարհներ, որոնք են.

Առաջին աշխարհ՝ Բարձր Հայք, այսինքն Կարնոյ երկիրը, երկրորդ աշխարհ՝ Չորրորդ Հայք, այսինքն Մոսիքի երկիրը, երրորդ աշխարհ՝ Աղձնիք, Տիրիս գետի վրա, չորրորդ աշխարհ՝ Տալլաբերանը կամ Տարոնո երկիրը, հինգերորդ աշխարհ՝ Մոկք, վեցերորդ աշխարհ՝ Կորճայք, որ սահմանակից է Ասորեստանին, յոթներորդ աշխարհ՝ Պարսկահայք, որ սահմանակից է Ատրպատականին, ութներորդ աշխարհ՝ Վասպուրական, որ նրանից (Պարսկահայքից) հյուսիս-արեւմուտք է (գտնվում), իններորդ անխարհ՝ Սլուանիք, որ սահմանակից է Երասխին, տասներորդ աշխարհ՝ Արցախ, որ նրան (Սլուանիքի) մոտ է գտնվում, տասնմեկերորդ աշխարհ՝ Փայտակարան (համանուն) քաղաքով, գտնվում է Կասպից ծովի եզերքին, Երասխի գետաբերանին: Տասներկուերորդը Ուաէպուսից աշխարհն է, որ սահմանակից է Աղվանքին Կուր գետով: Տասներեքերորդ աշխարհն է Գուգարքը, որ սահմանակից է Վերքին: Տասնչորսերորդ աշխարհն է՝ Տայքը, որ սահմանակից է Եգր աշխարհին: Տասնհինգերորդ աշխարհն է Ալյարատը, նրանց միջև: Այժմ ուզում եմ այս աշխարհների մասին մանրամասնարար պատմել. թեև մի քիչ պիտի աշխատեմ գրքերի և քարտեզների վրա:

Առաջին աշխարհ Բարձր Հայքը ունի ինը գավառ. Դարանաղի, Ազիւն, Մըզուր, Եկեղաց, Մանանաղի, Դերջան, Սպեր, Շաղագոմ, Կարին: Հիրավի, ինչպես ցույց է տալիս անունը, Բարձր Հայքը արդարեւ բարձր է, ոչ միայն Հայաստանի [մնացյալ] մասերից, այլև ամբողջ Երկրից, որի համար էլ այս աշխարհը կոչեցին Կատար Երկրի: Աշխարհի չորս կողմերը ջուր է արձակում և այնտեղից բխում են չորս հզոր գետեր. Եփրատը՝ զեպի արեւմուտք և Երասխը՝ զեպի արեւելք, Գալլը՝ զեպի հարավ և Ակամսիս կամ Վոճ գետը՝ զեպի հյուսիս: Ունի երեք մեծ լեռնազագաթ, ունի որսի կենդա-

¹ Թորք այս ծովակները—լճերը հիշատակվում են համապատասխան տեղերում Կադուսան ծով, Բզնունեաց ծով, Գեղարունեաց ծով, Մովր լիճ, Գայատու լիճ, բացի վեցերորդից, որ պետք է Մովսես Խորենացու «Մովսիսի Նիսիսի»-ն լինի և վրաց զորյուրների «Յելի լիճ»-ն է. այժմյան Ջըլդըր լիճը: «Աշխարհացոյց»-ում այս լճի մասին հիշատակութուն պիտի լիներ Այրարատը նկարագրող հատվածում, սակայն այդ մասը մեղ հասել է ոչ լրիվ ձևով և բացակայում են ամբողջնախաղատութուններ, որոնց վերականգնման փորձը մենք տալիս ենք, որ զեւ հետո արկրասկցութուն պիտի ունենա մեղ չհասած ընդարձակ սկզբնաղբին

² Եկատի ունի Տայքին հյուսիսից սահմանակից Եգր փոքր աշխարհը-ը իր երեք գավառներով Չորրորդ ստորին չտանքում:

³ Եկատի ունի Վերջնակ, Այծպտկուճք և Պախ կամ Գայախագուս լեռնազագաթները:

սխտոյ, ընդ որ իջանէ Մեա Գալլ գետ առ Կողորհր-
դովն, զՀաշտեանն, յորմէ բղխեն աղբււրք Տիգրիս
գետոյ. իսկ ի մտից Խորձէնոյ՝ է Պաղնատուն գա-
ւառ հանգերձ հոմանուն բերգով, էւ հանդէպ նորա
ի հարաւ՝ Բալահոյիտ գաւառ. եւ ի մտից նոցա
Ծոփք, եւ Անձիտ գաւառ՝ ի հարաւ, յորում Ծովք
[լիճ] եւ Հոռէ բերդ, եւ ի մտից նոցա Դէգիք գա-
ւառ, յորում բերդք Կունի եւ Քրեիկ եւ Սոկ, որոց
հանդէպ ի հարաւ է Գաւրէք գաւառ, ընդ որս
եկեալ Արածանի խառնի լեւորատ ի քաղաքն Լուսա-
թառիճ, եւ երթալով զմտիւք՝ ելանէ ի սահմանս Փո-
քքըր Հայոց, լիւից Մեկիտինէ. եւ ապա խառնի ի նա
Կիսկիաս [գետ], գալով ի մտից կուսէ, ի լեռնէն
որ կոչի Զիգոն Բասիլիկոն, եւ նախ քան զանդա-
նել նորա լեւորատ՝ խառնի ի նա գետն Կառամի-
նոն, որ գալ ի Տաւրոս լեռնէ եւ ընկալեալ լեւո-
րատ գնալ ընդ հարաւ, հատանէ զլեռնն Տաւրոս,
յորում տեղուք գտանի ակն բիւրեղ. եւ ունի Չոր-
րորդ Հայք երէս եւ հաւս, եւ ի գաղանաց զառեւծ:

Երրորդ աշխարհ Աղձնիք լիւից կալ Միջագե-
տաց, եւ հիւսիսեալ առ Դիզաթով, ունի գաւառս
մեհասան՝ [Անգեղ-տուն], զՍիսեա, զԱղձն, ընդ
որոց մէջն իջանէ գետն Քաղիթթ, զոր Շիթթիմա
կոչեն Տաճիկք, ալսինքն՝ արիւնհարու, լեռ որոյ
Քաղ գաւառ, եւ ի լեւորինն ունի [գաւառս]՝ զԿէ-
թիկ, զՏատիկ, զԱզնուածոր, զԵրխեթս, զԳեղի[խ],
զՍալնածոր՝ զՍանասուն: Ունի նաւթ, եւ երկաթ
քաջ, եւ զգթոր եւ ի հաւուց՝ զեղհուկ:

Չորրորդ աշխարհ՝ Տաւրուերան [որ է կողմն
Տարաւնոյ], լիւից Չորրորդ Հայոց, ունի գաւառս
վիշտասան. զՍոյթ, Ասպակունեաց ձոր (կամ Աս-
պակառունեաց ձոր), զՏարաւն, յորում գալ գետն
Մեղ եւ անկանի լեւորատ, որ ըստ հիւսիսոյ՝ Արշա-
մունիք՝ առ Սրմանց լեւամբ, որ կոչի Կատար
Երկրի, յորմէ յոյժ բղխեն աղբււրք, որոց ըստ հիւ-
սիսի՝ Մարգադի՝ առ Մեղեղոյ [ղխ] լեւամբ, մինչեւ
ցնոյն Ալծպակունս որ բաժանէ ընդ Կարին եւ ընդ
նա. յորում գտանի սալակ եւ ձիղի եւ նաւթ սև եւ
սպիտակ. յորոց լիւից բղխէ Մուրց գետ, գնալով
ընդ հիւսիսի՝ իջանէ ի Բասեն գաւառ, եւ խառնի
լեւորատ, եւ գետացուցանէ զնա: Յիւից Մարգա-
դոյ է Դասնաւորք գաւառ. եւ նորա լիւից Տու-
րածատափ. նորա լիւից Դալառ, եւ ի հարաւոյ նո-
ցա Հարք եւ Վարածունիք, մինչև ցԱրածանի, որ
իջանէ լԱպահունեաց, որոց ի հարաւոյ՝ Բզնուն-
եաց գաւառ, սկըսանելով ի Սարակնէ եւ ի Նեխ
Մասեաց՝ պատէ զարեմտայ կար հոմանուն ձո-
վուն, մինչև ցԵրբալն Բաղ[աղ]էշ, եւ անդր եւս ի
հարաւ կոչս ցԵրբալն գաւառի սահման: Եւ Բըզ-
նունիք ունի չիւր հոմանուն ձովէն կղզիս երեք.
զԱրձկէտոյն, զԾիպանին եւ զՏօքեանն, որոյ ըստ
հարաւոյ ի մէջ լեւորինն Տարոսի եւ ձովուն՝ գա-

նինհր՝ եղջերու, ալծ ե քաղ, սոն ե արտի, վիթ
ե կըկիթ ե խող (վալրի), իսկ թուչուններից՝ ճա-
րակալորեներին, որոնցից են՝ կաքալ, արոս, անիդ
ե ալլը: (Բարձր Հայքը) ունի ջերմուկներ ե ալա-
հանքեր ե երկրի բուրբ բարիքները ու Թեոքու-
պոլիս քաղաքը:

(Մեծ) Հայքի երկրորդ աշխարհն է Չորրորդ
Հայքը, կամ Ծոփաց աշխարհը: Հյուսիսից սահ-
մանակից է Բարձր Հայքին, արեւմուտքից սահմա-
նակից է Մեկիտինե քաղաքին, հարավից՝ Մի-
ջագետին, իսկ արեւելքից՝ Տարոնին: (Չորրորդ
Հայքը) ունի ութ գավառ. հյուսիս-արեւելքից՝ Խորձ-
լան, որի միջով, Կողորհրդի մտտով, հոսում է
Մլուս Գալլ գետը, Հաշտլանք, որտեղից բխում
են Տիգրիս գետի տեղանքի աղբուրները: Խորձա-
նից դեպի արեւմուտք գտնվում է Պաղնատուն գա-
վառը համանուն բերդով, իսկ նրա զիմաց, դեպի
հարավ (գտնվում է)՝ Բալահոյիտ գավառը: Երան-
ցից (ալսինքն՝ Պաղնատուն ե Բալահոյիտ գա-
վառներից) արեւմուտք (գտնվում է)՝ Ծոփք (գա-
վառը) ե սրանից հարավ՝ Անձիտ գավառը, որտեղ
(գտնվում են) Ծովք (լիճը) ե Հոռե բերդը: Եվ
երանցից (ալսինքն՝ Ծոփք ե Անձիտ գավառնե-
րից) արեւմուտք, (գտնվում է)՝ Դեգիք գավառը՝
Կունի, Քրեիկ ե Սոկ բերդերով, որոնց զիմաց հա-
րավում (գտնվում է) Գալլուք գավառը, որոնց
միջև հոսող Արածանին խառնվում է Եփրատ գե-
տը Լուսաթառիճ քաղաքի մտ, ե գնալով դեպի
արեւմուտք, անցնում է Մեկիտինեից արեւելք
գտնվող Փոքր Հայքի սահմաններով: Ապա Եփրա-
տումն է թափվում Կիսկիաս գետը, որ հոսում է
արեւմուտքից, Զիգոն-Բասիլիկոն կոչվող լեռնե-
րից: Եվ նախքան նրա (Կիսկիաս գետի) թափվե-
լը Եփրատ գետում, նրա մեջ է խառնվում Կառա-
մինոն գետը, որը գալիս է Տավրոս լեռներից, ե
ընդունելով (ալս գետերը), Եփրատը հոսում է
դեպի հարավ, ճեղքում է Տավրոսյան լեռները,
որտեղ գտնվում են բլուրեղի ակների [հանքերը]:
Չորրորդ Հայքը ունի որսի կենդանիներ ե թուչուն-
ներ, իսկ գաղաններից՝ առյուծ (sic!).

Երրորդ աշխարհն է Աղձնիքը, Միջագետքից
արեւելք ե Դիզաթ (գետից) հյուսիս, ունի տասնե-
մեկ գավառ՝ [Անգեղ-տուն], Նիսեա (կամ Նիւր-
կերտ), Աղձն, որոնց միջև հոսում է Քաղիթթ գե-
տը, որին արաբները կոչում են Շիթթիմա, որ նը-
շանակում է քարունարբուք, որից հետո՝ Քաղ
գավառն է: Իսկ լեռներում (Աղձնիքը) ունի՝ Կե-
թիկ, Տատիկ, Ազնուածոր, Երխեթք, Գեղիլ, Սալ-
նածոր ե Սանասուն գավառները:

(Աղձնիքը) ունի նալթ ե երկաթ ընտիր, ե
զգթոր, իսկ թուչուններից՝ զեղհուկ:

Չորրորդ աշխարհն է Տավրուերանը [կամ

ւառ Երեւաքը, յորում լիճ ինչ՝ որ կոչի Եղիգի, յուղից, դի ի վարելն յախան ջուր ըմպէ կգն, եւ սերմանեալն քառասուն արն հասանէ եւ բերէ ընդ միոյ՝ յիսուն: Եւ ծովն Բզնունեաց լերկալնն հարիւր մզոն է, եւ լայնն՝ վաթսուն: Որոյ ըստ հիւսիսոյ Աղիսոյիս գաւառ, եւ գմալւք նորա Ապաճանիք. ընդ որոյ մէջն անցանէ Արածանի [եւ ի հարաւոյ նորա՝ Կորի]: [Եւ] յեզրն [ծովին] Բզնունեաց [է Սոսիսորանիք գաւառ]: Գտանի պատակ եւ կասաաննն որ է մաշկամիրգ: Ունի եւ գաղպէն եւ մեկր անուշ քան զամենայն երկրի եւ սպիտակ նաւթ, եւ կրկաթ: [Ասեմ թէ՛ նհանդ կայ յԱրածանի, որպէս լեփրատ, զոր հաւաստի [ոչ] զիւսեմք, կենդանի քարքաշամ գուղեւոյ, զարիւնն ծծեալ եւ թողեալ, զոր սմանք ասն թէ՛ զազան է եւ չէ՛ գեւ, այլ զազան զոր Յոհան վասն գտտին Հերոզիսպալ ասէ թէ՛ քան զհնանդան ծովալինս արիւնարբու էր]՝:

Հինգերորդ աշխարհ Մոկք, լիւից կան Ադճնեաց, ի լերինն Տաւրոս: Ունի գաւառս ութ, զԻշալը, զՄեւո Իշալը, զԷշուց գաւառն, զԱռուենից ձոր, զՄիշա, զԱռանձնական Մոկաց գաւառն, [որ է] Արքայից գաւառ, յորում գեան Որբ, զԱրգաստոյիս, Ջերմածոր, յորում գեան Ջերմ: Ունի ի մրդաց զահրշակ եւ մանրապոր. եւ ի գագահաց՝ ինձ գեղեցկախալտ, եւ [ի] հաւուց զկաքաւ Վեցերորդ [աշխարհ] Կորճալք լիւից կայ Մոկաց, առ Ասորեստանիւ: Ունի գաւառս մասասան. զԿորգաս, յորում Թ՛ամն՝ առ Ասորեստանեալ, զԿորգրիս Վերին, զԿորգրիս Միջին, զԿորգրիս Ներքին, զԱլլորտուանս, զԱլլգասս, զՄոթոզանս, զՈրսիրանս, զԿարթունիս, զՃահուկ, զՓոքր Ալլրակ: Ունի գառիկ եւ ի պղպոց շահգանակ, այլինքն գանգար փշոյ սերմն:

Եւաթներորդ [աշխարհ] Պարսկահայք լիւից Կորճէից, եւ սագխտալարաք՝ մտանէ ընդ մէջ Ատրպատականի, եւ լերինն Տաւրոսի այն կողման որ կոչի Կոհ-Ի-Նիհարակոն, մինչև ցԱրասիս գետ: Ունի գաւառս ինն՝ զԱլլի, որ կոչի Կուռիճան, զՄարի գաւառ, զԹրարի գաւառ, զԱրասիս, որ է Ոյէտ, զԱւան, Տամբի, Չարէհաւան, զՉարաւանգ, զէէր: Ունի լերէոց զչիւս եւ զայժեամն:

Ութերորդ [աշխարհ] Վասպուրական ի մոկից Պարսկահայոց, եւ առ երի Կորճէից: Ունի գաւառս երեսունհինգ, եւ այսքիկ են. զՄշաունիս՝ որ է ընդ Մոկաց եւ ծովուն Բզնունեաց, յորում կղզիք երկու, Աղթամար եւ Արաի եւ ցամաքակղզին Մանակերա, եւ Տոսպ՝ լիւից [ծովուն] Բզնունեաց,

Տարանոյ աշխարհը], գտնվում է Չորրորդ Հայքից գեղի արեւելք եւ ունի տասնվեց գավառ. Սոյթ, Ասպակունյաց ձոր, (կամ Ասպակունյաց ձոր), Տարան, որով հասում է Մեղ գետը եւ թափվում է Եփրատ: Արանից հյուսիս (գտնվում է)՝ Արշամունիք (գավառ) Սրամնց լեռնագագաթով, որը կաշվում է Կասար Երկրի, եւ որից բխում են բազմաթիվ աղբյուրներ: Արանից հյուսիս (գտնվում է)՝ Մարգալի (գավառ) Մեղեղուղի լեռների ուղղությամբ, մինչև Ալժապուենք լեռնագագաթը, որը բաժանում է Կարին (գավառը) նրանից (Մարգալի գավառից): (Մեղեղուղի լեռներում) գտնվում են սալակ եւ ձիգլի եւ նալթ սպիտակ ու սև: (Ալժապուենք լեռնագագաթից) արեւելք բխում է Մուրց գետը, որը հոսելով գեղի հյուսիս, իջնում է Բասեն գավառը եւ թափվում է Երասխ, գետացնելով վերջինս:

Մարգաղից արեւելք (գտնվում է)՝ Դասնավորք գավառը, նրանից արեւելք՝ Տուարածատափ (գավառը) եւ նրանից արեւելք՝ Դալաս (գավառը): Իսկ նրանցից (հիշյալ գավառներից) հարավ (գրասնելում են)՝ Հարք եւ Վարամունիք գավառները, մինչև Արածանի (գետը), որը իջնում է Ապահունիք գավառից: Արանցից հարավ է Բզնունյաց գավառը, որը սկսվելով Սարակն եւ Եխ-Մասիք (լեռնագագաթներից), պատում է հոմանուն (Բզնունյաց) ծովի արեւմտյան եզրերը, եւ տարածվում է մինչև Բաղ[աղ]եշ բերդը եւ այնտեղից մինչև հարավակողմում գտնվող Երեվաք գավառի սահմանները: Բզնունիք գավառը իր համանուն ծովում ունի երեք կղզի՝ Արծկե, Ծիպան եւ Տոքլան, որից հարավ. Տալրոս լեռների եւ ծովի միջև, գտնվում է Երեվաք (գավառը), որտեղ զբաղվում է մի լիճ, որ կոչվում է Եղեղի, գոլայցած աղխից, եւ վարելու ժամանակ կըլ ջուր է խմում ակոսից, եւ ցանածը հասունանում է քառասուն օրվա ընթացքում եւ տալիս է բերք մեկին հիսուն:

Բզնունեաց ծովի երկայնությունն է հարյուր մզոն, իսկ լայնությունը՝ վաթսուն: Բզնունյաց ծովից հյուսիս (գտնվում է) Աղիսոյի գավառը, եւ նրանից արեւմուտք՝ Ապահունիք (գավառը), որի միջով անցնում է Արածանի գետը [եւ նրանից հարավ գտնվում է Կորի գավառը]: Բզնունյաց (ծովի) ափին է (գտնվում) [Սոսիսորանիք գավառը]: (Տալրուերկրանում) գտնվում է՝ պատակ եւ շահգանակ: Ունի եւ գաղպե եւ անուշ մեկր, քաղցր քան ամբողջ աշխարհում, նալթ եւ երկաթ...:

* Փակագծերում բերված հատվածը հետագա բնագիտություն է, որ առաջ է եկել Միջագետքում գոյություն ունեցող համանուն Արածանի գետի անվան շփոթությունից հետևանքով, ուստի չենք տալիս աշխարհարար թարգմանություն:

* Բնագրում արձատված «չարգխտալարաք» ձևով, մենք ուղղում ենք համաձայն Գ. Վ. Արգարյանի: Երա կարծիրով, պիտի նշանակի՝ աղեղնաձև, աղեղնակերպ. սեպաձև (լատ. sagitta «աղեղ» բառից): Տե՛ս Հ. Մարկիպարտ, Պարսկահայք նահանգ, շրջանառ-բանասիրական հանդես, Երևան, 1961, № 1, էջ, 18ս, ծանոթ.***:

դԲոգուհես, զԱրճիշակովիտ, զԿուղանովիտ, [և ի հիւսիսոյ ծովին Բղնաւնեաց են՝ Աղիովիտ եւ] զԳուհնի մինչեւ ցգաւառն Կոզովիտ, որ լուտինն Ազաա Մառնաց. զԱրեւրանի՝ լիւից ծովուն Բղնաւնեաց, յորում կղզիք Զքատան եւ Լիմն, ցամաքակղզին Ամիւկ, եւ Առեսաւաւան, ուստի ելանէ [տառեխ] ձուկն: Եւ լիւից գոցա Բուժունիք, զԱնտոյ-ոտն, զԱնձեւացիս, զՏրպատունիս, զԵրուանդունիս, [զԲուն-Մարդաստան], զՄարդաստան, զԱրտազ մինչ ի Կոզովիտ: Եւ լիւից գոցա զԱլիէ, զԱղբակ Մեծ, զԱնձախիձոր, զԹունաւան, զՃուաշ-ոտտ մինչեւ ցերասխ, զԿըրճունիս, զՄեծ-նունիս, զՊալունիս, զԳուկան, զԱզանդ-ոտտ, զՊարպատունիս, զԱրտաշիսեան, [որ է] Արտաւանեան, զԲաքթիւն, [որ է] Մարանդ, զԿարիթեան, զԳաղրիկեանս, զՏալլրեանս, զՎարամնունիս, զԳոզթն զինեւեւտ, զՆախճաւան, յորում հոմանուն քաղաք:

Իններորդ աշխարհ Սիւնիք, ընդ մէջ կալով Երասխայ, եւ Արձախայ, լիւից Ալարաատոյ, ունի գաւառս երկոտասան. զԵրնշակ, զՃահուկ, զՎաչոց ձոր, զԳիւղաքունի՝ հոմանուն ծովայն, զՍոթս, զԱղահէճ, զՕղուկն, զՀաքանդ, զԲաղս, զՁորս, զԱրեւիս, զԿոլսական, հոմանուն գետովք մինչեւ ցեակորդեան քաղաք և անցսն իւր, եւ Աղուան գետ: Լինի ի նմա մուրս եւ զԵրեթի եւ նառն ազնիւ, եւ ամար տեղիք:

Տասներորդ [աշխարհ] Արցախ լիւի կալով Սիւնեաց, ունի գաւառս երկոտասան. զՄեւան Հարանդ [որ է Սիսական ի Կոտակ կամ Սիսական ի Ուտուն], զՎալիունիս, զԵրզնաձոր, զՄեծ-Աստուրս, զՄեծ-Կուսնս, զՀարճլանս, զՄոխանս, զՊիտանըս, զՊարսականս, զԲուսաթի, զՓաւնէս, զԿոզթ, յորում լինի քարախունի. զայս ամենայն Ազաւանք ունին հանեալ ի Հաչոց:

Մեկասաներորդ [աշխարհ] Փայտակարան լիւից կալ Ուտիոյ առ Երասխաւ. գաւառս ունի երկոտասան, զոր այժմ Ատրպատական ունի. Հրաքոտ-պիրոժ, Վարդանակիրտ, Եւթնոյրակեան քաղինք, Ռոտ-ի-Բաղա [որ է] Բազան-ոտտ, Առոտ-Պիճան, Հանի, Աթշի-Բագաւան, Սպանդարան-պիրոժ, Որմիզ-պիրոժ, Ալեւան: Լինի ի նմա քամրակ անբաւ եւ զարի ինքնարոյս:

Երկոտասաներորդ [աշխարհ] Ուտիք է, առ մտից կալ Երասխայ ընդ մէջ Արցախայ եւ Կար գետոյ. ունի գաւառս զոր [այժմ] Ազաւանք ունին, եւթն՝ Առան-ոտտ, Տաթի, Ռոտ-Պարսեան, Աղսէ, Տոս Բստակ, Գարբման, Շակաշէն, Ուտի Առանձնակ՝ յորում Պարտաւ քաղաք: Լինի ի նմա ձիթեանի, վարընկեանի, եւ լասմիկ, եւ ի հաւուց կատակ:

Սրեքասաներորդ աշխարհ է Գուգարք ի մը-

Հինգերորդ աշխարհն է Մոկքը, Աղձնիքից արեւելք Տալրոս լեռներում: Ունի ութ գաւառ. Իշայր, Մեկս (մլսա) Իշայր, Իշոց գաւառ, Առանից ձոր, Միջա, Մոկք Առանձնակ կամ Արքայից գաւառ, որտեղ հոսում է Որբ գետը, Արգաստովիտ գաւառ, Ջերմաձոր, որտեղով հոսում է Ջերմ գետը: Մըր-գերից ունի գահրշառ և մանրագոր, իսկ գազաննե-րից՝ ինձ գեղեցկատալոտ, և թռչուններից՝ կաքապի:

Վեցերորդ աշխարհն է Կորճայքը, որ գտնու-վում է Մոկքից արեւելք և սահմանակից է Ասո-րիստանին: Ունի տասնմեկ գաւառ. Կորդուք, որտեղ գտնվում է Թմանը՝ Ատորեստանի սահման-ների մոտ, Կորգրիք Վերին, Կորգրիք Միջին, Կոր-զըրիք Երբին, Ալարուանք, Ալբաք, Մոթո-զանք, Որսիրանք, Կարթունիք, Ճահուկ, Փոքր Աղբակ: (Կորճայքը) ունի զապիկ և պառույններից՝ շահաւանակ, ալիւնքն գանդար փշի սերմը:

Յոթերորդ [աշխարհն] է Պարսկահայքը, Կոր-ճայքից արեւելք, և սեպաձեւ մտնում է Ատրպա-տականի մեջ ու Տալրոս լեռների այն կողմերը, որոնք կոչվում են Կոհ-Ի-Նիսրական, մինչև Ա-րասխ գետը: (Պարսկահայքը) ունի ինն գաւառ. Ալ-լի, որը եւս և Կուսիճան է կոչվում, Մարի-գաւառ, Թրալի-գաւառ, Արասխ կամ Ուլա, Աւնա, Տամ-բեր, Ջարհաւան, Ջարաւանդ և Հեր: Որսի կեն-գանիններից ունի ցիւռ և այժամ:

Ութերորդ [աշխարհն] է Վասպուրականը. Պառ-կահայքից արեւմուտք և սահմանակից Կորճայքին: Ունի երեսունհինգ գաւառ և սրանք են. Ռշտու-նիք, որը գտնվում է Մոկքի և Բղնաւնեաց ծովի միջև, որի մեջ ունի երկու կղզի, Աղթամար և Ար-տի, և Մանակիրտ ցամաքակղզին: Տոպ (գաւառ) Բղնաւնեաց ծովից արեւելք, ապա՝ Բոզանիք, Ար-ճիշակովիտ, Կուղանովիտ (գաւառներից): [Բղնաւն-եաց ծովից հլուսիս են գտնվում] Աղիովիտ և Գաւնի (գաւառներից) մինչև Կոզովիտ գաւառը, որը գտնվում է Աղաւ-Մասիս (լեռնապագաթի) ստորոտին: Ատրեւանի (գաւառը) Բղնաւնեաց ծո-վից արեւելք է, որտեղ գտնվում են՝ Զքատան և Լիմ կղզիները, Ամյուկ ցամաքակղզին և Առեստ ավանը, որտեղից դուրս է գալիս [տառեխ] ձուկը:

(Վերոհիշյալ գաւառներից) արեւելք են գրո-տըլում՝ Բուժունիք, Անտ-ոտն, Անձեւացիք, Տրպատունիք, Երվանդունիք, [Բուն-Մարդաս-տան], Մարգաստան և Արտազ (գաւառը) մինչև Կոզովիտ (գաւառը): Սրանցից զիպի արեւելք են գտնվում Ակի, Աղբակ Մեծը, Անձախի ձորը, Թոռնաւանը և Ճուաշ-ոտտ (գաւառը) մինչև Երասխ (գետը): [Այս] Կըրճունիք, Մեծունիք, Պալու-նիք, Գուկան, Աղանդ-ոտտ, Պարսպատունիք, Ար-տաշիսան կամ Արտաւանյան Բալքրան կամ Մարանդ, Կարիթան, Գաղրիկան, Տալլրեան, Վարամնունիք, զինեւեւ Գոզթնը և Նախճաւան

տից Ուտիացուց, ունի գաւառս ինն. զՋորժիոր, զԿողրսփոր, զԾորսփոր, զՏաշիր, զԹոնդու, զԿանգարս, զՋաւախս Վերին, զԱրտաշան, զԿղարջա՝ Լինի [ի նմա] անալուծ, եւ հաճարածաւ, եւ սերկեւիլ եւ տուսխա՝ Ունին արդ Վիրք հանալ ի Հալոց:

Չորեքտասաներորդ [աշխարհ] Տալք առ երիկալ Գուգարաց, ամրոցօք եւ բերդօք կառուցեալ, եւ ունի գաւառս ութ. զԿող լիւից կուսէ, յորմէ բղկենն աղբիւրք գեառոյն Կուրայ, ի գեղջէն որ ստի Կրի սկունք. եւ ի մուսս կոյս, ընդ Արտաշան, երկաթնանիստ գաւառին, զնայ եւ գառնայ առ հիւսիսի, իջանէ ընդ Սամցիսէ, եւ ապա գառնայ յերս՝ մինչ ի Կաղբից ծովն. իսկ ըստ մտից Կողայ՝ Բերդացիփոր, Պարտիզացիփոր, զՃակս, յիւս, եւ ըստ հարաւոյ՝ զԲուդիս, զՈքաղէ, զԱղորդացիփոր իւրեանց [համանուն] գեառաօք, որք լիրար անկեալ իջանեն ի Յոճ՝ որոց ըստ մտից Արսեացիփոր առ Պարխար լերամբն, ընդ որ իջանէ Յոճ, գալով ի Սպերայ, անցանէ առ Թուխարս բերդով ի Կլարջս, եւ անտի յնգր. ընդ Նիգալ, ընդ Մրուզ եւ ընդ Մրիտ գաւառս՝ ի Պոնտոս ծով, զոր եզերացիք կոչեն Ակամսիս, եւ Սաղտիք Կակամար: Եւ լինի ի Տայս թուզ, նուոն թթու, աղտոր, սերկեւիլ, պտղախունկ եւ նուշ:

Հինգետասաներորդ աշխարհ Ալբարատ ի մէջ կալ նախասացեալ աշխարհացդ, ունի գաւառս քսանեւերկու, ըստ Բարձր Հալոց, զԲասեան, ընդ որ անցանէ Երասխ՝ զեռացեալ ի Մուրցամուր գետու: Եւ [Երասխ] բաժանէ զՀաւնունիս եւ Գաբղեանս ի հարաւ, եւ զԱբղեանս ի հիւսիսի, զնալով ընդ մէջ Արշարունեաց, որոց Բագրեւանդ եւ Ծաղկոտն ի հարաւոյ, եւ Վանանդ եւ Շիրակ՝ ի հիւսիսի, յորոց եկեալ գետն Ախուրեան՝ հանգերձ Մեծագետովն [որ գալ ի Ծովակէն Հիւսիսոյ], անցանկելով լիւից կուսէ Մաւրիկապուլսի, ալսինքն Շիրակաշատ աւանի, եւ Մրենոյ եւ Երուանդաշատ քաղաքի, իջանէ յերասխ: Եւ Երասխ, թողլով զԱրմաւիր քաղաք ի հիւսիսի եւ զԱրագածոտն, եւ զինքն [լիւան] Արագած, յորմէ բղկինն աղբիւրք Մեծամար գետոյ, [եւ լիւան Արալի]:

[Եւ անցանէ Երասխ յիւս, թողլով ի հարաւ գաւառս՝ Ճակատք եւ Մասեաց ոտն, եւ] զինքն իսկ լեռնագողաթն [Աղատ-Մասիս: Եւ] Մասիս՝ ի հարաւ թողու Երասխ, յորոյ թիկանց տարածեալ Կոգովիտ գաւառն: Եւ Արածանի զսկիզբն ունի ի Ծաղկոտնէ, ի տեղուջէն որ կոչի Ոսկիք, եւ զնալով ընդ հիւսիսի պատելով զԵպտական լերամբըն՝ առ Բագրեւան գեղուջն, իստնի ի Բագրեւանդ գետ:

[Եւ ի հիւսիսոյ թիկանց Արագածու է Տաշիր

գավառք, որտեղ գտնվում է համանուն քաղաքը: Իննեւերորդ աշխարհն է Այուսիքը, գտնվում է Երասխի եւ Արցախի միջև եւ Ալբարատից արեւելք, ունի տասներկու գավառ. Երնջակ, Ճահուկ, Վալոյց ձոր, Գեղաքունի համանուն ծովով, Սոթք, Աղահեճք, Ծղուկ, Հարանդ, Բաղք, Ջուրք, Արեւիք, Կողմական համանուն գետերով, մինչև Եպտոս քաղաքը իր գետանցքով, եւ Այուսան գետը: Այուսիքում կա մուրտ եւ գերերի եւ աղնիվ նուս եւ ամբացված տեղեր:

Տասներորդ [աշխարհն] է Արցախը, սահմանակից Այուսիքին, ունի տասներկու գավառ. Մեկս (Մյուս) Հարանդ [կամ Սիսական ի Կոտակ կամ Սիսական ի Ոստան], Վալիուսիք, Բերդաձոր, Մեծ Առանք, Մեծ Կուանք, Հարճլանք, Մախանք, Պիանք, Պարսականք, Քուստի, Փառնես, Կողթ որտեղ կա քարախունկ: Այս բոլորը ունի Աղվանքը, հանկելով Հայաստանից:

Տասնեւերորդ [աշխարհն] է Փայտակարանը, Ուտիքից արեւելք, Երասխ գետի վրա: Ունի տասներկու գավառ, որոնք այժմ Ատրպատականի կազմում են. Հրաքոս-պերոժ, Վարդանակերտ, Յոթնփորակլան բազինք, Ռոտ-ի-Բաղա կամ Բաղան-ոտ, Առոս-պիճան, Հանի, Աթշի-Բագասան, Ապանդարան-պերոժ, Որմիզդ-պերոժ, Ալվան: Այնտեղ կա բամբակ անբավ եւ գարի ինքնաբույս:

Տասներկուերորդ [աշխարհն է] Ուտիքը, Երասխ գետից արեւմուտք, Արցախի եւ Կուր գետի միջև: Ունի յոթը գավառ, որոնք այժմ Աղվանքի կազմում են. Առան-ոտ, Տաի, Ռոտ-Պարսեան, Աղուե, Տուս-Քատակ, Գարդման, Շակաշին, Ուտի Առանձնակ՝ որտեղ Պարտավ քաղաքն է: Կա այնտեղ (Ուտիքում) ձիթենի, վարնիկենի, համիկի, իսկ թոչուններից՝ կատակ:

Տասներեքերորդ աշխարհն է Գուգարքը, Ուտիքից արեւմուտք, ունի ինը գավառ. Չորոփոր, Կողրսփոր, Ծորսփոր, Տաշիր, Թոնդու, Կանգարք, Ջավախք Վերին, Արտաշան, Կղարջք: Կա այնտեղ անալուծ, հաճարածառ, սերկեւիլ եւ տուսխա: Այժմ Վիրքի կազմում է, վերցված՝ Հայաստանից:

Տասնչորսերորդ [աշխարհն է] Տալքը, Գուգարքին հարեան, ամրոցներով ու բերդերով հարուստ, ունի ութը գավառ. Կող (գաւառ) արեւելյան մասում, որտեղից բխում են Կուր գետի աղբյուրները Կրիակունք կոչված գլուզից: Եւ Կուր գետը (այստեղից) հոսում է զեպի արեւմուտք Արտաշան երկաթնանիստ գավառով, ապա դառնում է զեպի հյուսիս եւ իջնում է Սամցխե (գավառը), որից հետո դառնում է զեպի արեւելք մինչև Կասպից ծովը:

Իսկ Կող գաւառից արեւմուտք գտնվում են Բերդացիփոր, Պարտիզացիփոր, Ճակք, որից արեւելք

¹ Եկատի ունի՝ Բերդիկ, Պարաէզ, Բոդխա եւ Ազորդ գետերը:

Վերին(?) և Աշոցք գաւառ]: Եւ է ըստ հլից Արագածու՝ Նիգ, յորմէ ըղխեն աղբերք Գոտաղ գետոյ, [և լիից նորա՝ գաւառքն Կոտայք և Մազազ: Եւ ի հիւսիսոյ նոցա՝ Վարաժնունիք], ընդ որ անցանէ գետն [Հրազդան]:

Եւ անցանէ [Հրազդան] լիից կուէ Վաղարշապատ քաղաքի, յորում մայր եկեղեցիաց Կաթողիկէ՛, և մարտիրոսունեացն մատրոնքն², յորոց լիից բլխեն աղբերք Ասպահն գետոյ, որ է Խոզմաւր, և խառնի ի Մեծամաւր. և ապա լիից նորա գետն Ազատ, և արգարև աղատ. որոյ ակունքն բլխեն ի Գեղ լեռնէ, ի Սախուրակ տեղոյ, որ իջանելով ընդ Դուին, արբոցանէ գամենայն Ոստանն Հալոց, և անցեալ ընդ հարաւ անկանի յԵրասխ. յորոց ի մէջ շինեալ է Արտաշատ քաղաք, ուր յառաջին ժամանակն խառնուրդք Մեծամաւրի, իսկ այժմն փոխեալ ըզգնացան Մեծամաւրա՛յ՝ խառնի ի մտից կուէ [Արտաշատտ]:

Իսկ լիից կուէ [Ոստանին] Դունայ են գաւառք. Ուրծածոր և Արածոյ կողմն, ընդ մէջ կալով Վայոցձորոյ, և Շարուր գաշան, ընդ որ հոսի գետն Արփանեալն, առ Մարաւանայ քաղաքով, անցանելով ի հարաւ՝ խառնի յԵրասխ:

Եւ ունի Այրարատ լեռինս և գետս, և գաշտոքս պիտանիս, երէս և հուս, և գամենայն պարտութիւն և ծովակն Գալլատտ, և [ունի] որդն սիպաբերեալ յարմատոյ առ ի դարդ կարմրութեան գունույ:

Ահա կատարեցան զամենայն Հայք:

և հարալ (գտնվում են) Բուդիս, Ոքայի և Աղորդացիոր գավառները իրենց [համանուն] գետակներով, որոնք խառնվելով իրար՝ թափվում են Վոհ գետը: Այս գավառներից արևմուտք է Արայաց փոքր (գավառը)՝ Պարիսար լեռների փեշերին, որտեղից հոսում է Վոհ գետը, որը, գալով Սպեր (գավառից), անցնում է Թախարք բերդով Կղարջք (գավառը), այտեղից էլ՝ Եզր (աշխարհ)՝ Նիդալ, Մրուզ և Մրիտ գավառներով հոսելով, թափվում է Պոնտոսի ծովը, որը եզերացիները կոչում են Ակամսիս, իսկ Խաղաթիք՝ Կակամար: Տալքում կա թուղ, թթու նոս, աղտոր, սերկիլ, պաղախունկ և նուշ:

Տաննհինգերորդ աշխարհն է Այրարատը, վերոհիշյալ աշխարհների մեջանկար և ունի քսաներկու գավառ: Բարձր Հայքի կողմն է Բասյան (գավառը), որի միջով անցնում է Երասխը, որը գետանում է Մարցամոր գետից: Երասխ գետը բաժանում է, թողնելով հարալ Հայմանիք և Գաբելյանք (գավառները), իսկ հյուսիսում՝ Աբելյանք (գավառը): Այնուհասակ Երասխը հոսում է Արշարունիք գավառով, որից հարալ են գտնվում Բագրեանդ և Ծաղկոսն գավառները, իսկ գեպի հյուսիս՝ Վանանդ և Շիրակ (գավառները): Այս գավառներից է հոսում Ախուրյան գետը Մեծագետ վտակով [որ գալիս է Ծովակի Հյուսիս լճից] և, անցնելով Մավրիկապոլիս, այսինքն՝ Շիրակաշատ ավանը, և Մրենն ու Երուանդաշատ քաղաքը, թափվում է Երասխ:

Եվ Երասխը, Արմավիր քաղաքը Արագածոտն (գավառով) և Արագած լեռնազագաթը, որտեղից բխում են Մեծամոր գետի աղբյուրները, [և Արայի լեռը] թողնում է հյուսիսային կողմը: [Ապա, Երասխը հոսելով գեպի արևելք, հարավում թողնում է Ճակատք և Մասլացոտն գավառները և] լեռնազագաթ [Ազատ-Մասիսը]: Եվ Մասիս ստորը, որի ստորոտին տարածվում է Կողովիտ գավառը, գեպի հարալ է թողնում Երասխ գետը: Իսկ Արածանի գետը սկիզբ է առնում Ծաղկոսն (գավառից), Ոսկիք կոչվող տեղից և, գնալով գեպի հյուսիս, պատկելով Նպատական լեռնազագաթը Բազաւան գլուղի մոտ, խառնվում է Բագրեվանդ գետին:

[Արագածի փեշերից հյուսիս (գտնվում) է Վերին Տաշիրը(?) և Աշոցք գավառը]: Իսկ [Արագածից] արևելք (գտնվում) է Նիգ (գավառը), որտեղից բխում են Գոտաղ գետի աղբյուրները, [և նրանից (Նիգ գավառից) արևելք գտնվում են Կոտայք և Մազազ գավառները, իսկ նրանցից հյուսիս՝ Վարաժնունիք գավառը, որի միջով անցնում է Հրազդան գետը]:

¹ Խոտքը վերաբերվում է Եգմիածնի տաճարին:

² Նկատի ունի Հովսեփիմիկի և Գալանեի մատուռները, որոնց տեղերում՝ 618 թ. կառուցվից Հովսեփիմիկ տաճարը, իսկ 630 թ.³ Գալանեի տաճարը: Այստեղից ևս երևում է, որ «Աշխարհացոյց»-ը կազմվել է 618 թվից պակի շուտ:

[Հրապրան գետը] անցնում է Վաղարշապատ քաղաքից գեպի արևելք, որտեղ գտնվում է մալր եկեղեցին՝ Կաթողիկոսն, և մարտիրոսահայերի մատուռները, որից (Վաղարշապատից) գեպի արևելք բխում են Ասպահեն գետի աղբյուրները, այսինքն Սողմորը, որը խառնվում է Մեծամոր գետին: Ապա նրանցից արևելք է Ազատ գետը, և հիրավի ազատ, որի ակունքները բխում են Գեղ լեռնագագաթից, Սախուրակ տեղում, և, իջնելով գեպի Դվին (քաղաքը), ստոգում է ամբողջ Հայոց Ոստանը: Անցնելով հարավ, [Ազատ գետը] թափվում է Երասխ, որոնց միջև կառացված է Արտաշատ քաղաքը, որտեղ հին ժամանակները գտնվում էր Մեծամորի գետախառնուրդը, իսկ այժմ, փոխվելով Մեծամորի հունը (ալն) խառնվում է (Երասխին) [Արտաշատ քաղաքի] արևմտյան կողմը:

Դվին [Ոստանից] գեպի արևելք գտնվում են Ուրծաձոր և Արածու կողմն գավառները, մասնելով Վալոցձոր գավառի թիկունքը, և Շարուր գաղաթը, որի միջով հոսում է Արփանչալ գետը և անցնելով Մարավան քաղաքը, գեպի հարավ, թափվում է Երասխ գետը:

Եվ Այրարատ (աշխարհը) ունի լեռներ, գետեր և պետանի գաշտավայրեր, որտեղ կենդանիներ և թռչուններ, և ամենայն պարարտություն և Գալլատու ծովակը: Ունի և սիդարերչալ արմատի որդը (որը օգտագործում են) իբրև զարդ կարմիր գույնի:

Արևոտով վերջանում է ամբողջ Հայաստանի նկարագրությունը:

Յաղագս Ասորոց

Աշխարհ ընդհանուր Ասիոյ՝ Ասորիք, լիկից կալով իւրեանց ծովուն համանուն պեղադասին, առեալ ի Սխոնէ քաղաքէ և Կիլիկիալ գրանցն՝ մինչև ցԹաասիս գետամտունս, զոր կոչեն Քուսէաս, և անտի ցԻսպոս լեռն ըստ հարաւոյ. և սահմանի Հրեատանիւ և մասամբ ինչ առ Ապտոս մարբիս մինչև ցԱնապատն Արարիա, մինչև ցրիկնուածն Եփրատայ՝ լարեւելս կոչս, հանգէպ Թապիսակ քաղաքի. և [այս] գետովն ի վեր մինչև զԱմանուս լեռնն, որ բաժանէ ըստ հիւսիսոյ զԿիլիկիա և զԿապադովկիա, այսինքն, զՓոքր Հայս յԱսորոց, ի Կոմագենէ աշխարհէ փոքուէ:

Քանզի ունին Ասորիք փոքր աշխարհս ինն, զ[վերս]գրեալ [Կոմագենէ], յորում քաղաք Շամաշատ, և զԿիւսեստիկէ, յորում քաղաք Հերապուլոս՝ որ է Մարտի, և Բեւիոս՝ որ է Սալլուրոն և Ալգազ, [Քա]ղկիկիէ, յորում քաղաք Քալկիսա, որ է Նիկորիա, և Աւագն Անտիոք իւր գատացեալ աշխարհաւն, որ կոչի Սելեկիա, զԱպամիս, յորում

Ասորիքի մասին

Ասիայի մալր ցամաքի կրկններից է Ասորիքը, որը սկսվում է համանուն ծովի արևելյան կղերքից, սկսած Սխոն քաղաքից և Կիլիկիայի դաններից մինչև Թրասիսի գետաբերանը, որը կոչում են Քուսեսաս, և հարավում՝ մինչև Իպպոս լեռը: Ասորիքը սահմանակից է Հրեատանին և մասամբ էլ Ապտոս Արարիային, մինչև Անապատային Արաբիան և այնտեղից (սահմանագիծը) հասնում է մինչև Եփրատի շրջադարձը գեպի արևելք Թապիսակ քաղաքի դիմաց, և [այս] գետով վերև (հյուսիս) մինչև Ամանուս լեռը, որը բաժանում է հյուսիսում գտնվող Կիլիկիան և Կապադովկիան, այսինքն Փոքր Հայքը, Ասորիքի Կոմագենն փոքր աշխարհից:

Ասորիքն ունի ինը փոքր աշխարհ՝ [վերս]հիշյալ [Կոմագենն], որտեղ Շամաշատ քաղաքն է, Կիւսեստիկե, որտեղ Հերապուլոս քաղաքն է, որ Մարուկն է, և Բեւիա քաղաքը, որ Սալլուրոնն է, և Ալգազ քաղաքը, [Քա]ղկիկիէ, որտեղ Քալ-

քաղաք Ապամիա, և Եպիփանիա, որ է Հեմաթ, և Եմածա (Հոմա), և այլք. զԿոստիտոսիս՝ յորում Առատոյ կղզի, զԿիւլիսիւրիա՝ յորում Դամասկոս քաղաք, զԲազանա ըստ անապատի և զՊալմիրենէ, յորում է Հաւարին քաղաք ըստ Անանիատ Արարիոյ, և զԲարբալիտիս ըստ Եփրատայ:

Ունին [Ասորիք] լիտինս զՊիկո[ի]ա, զԿասիոս, զԼիբանանոս, զԱնտիլիբանանոս՝ որ է Սանիր, զԱլլ[ի]սա[դա]մոս, զԿարմեղոս. և գետս անուանիս. զՈսոնտէս, որ բղխէ ի Լիբանանէ, անցանելով առ Եպիփանիայ[ոյ] մտանէ ի ծով՝ հուպ յԱւագն Անտիոք. և Ելեւթ[ե]ոս, որ ասի Ազատ գետ. և նա Ելանէ ի Լիբանանէ, և մտանէ ի ծով մերձ յԱնգա[ռա]դոն քաղաք. և Ազոնիս, որ և նա Ելանէ ի Լիբանանէ, և բաժանէ ընդ մէջ Բիրզոս և Բիւսիտոս քաղաքաց, և իջանէ ի ծով. և Յորդանան որ Ելեւթ ի Պանիադա՛ մտանէ ի Գալիլիացոց ծովն. և [անտի] ևս Ելեւթ Երթալ մտանէ յԱսիադոսիտէս ծով: Ունի և այլ գետս և լիբինս, որպէս զԴամասկոսին, որ զ[Ա]բանաս զեւ՝ որ անցանէ ընդ մէջ քաղաքին, և զԲառագա՝ որ յարեւելից կուտէ անցանէ, զոր Աստուածային Գիրն Բանա և Փարիարա կոչէ. և որպէս գետակն, որ բղխէ ի Դափնոս Անտիոքացոց. զորմէ Կաստադայ առասպելքն յղեն:

Յաղագս Միջագետաց

Աշխարհ՝ Միջագետք՝ լիլից Ասորոց, լերի Մեծի Հայոց, սահմանի նովա ըստ հիւսիսոյ, զԲարբիլոնիս և Անապատաւն Արարեաւ:

Ունի լիբինս երկու, ասէ Պտղոմէոս, զմինն կոչէ Անգարոս, զոր ոչ գիտեմ ով է: և զմիւսն կոչէ Մասիոն, յորմէ ասէ Երկու գետս բղխեալ, [զմինն Բալիքէս], զմիւսն կոչէ Քարաոն, զոր կարծեմ Մարո լինել. քայց սա ոչ ի լեռնէ այլ ի դաշտէ բղխէ, հուպ յՈւռաշինա քաղաք, որ անկանին լեփրատ, և ի հոմանուն լեռանէ բղխէ Թրթար, և զնայ զէպ ողիզ յարեւելս, և միանայ լեփրատ Ջայս երկու գետս գիտեմ Միջագետաց Ասորոց, և լիբինս երկու՝ զԿոհ-Շնգար, և զմիւս լեռան երկայն՝ [Մասիոն] յորում Մարգէ լերդ, և Տու-Արգին գաւառ և Բզարգէ [քաղաք] և Ամիզ քաղաք, [և Արատատան Մծրին քաղաքաւ], և երկու այլ փոքունք լիբինք, մի որ կոչի

կիս քաղաքն է, որ Եփրոբան է, Աւագն Անտիոք իր առանձնացած աշխարհով, որը կոչվում է Սիւլիկիա, Ապամիս, որտեղ Ապամիս քաղաքն է, և Եպիփանիա, որ Համաթն է և Եմածա (Հոմա), և այլ (քաղաքները), Կասիոսիս, որտեղ Արատոս կղզին է, Կիւլիսիւրիա, որտեղ Դամասկոս քաղաքն է, Բազանա՝ անապատում, և Պալմիրենն, որտեղ Հավարին քաղաքն է՝ Անապատային Արարիային՝ կից, և Բարբալիտիս՝ Եփրատ (գետին) կից:

[Ասորիքը] ունի (հետեւյալ) լեռները՝ Պիկո[ի]ա, Կասիոս, Լիբանանոս, Անտիլիբանանոս, որ Սանիրն է, Ալլ[ի]սա[դա]մոս, Կարմեղոս: (Ասորիքը) ունի և հայտնի գետեր. Ոսոնտէս, որը բխում է Լիբանանից և, անցնելով Եպիփանիայով, թափվում է ծով Աւագն Անտիոք (քաղաքի) մոտ, Ելեւթ[ե]ոս (գետ), որ նշանակում է Ազատ գետ: Այս գետը դուրս է գալիս Լիբանանից և թափվում է ծով Անգա[ռա]դոն քաղաքի մոտ: Ապա Ազոնիս (գետ), որը նույնպես դուրս է գալիս Լիբանանից և բաժանում է իրարից Բիրզոս և Բիւսիտոս քաղաքները և թափվում է ծով:

Հորդանան (գետը), որը դուրս է գալիս Պանիադայից, մտնում է Գալիլիացոց ծովը և [այնտեղից] ևս դուրս գալով՝ թափվում է Ասիադոսիտես ծովը: (Ասորիքը) ունի նաև այլ գետեր ու լեռներ, ինչպիսին է Դամասկոսինը, որ [Ա]բանաս զեւն է և անցնում է քաղաքի միջով, և Բառագա, որն անցնում է (այս քաղաքի) արեւելյան կողմը, որոնց Աստուածաշունչը կոչում է Բանա և Փարիարա, որոնցից է և Անտիոքյան Դափնոսից բխող գետակը, որը, ըստ առասպելների, Կաստադա (գետն) է:

Միջագետքի մասին

Միջագետքը տարածվում է Ասորիքից արեւելք մինչև Մեծ Հայք, որի հետ սահմանակից է հյուսիսային կողմից, ապա Բարբիլոնով և Անապատային Արարիայով:

Պտղոմեոսն ասում է, որ Միջագետքը ունի երկու լեռ, մեկը կոչվում է Անգարոս, որ չգիտեմ, թե որն է, իսկ մյուսը, Մասիոն, որտեղից, նրա ասելով, բխում է երկու գետ՝ [մեկը Բալիկես գետն է], իսկ մյուսը կոչում է Քարաոն, որ, իմ կարծիքով Մարո գետը պիտի լինի: Սակայն այս գետը բխում է ոչ թե լեռներից, այլ դաշտից, Ուռաշինա քաղաքի մոտ: Երկու գետերն էլ թափվում են Եփրատ գետը: Իսկ հոմանուն լեռից բխում է Թրթար գետը, որը հոսում է ողիզ գետի արեւելք և միանում է Եփրատ գետին: Ասորական Միջագետքում ևս գիտեմ միայն այս երկու գետերը և երկու լեռ՝ Կոհ-Շնգար, և մյուս լեռը երկայն, [Մասիոնը]

Ազիմուն. և միւս լիւսն ուր կոչի Բեմադատ [Ունի] և քաղաքս բազումս, յորոց մի է Ունա՝ ուր անձևապորձ պատկերն է Փրկչին:

Եւ եփրատ բաժանէ ի Միջագետաց զԱսորիս, և զԱնապատն Արարիս և զԲարխլացոց աշխարհս և Տիգրիս երթալով ընդ հարաւ՝ պատահէ լերինն, և ի հարաւոյ ի՛ գամնալ յարեկս կոյ՝ բաժանել [զՄեծ Հայս] ի Միջագետաց, թողու զհիւսիսուս. զԱղձնիս Հայոց, որ է Արձն, յորում քաղաք Կուսեմուսն, որ է Բիզանտիս, և Քիշ, և Շուկաուրա: Եւ ամենայն քամ՝ ի լերանց Հայոց ի Դիլաթ իջանէ. նախ Քաղիթթ, որ բլիւն է ի լերանց Սալնայ և Սանասնոյ, և իջեալ կորէ չիւրաց զՆիփրիկա և զԲիզանտիս, որով բաժանեցան Հասովք և Պարսիկք, և կոչի այժմ Շիթիթմա, որ է արիւնարբու:

Եւ Դիլաթ երթալ ընդ [Ասորիստան և քաղաքն] Նինուէ. և պատահէ նախ քաղաքիկ մի՝ որ կոչի Բղաթ, որ կոչի Թուք, զի անդ ասեն թքանել զՅունանն: Եւ է երկու աշխարհ ընդ մէջ Դիլաթայ և եփրատայ նորաշէն ի Պարսից, Կուսու և Կաշկար: Եւ է Միջագետք ութ մասն երկայն, և երեք լայն:

որակ զանվում են Մարգե-բերդ և Տուս-Արգին գալաւը, ապա Բղաբը [քաղաքը], Ամիւք քաղաքը և [Արուստանը Մծրին քաղաքով]: Կա և երկու ալ փոքրիկ լեանապագածներ՝ մեկը կոչվում է Ազիմուն, մյուսը՝ Բեմադատ:

(Միջագետքը) [ունի] և բազմաթիւ քաղաքներ, որոնցից մեկն է Ունա քաղաքը, ուր պահվում է Փրկչի անձևապորձ պատկերը:

Եփրատ գետը բաժանում է Միջագետքից Ասորիքը, ապա Անապատային Արարիսն և Բարխլացոց աշխարհը: Տիգրիս գետը հոսելով հարավ, պատահում է լեռների, և հարավում, զեպի արեկլան կողմը թեքելով, բաժանում է [է Մեծ Հայքը] Միջագետքից, թողնելով հյուսիսում Հայոց Աղձնիքը, այսինքն՝ Արձնը, որակ զանվում են՝ Կուսեմուսն այսինքն՝ Բիզանտիս քաղաքը, ապա Քիշ և Շուկաուրա քաղաքները: Եվ ամենայն քամը Հայոց լեռներից իջնում է Դիլաթ գետը, նախ և առաջ Քաղիթթ (զևաթ), որը բխում է Սալնա և Սանասնո լեռներից, և իջնելով, անջատում է միմյանցից Նիփրիս և Բիզանտիս (քաղաքները): Այս գետով բաժանվելին Հասովներն ու Պարսիկները և այժմ կոչվում է Շիթիթմա, որ նշանակում է արիւնարբու:

Դիլաթ գետը հոսում է [Ասորիստանով և] Նինվե քաղաքով: Ապա պատահում է մի քաղաքիկ, որ կոչվում է Բղաթ և անվանվում է Թուք, որովհետեւ, ասում են, որ այնտեղ են այսպեմէ Հունան (մարգարեին): Իսկ Դիլաթի և եփրատի միջև երկու պարսկական նորաշէն աշխարհ կա՝ Կաշկա և Կաշկար: Միջագետքը տարածվում է երկարութամբ ութ մասն, և լայնութամբ երեք մասն:

Յաղագս Պարսից աշխարհին²

Պարսից աշխարհ ընդ չորս բաժանի այսպէս.

ա) Քուստակ-ի-Սորուարան, որ է Կողմ Արևմտեայ, յորում աշխարհք ինն. Մայ, Մասպտան, Միհրան-Քուստակ, Կաշկար, Գարմական, Երան-

Պարսից աշխարհի մասին

Պարսից աշխարհը չորս մասի է բաժանվում այսպէս.

ա) Քուստակ-ի-Սորուարան, որ Արևմտյան երկիրն է, որակ կա ինն աշխարհ. Մայ, Մաս-

¹ Քամ, որ աննայտ բառ է, պիտի նշանակի ձյունի հալոցքից զոյացող գետ կամ գետակ, ասվակ:

² Այս գլուխը ցույց է տալիս, որ զոյությունն է ունեցել առանձին քարտեզ Սասանյան Պարսկաստանի պետութան, որի կազմում Վ՝ դարի վերջում և ՎՂ՝ դարի սկզբում մտնում էին իրրե առանձին մարզպանութիւններ՝ Հայքը, Վիրքը և Աղվանքը, իսկ Սիսականն ու Բալասականը՝ իրրե առանձին իշխանութիւններ: Անա այս հանդամանքն էր անհասկանալի հետագա արտադրողների համար, երբ «Աշխարհայոյց»-ը կազմող բարտեզները այլևս զոյություն չունեին և նրանց նկարագրող բնագրերի ժողովածուն զարձկ էր ստիկ իրրե աշխարհագրութան տեղեկատու-ձեռնարկ: Հետագա ընդօրինակողները այս մասի հետագոյ շարտորութան մէջ շփոթութիւն են մտցրել, իսկ ընդարձակ բնագրի համատարողները նախկինում զոյություն ունեցող բարտեզի մասին զարգաբար չունենալով աշխատել են բնագրի բովանդակութիւնը մտնեցնել իրենց մասնակի իրականութան: Նրանք Քուստակ-ի-Կապիոն գլուխը վերաբարձրելով ձեռքով են շարագրում, հանելով բնագրից Հայք, Վիրք, Աղուանք, Սիսական, Բալասական երկրանունները հետևյալ կերպ. «Մարք, որ կոչին Քուստակ-ի-Կապիոն, յիլից կալով Հայոց և առ երի Կարսից ծովուն. և ունի աշխարհս պայտսիկ. զԱտրապատական, զԲէ, զԳեւան, զՄուկան, զԴիլումն, Անագան, զԻմալանց, զՏապարբտան, Ամաւոյ, Ռուանոյ Ռունի լերինս և զԵսոս, և զժովպիւն, որ կոչի Կապուտան՝ ուր գրուածադիզն գործեն: Ունի քաղաքս ըստմութ, յորոց միւնն Գանձակ Շահաստանն»:

ասան—Քարտ-Կաւատ, Նոտ-Արտաշիրական, Մար-
ձին, զԱրդոն...

բ) Քուստակ-ի-Կապիոհ, որ է կողմն Կաւկա-
սու լեռանց, լորում են աշխարհք երևբոսասն.
Ատրպատական, Արմն՝ [որ է] Հալք, Վարջան՝ որ
է Վիրք, Ռան՝ որ է Աղսանր, Բալասական, Սի-
սական, Առէ, Գեղան, Շանճան, Դլմանք, Դմբա-
ւանդ. Տապարըստան, Ռւան, Ամոլ, զոր պատմել
աւաջի կալ մեզ՝:

Յաղագս Մարաց

Աշխարհ Ասիոյ է Մարք, զոր ասնն ի Մա-
ղեայ որդույ Կողքացուց թագաւորին զաւակին սե-
րեալ են, որոյ քոյր Մաղա է, որ Յասովնի տըռ-
փեալ գոսկեկիղն մորթին մատնեաց. բայց պատ-
ճառ գալոյն այսր՝ ոչ ասի: Ալլ ասի թէ Արտա-
շէս Ոքոզ մասն ինչ ի Հոտմայեւոցն եւ ի Հրէից
առեալ բնակեցոյց առ Վրկանաք Կասրից, որ
այժմ ոչ է լայտնի. բայց Պողոմէոս զՄարս լելից
[եւ ի հարաւոյ] Կասրից [ծովուն] ասէ բնակել-
եւ զոր ասնն ընդ մի իշխանութեամբ, եւ ոչ ու-
րեք գտանին Մարք. բայց Պողոմէոս ասէ՝ զաշ-
խարհս սոցա՝ Կասր, Քաղուշ, Գեկք, Դիլումք. եւ
Ռէ եւ Ահմատան քաղաքք են Մարաց:

պլտոն, Միհրան-Քուստակ, Կաշկար, Կարմական
Երան-ասան-Քարտ-Կաւատ, Նոտ-Արտաշիրական,
Մարձին, Արդոն:

գ) Քուստակ-ի-Կասիոհ, որ Կովկասյան լեռների
երկիրն է եւ որտեղ կա տաններեք աշխարհ. Ատըր-
պատական, Արմն՝ որ Հալքն է, Վարջան՝ որ Վիրքն
է, Ռան՝ որ Աղսանքն է. Բալասական, Սիսական,
Առե, Գեղան, Շանճան, Դլմանք, Դմբավանդ, Տա-
պարըստան, Ռուան, Ամոլ, որոնց մասին մենք
պատմելու ենք ստորիւ:

Մարերի մասին

Ասիայի աշխարհն է Մարքը, որը, ըստ
ավանդութեան սերված է Կողքիսի թագավորի
որդի Մաղեսի գալակից, որի քույրը Մեղիտն է,
որ սիրահարվելով Յասովնի հետ, մատնեց ոսկե-
կիղն մորթին, սակայն այստեղ գալու պատճառի
մասին չի ասվում: Այլ ասվում է, թե Արտա եւ
Ոքոսոսը զերեկարած հոտմայեցիների (sic!) եւ հրեա-
ների մի մասը բնակեցրեց վրկանների հետ [Կաս-
պից ծովի ափերին], որոնք այժմ հայտնի չեն: Իսկ
Պողոմոսը հաղորդում է, որ մարերը բնակվում
են Կասպից ծովից արևելք եւ հարավ, եւ ասում են,
որ նրանք բնակվում են մի իշխանութեան ներքո եւ
այլ տեղերում մարերը չկան: Պողոմոսը թվար-
կում է նրանց կողմից բնակված երկրամասերը.
Կասր, Քաղուշ, Գեկք, Դիլումք. իսկ մարերի քա-
ղաքներն են Ռեն եւ Ահմատանը:

¹ Մեղ հասած բնագրում այս գլուխը ընդհատվում է սույն նախագատութեամբ եւ «Աշխարհացոյցի»-ի բնագրի
շարունակութեան մեջ գոյութիւն չունի այս խոստացած մասը:





Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Բ

«ՓՈՒՐ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ» (ՆԱՀԱՆԳՆԵՐԻ) ԵՎ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՓՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՐԴԱԿԱՆՈՒՓՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՆ Ի

Ընդհանուր ԱՅ-ը	ԱՅ ըստ նահանգների	Նահանգները և զափանները	Տարածությունը, քառակուսի կիլոմետրով	Ընդհանուր ԱՅ-ը	ԱՅ ըստ նահանգների	Նահանգները և զափանները	Տարածությունը, քառակուսի կիլոմետրով
Ա. ՄԵՇ ՀԱՅԻ				III ԱՂՉՆԻՔ			
ԲԱՐՁՐ ՀԱՅԻ				17.532			
			23.860	18	1	[Անդեղ-տուն]	2430
1	1	Գարանաղի	3400	19	2	Նփոնտ, Նփրկերտ (Տիգրանակերտ)	5395
2	2	Աղիւն (Առիւծ)	950	20	3	Աղձն (Արզան)	3575
3	3	Մուղուր (Մընձուր)	2775	21	4	Քաղ (Քէղ)	350
4	4	Նկեղեաց	2250	22	5	Կէթիկ	352
5	5	Մանանաղի	2775	23	6	Տատիկ	350
6	6	Գերջան	2575	24	7	Այնուսձոր	202
7	7	Սոլեր	6360	25	8	Երիւթք	175
8	8	Շաղաղոմ (*Շատալաղոմ)	500	26	9	Գղեղիս	375
9	9	Կարին	2275	27	10	Սալնոյ ձոր	930
				28	11	Սանասունք	2400
II ԾՈՓԱՅ ԿՈՂՄԸ (ՉՈՐՐՈՐԴ ՀԱՅՔ)				IV ՏԱԻՐՈՒԲԵՐԱՆ (ԿՈՂՄԸ ՏԱՐԱԾՈՒՆ)			
			18.850	25.008			
10	1	Քորձեան	3450	29	1	Քոյք	1190
11	2	Հաջախանր	3750	30	2	Ասպակունեաց ձոր	655
12	3	Գաղնատուն	1740	31	3	Տարաւն	3195
13	4	Բալանովիտ (Արշամաշատ)	1750	32	3 ա	[Գալուսիք]	475
14	5	Ծոփք [Շահունեաց]	2460	33	4	Արշամունիք	2180
15	6	Անձիտ	3825	34	5	Մարգարի	2900
16	7	Գէղիք	700	35	6	Դասնուորք	725
17	8	Դաւրէք	1215	36	7	Տուարածատափ	760
				37	8	Դալաւ	1850
				38	9	Հարք	2245
				39	10	Վարամունիք	2000
				40	11	Բղնունիք	925
				41	12	Երեւարք	400
				42	13	Աղիովիտ	1575
				43	14	Աղսահունիք	2375
				44	15	Կորի	548
					16	Քոտիսորունիք	1000

Ընդհանուր Ա՛	Ա՛ ըստ նահանգների	Նահանգները և դադառները	Տարածությունը և բնակչությունը
	V	ՄՈԿԲ	2962
45	1	Իջար	175
46	2	Մեւս Իջար	250
47	3	Իջոց դաւառ	302
48	4	Առուենից ձոր	200
49	5	Միջա	250
50	6	Մոկր Առանձնակ. որ է Արքայից դաւառ	450
51	7	Արդաստովիտ	500
52	8	Զերմածոր	835
	VI	ԿՈՐՃԱՅԲ	14.707
53	1	Կորդուբ	5825
54	2	Կորդրիբ վերին	1075
55	3	Կորդրիբ Միջին	1025
56	4	Կորդրիբ Ներքին	625
57	5	Այրարուանի	325
58	6	Այդառ	302
59	7	Մոթողանի	875
60	8	Որսիբանի	1250
61	9	Կարթունի	550
62	10	Ճանուկ	2450
63	11	Աղբակ փոքր	405
	VII	ՊԱՐՄԿԱԶԱՅԲ	11.010
64	1	Այլի, որ է Կուրիճան	1380
65	2	Մարի դաւառ	1855
